Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

891.99
Я-89

Հրատարակ. Ս. Յարութիւնեանի գրավաճառ.
№ 5

ՊԵՐՃ ՊՌՕՇԵԱՆՑ

ՇԱՀԷՆ

ՎԷՊ

ԳԻՆՆ Է 1 Ր.

ԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ԲԱԳՈՒ
Տպարան Բագուի Հրատարակչական Ընկ.
1905

891.99
Պ-89

891·99
Պ—89
-6 NOV 2011
2

Հրատարակ. Ս. Յարութիւնեանի գրավաճառ.
№ 5.

ՊԵՐՃ ՊՌՕՇԵԱՆՑ

ՇԱՀԷՆ

ՎԷՊ

ԳԻՆՆ Է 1 Ր.

ԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ԲԱԳՈՒ
Տպարան Բագուի Հրատարակչական Ընկ.
1905

2 3 JUL 2013

51638

Дозволено цензурою (съ исключеніемъ)
10 мая, 1903 г. Тифлисъ

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос Библиотека
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

3127-84

ՇԱՀԷՆ

Ա.

Բաղդախնդիր մարդի նման գործիքներս բարձած՝ աշխարհէ աշխարհ էի ընկել, նստկան կեանքի հացը դժուար էր ինձ կուլ գնում, երջանկութիւնը ճանապարհորդութիւնների և շարունակ թափառականութիւնի մէջն էի կարծում գտնել, զարմանքն ինձ տանում էր, երբ տեսնում էի մարդկանցը մի հաստատ գործով պարապելիս:

Բնական չէր ինձանում աստանդականութիւնի փափագը, բժշկների խորհուրդն էր ինձ ընտելացրել այս կեանքին. երևի իմ տկարութիւնըս էլ այս տեսակից է եղած, մի տեղում հաստատ մնալը օր յառաջ մահի ճանգն ընկնել է նշանակում եղել: Սկզբումը, այո՛, շատ էի նեղանում այդպիսի կեանքից, բայց հետզհետէ սովորութիւնը բնութիւն դարձաւ:

Բ.

Յունվար ամիսն է, Ծարսկի-Կալօդցումը մի զինուորի տան երկու սենեակը չորս օր է վար-

ձել եմ, գործելու համար դեռ ամէն բան պատրաստ չէ, մանաւանդ խիստ յետ է ձգում բանը մի գործիք, որ ճանապարհին կորաւ, կամ լաւ է ուղիղն ասել, փոստայի իշխանի վերակացուի կինը գողացաւ ինձանից։ Ի՞նչ անէր խեղճը, պատուական մահուտ, երեք գազ ու կէս լայնութիւնով, ձմեռուան սաստիկ ցրտերին ո՞ւմ չի գրաւիլ, մի տաք կանացի վերարկու կը լինի, որ ուրիշների չքաւորութեան ճաշակը կը գրգռի, այն կինն ի՞նչ գիտէ, թէ լուսանկարն առանց այդ մահուտի մի կուռը կտրածի պէս է։

Ի զուր երկու օր էր մեղադրում էի աշակերտիս իւր անաչալրջութիւնի մասին, նա մի տասըն և չորս տարեկան մանուկ էր, ի՞նչպէս կարող էր մտածել, թէ մինչև որ ինքը մեր ծանրութիւնը կը բերէր ինձ կը տար փոստայի սայլակի վերայ դարսելու, ֆօնի 1) մահուտն աչքէ տակից կ'աներևութանայ։

Է՜հ, անցեալն է անց, նոր մահուտ, կամ այլ հաստ մակերևոյթ ունեցող լայն կտոր պիտի գտնել։ Բայց ո՞րտեղից։ Ցարսկի-Կալօդցան զինուորական կայարան է, բացի Մինգրելեան գնդին մատակարարող զինեվաճառից՝ ուրիշ խանութ չկայ, բնակիչներումն էլ ճարելն անկարելի է, մի քանի ընտանեաէր սպաներից և նոյնքան էլ ամուսնացած զինուորներից աւելի մնացածն ամուրի կեանքի մէջ սովորած

1) Ֆօն ասվում է լուսանկարչութեան պատկերի բաց տեղը։

սակաւապէտ ու անհոգ զինուորականներ են, որոնցից շատերը, կարելի է, վերմակի փոխանակ իւրեանց վերարկուներումն են պատսպարւում։

Դրութիւնս շատ աննախանձելի է, ձևիցն երևում է, որ այստեղ լաւ գործ պիտի ունենամ, անգործ ու փողատեաց սպաներին մի այդպիսի նորութիւն էր հարկաւոր, լսել են, որ լուսանկար է եկել ու այն օրից դադար չեն տալիս, մրջմի կարաւանի պէս տանս դուռն էլ չեն թողնում կրնկի վերայ հանգիստ մնայ, անդադար գալիս գնում են և ստիպում, որ գործը սկսեմ, բայց ընչո՞վ։

—Իրա՛և, զինուորի կոշտ մահուտը չի՞ կարող փոխարինել քո խնդրած մահուտին, հարցրեց ինձանից մի սպայ։

—Ցորեն չեղած տեղը կորեկն էլ ձեռք կը տայ։

—Եթէ այդպէս է, էլ շատ մի՛ մտածիր, այսօր կիւրակի է, ամէն կիւրակի այստեղից երկու վերստ հեռաւորութեամբ գտնուած հրապարակի վերայ մեծ առևտուր է լինում, այնտեղ հաւաքւում են շրջակայ վրացի գիւղացիք և մի թեթև տօնավաճառ է կազմւում. այնտեղ երկու երեք հայ կերպասավաճառների խանութներ էլ կան, գուցէ նրանց մօտ գտնես մի յարմար կտոր։

—Էլ ի՞նչ էիք լռում, ասացի ես ու այդ սարսափելի քամի օրը մի բարակ շալով բերանս

փաթաթած՝ գնացքս ուղղեցի դէպի Ցարսկինալօդցի տօնավաճառը։

Գ.

—Օգնեցէ՛ք, շունչս կտրուեց, հոգիս հիմի կը փչեմ, ճչում եմ ես ամբողջ գիշերը կացարանիս ցածր և խոնաւ սենեակի մէջ անկողնումս թաւալագլոր գալով։ Աջակողմեան ուսիցս ներքև, թոքիս ստորին մասում մի անտանելի ծակոցք է յառաջ եկել. ոչ նստել եմ կարողանում, ոչ պառկել և ոչ կանգնել. մեզանում, ասում են՝ կարծես շամփուրը կրակի մէջ կարմրացրել՝ կուրծքս են ցցել ու պտոյտ տալիս. մի ձայնս երկնքումն է՝ մի ձայնս գետնքումը, քարեր կը լացացնէր իմ հեծկլտանքս, բայց իմ Մովսէսից աւելի ո՞ւմ վերայ ազդէր։ Խեղճը բոլորովին իրեն կորցրել է. որբի նման վիզը ծռել, պատի տակին չորացել կանգնել է։ Մի երկու անգամ նա գնաց տանուտիրոջ դուռը ծեծեց և խնդրեց տանտիրոջը գալ ինձ այցելելու և մի բանով օգնութիւն հասնելու, բայց արտասունքն աչքերին տրտնջելով կոպիտ գեղջկուհի ռուս պառաւի անմարդասիրութիւնի վերայ՝ եկաւ ու կրկին վիզը թեքած առաջիս կանգնեց։

—Ջեկա՞ւ, հարցրի ես։

—Բերանիցը դուրս գայ իւր ծոցը թափի, ձեռքն աչքերին բռնելով, հեծկլտանքը չկարաց

զսպել Մովսէսս։ Հային մի՞թէ Աստուած չի՞ ստեղծել, շարունակեց նա, մի՞թէ մենք թուրքից էլ վատթար ենք, մի՞թէ քրիստոնեայ չենք։

Տղայիս կմկմոցիցը ես հասկացայ, որ հայատեաց պառաւը խիստ կծու պատասխաններ է տուել և, ինչպէս երևում էր, Մովսէսիս ազգութիւնին է դիպել։ (Մովսիսիս տարիքին մի՛ նայէք, շատ ջերմ ազգասէր էր, հազար անգամ իրեն հայհոյէին հոգը չէր, բայց եթէ հայի անունը արատիք բերող մի վիրաւորիչ խօսք ասէին, գլուխը կը կորցնէր)։

—Սիրտս ասում է հրացանը վերցրու, գնա՛ անպիտան պառաւի ուղեղը ցրուի՛ր, լացակրկնած թոթովեց նա։

—Է՜հ, արտասանեցի ես ու ձախ ձեռքով օդը շարժեցի։

Իմ ձեռքիս շարժմունքը Մովսիսիս սրտից մի խոր հառաչանք դուրս բերեց, նա հասկացաւ, որ յուսահատութիւնի և միևնոյն ժամանակ սառնասրտութիւնի շարժուածք էր այն։

Դ.

Լուսացաւ. մի մռայլոտ ու ամպամած առաւօտ էր, երկինքը կարծես լալիս էր, ձիւնն էլ մի կողմից յորդառատ թափում էր, Մովսէսս հնոցը վառեց, մի բաժակ թէյ ձեռքին

մօտեցաւ և խնդրեց որ խմեմ, գուցէ ցաւս թեթևանայ,

Բժի՜շկ, մի բժի՛շկ գտիր ինձ համար, ես ոչինչ չեմ ուզում։

—Ո՞ւր գնամ. ումի՞ց հարցնեմ, մի հայ էլ չկայ, փնփնթաց Մովսէս իւր մէջ, և անիծելով օտարութիւնն ու աստանդական կեանքը, դուրս ելաւ։

Իրաւունք ունէր Մովսէս տրտնջալու մեր ճանապարհորդութիւնի վերայ։ Նա նեղանում էր ոչ այնքան ճանապարհի անհանգստութիւններից և օտարութիւնի մէջ կրած անմխիթար արկածքներից, որքան հայ ազգաբնակութիւնից հեռու մնալուց։ Մենք, արդարև, Կովկասումն էինք, ուր մեծամասնութիւնը հայ ազգն է, բայց երկու տարի էր մեզ վիճակուել էր հայերից հեռու ման գալ. մեր շրջելու տարիքը լուսանկարչութիւնը դեռ ծանօթ չէր Կովկասին, նրա յարգը դեռ շատերը չը գիտէին, փողատէրների ու անշահասէր սպաների սենեակների զարդն էր միայն, հասկանալի է ուրեմն, որ մեր արհեստը հայերի համար այնչափ գնահատելի չէր. հայը չի սիրում ամէն չռայլութիւնի առարկաների համար փող մսխել, իսկ լուսանկարչական պատկերներն այդ միջոցին չռայլութիւնի մասն էին կազմում։

Դժուար չէր ուրեմն ենթադրել Մովսիսի հայասիրութիւնի փափագը. հայը, հայութիւնի

մէջ մեծացած հայը կարող է հաստատել Մովսիսի կարծիքը, եթէ իմանայ, որ հայի մի քանի յատկութիւնները նորա ազգային անհատականութիւնի արգասիքն են. մարդասիրութիւն, մերձաւորին կարեկցութիւն, այս աստուածային պարգևները հային բնատուր են։ Մովսէս դըրանց մէջ ծնած, սնած ու զարգացած, երկու տարի էր, որ թափառում էր լեռնականների, վրացիների ու զինուորանոցների մէջ, և ամէն տեղ պատահած մի դէպք, երբ նա եկել էր մի վրաց գիւղում վրացի հացթխող պառաւից մի կտոր հաց էր խնդրել ու առանց փող վճարելու չէր կարողացել ստանալ։ Հիմա մեր տան տիկնոջ սառն արհամարհական պատասխանն էլ իւր հոգու թելերը լարած դրութեան մէջ դրեցին ու Մովսիսի ա՛յն աստիճան յուսահատացրին, որ բժշկին դիմելու համար էլ կասկածում էր։

Ե.

Բժի՛շկը, բժի՛շկը, մի փոքր ուրախութիւնի նշոյլ երեսին տուն ընկաւ Մովսէս և կամենում էր շարունակել, բայց չկարողացաւ, որովհետև ծերունի զինուորական բժիշկն անմիջապէս մտաւ սենեակ։

—Ի՞նչ է տկարութիւնդ, հարցրեց մռայլ դէմքով բժիշկը հայերէն։

—Դուք հա՞յ էք, յոգւոց հանելով գոչեցի ես։

—Հայ եմ, հայ, դեռ ասա՝ ի՞նչ է տկարութիւնդ։

—Դեռ նստի՛, նստի՛ երեսիդ նայեմ, յետոյ կը խօսիմ։

—Բժիշկը նստաւ անկողնակալիս ծայրին։

—Երկու տարի է հայ շատ սակաւ եմ տեսնում, թող մի կարօտս առնեմ երեսիդ նայելով։

—Հիւանդութիւնդ ասա՛, դեռ շատ միջոց կունենանք իրար տեսնելու։

—Կրծքումս երեկուանից մի խիստ ծակոցք է յառաջ եկել ու հանգիստ չի տալիս։ Բժիշկը կուրծքս լսեց մի րոպէաչափ ու տեղիցը շտապով վեր թռաւ. ուշացնել հարկաւոր չէ, լաւ՝ որ շուտ իմաց տուիք, պէտք է տնօրինել, որ իսկոյն հիւանդանոց մտնես։

—Հիւանդանո՞ց, սարսափեցի ես, ի՞նչ հիւանդանոց, ո՞ւր է հիւանդանոց։

—Մենք ունինք այստեղ զինուորական հիւանդանոց, կէս ժամ չի քաշիլ, դու այնտեղ կը փոխադրուիս և պէտք եղած միջոցները ձեռք կ՚առնուին։

—Ես հիւանդանոց չեմ գնալ, ես վախում եմ տարափոխիկ հիւանդութիւններից։

—Դուք կունենաք սպաների սենեկի մէջ առանձին բաժին և ոչինչ զզուելի, կամ անախորժ տեսարանների չէք հանդիպել։

—Ես կը մեռնիմ ու հիւանդանոց չեմ գալ,

օգնութիւն գիտես՝ այստեղ արա՛, ես այստեղից ոտք չեմ դուրս դնիլ։

—Անպատճա՛ռ կը մեռնիս, հաստատապէս ասաց բժիշկը, երկար գայլի աւետարաններ կարդալուց գլխիս ու բացասական մերժումն ստանալուց յետոյ, դու կը մեռնիս՝ և շատ շուտ, մինչև երեկոյ չի քաշիլ, ոտքերդ կը ձգես, թոքդ բորբոքուած է, ես ասացի ու պարտքից պրծայ, մեղքը վիզդ, մնաս բարև։

Բժիշկն անկոտրում էր, նա ոչինչ չուզեց լսել. սաստկութիւնով դուռը խփեց վրէս ու դուրս գնաց։

Նորա շտապ հեռացող քայլերի ձայնն և փնթփնթոցն իմ ստուերի դէմ՝ ականջիս էին հասնում։

—Համաձայնի՛ր հիւանդանոց մտնել, վիզը ծռած՝ մօտեցաւ ինձ Մովսէսս արտասուք թափելով։

—Չէ՛, չե՛մ կարող, գոչեցի ես ու ձեռքով նշան տուի հեռանալու։

Այս վճիռն երկար չտևեց, մի րոպէից այնպէս սաստկացաւ ծակոցքս, որ ուշաղնացք ընկայ։

Էլ չգիտեմ՝ ինչ անցկացաւ, աչքերս բաց արի ու Մովսիսիս տեսայ, որ ձիւնով ճակատս շփում էր։

Կը գնամ հիւանդանոց, հազիւ արտասանեցի ես, շտապի՛ր բժշկին յայտնելու։

Զ.

Մաքուր անկողին, ջինջ լուացած սաւաններ և մի առանձին սենեակ պատրաստ էին ինձ համար հիւանդանոցումը։

Իմ բժիշկը քթախոտի տուփը ձեռքին բռնած՝ շտապ քայլերով չափում էր սենեակս։ Նորա հրամանովը կրծքիս և մէջքիս երեսուն և հնգական դաւաթ փակցուեցան։

—Թեթեւցա՞ւ, հարցրեց ժպտալով բժիշկս երակս ականելուց յետոյ։

—Էլ ցաւ չեմ զգում։

—Էլ չե՞ս մեռնիլ։

Է.

Բժիշկն իմ ամէնօրեայ այցելուն էր. ուրիշ բժիշկների նման չէին նրա այցելութիւնները. նա իմ գլխավերևի հիւանդապահ պառաւն էր, կամ թէ ուզենանք ուղիղն ասել, հիւանդի հայրը, մայրը, եղբայրն ու ամենամերձ սրտացաւն էր։ Շատ սակաւ էին նորա բացակայութիւնները, գիշերուան վեց ժամ հանգստութիւնը, առաւօտեան և երեկոյեան իւր հսկողութիւնի ներքոյ եղած տկարների այցելութիւնը և ցերեկուան երկու ժամ ճաշը. միւս միջոցները որոնողն ինձ մօտ կարէր նորան գտնել։

Իւր պատմելու համաձայն՝ իմ այժմեան

բնակարանումը՝ սպայական բաժնումը նա միայն բժշկական խորհուրդների ժամանակն էր լինում. խեղճ սպայքը շատ անգամ նորան՝ ինչպէս գըլխաւոր բժշկի, խնդրել էին իրանց բաժինը վերցնէր, բայց ինքը մերժել էր ու հասարակ զինուորներին սրանցից գերադաս համարել։

Ը.

Իմ տկարութիւնը հետևաբար դէպի առողջանալն էր ընթանում, կրծքիս բորբոքումը եթէ չէր վերջացել, հաստատ կարելի էր ասել, որ այնքան զգալի չէր, ոյժս աստիճանաբար աւելանում էր։

Ինձ հետ միասին մեծ փոփոխութիւն էի տեսնում բժշկիս դէմքի վերայ. սկզբներումն, ի հարկէ, ցաւիս սաստկութիւնի ժամանակն ես կարողութիւն չունէի խորամուխ աչքերով դիտելու նորա պատկերի գծագրութիւնը, տեսանելիքս զօրութիւնը պակասել էր, ամէն բան ինձ դալկագոյն էր երևում, բայց հետզհետէ կազդուրուելով՝ ամէն ինչ բնական դիրքումն էի տեսնում։ Սակայն ես հաստատ կարող եմ ասել, որ բժշկիս աչքերումն առաջին օրերումն արտասուքի կաթիլներ էի նկատում։

Ուժիս հետ դատողութիւնս էլ տեղն եկաւ. ես ինձ այնքան լաւ էի զգում, որ անկողնումս նստում էի։

Սկզբներումը կարելի էր կարծել, թէ բժիշկս մելամաղձոտ մէկն էր. նա չարունակ գլուխը կոր էր բռնում և շատ սակաւ խօսում ու այն՝ կարևոր ժամանակը. իրաւն ասեմ, շատ անգամ պատրաստւում էի նկատողութիւն անել նորա մռայլոտ բնաւորութիւնի մասին, կարծեմ մի երկու խօսքեր բերանիցս փախցրել եմ, Մովսէսս վերջն ինձ ասաց այդ։

Ծերունու ամպոտ երեսին առաջին անգամներն ես ծիծաղ չտեսայ, ինչպէս ասացի, շատ սակաւ էր նստում ու միշտ քայլերով չափում էր սենեակն ու քթախոտին ոյժ տալիս, սենեկի լայնութիւնն այնօրից Պիւթագորոսի աղիւսակի նման մտքումս տպուել է. ինը քայլ էր։ Իմ առողջանալուս հետ՝ բժշկիս քայլերն էլ պակասում էին, նա նստում էր ոտքերիս կողմն ու ժամերով աչքերիս նայում. կարծես, նա դէպի ինձ անտարբեր չէր, կարծես մի խորին գաղտնիք ունէր ինձ յայտնելու և չէր վճռում. գուցէ դեռ օրերը չէին եկել։

Թ.

Առաջին անգամներն ինձ մօտ յաճախողներ չկային և չէին էլ կարող լինել, միակ ծանօթս-բժիշկն՝ իմ անմիջական խնամատարն էր. ես նրան չեմ հաշւում։ Մի քանի օրից՝ երևեցան իմ հարևան բաժանմունքի առողջացած, բայց հի-

ւանդանոցը դեռ չձգած սպաները. նրանք խիստ հետաքրքրուելուս են եղել տեսնել այն երջանիկին, որ գլխաւոր բժշկի մտածմունքների առարկան էր դարձել։

Սպաները շատ սիրով և զգուշութիւնով էին վարւում հետս, ակնածելով ի հարկէ իմ պաշտպանից. վերջն երբ իրաւունք ստացայ մօտս մարդիկ ընդունելու, այդ սպաները քաղցր հարևաններ էին ինձ համար և նրանց խօսակցութիւնը շատ զբաղեցնում էր ինձ։ Մինչև այդ օրն ես թէպէտ սպաների հետ շատ գործ էի ունեցել, արհեստիս յարաբերութիւնը նրանց հետ էր, բայց նրանց վերայ վատ գաղափար էի կազմել. նորանց կարծում էի անհոգ ու զուարճասէր էակներ, որոնք նպատակ ընտրելով իրենց համար փայլուն ուսադիրներ, կողքից կախած սրի հետ, ձեռք էին քաշել հաստատ բնաւորութիւնից. ես կարծում էի նախ՝ թէ Աստղկանն ու Բաքոսին մատուցած երկրպագութիւնով և Մարսին ծառայելովն այդ մարդիկն իրենց պարտքը կատարած են համարում, բայց հիմա համոզուեցի, թէ՝ և՛ դրանք լրջմտաբար խորհիլ գիտեն, թէ և՛ նորանց հետաքրքրում է աշխարհս իւր բազմատեսակ հոգսերովը. այն օրից ես ջատագով եմ այդ արտաքուստ ուրախ երևեցած կարգի մարդկանցը։

Գ.

Բժիշկն իմ հիւանդապահն էր, սպաները շարունակ անպակաս էին մօտիցս, բայց ես էլի տխուր էի. տխուր էի, ոչ թէ երկար պառկելուս պատճառաւ, ոչ թէ երկմտում էի առողջանալուս մասին, ո՛չ թէ մի պակասութիւն ունէի. ո՛չ, ոչ այս և ոչ այն, այլ այնպէս՝ տխուր էի, սիրտս ձգտում էր դէպի մի ցանկութիւն։ Բնակա՞ն էր արդեօք այդ ձգտումը, անտեղի չէ՞ր իմ պահանջը, չեմ կարող ասել, բայց միայն սրտիս մի կողմը, կարծես, դատարկ էր։

Բժշկիս զգալի էր իմ փոփոխութիւնը և այդ նորա վերայ շատ վատ տպաւորութիւն էր անում. նա վախում էր, թէ ես կարող եմ կրկին ծանրանալ և այնուհետև իւր աշխատութիւնը, ի հարկէ, կորած էր։ Խեղճ և բարի ծերունի՛, նա ամեն հնարք գործ էր դնում ինձ ուրախացնելու, նա դիտմամբ իրեն ուրախ և շատախօս էր ձևացնում; զանազան զուարճաբանութիւններ էր անում, բայց իմ սիրտս միշտ տրտում էր, ես մի թանգագին բան կորցրածի պէս էի։

Իմ տրտմութիւնի պատճառը բժիշկս ուղղակի ինձանից չէր հարցնում, նա կողմնակի խօսքերով ուզում էր բերանիցս դուրս քաշել, բայց ես էլ չէի կարողանում հաշիւ տալ ինձ իմ յանկարծակի փոփոխութեան մասին. ի՞նչ էր սրտիս ցանկութիւնը՝ ես էլ չգիտէի։

Կ'երևի, թէ բժիշկն իմ ծանր հիւանդութիւնի ժամանակը, զառանցանքների մէջ հասկացել էր թոյլ կողմս, հայասիրութիւնն էր համարում իմ նշանաբանը և այժմ հայերի բացակայութիւնն է կարծել տրտմութիւնիս պատճառը։

Այդ ես հետևցնում եմ նորանից, որ մի քանի օր միմեանց յետևից շարունակ հայեր էին գալիս ինձ այցելութիւնի։ Առաջին օրը միանգամայն զարմացայ ես և շփոթուեցայ, երբ նախասենեկումը լսեցի իմ ազգանունս։ Ո՞վ էր ինձ հարցնողը, ես այստեղ ոչ մի ծանօթ չունիմ, իսկ հիմա պառկած տեղս պարզ իմ ազգանունս եմ լսում։ Էլ չսպասեցի ծառայի յայտնելուն։

—Ներս շնորհ՛ բերէք, ո՞վ էք, ձայն տուի ես։

Երեք անծանօթ երիտասարդներ, բաւականին քաղցրադէմ ժպիտով, դուռը բաց արին ու ձեռքս սեղմեցին։

Եթէ հայերէն էլ չը լինէր նորանց ողջոյնը, ես մի րոպէ ևս չէի կասկածել նրանց հայութիւնի մասին, իմ սիրտս թնդաց՝ և այդ բաւական էր։

—Ո՞վ էք դուք, իմ սիրելի հայրենակիցներս, և ի՞նչ տեղից գիտէիք իմ անունս, կամ այստեղ լինիլս, պատասխանեցի նորանց ողջոյնին։

—Մենք հայ ենք և մի հայ երիտասարդին այցելութիւնը մեր առաջին պարտքը համարեցինք

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ Гос. Библиотека им. А. Мясникяна Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
3127-84

այս օտարութիւնի մէջ ձեր հիւանդութիւնը լըսելուն պէս։

—Եւ որտեղի՞ց է ձեր գալուստը։

—Մենք Սղնախեցիք ենք, երկու վերստ հեռաւորութիւնի վերայ խանութներ ունինք, երէկ լսեցինք, որ հիւանդանոցումը մի հայ է պառկած և ահա եկանք ձեր դրութիւնն իմանալու։

—Ուրեմն դուք տօնավաճառի հրապարակի խանութպաններն էք։

—Անշուշտ։

Շնորհակալ եմ ասացի ու ձեռքերը թոթուեցի։

(Ես մոռացայ ընթերցողներիս ասել, որ իմ տկարութիւնս տօնավաճառի ճանապարհին ստացայ ու տեղ չըհասած՝ վերադարձայ։)

—Իսկ ո՞ւմից իմացաք իմ տկարութիւնս։

Միմեանց երեսին նայեցին այցելուքս և նորանցից մինը վճռեց ասել. բժշկից։

—Բժշկի՞ց...։ Աղնիւ ծերունին այդ անցքի առաջին օրն երկու ժամ սովորականից դուրս ուշացաւ և ինձ պատճառ տուեց, իբր թէ ուրիշ հիւանդի այցելութիւն էր գնացել. այժմ պարզ հասկացայ, որ ինձ խաբել էր, սպաները լսել էին, որ նա տկարանալու օրից մտնաւոր հիւանդների մօտ գնալը դադարեցրել էր։ Այդ օրը յատուկ գնացել էր հայերի մօտ ինձ տեսութիւնի հրաւիրելու։

Մի շաբաթ շարունակ սղնախեցի բարեկամ-

ներս ինձ փոփոխակի այցելում էին, վերջը հաշուեցի, որ ընդամենը տասը հոգի են եղել. ես այդ պարոններին երբէք չեմ մոռանալ։

ԺԱ.

Սղնախեցի հայերի յաճախելը թէպէտ փոքր ինչ մոռացրեց իմ տրտմութիւնը, բայց խպառ չկարողացաւ անհետացնել. այս բանը բժիշկս նկատել էր։

—Ընչի՞ վերայ ես այսքան մտախոհ, հարց առաջարկեց մի օր վերջապէս բժիշկս. ի՞նչդ է պակաս, ի՞նչ հոգս ունիս, խնամատարութիւն՝ որքան հիւանդին պէտք է, քեզ չի խնայւում, վտանգաւոր տկարութիւնդ անցաւ, այցելուքդ անպակաս, սպաները քո մշտական պարապացնողն են, սիրած հայերիդ ամէն օր տեսնում ես, Մովսէսդ անմիջական օգնողդ, ես էլ... իբրև բժիշկ... իբրև մարդ... իբրև հայ... իբրև....

Ես նկատեցի, որ մարդը լցուեց, աչքերումն արտասուքը լճացան և եթէ չէր շտապել թաշկինակը քթին տանելու պատրուակաւ աչքերին մօտեցնելու, հարկաւ արտասուքի կաթիլները ցած պիտի գլորուէին։

Շարունակեցէք, խնդրեմ, նորանից ոչ պակաս շարժուած՝ աղաչեցի ես, հէնց այդ է իմ տրտմութիւնի պատճառը, քանի՞ թագցնես ինձանից, իբրև հայ... իբրև է՞լ ինչ։

—Իբրև հայ ես քեզանից չեմ հեռանում, վերայ բերեց նա զսպելով իւր այլայլմունքը։

—Ո՛չ, ո՛չ, քո սրտումդ մի գաղտնիք կայ, որ ինձանից ծածկում ես, ես քանի օր է նկատել եմ և չէի համարձակւում հարցնել, կ՚երևի, հէնց այդ է իմ սրտիս թախիծը, այո՛, այո՛, այդ է, ես այժմ եմ զգում, ես զգում եմ, որ մի ներքին ձայն ինձ ստիպում է հարցնել քեզանից քո գաղտնիքը, ես ինձ սրբազան իրաւունք եմ համարում քեզ խնդրելու, որ չծածկես ինձանից, ի՞նչ իրաւունքով եմ պահանջում՝ ինքս չեմ հասկանում, բայց գիտեմ, որ իրաւունք ունիմ; համոզուած եմ, որ գաղտնիքդ լսելուն պէս՝ բոլորովին կ՚առողջանամ; ուրեմն ասա, աղաչում եմ, սէ՛ր բժիշկ։

—Մի՛ շտապիր, դեռ շուտ է, մի երկու օրից խոստանում եմ ցանկութիւնդ կատարել, բայց այսօր ես միտք ունիմ քեզ մի անցք պատմել, միմիայն զբաղեցնելու նպատակով. եթէ խօսք կըտաս, որ անտարբերութեամբ ու առանց վրդովմունքի լսես, կասեմ, ապա թէ ոչ, թէ այս անցքը և թէ սրտիս գաղտնիքը յաւիտեան չես իմանալ։

Ծերունին խօսում էր յուզուած, թէ և ցանկանում էր անդորր երևիլ, նորա աչքերը վառւում էին, նորա կուրծքը բաբախում էր, նորա խօսքերն ընդհատւում էին։ Ես չէի վստահանում խանգարել նորա այս վրդովուած դրու-

թիւնը, նորա ներսը մի բան կռւում էր և նա կամենում էր առաջին քայլն անել։

Ես ակնապիշ նորա երեսին նայում էի։

—Խօսք տալի՞ս ես անտարբեր մնալ, ապա թէ ոչ, իմ ամբողջ ամսուան աշխատութիւնը մի րոպէի մէջ կարող ես ջուրը ձգել, բայց զգուշացնում եմ, դու երեխայ չես, եթէ կրծքիդ բորբոքումը կրկնուի, դու կըմեռնիս։

Ես վերջին պատգամի նման հաւատում էի նրա խօսքին։

Մի քանի րոպէ լուռ էի, մտածում էի։ Ես վճռեցի։

—Այո՛, անտարբեր կը մնամ։

Ծերունին հաւատաց։

ԺԲ.

Բժշկիս հետաքրքիր պատմութիւնի հետ ընթերցողներիս ծանօթացնելուց յառաջ՝ կամենում եմ մի հայեացք ձգել նորա արտաքին գըծագրութիւնի և հոգու ինչ ինչ յատկութիւնի վերայ. մօտ մի ամիս էր ես նորան ճանաչում էի, դժուար չէր ուրեմն ինձ մի գաղափար կազմել նորա մասին։

Նկարագրեցէք ձեր աչքի առաջ զինուորականի հագուստով մի բարձրահասակ ծերունի, խորընկած սրահայեաց աչքերը թանձր յօնքերի տակ ծածկուած, ճակատը մտախոհութիւն ար-

տայայտող կնճիռներով ակօս ձգած, նիհար, բայց բարետեսիլ դէմքի քունքերի ոսկրները դուրս ցցուած, մազերի մէջ դեռ սեւերի հետքը չկորուած, ականջների ուղղութիւնով այտերի վերայ գերմանական կիսամօրուքը դէպի աչքերի կողմը սանտրած, մատներն երկայն ու յետաթեք գնացքը միջակ ու վեհաճեմ, աջ ձեռքը գրպանումը, իսկ ձախ կռնատակին սեւ ձեռնափայտը հորիզոնական ձեւով սեղմած՝ և ահա դուք կը ճանաչէք իմ բժշկին։

Նորա բնաւորութիւնի համար, կարելի է ասել, թէ ծանրախոհ և հանդիստ է, խօսակցութիւնը շատ ցածր և հանդարտ, դէմքի վերայ չարունակ բարակ ժպիտը փայլում է, նորա անձնաւորութիւնն ամէն մարդի մէջ յարգանք է ներշնչում, իսկ իւր ծառայակիցներն ընդհանրապէս նրանից ակնածում են։ Այս ամէն յատկութիւնները հաստատ ապացոյց են նորա բարի և ազնիւ սրտի ու մարդասէր հոգու, իսկ նորա ծանրահայեաց աչքերը ցոյց են տալիս, որ ոչ մի առարկայ նորա ուշադրութիւնից չի փախչում։ Մի գլխաւոր յատկութիւն բժիշկս աշխատում է ծածկել, բայց այդ շատ անգամ իրան չի յաջողում.—Նա շատ ջերմ ազգասէր է։ Թէպէտ ազգի վերայ, ազգի ցաւերին դարման տանելու մասին նա երբէք առարկայ չի անում, բայց ում սրտումը կայ մի կտոր ազգասիրութիւնի նշոյլ, նա առաջին անգամից կը համարի բժշկին իւր համա-

խոհներից, նման մասոնների ընկերութիւնի նշանակին, որոնց համար ասում են, թէ իսկոյն անխօս միմեանց տեսնելուս ճանաչում են։ Մի արտայայտութիւն էլ, որ իսկոյն աչքի է դիպչում, այդ բժշկիս սրտի թախիծն է, որ ինչպէս երեւում է, շատ հնուց իւր մէջ արմատակալել է։

ԺԳ.

—Պատրա՞ստ ես լսելու, աթոռը մօտ քաշեց բժիշկս։

—Բոլորովին։

—Դուրս գնա՛, հրամայեց նա Մովսէսին և ասա սպասաւորին, որ ոչ ոք չընդունի։

—Իրաւ մի բան էի ուզում ձեզանից հարցնել, դուք ո՞ր տեղից էք։

—Լռի՛ր, մի՛ խանգարիր, ապա թէ ոչ գընում եմ, բարկացաւ նա։

Մործորակս քերելով պապանձուեցայ։

ԺԴ.

Ընթերցողներիցս խնդրում եմ զինավառուիլ համբերութիւնով և չչարացնել իրասածի ծերունուն, ապա թէ ոչ, գուցէ կարօտ թողու մեզ իւր հետաքրքիր գաղտնիքի բացատրութեանը։

ԺԵ.

Մի ժամանակ Սալմաստ պարսկական քաղաքի գիւղօրից մէկի մէջ ապրում էր մի բազմամարդ հայ ընտանիք։ (Այսպէս սկսաւ բժիշկս։) Ութսուն հոգուց էր բաղկացած այդ գերդաստանը։ Տան առաջին անդամը՝ ծերունի Աբրահամը վայելում էր ընդհանուրի համակրութիւնն և յարգանքը. նա իւր եօթն ամուսնացած եղբայրների ու նրանց որդիների ու թոռների մէջ ամենապատկառելի անձնաւորութիւնն էր. նրան էր հնազանդւում ամէն մի անդամը, նրա կառավարութիւնի և խնամքի տակ էին գտնւում այդ մեծ տան բոլոր գործերը, և նրա վզին էր մտածել՝ ուղիղ ու անսայթաք ղեկավարելու մի այդպիսի ահագին նաւը։ Այս ամէնը հասկանալու էր արական սեռի համար և տան արտաքին վարչութիւնի վերաբերութեամբ, որովհետև տան ներքին կառավարութիւնը Աբրահամի կնոջ՝ պառաւ Սալբու ձեռքին էր։

Աստուածային օրհնութիւնը կարծես հանգել էր այս ընտանիքի վրայ, նահապետական կեանքի պարզութիւնը թագաւորում էր սրանց տանը։

Տեղական սովորութիւնի համեմատ՝ երեկոները ժողովւում էին մեծ տան սրահումը եղբայրներն իւրեանց կատարելահասակ որդիներով և թոռներով ու ձեռքները խաչաձև սրտին դրած՝

շուրջ բոլորուած մեծ պապին, (այսպէս էին կոչում ամէնքը Աբրահամին) սպասում էին նորա հրամանին։

Աբրահամը սիրալիր ժպտով գորովական ակնարկ էր ձգում ամէնքի երեսին և հրամայում էր նստել։

Այն ժամանակը մեծ սրահի չորս պատի տակը կարգով շարւում էին բոլորը և մէկ մէկ հաշիւ էին տալիս իւրեանց օրուան կատարած գործերի մասին.—որքա՞ն վար ու ցանքս են արել, քանի՞ բարդ ցորեն է հնձուել ու եղին դրուել, ի՞նչքան խոտ են ժողովել խուրձը կապել, ի՞նչ դրութիւնի մէջ է այգիների աշխատանքը, անվնա՞ս է ոչխարի հօտը և այն և այլն։

Ծերունին մի առ մի հարցնելուց և բաւարար պատասխան ստանալուց յետոյ՝ տնօրինում էր միւս օրուան անելիք գործերը և ապա պատմում էր այն օրը գիւղամիջում անցկացրած իրողութիւնները։

Այնուհետև սկսւում էր ընդհանուր խօսակցութիւնը զանազան առարկաների վերայ և ամէն մարդ ազատ էր համեստօրէն իւր կարծիքը յայտնելու։ Այս արտօնութիւնը տուել էր ծերունին իւր գերդաստանի անդամներին, որ, ինչպէս ինքը բացատրում էր, նրանք կարողանան ժամանակին մարդամէջ մտնել։

Սալբի նանը, Աբրահամի ամուսինը հացա-

տանն ուրիշ պարապմունք ունէր. նա իւր տագերականանցն և հարս ու աղջիկներին մի մի պաշտօն էր յանձնել, որը բուրդ էր գզում սանտերքի տակին ծունկը ծալած, որը ջահրայ էր մանում գործաւորներին ջորաբացու, մինը կովեր կթելու հոգսումն էր. միւսը խնոցի էր հարում, կարագը առանձին ու թանը առանձին ամանում, նորատի աղջիկները կար ու կարկատանի հետ էին։ Հոգատար Սալբի նանը ամենքին իւրեանց կարողութիւնովն էր չափել, ոչ ոք առանց գործի չէր անցկացնում։ Իսկ ինքը մի խուրձը բալանիներ գօտուցը կախած, չերէփը ձեռքին թոնրի շրթանը բազմած՝ այդ մեծ ընտանիքի համար կերակուր էր պատրաստում։

—Աղջի՛կ բրինձը լո՛ւայ, ա՛յ հարս մի աման վերցու հետս գնանք իւղ քանդէ՛ր, Սառա՛, գաւն առ արի, գինի լցնեմ, դուրս բեր, Զարմա՛ն, դու էլ հացը շտապիր թրշել, երեխէքը հիմայ փէշերքիցս կախ կընգնին, քաղցած եմ—կը գոռան, տնօրինում էր Սալբին։

Մեծ տանը կպած մի սենեկի մէջ էլ հաւաքուած էին մանր կրակի կտորները ու որը անլուայ, որն աչքերը ճպռոտ, երրորդը փորաբաց՝ ձայն ձայնի էին տուել ու զանազան նոր նոր խաղեր էին հնարում, կամ, եթէ ամառ էր, լայն բակումը փոշին երկինքն էին բարձրացնում։ Մի փոքրիկ ուսումնարան էր Աբրահամենց բակն երկու սենից բաղկացած, բայց ի հարկէ

այդ աշակերտներին միշտ կարելի էր տեսնել խաղի ժամանակը, ուրիշ պարապմունքից ձեռքերդ լուա՛յ։ Ո՛վ էր տուել այն միջոցումն ուսումը, գիւղերը մի կողմը թողած՝ քաղաքներումն էլ այդ բանի մասին հասկացողութիւն չկար։ Մի տէրտէր, որպէս և իցէ, բրդգզելով՝ իւր քահանայութիւնն էր անում և ըստ բմաց սուրբ գըրքերը բացատրում։

Մի ուրիշ տան մէջ էլ եթէ մտնէիր, սրտահրճուանքով կը լցուէր՝ տեսնելով քանից աւելի օրօրոցներ, որոնց մի քանիսի մօտ՝ ութ—ինն տարեկան աղջիկները կանգնած, շարժում են օրօրոցը և քաղցր նանիկը գլած՝ լողէ քունն են բերում, շատերի տակն էլ ջահել նորահարսը չոքած, յետ է ձգել իւր երեսի թանձր քօղը, ազատ բաց է արել իւր մարմառեայ սպիտակափայլ կուրծքը և մայրական գորովալից ժպիտով կերակրում իւր սրտի ուրախութիւնին, իւր գառնուկ ղաւակին։

Երեք սփռոց միանգամից բացւում էր Աբրամենց տանը. տղայ—մարդիկը՝ ծեր նահապետի նախագահութիւնի տակ՝ շարւում էին վայելելու Սալբի նանի պատրաստած ախորժահամ կերակուրը։ Նրանց սեղանը չէն անելուց յետոյ՝ հացատան վերի անկիւնումը տագերականայքն էին նստում մեծ հարսների հետ միասին՝ Սալբի նանի հսկողութիւնի ներքոյ, մի կողմն էլ նորահարսները չափահաս աղջիկների ու մանրահա-

սակ երեխաների հետ լուռ ու մունջ հանդարտօրէն ուտում էին իրանց բաժինները:

Ոչինչ լաց, ոչ մի շշուկ չէր բարձրանում ճաշելուս կամ ընթրելուս, ամէնքը նայում էին Սալբի նանին ու գլուխները կախ՝ իւրեանց բաժինները մաքրազարդել աշխատում, ամենքը հաստատ համոզուած էին, որ աղաղակ պատճառողը կը զրկուի հացից և քաղցած կը մնայ: Քարասիրտ ու խիստ էր Սալբի նանը, մեծ պապըն էլ իւր ոտքովը գար, նրա խօսքը չէր կարող փոխի: Բայց եթէ ճշմարիտն ասենք, երբէք դէպք չէր պատահել, օրինակ չէր եղել, որ Սալբի նանը, մէկ օրից մէկ օր որևիցէ երեխայի անճաշ թողայ. մի անգամ նա իւր հաստատակամութիւնը ցոյց էր տուել և նրա խօսքն օրէնք էր համարուել, հերիք էր, եթէ խէթ հայեացք ձըգէր մէկի վերայ, ամենքը մուկ կը դառնային: Բայց պէտք է խոստովանել, որ Սալբի նանն այն տանտիկիններից չէր, որի չերէփն օրական տասն անգամ այս ու այն ժանգոտ երախաների բերանին կը դիպչի, Սալբի նանն իւր քաղցր լեզուովն էր այդքան հեղինակութիւն ստացել, առանց ջան քնքոյշ բառի նա մէկի անունը չէր տալ:

Մարդ չի կարող երևակայել, պէտք է ականատես լինել և զմայլել այս անոյշ կեանքովը:

Շատ տեսակ կերակուրներ չէին պատրաստւում Աբրահամենց տանը. մի տեսակ էր, բայց ոչ առանց պանրի, թթուների ու բանուածքերի,

միայն թէ ամէն ինչ լի ու առատ էր և ամանները մի քանի անգամ նորոգւում էին. այդպէս էլ պէտք է լինէր, երբ հոգուն մի քերեղան էր, երբ դըդալ մի ամանի մէջ էին լողում:

Սփռոցը բացւում էր, Սալբի նանի ածած կերակուրները շարւում էին ու ամէնքը կանգնում էին ձեռքերը կրծքին խաչած՝ մրմնջում էին Սալբի նանի հետ «Հայր մերը» կրկնելով: Նոյնը անում էին այր մարդիկը՝ Աբրահամի հետ Աստծուն փառաբանելով և ապա նստում էին սեղան:

Վերջը, երբ ամանները ժողովեցին, հացի փշրանքը սփռոցի մէջ փաթաթում էին և նոյն գոհութիւնները կրկնում, որից յետոյ ամէնքը խոնարհութիւնով մօտենում էին համբուրելու տան նախանդամների ձեռքը և գնում իւրեանց գործին:

—Երեխա՛յք, աղջիկնե՛ր, հարսներ, հաւաքուեցէ՛ք, հրամայում էր Սալբի նանը ձմեռուան երկայն երեկոները, լսեցէք Հոռոմ հարսի պատմած առակը:

Ժողովւում էին այս հրամանի վերայ ամէնքը պառաւի չորս բոլորքն ու ձեռքերը ծնօտին սպասում էին Հոռոմի խօսելուն: Զուարճալի առակներ գիտէր Հոռոմ տագերակինը, շատ էլ սրախօսութիւն էր անում՝ ու ամէնքին ծիծաղացնում էր:

—Դէ՛, հերի՛ք է այսքանը մինչև վաղը ե-

բոկոտ, հիմի երեսներիդ խաչ հանեցէք ու գնացէք քնելու, արձակում էր Սալբի նանն ամէնքին։

—Այս տեսարանը նոյնպէս արժանի է ուշադրութեան, դարձաւ ինձ բժիշկս, եթէ չես ձանձրանում գիւղական պարզ նկարագրութիւններ լսելով։

—Պատմեցէք, խնդրեցի ես, դուք յիշեցնում էք ինձ իմ հայրենիքս։

Մի խոր թառանչ հանեց սրտից բժիշկս ու շարունակեց։

—Երեք տուն էր ծառայում բոլոր ընտանիքին ննջարանի փոխարէն, ասաց նա. մեծ հացատունը և նորան կից երկու սենեակը. ամէն մէկի մէջ մի քանի անկողին էր ձգւում և մի քանի անձինք մի վերմակի տակ էին ծածկւում։ Մի հոգի ունէր իւր առանձին անկողինը և քընում էր ծերունի Աբրահամի սենեակումը. դա Աբրհամի միակ որդի Շահէնն էր։ (Սկզբումը ես մոռացայ քեզ ասել, որ Աբրահամը միայն մի քսան երկու տարեկան որդի ունէր, Աստուած նորան ուրիշ զաւակներ չէր տուել։)

—Բայց միթէ Շահէնն ամուսնացած չէր, որ միայն էր պառկում, հարցրի ես, զարմանալով այդ երևոյթի վերայ. ինձ քաջ յայտնի էր, որ հայերն իւրեանց որդիներին շատ վաղ են պսակում։

—Ո՛չ, ասաց բժիշկս, տան անդամներից,

Շահէնից շատ փոքրները զաւակների տէրեր էին, բայց նա դեռ մնում էր, մնում էր ոչ թէ ծերունու կամքով, այլ իւր, Շահէնի խնդրանօքը։ Ի՞նչ ունէր Շահէնն իւր մտքումն՝ յայտնի չէր, այլ այսքան գիտենք, որ մի օր, երբ Աբրահամը խօսք է բացանում իւր եղբայրների մօտ Շահէնին պսակելու մասին, պատանին չոքում, հօր ոտքերն է ընկնում և աղաչում է չշտապեցնելու այդ օրը, մինչև ինքն այդ բանի վերայ լաւ մտածի։

Երևի, ծերունին որդու դէմքի, կամ աչքերի մէջ մի բան կարդաց. այդ եղաւ, և է՛լ այս մասին ոչ ոք չրթունքը միմեանց չխփեց, ոչ մի եղբայրը չվստահացաւ մի ակնարկ ձգելու Աբրահամի մօտ Շահէնի վերաբերութեամբ։

Առաջին խօսակցութիւնը կատարուեցաւ Շահէնի տասն և ութ տարեկան հասակումը, չորս տարի էր անցել այնուհետև, և ոչ հայրը, ոչ մինը յիշողութիւն չէին արել։

Եւ այդպէս Շահէնն անկողին ունէր իւր համար առանձին, ծնողաց սենեակի մի անկիւնումը։

ԺԶ.

—Ա՛յ մարդ, ասաց մի անգամ գիշերը տեղի մէջ պառկած Սալբի նանն իւր ամուսնոյն, մինչև ե՞րբ պիտի մեր որդին անպսակ մնայ, դրա հասակակիցներն երեք չորս որդւոց տէր

են, մեր տունն էլ ամօթ է, վերջապէս ի՞նչպէս հայր ես դու, մի՞թէ յաւիտեան ապրելու ես, որ չես ցանկանում որդուդ բարեբաղդութիւնը բաց աչքով տեսնել։

Պառաւը խօսում էր շատ ցածր։

—Բարձր խօսի՛, մի՛ վախիր, մեզ ոչ ոք չի լսում, պատասխանեց Աբրահամը։

—Ի՞նչպէս, կարելի է Շահէնս արթուն լինի։

—Շահէնը տանը չի, նոր անկողին էինք մտել, որ նա հագնուեց գնաց։

—Ո՞ւր, սարսափելով ասաց կինը։

—Միամի՛տ պառաւ, այս առաջին գիշերը չէ, երկու ամբողջ տարի է, քո որդին հաւախօսից առաջ չի պառկում և մի՞թէ չես նկատում նրա գունատութիւնը։

Պառաւը քստմնեցաւ, նա չհաւատաց, վեր թռաւ տեղից, շօշափեց որդւոյ անկողինը։ Տեղը դատարկ էր։

—Շահէ՛նս, Շահէ՛նս, ո՞ւր է Շահէնս, ձայնը բարձրացրեց Սալբին, երեխաս իմ աչքի առաջ չորահան եղաւ, տեղը մտաւ, հիմի ո՞ւր է։

—Հանգարտուի՛ր, ասում եմ, առաջինը չէ՛։

—Բայց ո՞ւր է գնում։

—Յիշիր քո պատանեկութիւնի տարիքը։

—Աւա՜ղ, նա է՞լ։

—Այո՛, նա էլ, ինչ բրդես՝ այն կը խռթես։

—Պառաւի աչքերից երկու կաթիլ արտասուք ցած գլորուեցան։

—Եւ ո՞վ է զաւակիս սրտի առարկան։

—Մի՛ հարցնիր, դու վաղուց պէտք է գուշակէիր, մեր որդին իւր բաղձանքին յաւիտեան հասնելու չէ՛։

—Տարաբա՜ղդ որդիս, հերի՛ք է։

Այս գիշեր ուրիշ խօսակցութիւն չեղաւ, ամուսինները լռեցին և իւրաքանչիւրը նորանցից որոճում էր իւր մտքումը այդ նորութիւնի հետևանքը։

Հաւախօսին մայրը լսեց դռան ճռնչոցը և որդու անկողին մտնելու շարժուածքը։ Այս գիշեր նրա աչքերը չէին փակուել, քունը փախել էր պառաւից։

Ժէ.

Հետևեալ գիշերը պառաւ Սալբու քունը նոյնպէս չը տարաւ, նա սպասում էր իւր աչքով տեսնելու այն, ի՛նչ որ երկու տարի էր փախել էր նրա մայրենական հսկողութիւնից։ Պառաւն անիծում էր իւր գլուխը, իւր անհեռատեսութիւնը, որ թոյլ էր տուել իւր որդուն գնալու դէպի կորստական վիհը, նա մեղադրում էր իրան, որ չէր զգուշացել յետ պահելու իր մինուճարին այն վտանգաւոր քայլն անելուց։ Նա մտքումն արդարացնում էր սիրեկան զաւակի բնական ձգտումը. իւր ամուսնու երկու խօսքը բաւական էր բանալու իւր փակ աչքերը, իրականութիւնը

սարսափելի անխնայողութիւնով բացել էր իւր անողոք բերանը կլանելու նորա մի հատիկ զաւակի ուրախութիւնը, մարդի անսուտ մճիռը մի ևս աւելի ահռելի գաղտնիքի հետ գործեցրել էր նորա մէջ անհնարաւորութիւնի մահացուցիչ հետևանքը. այդ իսկ պատճառով՝ Սալբին ամբողջ օրը հիւանդ ձևացաւ, իւր սենեկից դուրս չեկաւ և տան կառավարութիւնն իւր տագերականանցից նախապատուելին յանձնեց։ Անհամբերութիւնով սպասում էր խաւարի թևը երկրի վերայ սփռելուն, որ ստուգէ՝ ինչ որ, տարաբաղդաբար, ուղիղ էր։

Շահէնը ոչինչ կասկածի տեղիք չունէր, նա մօր տկարութիւնը պատահական երևոյթի տալով, ըստ սովորութեան՝ ընթրիքից յետոյ մերկացաւ, տեղը մտաւ. բայց երբ գիշերուան լռութիւնը համատարած եղաւ, դադարեցին շնչաւոր էակների շարժողութիւնները, միայն հօր ու մօր միակերպ շնչառութիւնը պարզ լսուեց սենեկի մէջ, հագնուեցաւ պատանին ու ոտքերի մատների ծայրերի վերայ ամենայն զգուշութիւնով յառաջ շարժուեց դէպի դուռը ու հապճեպով ամէն բան նախկին մեռելութիւնի մէջ մտաւ։

—Հիմա հաւատացի՞ր, որդեսէր մա՛յր, հարցրեց Աբրահամն իւր կնոջը, որից երևեցաւ, թէ գիտէր անշուշտ վերջինիս կատուաքուն տալը։

—Ընչի՞ Աստուած իմ հոգին չի առնում։

—Սակայն որտեղից գիտես, թէ Սուսամբարս է Շահէնիս քունը, կտրողը։

—Դու ասա հիմա՝ ի՞նչպէս պէտք է այս չարիքի յառաջն առնենք։

—Միամիտ պառա՛ւ, երկու տարի է անքուն հսկում եմ նրանց վերայ. է՜յ, հէ՜յ, ինչ կը նշանակէ ծերութիւն, ախ քաշեց Աբրահամը, նրանց տարիքումը մենք էլ շատ գիշերներ արթուն լուսացնում էինք. իսկ հիմա նկատո՞ւմ ես փոփոխութիւնը, ճրագը հանգչելուն պէս՝ դու մի կողմն ես երեսդ շուռ տալիս մեռելաքուն մնում, ես միւս կողմը, ափսո՜ս պատանեկութիւնի երջանիկ ու անհոգ օրեր։

—Մի կողմը թող դատարկաբանութիւններդ ու ասա՛, ի՞նչպէս թէ երկու տարի է անքուն հսկում ես երեխէքանցս քամակից, դու ի՞նչպէս իմացար Շահէնիս սրտի գաղտնիքը։

—Աւելորդ հարցմունքներ մի՛ անիլ, դու ինքդ էլ պէտք է հասկանայիր, բայց անցեալն անցել է, այսքան միայն իմացիր, որ քո որդիդ ամէն գիշեր տեսնւում է թշուառ Սուսամբարի հետ, և պէ՛տք է սրա յառաջն առնել։ Բռնութիւնով ոչինչ չենք կարող շահուիլ, ունայն քարոզներով էլ աւելի գործը կը փչացնենք, պէտք է խոհեմութիւնով կողմնակի հնարքներ բանացնենք։

—Պէտք է ամէն բան իրանց յայտնել։

—Յիմարե՞լ ես, ա՛յ կին, դու ի՞նչ ես խօսում, ամենևին հարկաւոր չէ նրան հասկացնել միան-

գամից միմեանց չհասնելու օրինաւոր պատճառը։

—Բայց, աչքս դուրս գայ, եթէ արդէն...

—Ուզում ես ասել, եթէ ուշ լինի և մեր անխոհեմ ընթացքին նրանք էլ հետևին. ո՛չ, մի՛ վախիր, այդ մասին ես կարող եմ քեզ ապահովացնել, որ սիրահարների մէջ սիրում է երկու անմեղ տատրակների սուրբ սէրը, կարծես թէ նրանց անբիծ սիրտը պատուար է կանգնում զսպելու երիտասարդական վառ բորբոքը. վերջապէս ինչ երկարացնեմ, իմացիր, որ Շահէնդ սիրում է Սուսամբարիդ և նոցա երկուսի սիրտը ապակու նման փշրուած է։ Քեզ համբերութիւն եմ քարոզում; չի կարելի միանգամից սպանիչ բացասականով մեռցնել նրանց մէջ թարմ աշխոյժը, սպասենք, գուցէ գործն ինքն իրան կերպարանափոխուի և կոտրած սրտերը մի տեսակ կարկատուին։

—Ես այս գիշեր ամէն բան կը յայտնեմ Շահէնին, լաւ է՝ մենք տուժենք մեր պատանեկութիւնի միջոցի անզուսպ վարմունքի փոխարէն, քան թէ միակ զաւակս ու անբախտ Սուսամբարս զոհ գնան մեր յիմար անձնասիրութիւնին։

—Լսի՛ր, ա՛յ կին, Շահէնն երբէք չպէտք է իմանայ իր ծնողաց անպիտանութիւնը։

—Եւ ինչի՞։

—Ես միտք չունիմ կարմրել իմ որդու երեսին նայելուս, կարծեմ դու էլ նոյնպէս։

—Եսական մարդ։

—Խօսք տուր որ լռես, թոյլ տուր, որ ես սրբեմ մեր երեսի անարգանքը. հաւատացնում եմ, որ շատ չի քաշիլ, ամէն բան ինքնիրեն կը կարգաւորուի։

Կինը թէպէտ ակամայից, բայց երդուեց որդու անունովը չխանգարելու խաղաղութիւնը, մինչև իւր ամուսնից կարևոր պատուէրներ ստանալը։

ԺԲ.

—Դու տեղեա՞կ ես ռուս-պարսկական պատերազմից, յանկարծ հարց առաջարկեց ինձ բժիշկս կանգ առնելով, գիտե՞ս այն մեծ գաղթականութիւնի պատմութիւնը, որ կատարուեցաւ Թուրքմէնչայում Պասկևիչի կապած դաշնադրութիւնից յետոյ։

—Այո՛, գրաւոր ու բերանացի աղբիւրներից փոքր ինչ ծանօթութիւն ունիմ այդ եղելութիւնների մասին, զարմացմամբ պատասխանեցի ես։

—Բայց քեզ ձանձրութիւն չի՞ լինիլ, եթէ երկրորդ անգամ մի թեթև հայեացք ձգեմ այն ժամանակի կատարուած գործողութիւնների ինչ ինչ կէտերի վերայ։

—Ես ինձ խօսք եմ տուել Զաքարիա դառնալ։

—Շատ ուրախ եմ, ուրեմն լսի՛ր։

—Դո՛ւ, քո Աստուածը, մաքուաս տայի ես:

—Կայծակի արագութիւնով տարածուեցաւ ռուսաց յաղթութիւնի համբաւը՝ պարսից դէմ գործած, սկսաւ բժիշկս, Գանձակի և Երևանու բերդերի առումը, Պասկևիչի արշաւանքները, Աբբաս-Միրզայի պարտութիւնները, Քրիստոսի խաչի յաղթանակը Մահմետի կիսալուսնի վերայ ամբողջ Ատրպատականի ժողովրդի սրտի թելերին էին զարկում, մեծամասնութիւնը սուգ ու կոծի մէջ հող էր ցանում իւր գլխին, իսկ մի բուռը փոքրաթիւ ժողովուրդ երկիւղից ու բռնակալութիւնից յառաջ գալիք չար հետևանքի սարսափից իրենց տներից թէև դուրս չէին գալիս, սակայն մեծ ուրախութիւնի մէջ էին: Այդ դարաւոր ճնշումների տակ կաշկանդուած սակաւամասնութիւնը Ատրպատականի հայն էր, որ եկած, հասած էր համարում իւր փրկութիւնի օրը, և այդ պատճառով, ոչինչ էր համարում այն նեղութիւնները, որ մի կարճ միջոց էլ կրելու էր չարանախանձ պարսիկների մլիժառութիւնից:

Եւ արդարև բռնակալութիւններն այս ժամանակներս օրըստօրէ մեծանում էին, պարսիկներն իւրեանց նուիրական պարտականութիւն էին համարում ռուսների վրէժը հայերիցն առնելու և երդուել էին իրենց կրօնամոլ ու քրիստոսատեաց դենպետների առաջին չթողնել տալու հայերի սրտի փափագը լրանալուն, կենդա-

նի հայ չթողնել դիմաւորելու իրանց փրկութիւնի համար եկողներին:

Պարսից մոլլաներ տէր ու գիշեր մզկիթներում խաժամուժը հաւաքած՝ քարոզում էին, թէ ռուսի աշխարհակալութեան նպատակն է միայն հայերին ազատել իւրեանց իշխանութիւնի տակից, նոքա մեծ մարգարէի պատգամներն էին հաղորդում խուժանին, գրգռում էին նորա մոլեռանդութիւնը, արծարծում էին մլիժառութեան բոցը և ուղղակի քառասնական հուրիներ էին ընծայում թափանձիկ օդային շղարշներով իւրեանց մարմարինեայ մերկութիւնը ծածկած մարգարէի աչքի առաջին դրախտի մէջ երջանկութիւն վայելելու այն մարդուն, որ քրիստոնէի արիւն կը թափի:

Պարսկական թոյլ կառավարութիւնը թէպէտ արտաքուստ ցոյց էր տալիս, թուցէ և ցանկանում էր կարեկցելու իւր հպատակ քրիստոնեայ հայերին, բայց այդ սակաւ էր պաշտպանում խեղճերին մոլլաների վառած նախանձայուզութիւնից:

Այն հայը, որ վստահացաւ փողոց դուրս գալ, պէտք է իմանար, որ կենդանի վերադառնալու չէ իւր ընտանիքի գիրկը, նորա մարմինը մաս մաս կանէին ու շների կերակուր կը ձգէին:

Աւելորդ է ասել, որ հայերն իւրեանց դռներն փակել էին ու պատրաստուել զէնքով

պաշտպանելու մինչև վերջին կաթիլն իւրեանց սիրելիների կեանքն ու ընտանեկան պատիւը։

Բազմամարդ քաղաքներումն ու հայաշատ գիւղերումը վտանգն այնքան շատ չէր, որքան սակաւաթիւ հայ հասարակութիւնների մէջ. այդպիսի թշուառներից օրական մի քանիսը շարունակ կոտորում էին,

—Ափսո՜ս, եթէ հիւանդ չլինէիր, ես մանրամասնօրէն կը նկարագրէի քեզ այն աղէտքները, որ այդ տարին հայերի գլխին եկաւ, յանկարծ կանգ առաւ բժիշկս։

—Ես վճռել եմ այրաբար տանել բոլոր սրտատրոփ ու մորմոքիչ արկածքները, դու կարող ես վստահ լինել իմ վերայ, ես ինձ այժմ կատարեալ առողջ եմ զգում։

—Անպիտան մոլլաներն ամեն մի հայ մանկան գլխի փոխարէն քառասուն տղայ հրեշտակներ էին խոստանում դրախտի մէջ իւրեանց ամէն մի հուրիներին սպասաւորելու, իսկ մի բուռը խմած քրիստոնէի արիւնի տեղ՝ անմահական նեկտարն էին վարդաջրով խառը նրանց բաղանիքների համար շարունակ հոսեցնում՝ ոսկեայ և անդամանդեայ աղբրների ծորակներից։

Օր չէր լինիլ, ասացի, որ արիւնհեղութիւններ չը լինէր, ժամ չէր անցկենալ, որ մի բօթառու լուր չառնէին թշուառ հայերը, չկար այնպիսի գերդաստան, որ զրկուած չը լինէր իւր մէկ սիրելուց. այնպիսի աղէխարշ տեսարաններ

էին պատահում, որ մարդիս սարսափը բերում է, որոնք քարեր էին լացացնում. այն անգթութիւնների հարիւրերորդ մասը տեսնողը չի կարող կեանքի մէջ ուրախանալ, էլ այնպիսու երեսը ծիծաղ չի գալ, քանի՜ երեխաների գլուխներ քարի վերայ փշրւում էին, քանի՜ փոքրիկ ու թխլիկ մանուկներ մէջ տեղից երկու կէս էին լինում, որքա՜ն մայրեր ու հայրեր աղա չել պաղատել են բռնաւորին իւրեանց սիրտը կոխել սուրը, առաջ իրանց կեանքը կարճել, միայն թէ չատիպեն յետ բացանել իւրեանց ձեռքովն անմեղ երեխայի ոտքերը, որ գազան պարսիկը երկու կէս անի ու թրթռուն սիրտը կտրի, մի կտորն ինքը ծամի, ու մի պատառ էլ ծնողացը հարկադրի ծամելու և կուլ տալու։

Այս տանջանքներն առ ոչինչ համարելով՝ լի յուսով և մեծ համբերութիւններով սպասում էին հայերն այն օրին, որ պէտք է միանգամից թափ տային իրանցից բռնութիւնի լուծը։ Նրանք չխաբուեցան իրանց ակնկալութիւնի մէջ, մի գեղեցիկ առաւօտ ուեսեց հայերին երկար տարիների սպասած ազատութիւը, ահ ու դողով, ըստ սովորականին, գիշերն անցկացրին նրանք, իսկ առաւօտը նրանց կրծքի վրայից մի ծանր բեռ վայր գլորուեց։ Այդ օրն էր Թաւրիզի առման օրը։

ԺԹ.

Պասկևիչը վիրաւորուած պարսից գահաժառանգ իշխան Աբբաս-Միրզայի խարդախ ու խաբեբայ քաղաքականութիւնից և վշտացած Հասանխանի արիւնռուշտ աւերմունքներից, Երևանն առնելուց յետոյ՝ իւր արշաւանքներն ուղղեց Թաւրիզի վերայ և առանց պատերազմի տիրեց քաղաքին և շրջակայ տեղերին։

Հայերի աստղը ծագեց, յանկարծ՝ իբրև թէ հեռագրով՝ իմաց տուեց իրանց այս աւետիքը, մոռացան միանգամից ամէն կրածները և մայր ու մանուկ բառաչելով, գոչելով, խնդութեան աղաղակներով դուրս թափուեցան իւրեանց թաղից գրկելու նորաեկ քրիստոնեայ ազատարարներին։

Լազարեանց տոհմի նշանաւոր ժառանգներից մէկը—Ղազարոս գնդապետն առաջնորդում էր ռուսական բանակին՝ իբրև խաղաղութիւնի կարապետող։

Հոգևորական դասն ամենայն փառաւորութիւնով զգեստաւորուած, եկեղեցական զարդերով, խաչերով ու խաչվառներով դիմաւորում էր թանգագին հիւրերին, իսկ պարսիկներն իւրեանց որջերն էին մտել ու դռան փականքի ծակից մտիկ տալիս. աւելի մոլեռանդներն երեսների վերայ տարածուել էին ու աչք ու ականջ փակել, որ չը տեսնեն ու չը լսեն քրիստոնէից փա-

ռաբանութիւնները։ Թնդացին այնուհետև ողջ Ատրպատականի հայ եկեղեցիների գմբէթներից զանգակների ներդաշնակ օրհներգութիւնները. դարերով քրիստոնեայ ժողովրդին աստուածային տաճարը հրաւիրող աւետաբեր զանգահարութիւնները չէին լսուել ոչ մի գիւղում, պարսիկ ականջը չէր համբերել ղուռանը մեկնողների միապաղաղ ձայնի հետ կցել քրիստոնէի զանգակի հնչիւնը. երբեք տախտակ էր մինչև այդ երջանիկ օրը միմեանց կապած եկեղեցի յաճախողների սրտի ուրախութիւնը, այն էլ այն ժամանակը պէտք է բաբախէին, երբ մարգարէի սիրելիներն իւրեանց նամազն արած վերջացրած լինէին. Նամազի սրբութիւնը կարող էր պղծուած համարուել և ընդունելի չլինիլ ալլահին, եթէ նորա հետ խառնուէր քրիստոնէից անընդունելի աղօթքը։

Լազարեան Ղազարոս իշխանն առաւօտեան աստղի նման փայլում էր ամեն տեղ, նա էր այն մագնիսը, որ իւրեան էր քաշում քրիստոնեայ հայերի սիրտն ու ոտքերը, Պարսկաստանի խորքերից գունդագունդ բոկոտն վազում էին հայերը գոնէ մի անգամ տեսնելու այն արեգակը, որի փայլն և ջերմութիւնը զարթացրել էր իւրեանց հոգին դարաւոր մեռելութիւնից, տեսնել և իսկոյն մեռնել, տեսնել և իւր կրած տանջանքները մոռնալ։

Պասկևիչը չէր սխալուել հրաւիրելով Պե-

տէրբուրգից Ղազար Լազարեանցին, ուր նա ոտք էր դնում, ամէն տեղ գտնում էր հայերի մեծ բազմութիւն, նրա մտքումը ծագեց գաղթեցնել բոլորին ռուսի երկիրը. Հայի աշխարհաշինական յատկութիւնը վաղուց գրաւել էր ռուսաց ուշադրութիւնը։ Մեծն Պետրոսը իւր յեղափոխութիւնների ծրագրի մէջ հայ վաճառականների հետ յարաբերութիւն կապելը նոյնպէս մտցնելը բարւոք համարեց. Նա իւր հեռատեսութիւնովը նկատեց հեռուից հայ ազգի վաճառականական և երկրագործական ընդունակութիւնները, հրովարտակներով և արտօնութիւններով շտապեց ապահովացնել իւր երկիրը գաղթող հայերի վիճակը։ Մեծ էր, այո՛, Պետրոսը և հանճար, նա հասկացել էր, որ մի կիսավայրենի ազգ զարգացնելու համար հարկաւոր էր ծանօթացնել նրան իւրանից աւելի յառաջադէմ և խելացի տարրի հետ. Հայի ճարպիկութիւնը, նորա առևտրական հմտութիւնները չէին կարող փրկարար ազդեցութիւն չանել ռուսների վերայ—այն ժամանակուան տգէտ և անկիրթ ռուսների։

Հայերը թէպէտ Պետրոս Մեծից շատ յառաջ կապ են ունեցել միշտ Ռուսաստանի հետ, բայց ռուսների այս մեծ լուսաւորիչն ամենքից աւելի հասկացաւ հայերի օգտաւէտութիւնը և խոստացաւ իւր հզօր պաշտպանութիւնը։

Պետրոսի շուքովը գնացին հետզհետէ ռուս-

սաց պատմութեան մէջ փայլուն տեղ բռնող մեր անորոգիչները, որոնցից մինը՝ Եկատարինէ Բ-ը նշանաւոր է իւր ամենամօտիկ յարաբերութիւններովը և տուած մեծամեծ իրաւունքներովը հայերի այն ժամանակուան առաջնորդ Արղութեան Յովսէփ Երկայնաբազուկ արքեպիսկոպոսի հետ։

Այն ժամանակներից ահա մտել էր ռուսաց քաղաքակրթական ձգտման մէջ հայերին իւրեանց կողմը գրաւելու և գաղթեցնելու մեծ նպատակը և հէնց այդ էր, ասացի, Պասկևիչի բռնած քաղաքականութիւնը։ Նա անցնում էր և պարսիկ ազգաբնակութիւնների միջով և հայաբնակ գաւառներով, նա տեսնում էր, որ ինչտեղ այս ճնշուած ազգի քրտինքը թափուել է, այնտեղ լեռներն ու ձորերն էլ կանաչել ու պտղաբերել են, իսկ պարսիկն իւր աւերիչ ծուլութիւնովն անխնամ ու անմշակ է թողել ամենաբարեբեր տեղերն էլ։

—Հա՛, պէ՛տք է գաղթեցնել այս արդիւնաշատ ժողովրդին, որանք իմ հայրենիքի համար կարող են անհատնելի եկամտի աղբիւր լինել, թող իմ անունս միայն ռազմագիտական հմտութիւնի մէջ չը փայլի իմ ազգային պատմութեան տարեգրերումը, թող նրա հետ կըցուած լինի և աշխարհաշինական ընդունակութիւնս, վճռեց հեռատես ու յաղթող Պասկևիչը

և իւր այդ նպատակն իրագործելու համար՝ ամենաճիշդ միջոցը ձեռք առաւ։

Պասկևիչը լաւ գիտէր, որ այս յաջողութիւնը ձեռք բերելու, աշխարհաշէն կոչումին արժանի լինելու համար ամենաուղիղ ճանապարհը մի նշանաւոր և ազդեցութեան տէր հայի ձեռքով գործ տեսնելն էր, Պասկևիչը գիտէր, որ Լազարեան մեծ տոհմն իւր բոլոր անդամներով շատ յարգ և նշանակութիւն ունի Պարսկաստանի, Հնդկաստանի և Ռուսաստանի հայերի մէջ, այդ էր պատճառը, որ նա շտապեց առնել կայսեր հաճութիւնը և հրաւիրել Ղազարոս Լազարեանցին իւր բանակը։

Եկաւ աղայ Յովակիմ Լազարեանցի որդին, եկաւ շքեղաշուք պատուանշաններով կուրծքը և ուսերը լցրած, այդ շլացուցիչ շքանշանների հետ միացրեց իւր քաղցր լեզուն, իւր սիրալիր ընդունելութիւնը, իւր զուարթադէմ և ուրախ դրկախառնութիւնը և ահա՛, բոլոր Պարսկաստանի հայերին իրան քաշեց։

Խելօք և քաղաքագէտ էր Պասկևիչը, ուրիշ աւելի յաջող միջոց չէր կարող գտնել նա իւր նպատակն իրագործելու համար։ Այդպէս է աշխարհքիս բաները, այդպէս են հասնում իւրեանց մտադրութեանն ամէն տիրապետութեան բաղձանք ունեցողները. ծառի որդն իրանից է գոյանում։

Խե՛ղճ հայեր, ի՞նչ անէին, որ չգիտէին Լազարեանցի ոտքը, դարերով քաղցր ակնարկու-

թիւն ոչ ոքից չէին տեսել, իւրեանց ջերմեռանդ հպատակութիւնը չէր գնահատուել, հաւատարմութիւնն և անհաւատարմութիւնը մի օրինակ պատժուել էին, իսկ այժմ ձայն է հասնում, թէ ռուսաց բանակի մէջ իւրեանց փրկելու համար եկող առաջին մարդը հայ է, իւրեանց եղբայրն է, Լազարեանց անուանի տան մի անդամն է, ձայն է հասնում, որ հայի խաչն ու աւետարանը, նրա շարականներն ու թափօրը ռուս զօրքին ծնկան վերայ չոքացնում են, թէ քրիստոնեայն եկել է քրիստոնէի քամակից և իւր հարազատ հայի ձեռքով իւր ազատութիւնն է աւետում։

Տե՛ս, թէ ի՞նչ տեղն է հասել, պարսից մայրաքաղաքի գլուխը հիմա հայ է, Լազարեանը հիմա Թաւրիզի քաղաքապետն է, առաջին անձնաւորութիւնն է, որի ձեռքին է կեանք և մահ վճռելու իրաւունքը։ Պասկևիչը քաղաքն առնելուց յետոյ՝ Լազարեանին յանձնեց Ատրպատականն և վերադարձաւ. նա հաւատի էր, որ եթէ քաղաքական դաշնադրութիւնն երկար էլ չթողնի իրենց Թաւրիզում մնալու, հայերը ոչխարի նման վազելու են իւրեանց սիրելի քաղաքապետի ետևից, այնքան միայն լինի, որ ինքը Պասկևիչը յաջողեցնի դաշնագրի մէջ մտցնել պարսկահպատակ քրիստոնեաների յօժարակամ գաղթելու համար մի յօդուած։

Ժ.

Պարսիկը նեղը մնաց, Պասկեւիչի անունը սարսափ բերեց Աբբաս-Միրզայի և Ֆաթալի շահի վերայ և ճկեց նորանց գոռոզ վիզը՝ կատարելու ռուսաց պահանջը, մանաւանդ, երբ մի քանի ժամանակ խաբեբայ հնարներով խաղաղութեան պայմանը ուշացնելուց յետոյ Մինան և Արտաւիլն ռուսներից առնուելու գոյժըն իրանց հասաւ, բոլորովին յուսահատուեցան և էլ երկար չմտածեցին, Պասկեւիչի ցանկութիւնի համեմատ դաշն կապեցին։

Մի տարի տրուեցաւ իրաւունք գաղթելու ցանկացող քրիստոնեաներին, հինգ տարի էլ ժամանակ նշանակուեց ծախելու իւրեանց տները, այգիներն ու ամէն անշարժ կալուածքները, բայց հայերն էլ ժամանակի չնայեցին, բարձի թողի արին ինչ որ իւրեանց պապերի ձեռքովն, իրանց մատների աշխատանքով յառաջ էին բերել, լալով՝ բայց ուրախութիւնով թողին իւրեանց տնկած ծառերը՝ ծաղիկը վրէն և խաղողի ողթերը՝ կոկոմը բացուելուս, չփչեցին այն դառը քրտինքը, որ արեգակի տակ տապակուելով թափել էին ապառաժները պտղաբեր անելու համար։

Մեծ էր, արդարև, այս զոհաբերութիւնը, հայերը թէև գիտէին, որ հինգ երկար տարիներ արտօնութիւն ունէին իւրեանց սեպհակա-

նութիւնից չզրկուելու, բայց ճանաչում էին պարսիկներին, լսել էին նորանց խորամանկ կառավարութիւնի բռնած խարդախ անօրէնութիւնը, ծածուկ պատուիրած էր ամէնքին՝ չը համարձակուիլ գնելու և ոչ մի գազ գետին և ոչ մի կճուճ ու բժուժ, թէև կիսագնի, թէև ձրիապէս ձեռք բերելու էլ լինէին այդ գնողները. պարսկական կառավարութիւնը հրամանը ծածուկ էր արել, իսկ իւր գործակալների ձեռքով տականց հայերին հասկացնում էր, որ ձեռք վերցնեն իւրեանց սեպհականութիւններից, յոյսները կտրեն մի սև փող անգամ շահուելու իրանց թողածների համար։ Գիտէին հայերը պարսից անպիտանութիւնը, հաւատացին և յանձն առան տանելու և այդ զրկանքը, բայց որպէս զի բոլորովին ձեռն ունայն չը մնան իւրեանց արդար վաստակից, վստահացան դիմելու իւրեանց փրկութիւնի համար աջ կարկառող ռուսաց տէրութեանը, խնդրեցին, աղաչեցին, գոնէ, իւրեանց կրած վնասի երրորդ մասի վճարումն յանձն առնել։ Նրանց այդ արդարացի խնդիրն անլսելի եղաւ, Պասկեւիչի կառավարութիւնը հնարաւորութիւն չըտեսաւ կատարելու այս իրաւացի թախանձանքը [1]։

Չը յուսահատուեցին Ատրպատականի հայերը, լաւ համարեցին ձեռք քաշել և այդ շա-

1) Տես Պատմութիւն կաթուղիկոսաց Մսերի, երես 120. տպած Մոսկուա 1878 թուականին:

հից, վիզ առնել ամէն զրկանք, միայն թէ չը զրկուէին Լազարեանցի հովանաւորութիւնից։

Բժիշկս հետզհետէ ոգեւորւում էր, նրա աչքերին նայելը ինձ համար անհնարին էր լինում, ելեքտրական կայծեր էին, կարծես, դուրս ցայտում, նրա ձայնը ազդու և ոգևորիչ էր, նա մի կրակոտ երիտասարդ էր կտրուել, նա էլ չէր այն մելամաղձոտ ծերունին, որ մի ամիս ամէն օր աչքիս առաջին էր։

—Լսի՛ր, լսի՛ր այն խօսքերը, որ ամեն կողմից առատ առատ թափում էին Պարսկաստանի իւրաքանչիւր անկիւնից Լազարեանի ոտքն ընկող ու համբուրող հայերը, լսիր և մի՛ մոռանար ոչ մի բառ, որ հետ առ հետ կրկնելու եմ քեզ, շեշտեց բժիշկս, կարելի է պատմութիւնը մի օր իւր էջերի մէջ կը դրոշմէ հայի հայասիրութեան այդ ապացոյցները, բայց կենդանի վկաներից շատ սակաւների յիշողութեան մէջ են մնացել, կը վերջանան ինձ պէս փթած ու օրերն անցկացրած ծերունիները, Նախիջևանի և Երևանի գաւառներում հարիւրաւոր գիւղերում զետեղուած պարսկական գաղթականները կը մոռանան իւրեանց պապերի ծննդեան տեղը, կը ջնջուի յիշողութիւնից դարերով նոր հայրենիք դարձած Պարսկաստանի անունը, և այն ժամանակը շատ ուշ կը լինի հնախոյզներին զուտ ճշմարտութիւնը ականատեսներից լսել։

—Ես ոչինչ չէի պատասխանում, ես միայն ապշած նայում էի բժշկիս երեսին։

—Լսեցինք, ասում էին հայերը Լազարեանին, քո գալուստը, բորբոքուած չարունակում էր բժիշկս, և անհամբեր ցանկանում էինք քեզ տեսնելու. տեսանք՝ և ուրախ ենք ու մի և նոյն ժամանակը տխուր. հիմա դու մեր գրկումն ես, բայց ա՜խ, երանի՜ թէ յաւիտեան չբաժանուէիր մեզանից, տխուր ենք, ասացինք, որովհետև, կամ պէտք է երբէք չը գայիր ու մենք լուռ ու մունջ կրէինք այս ծանր լուծը, որ յորդւոյ որդի քաշել ենք մենք և մեր հայրերը, և կամ եկել ես, մեզ էլ հետդ տար, մենք չենք ուզում քեզանից զրկուիլ, վեհապանծ իշխա՛ն, դո՛ւ՝ մեր արիւնը, մեր զարմը, մեր որդին, մեր եղբայրը. մենք էլ այստեղ չենք մնալ, կը գանք՝ ուր դու գնաս, մեր քայլերը քո քայլերի տեղը պէտք է դնենք, տա՛ր, տա՛ր մեզ, թող մենք մեռնինք քրիստոնեայ տէրութիւնի ձեռքի տակ, թող շնչենք այն օդը, որ դու, և ձեր երջանիկ գերդաստանն էք ծծում։

—Բայց դուք ո՞րտեղից այդպէս մանրամասնաբար գիտէք այդ ամէնը, յանդգնեցի ես ընդհատել բժշկիս, դուք գաղթականներից մէ՞կն էք, կամ թէ պարսկաստանցի ականատե՞ս։

Երանի՜ թէ չէի բացել բերանս, բժիշկս սաստիկ բարկացաւ, վեր թռաւ տեղից և կամենում էր գնալ։ Ի՞նչ աղաչանք, ի՞նչ զղջումն

իմ կողից, հազիւ թէ յետ եմ պահել, երկու անգամ բռնել եմ դողդոջուն ձեռքն և ներողութիւն խնդրել։

—Գիտէ՞ք արդեօք Լազարեանը Պասկեւիչի նպատակն ու միսիան, շարունակեց հանդարտուելով բժիշկս, չեմ կարող հաստատապէս ասել, աւելի չըգիտելը հաւատալի է, որովհետև նա շտապեց իւր կողմից Պասկեւիչին հաղորդելու այս լուրը և իւր կողից միջնորդելու, որ չը գլանայ նա հայերի աղաչանքն և խնդրուածքը ի կատար ածելու, գաղթեցնէ նրանց Պարսկաստանից։

ԽԱ.

1828 թիւն էր, գարուն էր. Պասկեւիչը վաղուց կապել էր Թուրքմանչայումը պարսից հետ խաղաղութեան դաշն և այժմ Թիֆլիսումն էր. Լազարեանի նամակը իրան էր հասել և նա զգաց որ լաւ յարմար միջոցն է իւր մտադրութիւնը իրագործելու։ Հիմա արգելք չկար, Թուրքմէնչայի դաշնագրութեան մէջ գաղթականութիւնը թոյլատրուած էր։

Գրեց Պասկեւիչը Լազարեանին սկսելու գաղթականութիւնը, հրամայեց նրան բնակեցնելու գաղթականներին Նախիջևանի, Երևանի և Արցախի գաւառներումը։ Դաշնագրութեան զօրու-

թեամբ՝ այս երկիրներն այնօրից ցայսօր մնացին ռուսաց իշխանութեան ներքոյ։

Լազարեանն այն միջոցումը՝ հրամանատար էր թողուած Պարսկաստանումը ռուսաց բանակին մինչև պայմանների կատարումը։ Լազարեանը հրաման ստացաւ Պասկեւիչից անձամբ առաջնորդելու գաղթականներին։

Եւ ահա Լազարեանը բանակի վարչութիւնը յանձնեց մայեօր իշխան Մովսէս Զաքարեան Երկայնաբազուկ Արղութեանցին ու ինքն ընկաւ պարսից երկիրները գաղթականներ ժողովելու։ Մարաղայ, Ուրմի, Սալմաստ այցելեց նա և ամէն տեղ սիրալիր ընդունելութիւն գտաւ, ամէն տեղ աղինման հայ երկրտանի ոչխարները լիզում էին Լազարեանի քղանցը, ամէն տեղից կարճ միջոցում նրա առաջը դուրս եկան գաղթելու համար կազմ և պատրաստ՝ հաւատակից, ազգակից և փրկիչ ձայնելով նրան։

Ծայր էր դարձել Լազարեանը, պարսկական դարվիշի դեր էր յանձն առել. նա բարձրանում էր մի բլրակի, կամ քարափի վերայ և գրաւիչ խօսքերով նկարագրում նրանց նոր գնալիք աւետեաց երկիրը։

Հինգ տարի հարկերից ազատ լինելու տէրութիւնից շնորհուած արտօնութիւնը, երեք տարուան արդարութեան ատենից խոյս տալու իրաւունքները, ազատ քաղաքացիութիւնի և քրիստոնէական կրօնը ազատ պաշտելու աւետի-

քը չէին կարող հայերի սիրտը չըլցնել ըղձակաթ սիրով դէպի իւրեանց նախնիքների հայրենիքը։ Իսկ Էջմիածինը—ամէն մի հայի սրտի նուիրականութիւնը—ձայն էր տալիս իւր սպասաւորների ձեռքով Հայաստանից հեռու բնակուող հայերին մի կենտրոնի մէջ՝ իւր գրկումը ժողովել։

Ներսէս աշտարակեցի արքեպիսկոպոսը, որի դառն մահուան յիշատակը դեռ չի լուացուել ամէն հայի յիշողութիւնից, գլուխը յետ էր դրել այդ գաղթականութիւնն իրագործելու մասին, վաղուց հեծում, հառաչում էր ազգասէր հոգևորականը հայերի տարագիր ընկած լինելու պատճառաւ. Նա ինքը, ինչպէս վերջն իմացուեցաւ, ընդդէմ էր գաղթականութեան սկզբունքին, բայց այս անգամինը նա թոյլ էր տալիս, այս գաղթականութիւնը նա ցրուած հօտը իւր սեպհական փարախը հաւաքել էր համարում։

—Աւա՜ղ, հառաչեց բժիշկս, երանի՜ թէ Ներսէսի նման հասկանային ուրիշ անգամների գաղթականութիւնների սկզբնապատճառները. հազար անէծքների ու մեղադրանքների են արժան Հայաստանից օտար երկիր, կամ Հայաստանից Հայաստան գաղթեցնողները։ Թո՛ւք և նախատի՛նք այնպիսիների յիշատակին։

Ներսէսն ուղարկեց, ասացի, Լազարեանին գործակից եպիսկոպոսներ ու վարդապետներ, որ համոզեն հայերին մօտենալու Էջմիածնին՝ իւրեանց մօր սրտին։

—Փութացէք, որդի՛ք, համոզում էին քարոզիչ հայերը Պարսկաստանի հայերին, փութացէ՛ք ձեր բուն աշխարհքը՝ Արարատեան ամենապարարտ և բարգաւաճ երկիրը, ուր մարդկութեան ազգի օրօրոց—Մասիս լեռն ու Լուսաւորիչ պապի աթոռ—Էջմիածինն է։ Եկէ՛ք, ո՛վ աղէտների մէջ տառապած հայեր, թողէք ձեր նոր պապերի գերեզմաններն և եկէք նրանց կարօտը լցնելու ձեր հին նախնիքների սուրբ շիրիմներից. հայրենի հողի վերայ կը ցամաքի ձեր աչքերի արտասուքը, այնտեղ կը դադարին ձեր հեծեծանքն ու թշուառութիւնները, այնտեղ, գոնէ, կ'աճիք և կը բազմանաք ձեր հայրական հողի վերայ, Էջմիածնի լուսաճաճանչ խաչի հովանաւորութեան ներքոյ։

ԻԲ.

Գաղթականութեան ծայրը Նախիջևան հասաւ, պարսից հայաբնակ գիւղերն ու գաւառները աւերակ դարձան և հայի արիւն քրտինքով ծաղկեցրած ու աճեցրած այգիները գայլերի ու գազանների ճանկն ընկաւ։ Բայց երանի՜ թէ, կամ չէին գաղթել հայերն ամենևին և կամ բոլորը ձգէին հեռանային իրանց երկրից։

Բժիշկս այս խօսքերն ասաց ու էլ չկարողացաւ շարունակել, նա յուզուեց, նա լցուեց,

նա արտասւում էր երեխայի նման, նա գլուխը դէմ տուեց իմ բարձին։

Ես չը կարողացայ արգելառիթ լինելու նրա սրտի փղձկանքին, ես մի կենդանի արձան, կամ ուրուական էի դարձել, ես չգիտէի ի՞նչ անեմ. ես համբուրում էի չարունակ նորա գլուխը։

—Երեխա՞յ եմ, ի՞նչ եմ, բարձրացրեց բժիշկս գլուխը՝ իմ բազմադիմի համբոյրների չօշափմունքը զգալուց յետոյ, մոռացել եմ, որ հիւանդի հետ եմ խօսում. ներիր սիրելի՛ս, նայեց նա քնքշաբար երեսիս, միտքս մի անախորժ դէպք եկաւ, որ այն ժամանակն է պատահել և որ, ի հարկէ, կիմանաս. ես չկարողացայ այնուհետև անտարբեր մնալ։

—Շարունակեցէք, ասացի, ես բոլորովին հանդարտ եմ։

Նա երակս չօշափեց։

—Ապրի՛ս, ասաց. հոգեկան զգացմունքդ բնական դրութեան մէջ է։

ԻԴ.

—Երանի՜ թէ կամ չէին գաղթել, ասացի, հայերը, կամ ամէնքն էին գաղթել, սկսաւ կըրկին բժիշկս, տարաբաղդաբար այդպէս չեղաւ։

Երկու տեսակ ժողովուրդ մնացին քրիստոնեաներից, որոնք չուզեցին ձգելու իւրեանց

ծննդեան տեղը։ Դորանցից մի մասը սակաւաթիւ հայեր էին, որոնք չուզեցին զրկուելու իւրեանց մեծ մեծ կալուածքներից. միւս մասը կաթոլիկներն էին, որոնք սկզբից մինչև այդ օրը չմասնակցեցին հայերի ուրախութեանը։

Կաթոլիկ միսիոներները, երևի, գիտելով Ռուսաստանի քաղաքականութիւնը, որ չի թոյլ տալի կաթոլիկական կրօնի տարածուելն իւր տէրութեան մէջ, գիշեր ու ցերեկ սև ներկով էին ներկում հայերի յոյսը, սուտ ու սխալ անմխիթար լուրեր էին տարածում իւրեանց ժողովրդի մէջ ռուսների վերաբերութեամբ, պարսից մեծամեծների պաշտպանողական խոստմունքն անխնայ բաշխելով իւրեանց հօտին, խոստանում էին սակաւաքանակ քրիստոնեաներին տէր չինելու հայերի թողած կալուածքին, եթէ միայն նրանք չը գաղթեն։ Միսիոներները շատ լաւ գիտէին, որ իւրեանց կողմից այդքան առատօրէն ու անխնայ, խօսքով միայն, բաշխած շնորհաբաշխութիւնները և պարսից ստապատիր քաղաքականութիւնը խեղճ միամիտ ժողովրդի դրութիւնը մի մազաչափ բարւոքելու չէին, բայց միւս կողմից մի կէտի վերայ շատ վստահ էին, որ այդպիսով իւրեանց ազդեցութիւնը կը մեծանայ պարզամիտ խաների ու բէգերի վերայ և իւրեանց վանքերը կը հարստանան։

Այդ անարդար չահասիրական նպատակին հասնելու համար՝ անկուշտ քարոզիչները զըր-

գտում էին պարսկական ոխակալութիւնը չգաղթել ցանկացող հայերի դէմ. Մնացող հայերի դիտաւորութիւնն այն է, ասում էին նրանք, որ այստեղ կենալով՝ օրինաւոր ժառանգ համարուին իւրեանց ազգականների կալուածքներին և լրտեսեն պարսից վարմունքը դէպի ռուսաց քաղաքականութիւնը։ Այնպիսի փաստեր էին գտնում պապի արբանեակները, որ ամէն մի հեռատես քաղաքագէտի էլ կասկածի տակ կը ձգի, ո՞ւր մնաց պարսիկների նման դիւրահաւան կարճամիտներին։

Այդ հայերը չէ՞ին, կրկնում էին Քրիստոսի պաշտօնեաները, որ խաչ ու խաչվառով դիմաւորեցին ռուսներին, դրանք չէի՞ն, որ դրդեցին ռուսներին գաղթականութիւնի յօդուածը մըտցնելու դաշնագրութեան մէջ, դրանց ազգ ու ընտանիքը չե՞ն, որ գնում են, հիմա իւրեանք ընչո՞ւ մտքները փոխեցին։

Պատասխանն էլ վաղուց պատրաստ ունէին։ Աշխարհքը քանդելու պատճառ եղան, ասում էին, որ իւրեանց հողերը լայնանան, կալուածքներին տէր դառնան ու այս երկրի բերքը միշտ վերցնեն ռուսի հողն ուղարկեն. սրանք մնում են այստեղ միայն իբրև գաղթողների ունեցած անշարժ սեպհականութիւնների պահապաններ։

Այս բամբասանքը մասամբ արդարացի էր համարւում։ Սկզբումը պարսից կառավարութիւնը կարծեց, թէ ռուսները բռնի ստիպմունքով են հայերին քարշում տանում, թէ Լազար-

եանը գործում է իբրև ռուսի ատրճանաւոր, այդ պատճառաւ էլ շատ երկմիտ չէր հայերի մասին։ Բայց երբ ինքն պարսկական տէրութիւնը իւր կողմից նշանակեց երկու վերատեսուչներ գաղթողների վերայ, երբ տեսաւ, որ դանակն էր ոսկրին հասել, հայերն իւրեանք ինքնակամ էին ցանկանում ազատուիլ պարսկական լծից, այն ժամանակն աւելի նշանակութիւն տուեց կաթոլիկ հոգևորականներին, աւելի հաւատ ընծայեց նրանց։

Պարսկից ոչ պակաս երկմտում էր հայերի յօժարակամ գաղթականութեան մասին և անգլիական կառավարութիւնը, նա էլ իւր կողմից պաշտօնապէս պարսից վերատեսուչներին գործակից ատրճանաւորներ նշանակեց։

Սակայն աւա՜ղ, լուսաւորեալ անգլիացին էլ տգէտ պարսից նման խաբուեց եզուիտ քահանաներից, և՛ նա հաւատաց, թէ փոքրաթիւ հայերն իբրև լրտեսներ և ռուսի շահին պահապան են թողւում Պարսկաստանի մէջ։ Քաղաքակրթեալ եւրոպացին կասկածական աչք ձգեց մի բուռը խեղճ ժողովրդի վերայ։

Դու այս կէտը մի՛ մոռանալ, յանկարծ խօսքը կարեց բժիշկս, ես յոգնած եմ; քեզ էլ հարկաւոր է հանգստութիւն, վաղը պաշտօնական-այցելութիւններիցս յետոյ՝ պատրաստ եղիր լըսելու շատ բաներ։

Էլ ժամանակ չունեցայ նկատողութիւն ա-

նելու, բժիշկս գլուխն առաւ, փախաւ, Թող նա ներէ. նա էլ ինձ չի կարող խաբել, վերջին արկածները նրան գրգռում էին, նա վախեցաւ որ առաջին տեսարանը չկրկնուի։

ԻԴ.

—Բարի լոյս։

—Հիւանդներիդ այցելութիւնը վերջացրի՞ք։

—Ուզում ես ասել, թէ պատրաստ ես լսելու պատմութիւնիս շարունակութիւնը։

—Անհամբերութիւնից պատռւում եմ։

—«Որ համբերեսցէ, իսպառ նա կեցցէ», սովորական բարակ ժպիտով շնչերակս բռնեց բժիշկը միւս առաւօտը. Վախ չունի, այսօր երեկուանից աւելի հանդարտ է, գլուխը շարժեց նա. տաքութիւնդ աննշան է, մի շաբաթից վանդակից իսպառ դուրս կը թողնեմ, թեւերդ եկել են, հերիք ճգնեցիր։

—Այդ մասին յետոյ կը մտածենք, աթոռը մօտ քաշեցէք։

Բժիշկս Մովսիսին նշանացի դէպի դուռն ուղղեց, նա պատրաստուեց սկսելու. մի վայրկենաչափ կանգ առաւ նա, կարծես մտածում էր ո՞րտեղից սկիզբն անի։ Ես նկատեցի, որ նորա աչքերն աւելի խորն են ընկած այս առաւօտ, պէտք է, որ անքուն գիշեր անցկացրած լինէր։ Ես չը տեսնելու տուի, չը կամեցայ խօսեցնել,

րոպէն թանգ էր ինձ համար, բայց նա, տես, ի՞նչ սկսաւ։

ԻԵ.

—Մայիս ամիսն է, գարունն իւր բոլոր փառաւորութիւնովն ամէն շնչաւորների վերայ իւր հրաշալի տպաւորութիւնն է ներշնչել, վարդահոտը՝ բարակ զեփիւռի շնորհիւ՝ ամէն կողմը հետդ ման է գալիս և քթիդ հոտոտելիքը գրգռում, լեռ ու դաշտ կանաչելով, սեզերով ու սիրի սիրի համեստ երեքտերեան խոտերով զարդարուել են, երփներանգ հազարաւոր ծաղիկները երեսիդ ծիծաղում խնդում են ու ընդհանրապէս, մի բուռը հող եղած տեղը՝ բուսական թագաւորութիւնն իւր գահն է դրել. քարափների ծերպերիցն էլ կեանք է արտադրում, մի կտոր կոշտ ընկած տեղն է՛լ կանաչի գլուխ է դուրս ցցուել, էլ ապառաժ ու մերկ գետին չի մնացել։

Սքանչելի է մայիսը. այդ հրաշալի ամսի մէջ բնութիւնը դառնում է մի թովռան երեխայ, մտածում, հնարում է ամենատեսակ խաղեր, ամէն մի արարածի մէջ նա իւր խաղալու առարկան է գտնում։ Տես՝ թէ ի՞նչպէս է զուարճանում նա իւր որդիների վերայ—իւր փոքրիկ, սիրունիկ, օդապաց թեւաւորների վերայ, տես՝ ի՞նչ կեանք, ի՞նչ շարժողութիւն է դրել նրանց

մէջ. Նայի՛ր՝ ահա՛ նրանք իւրեանց երջանկութեան ամենակատարեալ կէտումն են։ Աստուա՞ծ իմ, այս ի՞նչ թռչուններ են, որ իւրեանց լըխպոր [1]) աղուամաղը դեռ չդուրս եկած ձագերի համար կերակուրներ են տանում։ Ո՞ւր է վազվզում օդի մէջ գալարուն գծերի հետք թողնելով ծվծվան ծիծեռնակը, ինչո՞ւ ճռեկի գըլխին սուր կտուցով չաքչեց ճռուողիւն սարեկն ու բերանին կախ՝ թռաւ դէպի պատի խոռոնչակը [2]), ընչո՞ւ մանր մժեղների քամակիցն է ընկել մոխրագոյն բիւլբիւլը, հաւաքում նրանց ջրերի ափերից ու մի թռիչքով գալիս մտնում է ուռենու վերայ կախ ձգած փափուկ ձեռնոցի մէջ՝ իւր բնի մէջ։

Նայիր այն ճնճղուկի, կամ ծառկուտուտի բներին, ինչպէս քնքշուշիկ ձագուկները դեղին երիզը կտուցի շրջապատին, բանում են իւրեանց բերանները, լեզուակները հանած, ճիչ ու ծվոց բարձրացրած՝ խնդրում են իւրեանց մօրից կերակուր, ի՞նչ քաղցր ճռուողիւն է, որ բարձրացրել են նրանք և ամէն մինը նրանցից ուզում են համոզել իւրեանց մայրիկին, ուզում են կարեկցութիւն շարժել դէպի իւրեանց, բնազդումն և ինքնապահպանութիւնը նրանց ամէն մէկի մէջն էլ կայ, եսականութիւնը բնական ե-

1) Լխպոր նշանակում է ամենակակուղ թռչունի մազ, որի դեռ ոչ մի ոսկրային մասը չի պնդացել:

2) Խոռոնչակ—խոռոչ:

րեալ է, դեռ աչքերը չբացած՝ նրանցից ամէն մինը իւր կեանքը երկարելու հոգսումն է։ Սակայն այնպէս չի կարգադրել բնութեան ամենագէտ արարիչը, թող՝ ինչքան կուզեն սիրուն ճուտիկները միմեանց յառաջ կտրեն, թռչնիկ մայրն իւր կարգը լաւ գիտէ, նա հերթը չի կորցնում, նա իւր հաշուի մէջ չի սխալւում, նա գիտէ, թէ որանից առաջ կերակուրը որի՞ բերանըն է դրել. նա դեռ այն էլ հասկանում է, թէ իւր ընկեր արուն որի՞ն է կերակրել. նա ուրախանում է իւր նաշխունիկների վերայ, մի երկու րոպէ էլ կանգ է առնում բնի մօտ, քրքրում է կտուցիկով ձագերի տեղի փափուկ բուրդը, փափկացնում է նրանց անկողինը ու ախտը վերցրած՝ յետ է թռչում կրկին դէպի դաշտը՝ դէպի իւր սիրելիների խնամատարութեան սուրբ պարտականութիւնը։

Աչքդ միւս կողմը դարձրու, և ահա ծառերի ճղնիկների վերայ անճեցական պարտաւորութիւնը շուտ աւարտած երջակագոյն ծտերը հպարտ հպարտ ոստէ ոստ են թռչկոտում ու ցոյց տալիս իւրեանց կողքին դողալով կանգնած զաւակներին թռչելու ձևը. մի քանի անգամ այս կողմից այն կողմն են անցկենում, սիրտ են տալիս առաջին անգամ բնից դուրս թողած ձագին՝ հետևելու իւրեանց օրինակին, չվախենալ իւրեանց առջև բացուած անհուն տարածութիւնից, ճղել, անցկենալ այն վիհը, որտեղից

մայրիկն անահ թեւերը շարժելով՝ այնպէս վըստահ լողում է։

Միամիտ փոքրիկնե՜ր, չգիտելով իւրեանց թեւերի ոյժը, սկզբումը մի քանի րոպէ զարհուրական ծվոցներ են բարձրացնում, լալիս են մօր քամակից, աղաչում են, որ իւրեանց միայն չը թողայ, վզիկները ներս են քաշում և այդպիսով կամենում են իւրեանց սիրող ծնողների գութը շարժել. բայց ոչ. ամենօրեան խնամոտ մայրըն այսօր փոխուել է, նա քարասրտացել է, նա թռել գնացել է միւս ծառի վերայ կանգնել, բռնել է կտուցի մէջ անուշահամ կերակուրն ու խոստանում է նրա՛ բերանը դնել, ո՛վ որ սիրտ կ՚անի իւր մօտ գալու։ Ի՞նչ պէտք է անել, եթէ մայրիկը կանչում է, ուրեմն մի բան գիտէ, ուրեմն հեշտ է այս փոքր տեղն անցկենալը, հարկաւոր է սիրտ անել ու բաց ընկնել օդի մէջ։ Ո՛հ, ի՞նչ ուրախութիւն, ի՛նչ հեշտ բան, իւրեանք էլ միմեանց ետեւից թեւ շարժեցին, իւրեանք հիմի կանգնած են մայրիկի մօտ։

Մի քանի անգամ ձագերը մօր հետ արին այդ փորձը, միւս անգամին էլ նրա խօսքը չեն լսում, նրանք հիմի աւելի մեծ տարածութիւն կտրեցին, հիմի նրանք գտել են նոր խաղ ու պարապմունք, հիմի իւրեանց համար կերակուր էլ են կարողանում ճարել, հիմի իւրեանք կատարելահասակ են։

Մի այլ տեղում՝ անտառների մէջ ու բըլ-

րակների ձորակներումը՝ առուակների խոխոջիւնն ու ծառերի շառաչիւնն են միմեանց հետ ներդաշնակօրէն միանում և իբրև ամենաքաղցր երաժշտութիւն՝ մարդուս լսելիքի վերայ ներգործում. միւս կողմը ձորահովտի թմբին, ուր երեկ այցելուն ծարաւ պապակուած էր, այսօր մի պարզ ու սառնորակ աղբրակ է ծիծաղելով վազում ու սահում փոքրիկ ձորակի մացառուտների ու թփերի միջով։ Իսկ այդ առուակների ու կարկաչուն աղբիւրների ափերին բուսած հազարերանգ ծաղիկների վերայ թեւերը շարժելով՝ աչքեր խտտղեցնող թիթեռնիկները երկնային գեղեցկութիւն են տալիս բնութեան այդ հրաշալի երևութին՝ մանաւանդ, երբ դոցա հետ միանում է աշխատասէր մեղուն, որ ծաղկէծաղիկ թեւածելով, իւր համար մեղրի պաշար է պատրաստում։

—Ես շատ եմ սիրում մայիսի տեսարանները, խօսքը փոխեց բժիշկս, եթէ քեզ ձանձրալի չէ, կուզեմ նկարագրել այդ ամսի հովուական կեանքի քաղցրութիւնը։

Շատ էլ ուզում էի ասեմ, որ քեզանից ոչ պակաս բնագէտ ես եմ, դու միայն քո պատմութեանդ իրողութիւնը շարունակիր, քո վիպասանական նկարագրութիւններդ ինձ հարկաւոր չեն, բայց խելքս հացի հետ չէի կերել, վերևը ձեզ ծանօթացրի նրա խորթ բնաւորութեան հետ,

ստիպուած՝ յայտնեցի իմ համաձայնութիւնս և նա սկսեց այսպէս։

—Ի՞նչ ախորժալուր է հովուական սրնգի ձայնը մայիս ամսին, երբ նա մի քարի վերայ նստած, կամ լեռան գլխին թիկնած՝ սուլում է ինքնաբաւական։ Դու, չկարծես, թէ հովիւն իւր սրտի ուրախութեան համար է միայն շւուն ածում. ոչ, դրանով հասկացրեց նա իւր սիրելի հօտին, թէ ժամանակ է հաւաքուելու իւր չորս կողմը և գնացքն ուղղելու դէպի փարախը, ուր սպասում են սիրունիկ ու խատուտիկ գառները՝ լսելու իւրեանց սիրելի մայրիկների մայիւնը։ Ո՞հ, ի՞նչ հրաշալի տեսարան, ի՞նչ քաղցր րոպէ է այդ. գառները լսում են հեռուից մօր ձայնն և անհամբերութիւնից ուզում են կոտրատել գվուկի (փարախ) դուռը, դուրս թափել դիմաւորելու այն ամենաթանգագին էակին, որ իւրեանց համար կուրծքը լիքը ախորժահամ կաթն է բերում։ Մինչև որ հովիւը կը բանայ գվուկի դուռը, ուլերը—այն ճարպիկ, պստիկ սատանաները փոքր է մնում բարձրանան նորա ուսերը։

Նախանձելի է այստեղ հովուի դրութիւնը, գառն ու ուլի անուշ մկըկոցը, այծ ու ոչխարների հարայ հրոցը նրա սրտի վերայ անպատմելի տպաւորութիւն են անում, ոչ մի երաժշտութիւն չի փոխարինիլ այդ համերգին. ոչ մի մարդ չի կարող բոլոր ցաւերը չմոռանալ այն միջոցը, երբ գառնուկներն իւրեանց փափ-

լիկ դմակները շարժելով և ուլերն իրանց անհանգիստ պոչուկը խաղացնելով՝ միմեանց գըլխով են գիպչում։

Գառն ու ոչխար իրար են խառնւում. և իւրաքանչիւրը նրանցից աշխատում է գտնելու իւր մօրը կամ ձագին։ Բնազդումն և այստեղ իւր շնորքը ցոյց է տալիս, մի նուաղ հոտառութիւն բաւական է լինում մագի (էգ) ոչխարին յետ խփելու իրեն մօտեցող օտար գառանն ու հոտոտելիքը դէպի հովը բռնած՝ ցատկելու դէպի այն կողմը, ուր որ է իւր սիրելի հարազատը։ Մօր անոյշ մայիւնը, մի խանդաղատական ակնարկ թափանցում է անմեղ գառնուկի սրտին և վստահութիւն է տալիս նորան վազելու դէպի ինքն եկող ոչխարի կուրծքը, իսկ վերջինս ոտքերն իսկոյն յետ է բացանում և թոյլ տալիս իւր ամենասիրելի զաւակին ծծելու փչփչալով իւր պտուկները. իսկ իւր սրտի ուրախութիւնն և մայրական քաղցր զգացմունքն աւելացնելու համար նա անդադար լիզում է փոքրիկ գառնուկի թաւշանման մորթը։

Անխիղճ են այդ միջոցին մարդիկը, նոքա իւրեանց կենսական պիտոյքը հայթայթելու համար՝ խլում են խեղճ գառան բերանից նրա մօր պտուկն և կաթի մեծ մասը իւրեանք՛ են կթում։ Անբան անասունն, ի հարկէ, լաւ գիտէ մարդոց անիրաւութիւնը. ինչքան էլ նոքա կթեն, նա իւր զաւակի բաժինը կրծքի մէջ թագցնում է։

Այս տեսարանից ոչ պակաս ուշադրութեան արժանի է կթողների իրարանցումը։ Այս գործողութիւնը կատարում են ջահել հարսներն ու մատաղահաս աղջիկները։ Նրանք շատ լաւ գիտեն ճաշուայ կթի ժամանակը։ Գիւղական փարախները շինուած են լինում առհասարակ մի քամուց և տօթակէզ արեգակից ապահով տեղ ձորամիջում, կամ բլրի ստորոտում՝ գիւղից ոչ հեռու։ Եւ, ահա՛, մեր ամօթխածները ուսում կամ շալակում են կովկիթներն ու կճուճները, գլխներին դնում են կաթքամիչը—մաղը ու գիւղից միասին դուրս գալիս՝ երեք երեք, չորս չորս, բոլորակ եղած՝ գիւղական սիրերգը միանուագ հնչեցնելով ու խնդալով, կատակներ անելով ու միմեանց սրտի գաղանիքը բանալով, գալիս են փարախն և սպասում ոչխարի արօտից դառնալուն։ Աւելորդ է ասել, թէ նախապէս մաքրուել ու սանդրուել են նըրանք, լուացել են իւրեանց բազուկները մինչև արմունկն և քշտել, վեր են քաշել հագուստի թևը, որ թէ արգելք չը լինի իրենց ոչխարը կթելուս, կամ պանիր մերելուս, և թէ իւրեանց վերայ աչքի կոպով նայող պատանիների սիրտը բորբոքեն։ Իսկ այդ գժաստուտ երիտասարդների պաշտօնն է՝ ոչխարի գլուխը բռնելն և գառանն արգելելը մինչև կաթը կթելը։

Սկսւում է այնուհետև պանրի մեր տալն և

փռած կաթերի արաժանը քաշելը՝ իւղ չինելու համար։

—Շատ չեմ ուզում քեզ գլխացաւանք տալու, գարնան հրաշալիքը նկարագրելով, դարձաւ դէպի ինձ բժիշկս, առանց այն էլ շատ երկարեց, մի խօսք էլ մայիսուան գիշերների քաղցրութեան համար՝ խօսեմ և սկսեմ իմ պատմութիւնս։

—Վնաս չունի՛, դուք շատ պերճախօս լեզու ունիք, ես թէպէտ բնութեան եղանակների նըկարագրութիւններ շատ եմ կարդացել, բայց ձեր ասածներն ինձ համար ախորժալուր են, պատասխանեցի ես արտաքուստ, բայց, խոստովանում եմ, մտքումս անիծում էի նորա շատախօսութիւնը։

—Գիտե՞ս ի՞նչ ասել է մայիսուան խաղաղ գիշեր, գիտե՞ս ինչ կը նշանակէ այդ գոռոզ ամսի աստղալից գիշերը, ով է կարող չըզմայլել, կամ սառն աչքով մտիկ տալ ծաղափըթիթ, կենսաբոյր ծառերին ու ալեծածան արտերին, ի՞նչ երևակայութիւններ չեն զարթնիլ այդպիսի լուսնակ գիշերները ոչ միայն երիտասարդների, այլ նաև ինձպէս կեանքի դարունն անցկացրած՝ փթած ծերունիների մէջ. Ներելի չէ կրկնել ինձ պէս մի պառաւութեան մէջ կենսամաշ ալևորին հետևեալ ճշմարտութիւնը, բայց ի՞նչ արած, պիտի ասեմ. սիրահարների կեանքի փորձերով ապացուցուած է, որ մայիսուան առա-

ւօտադիմին թաչնոց գայլայլիկն և բազմափթիթ վարդի սքանչելահրաշ բացուիլը տեսնող ու լսող երջանիկ պատանիները չեն կարող սառը մնալ դէպի աստուածային անխնայ պարգևը—դէպի սէրը և թէ բնութիւնը մայիսին աւելի առաջնորդում է պատանի սրտին դէպի հակառակ սեռի քաղցրութեան ճաշակը։

Ես ժպտացի։

—Այո՛, նկատեց բժիշկս, տեսնում եմ, որ ինձ կորցրի, նպատակիցս հեռացայ, այդպէս է, ծերերը սիրում են կրկնութիւնները, երևակայութիւնը երբեմն նրանց մէջ աւելի բորբոք է լինում, բայց իմ մէջ ուրիշ առիթից է յառաջացել։

—Գուցէ ոչ առանց օրինաւոր պատճառի։

Լսիր՝ կ'իմանաս։

ԻԶ.

Մի գարնան գիշեր՝ Աբրահամի բնակած գիւղումը՝ Որմեցու տղայ կոչուած գիւղացու պարտիզի մէջ հետևեալ անցքն էր պատահում։

Պարտիզի խորքումը՝ տան կողմի պատի դռնակից՝ դուրս եկաւ մի մանկամարդ աղջիկ ու եղջերուի արագ քայլերով ծառերի միջով վազում էր դէպի պարտիզի միւս պատի տակը։

Աղջիկը՝ կ'երևի թէ, սովոր էր այս արարքին, նորա քայլերից ու անվախ և ուրախ դէմ-

քից երևում էր, որ շատ անգամ է այդ տեղովը երթևեկել, և արդա՛րև, եթէ լուսով դիտէինք, կը տեսնէինք, որ ոտքերի յաճախակի հետքերը մի բարակ շաւիղ էին ձգել դռնակից մինչև պատի տակը։

Յանկարծ, իբրև թէ գետնից ննկի նման բուսած՝ երկու կոշտ ու կոպիտ ձեռքեր գրկեցին աղջկայ բարակ և նազիկ իրանը. մի ուրիշն էլ ական թօթափել՝ մետաքսեայ թաշկինակը սեղմեց օրիորդի բերանը։

—Վերջացաւ, էլ ձայն ու ձուն չի կարող հանել, բերանը փակուեց, ասաց վերջինը գօտիով աղջկայ կռները քամակին պնդելով, գրկիր, անցկացրու փողոց, ես գնամ, ձին քաշեմ։

Խօսքը դեռ չէր պրծել, որ իբրև թէ երկնքից վայր ընկած՝ մի մի բռունցքի հարուածներ իջան փոփոխակի երկու յափշտակիչների քներակներին։

Հարուածը չեշտակի էր. ձիու քամակից գընացողը մի ճիչ միայն արձակեց ու գետին գըլորուեց շնչասպառ։

Հարուածը կխայտաջող էր։—Դևերն էլ այսուհետև կարող չեն կորզել իմ ճանկերից այս աղջկանը, ասաց առաջինը և արագապէս, առանց ժամանակ կորցնելու՝ գրկեց մի ձեռքով ուշագնաց օրիորդին և միւսովը կամեցաւ դաշոյնը հանել։

Հակառակորդն իւր բազկի վերայ վստահու-

թիւն է ունեցել, նա բռնեց դաշոյնին տարած ձեռքի դաստակն և այնպիսի ուժով սեղմեց, որ միւսի մատները յետ բացուեցին։

Անծանօթ փրկիչը դուրս խլեց աղջկայ բերանից թաշկինակը։ Օրիորդը ձայն չը հանեց, նա ուշաթափ էր։

—Այժմ էլ չի՛ յաջողիլ քեզ իմ սրի հարուածից ազատուելու, անպիտան ծերունի՛, դո՛ւ, անմաքուր հա՛յ, ասաց առաջինն և գտնելով աղջկանն ուշագնաց, ցած դրեց նորան խոտի վերայ և ըմբշամարտութեան բռնուեց իւր հակառակորդի հետ։

—Ալի՛, դու դորա հետ կարող ես հաշիւդ վերջացնել, յանկարծ խօսեց գետին գլորուած երիտասարդը, ես աղջկանը տարայ, ինձ կը գտնես մեր ժամադրեալ տեղը։

—Կեցցե՜ս, Հիւսէյի՛ն, ես իսկոյն կը հետեւիմ քեզ, թէպէտ չնծեր հայ է, դեռ շատ կորովի է, բայց իմ անունս Ալի չլինի, ես ո՛չ արժանանամ հաղրաթի Ալու սուրբ գերեզմանը լիզելու, եթէ սորա արեւը չմթնացնեմ։

—Տահէ՛ն, շտապիր հասնել փողոցի կողմի պատի տակը, ձայն տուեց ախոյեան ծերունին, տարա՜ն, Սուսամբարիդ տարա՜ն։

—Ա՜խ, հօրս ձայնն է, շփոթուեց Տահէնը, որ ինչպէս երեւում է, չէր լսել ոչ ոտնաձայնը, ոչ պարսկի ճչոցն և ոչ մենամարտողների աղաղակը։

Այդ միջոցումը Տահէնը պատի միւս երեսին սպասում էր։

—Հա՜յրս է, պէ՛տք է գլուխ առնել կորչիլ, կրկնեց նա և ոտքերի բոլոր ուժի վերայ յուսացած՝ փախաւ դէպի իւրեանց տունը, բոլորովին հակառակ կողմը։

Մի մեծ տարածութիւն վազեց Տահէնը. նա հեռի չէր իւրեանց տանից։

—Ի՞նչ եմ անում, ո՞ւր եմ գնում, այժմ հայրս տուն կը դառնայ, այնուհետեւ անարգանքըն ու յանդիմանութիւնն է իմ բաժինը, պէտք է միանգամից անհետ կորչիլ։

Տահէնը երկար չմտածեց, նա կրկին վերադարձաւ և աննպատակ դէպի անապատն էր աճապարում, նա վազում էր դէպի դիմացի մեծ ձորահովիտը։

—Տահէ՛ն, յիմար Տահէ՛ն, անխոհեմ որդի՛, ո՞ւր ես կորչում, յետ դարձի՛ր, պարսիկները Սուսամբարիդ փախցրին, ձայն էր տալիս անընդհատ ծերունի Աբրահամը, շարունակելով մենամարտութիւնը։

Տահէնը շատ հեռու էր, ծերի խօսքերի արձագա՛նքը միայն ամօթխած որդու ականջին յետ զարկեց ձորակի քարափներից. բայց, ի հարկէ, նա միջոց չունէր այդպիսի շշնչոցների վերայ ուշադրութիւն անելու։

ԻԷ.

Մեծ ձորակ էր. մի սրնթաց վտակ գոչգոչելով, քարէքար դիպչելով, հոսում էր նորա միջովը, աստղաճաճանչ գիշերուան աղօտ լոյսը շողշողում էր գետակի փրփրաշատ ալիքների մէջ, որոնք կոտրատւում էին մի փոքրիկ ջրվէժի ոտքումը։

Շահէնը խրտնած եղան նման կանգ առաւ ջրվէժի մօտ ու մոլեգնաբար աչքերը սևեռեց ջրի պղպջակների վերայ։ Չենք կարող ասել, թէ ի՞նչ էր մտածում երիտասարդն այս րոպէում, հաւանական է միայն կարծել, որ ոչինչ միտք չէր բոլորւում նորա ուղեղի մէջ։ Նա գլուխը բացասաբար շարժեց ու էլի յառաջ վազեց։

Ձորակի աջակողմեան թմբի վերայ մի քարանձաւ կար, որ իւրեանց ոչխարի ձմեռուան փարախն էր. այդտեղ վազեց Շահէնը և առանց երկարուբարակ մտմտուքի, ներս մտաւ։ Այրը մեծ և ընդարձակ էր, բայց նա շատ խորը չգնաց։ Նա նստեց հովիւների համար քարայրի ծակմուտի մօտ շինած թմբի վերայ և աչքերն ուղղեց դէպի այրի դուռը։

Լռութիւնը խանգարում էին վտակի խոխոջիւնը և լեռնաձորակի բուսեղէնների սօսափիւնը։ Շահէնին պարզ լսելի եղաւ իւր սրտի բաբախմունքը։

ԻԸ.

—Ձիու ոտնաձայն է, ո՞վ պիտի այսպէս տարաժամ դէպի այս կողմը գայ, լսեց ու մըրթմրթաց Շահէնը, ձորակիցն անցկենալու ճանապարհ չկայ, իսկ սմբակների ձայնը մօտենում է։

Էլ երկմտելու տեղիք չկար, մի ձիաւոր կանգնեց այրի մուտքի մօտ և ձիուցն իջնում է։ Ահա նա հանեց մի ոտքը ասպանդակից. նա շատ զգուշութեամբ է ցած գալիս. նա կարծես մի ծանրութիւն ունի գրկին, որ վախում է ձեռքից թողնելու։

Ձիաւորն իջաւ. նա անցկացրեց սանձը թամբի գլուխը և գրկած ծանրութիւնը ներս բերեց քարայրը։

Շահէնը պարզապէս ոչինչ չէ տեսնում, մըթան մէջ հազիւ շարժմունք է նշմարում։ Նրա սիրտը դող ընկաւ, նա հանդարտօրէն դէպի աւելի մութն անկիւնը կծկուեց, նա վախեցաւ։

Ձիաւորը, կարծես, վարժ էր տեղի դրութեանը։ Նա իւր բեռնովը ուղղակի յառաջացաւ Շահէնի անկիւնը, ցած դրեց ամենայն զգուշութեամբ գետնի վերայ իւր ծանրութիւնը և վերադարձաւ, ինչպէս երևի, ձին ներս քաշելու։

—Ո՞ւր եմ ես, մի նուաղ մրմունջ լսելի եղաւ ձիաւորի ներս բերած ծանրութիւնից։

—Ի՞նչ եմ լսում, ա՜խ, Սուսամբա՞ր, կըց-

կաւր թոթովեց Շահէնն և յարձակուեց որսի վերայ։

—Շահէ՜նս... իմ սիրելի Շահէ՜նս... դո՞ւ ես... քո ձա՞յնն է... ո՞ւր ենք մենք։

—Օգնութի՜ւն... ճչաց Շահէնը այնպիսի ուժով, որ այրի ամէն մի խորշից հարիւրաւոր արձագանքներ բարձրացան ու քարանձաւն աղաղակով լցրին։

Ձիու տէրը, որին անկարծիք ընթերցողը ճանաչեց, Հիւսէյնն էր, էլ տուն չեկաւ, նա ձիուն էլ մոռացաւ, աղջկանն էլ. ուղողը կարող էր նորան գանել ջրվէժից շատ ներքև. նա ոչ քարքարուտների և ոչ մացառների արգելքներն է բանի տեղ դնում, նա կիսաշունչ ձորն ի վայր վազում է։

ԻԹ.

—Թուրքերն ի՞նչ եղան, ո՞ւր գնացին, մենք ո՞րտեղ ենք, այս մեր պարտէզը չէ, հատուկտոր խօսքեր էր դուրս փախցնում Սուսամբարն իւր բերանից անզգայաբար։ Նա զառանցում էր, նորա ուշքը դեռ տեղը չէր եկել։

—Ե՛ս եմ, քո Շահէնդ եմ, Սուսամբա՛ր, ուշքի արի՛, այստեղ բացի մեզանից ուրիշ ոչ ոք չկայ, Թուրքը հեռացաւ, դու քո սիրելուդ գրկումն ես, դու հիմա ապահով ես, կրկնում և երեքնում էր Շահէնը, բայց աղջիկն երկար միջոց տակաւին ոչինչ չէր հասկանում։

Աղջկանից ոչ պակաս անտանելի էր Շահէնի դրութիւնը. նորա համար միանգամայն մութն էր ներկայ հանգամանքը, Թուրքերն ո՞ւր էին, ի՞նչպէս յափշտակեցին իւր սիրուհուն, ի՞նչպէս ինքը չնկատեց, հօր ձայնը ո՞րտեղից առաւ, ի՞նչ գործ ունէր ծերունին Որմեցու աղայի պարտիզում։ Շահէնն, ըստ իւր սովորութեան, ոտքը խաղաղուած ժամանակը դուրս էր եկել տանից և սպասում էր սիրեկանին պարտիզի միւս անկիւնումը. օրիորդի ուշանալը կասկած գարթացրեց նրա մէջ. նա կամեցաւ պատն անցկենալ և մինչև դանակը գնալ, բայց առաջին անգամը չվստահացաւ, Սուսամբարի խորթ մայրը կարող էր նկատել և այնուհետև ամենայն ինչ կորած էր իւր համար։ Աղջիկը նշանախօսած էր Դէյկարխան գիւղացի մի պատանու հետ, դա Սուսամբարի խորթ մօր մերձաւոր ազգականն էր. երկու տարի պէտք էր, որ տեղական սովորութեան համաձայն՝ կարելի լինէր նրանց ամուսնացնելու, մինչ այդ ժամանակիջոցը նրանց արգելուած էր միմեանց տեսնուելը։

Լ.

Որմեցու աղայ Սահրատը պսակուած էր Դէյկարխանցի Աւագի աղջիկ Մարիամի հետ։ Մարիամի ծնողը, եթէ շատ հարուստ չէին, շատ չքաւորներից էլ չէին համարւում։ Աւագը

շատ էր սիրում իւր Մարիամին. Նա մի ժամ աչքից չէր հեռանում իւր սիրելի դստերը, բայց երբ աղջիկը մեծացաւ և իւր գիւղացի երիտասարդներից ամէնքին էլ յոյսը կտրեց, նա հարկադրուեց օտարական փեսացու ճարել։

Շատ ցանկացաւ Աւագը Սահրատին տնփե-սայ պահել, իւր բոլոր ստացուածքը նրա գլխին գրել, բայց նորափեսան չհամաձայնեցաւ. այն մարդը, որ Սահրատի և Աւագի մէջ խնամախօս էր դարձել, չթոյլ տուեց Սահրատին իւր դրա-ցութիւնից հեռանալու։ Որմեցու տղայ Սահրա-տը համագիւղացի էր Աբրահամին և սա ինքն էր, որ վերջին ժամանակներս յաճախ երթևե-կութիւն ունէր Դէյկարխան գիւղն և իւր հա-մար իջևան էր ընտրել Աւագի տունը։

Թէ ի՞նչ ունէր Աբրահամը Դէյկարխանում, մենք առ այժմ չենք կարող ասել, բայց որ սա էր Սահրատի խնամախօսը, դրան կարծիք չկայ։ Աբրահամի վերջին այցելութիւնը Դէյկարխանին եղել է Սահրատի հարսանիքի օրը, ինքն էր գլխաւոր կառավարիչը, ինքն էր պարագլուխը, իւր ձեռքովը հարսին ձի հեծցրեց և իւրեանց գիւղը բերեց։ Այնօրից ցայսօր էլ Աբրահամի ոտքը Դէյկարխան գիւղումը չի եղել։

Ի՞նչ պատճառաւ Դէյկարխանցի պատանի-ները փախչում էին Աւագի աղջկայ հետ նշան-ուելուց, կամ ընչո՞ւ համար այդ պարոնները հեգնաբար միմեանց էին պարգև տալիս խեղճ

Մարիամին, իւրեանք էս ճիշդը չէին կարող պա-տասխանել, բայց արդարութիւնը պահանջում է ասել, որ մի գործող ու աշխատասէր գիւղացու համար Մարիամի նման առողջակազմ, պնդոսկր և կարմրայտ աղջկանից աւելի տանտիկնացու պա-հանջելի չէ։ Աղջիկը իւր հօր օջախի միակ դսպա-նակն էր. Նորա ծնողքը ծերութեան հասակի մէջ ոտք էին դրել, երբ ինքը երկնքից շնոր-հուածի նման պարգևուեց նրանց. Նա իր ծնող-ների անդրանիկն ու կրտսերը, առաջին և վեր-ջին զաւակն էր։ Պառաւ մայրը, մինչև Մարիա-մի չափահաս դառնալը, որպէսևիցէ կառավա-րում էր տունը, իսկ ահա ինքն ուժից ընկած ամէն բան աղջկայ վզին է թողել։

Մարիամն էր գոմէշ ու կովեր կթողը, պա-նիր ու իւղ շինողը, մշակների ու օրավարձ բան-ւորների համար կերակուր պատրաստողը, իւր ոտ ու ձեռքից ընկած ծնողների սնունդը հո-գացողն և ամէն բանը. Նա, ինչպէս ասում են, տունն ուսի վերայ առած՝ պտըտում էր, իսկ այդքան չարչարանքի մէջ իւր առողջութիւնը օր աւուր վերայ ամրապնդւում էր։

Այսպիսի մի աղջկանից փախս տալը, այն էլ մի միջակ տան ժառանգից, անխոհեմութիւն էր. բայց ի՞նչ օգուտ, որ խեղճ աղջկայ բաղդը միանգամից ծուռն էր ընկել, դէյկարխանցիներից նորան ուզող չեղաւ։ Այդ պատճառաւ էլ Աւագն ստիպուեցաւ իւր բարեկամ Աբրահամի խօսքը լսել

և աղջկանը հեռու օտարութիւն տարագիր ուղարկել։

Խե՜ղճ Աւագ, տուեց իր աչքի լոյսը դուրս և անիծում էր պատճառին ու իր գլուխը։

Որդեսէր ծերունիքը մի տարուց յետոյ լսեցին իւրեանց դստեր մահը և չկարողացան տանել. մի ամսի մէջ իրանք ևս հրաժարական տուին անցաւոր աշխարհքիցս։

Մարիամը թողել էր իրանից յետոյ երկու շաբաթական մի փոքրիկ աղջիկ։

Դա Սուսամբարն էր։

ԼԱ.

Սուսամբարին շատ վիճակուեց խորթ մօր դառնութիւնը ճաշակել։ Դա մի ջահել այրի էր, նոյնպէս Դէյկարխանցի։ Չի կարելի ասել, թէ այդ կինը սկզբներումը մեծ զանազանութիւն արած լինի հարազատի և խորթ որդու մէջ. Սուսամբարը մի փոքրիկ դմբուկ երեխայ էր, որին ամէն մարդ պարտք կը համարէր խնամել։ Մեծ դժուարութիւն չէր պէտք մի կաթնակեր երեխայ սնուցանելու. գեղջկական կեանքի մէջ միևնոյն կերպիւ հոգում են երեխայի և գառան վերայ, մարդու զաւակի և կովի հորթի վերայ. առողջապահական մեծ գիտութիւն չէ հարկաւոր, երեխային այնքան ժամանակ պէտք հոգալ կերակրելու, մինչ ինքնազգայութիւնը

նորա մէջ փոքրինչ աճի, այնուհետև կաթը չամ՚ լից, առաջը դիր ու թող գետնի վերայ սողոսկելով գլուխն էլ մէջը լուանայ. այդքանով եթէ բաւական չի, թող ճիչ ու գոռոցով ամենին կամենայ ձանձրացնել, կամ աղտոտութեան մէջ շաղախուի, ով է նայողը, երեխայ է, կ՚ասեն, լալով ու անմաքրութեամբ կամրապնդուեն նորա ոսկրները։ Շատ որ գլուխ տարաւ, մի կտոր հաց թաթիկի մէջ դիր, գործիդ կաց, ինքն իրեն կը մեծանայ. ի՞նչ հարկաւոր է նորան լուանալ, մաքրել, սանրել, հագուստը փոխել։ Դժուարութիւնը նորածիններին է, նրանց մի քիչ աւելի խնամատարութիւն կ՚ուզէ, բաւական չէ, որ օրօրոցի մէջ կաշկանդես ու հեռանաս, շատ շատ նրան ծիծ տալ է պէտք։

Չկարծես, ընթերցո՛ղ, թէ գիւղացի մայրերը զգացմունք չունին. ընդհակառակը նրանք աչքի լուսից աւելի են սիրում իւրեանց զաւակին, նրանք իրանց կեանքը կըդնեն իւրեանց երեխաների համար. այդ է սակայն ընդունած ձևը առհասարակ գիւղական կեանքի մէջ։ Դայեակ մայրը բացի երեխայ սնուցանելուց՝ շատ գործ ունի. այդ Աստուծոյ սիրելի ժողովրդի մէջ կինը նոյնքան պարտաւորութիւններ ունի կատարելու, որքան և այրը, և որքան զարգացողական աստիճանը ստոր է, կանացի ծանրութիւնը նոյնքան մեծ է. բացի ներքին պաշտամունքը՝ կինը դուրսն էլ շատ աշխատութիւններ բաժանում է

իւր գլխի տէր—այր մարդու հետ և մանկամայր կինը անտրտունջ ամէն գործին էլ հասնում է։

ԼԹ.

Սուսամբարի դժուարութիւններն անցել էին, երբ մի նոր մայր տուն եկաւ, նոր սկսել էր նա չորքոտանու նման չոչել. մինչև այդ օրը Սահրատի եղբօր կինն էր Սուսամբարին իւր զաւակի հետ երբեմնապէս դիել, պահպանել. իսկ այժմ Սահրատը բաժանուել էր եղբօրից, նոր կին էր առել և երեխան մի տարու չափ էլ բաղդ ունեցաւ նոր մօրը սիրելի լինելու։ Այնուհետև՝ էլ այն չէր. հիմի տանտիկինը ունի իւր հարազատ երեխան, այժմ նա մայր է, իւր ուշքումիտքը հետզհետէ կեդրոնացան իւր սեպհական զաւակների հոգածութեան մէջ։ Սուսամբարն այժմ ոչ միայն իսպառ բարձի թողի արած է, այլ և նա իբրև աւելի հասակաւորը իւր քոյր ու եղբայրների պահապանն ու դայեակն է, իսկ այս մանրահասակ չարաճճիներին պահելը և մօր պատասխանատուութիւնից դուրս գալը հե՞շտ էք կարծում։

Օր չանցնէր, որ անտէր որբիկը չծեծուէր, կամ հայհոյանք ու նախատինք չտանար. աչքը բացած օրից՝ նա գտաւ իւր և եղբայրների ու քոյրերի մէջ եղած զանազանութիւնը։

—Մայրի՛կ, ոռնում էին երեխայքը, Սուսամբարը մեզ կերակուր չի տալիս, մեզ վերայ աչք է չռում։

Այս այն ժամանակն էր, երբ իւրեանք կերակրի լաւն և կաթի սեր ու արաժանը կերած պրծած՝ անդղների ձագերի նման շրջապատում էին խեղճ աղջկանը և ամէն կողմից յափշտակում նորա բաժինը։ Եւ Սուսամբարը կծկւում էր դողդողալով ու ատամները միմեանց պինդ սեղմելով, որ չըզգայ մօր մագիլների կսկիծը, որ անշուշտ թաղուելու էին իւր փափուկ կռների մէջ։

—Հողե՞մ գլուխդ, հօր հոգու լափում ես ու իմ երախաներիցն էլ խնայում իմ տղամարդի աշխատածը, շարժւում էին այս խօսքերի հետ Սուսամբարի քծծուած մազերի արմատներն իւրեանց տեղից և զրկւում էր ողորմելին և՛ իրեն բաժին ընկած ծոխանքաջրից։ Մինչ ինքը ձեռքն աչքերին դրած՝ դողում էր, նորա ամանը լըպստեցին միմեանց ձեռքից յափշտակելով փոքրիկ անկուշտները։

Ի՞նչ պիտի անէր թշուառ աղջիկը, ո՞վ ունէր նորան տէր ու տիրական խորթ մօր բարբարոսութիւններից պաշտպանելու, ամէն ոք նորա համար օտար էր. հայրն էր իւր ամենամերձաւորը, նա էլ իբրև գեղջուկ՝ իւր մշակական պարապմունքներովն էր զբաղուած. նա ժամանակ չունէր դստեր վերայ ուշք դարձնելու. մի փոքրիկ գգուանք, որ ձմեռուան երկայն երեկոները սփռում էր հայրն իւր զաւակների վերայ՝ արու զաւակների և ներկայ կնոջ աղջիկնե-

րի համար էրպ անած։ Սուսամբարի մասին այնքան քամբասանքներ ու գանգատներ էր լսել նա իւր կնոջից, որ եթէ ոչ սրտանց ատելութիւն, արտաքուստ մի սառնութիւն էր զգում դէպի աղջիկը։ Բայց պաշտպանողական խօսքը, որ մըսխում էր հայրը յօգուտ իւր անդրանիկի, լինում էր, նորա հայրենական ժառանգութիւն մնացած կալուածքի շնորհիւ, որ կապալով էր տուել ու շահւում էր։

Աւագը իւր գոյք կտակել էր Սուսամբարի անունով։

ԼԳ.

Մի տուն կար միայն, ուր Սուսամբարն օտար չէր, ուր նորան գորովանքներով ընդունում էին, ուր ինքը սիրում էր յաճախել։

Աբրահամի տունն էր այդ։

Աչքը բացարեց աղջիկն, Աբրահամի տունը ասպնջական եղաւ նորան։ Պառաւ Սալբի նանը միշտ ժպտում էր Սուսամբարի երեսին և իւրեանց բազմաթիւ երեխաների հետ սեղանակից էր անում։

Եթէ Սահրատի միւս երախաները յօժարամտութիւն չյայտնէին Աբրահամենց տունը գընալու, Սուսամբարը խորթ մօր ահից երբէք չէր համարձակիլ իւրեանց այդ հարևանի չեմքովը ոտք փոխել։ Բայց երեխաների համար, ուր որ իւրեանց կտուցը քաղցրացնում են և ուր հասակակիցներ կան, ամենասիրելի տեղն է այն։

և ի՞նչ ասել կուզի, որ Սահրատի կինը չէր հաւանիլ իւր հարազատների այդ ցանկութեանը. օրն իբուն Սահրատի երեխաները թափուած էին Աբրահամի տանը։

Սալբի նանը, վաղի առածի համաձայն, ձուածեղի խաթեր թաւի կոթն էր պաչում. Սուսամբարի ոտքն իւր տանից չկտրուելու պատճառաւ, Սահրատի փոքրիկներին իւրեանց երեխաներից չէր զանազանում. սակայն ի հարկէ այստեղ նրանք չէին վստահանում հարստահարելու իւրեանց քրոջը և կորզելու նորա բաժինը։

Սիրուն որբիկը գութս շարժում է, արդարանում էր Սալբին իւր տագերականանց մօտ՝ Սուսամբարին այդքան սիրելու համար իսկ նորա այս կարեկցական արտայայտութիւնները չէին անցնում առանց խոր և սրտաքուղխ հառաչանքների։

Շատ շատ անգամ ուսերը բարձրացնում և խորհրդաբար միմեանց երեսի նայում էին տագերականայքը Սալբու այս օտարոտի վարմունքի համար, ուզում էին գլխի ընկնել այս բանի մէջ եղած գաղտնիքին, բայց վերջիվերջոյ էլի անգիտանում էին ու միմեանց ականջում փսփսում.—մեզ ի՞նչ, Աստուած ամէն մարդու գործքն իրանից կը հարցնի, թող սիրի, որքան իւր սիրտը կը ցանկանայ։

—Տահէն, որդեա՛կս, կաթի սերը քաշել եմ, քեզ համար մեր սենեկումը տաշտի տակին

պահել, գնա՛, կե՛ր, զանազանում էր Սալբին իւր մինուճարին ուրիշներից. բայց Շահէնը հաստատ գիտէր, որ մայրն իսկոյն յաւելացնելու է.

—Սուսամբարը խեղճ է, նրան էլ ծածուկ աչքով նշանացի արա, հետդ ներս տար ու ի միասին կերէք:

Տարիներն անցնում էին, երեխայքը մեծանում էին, Սահրատի տղայքը հօտաղներ էին և աղջիկները մօր կարիքին հասել էին, բայց Աբրահամի տունը էլի յաճախում էին:

ԼԴ.

—Այ կին, ասաց մի անգամ Աբրահամը Սալբի նանին, փոքր առ փոքր Սահրատի երեխաների ոտքը մեր տանից կտրի՛ր:

—Եւ քո սիրտդ կըհամբերի՞:

—Հարկը պահանջում է:

Սալբին չկարողացաւ ընդդիմանալ:

Այս խօսակցութիւնը Սալբու իւր որդու գիշերները բացակայիլն իմանալուց առաջ էր:

ԼԵ.

Բաւականին գիշեր էր անցել և Շահէնը դեռ չէր կարողանում Սուսամբարին ուշքի բերել. երբեմն երբեմն մի մի անհասկանալի խօսքեր էր դուրս թողնում աղջիկն իւր կարկամած

բերանից և կրկին լռում. թէպէտ լուսին էր, բայց այրի մթութիւնը արգելք էր լինում Սուսամբարի երեսը տեսնելու. միայն նորա հատընդհատ չնչառութիւնից և կրծքի յաջախակի բաբախումից գիտէր Շահէնն աղջկայ կենդանութիւնը:

Այդքանը բաւական չէր, մի վերջին հնարք գործածելու էր, և Շահէնը մոլորուել էր:

—Ջո՛ւրը, ջո՛ւրը կարող է սրան սթափեցնել, մտաբերեց երիտասարդն և իւր ամենաթանգագին գիւտը բազուկների վերայ առաւ, քարայրից դուրս վազեց:

Շահէնը քանի մի քայլ յետ յետ փախաւ: Մի թամբած ձի այրի դռանը սանձը գլխին կանգնած էր:

—Ա՛խ Աստուած, թուրքերը կրկին եկել են Սուսամբարիս տանելու, գոչեց նա, բայց մինչև իմ կեանքը չըառնաք, սրան իմ ձեռքիցը խլել չէք կարող, անօրէն անհաւատնե՛ր, օդի մէջ ատենաբանում էր Շահէնը:

Նա ցած դրեց զգուշութեամբ աղջկանը այրի դռանը խոտի վերայ և դաշոյնը հանեց, Սուսամբարի գլխավերևը կանգնեց կռուելու կազմ ու պատրաստ:

Նորա հերոսութիւններին ոչ ոք չըպատասխանեց, ձին միայն շարժեց իւր բաշը, թափահարեց սանձը և դարձաւ նախկին անշարժ դրութիւնն ստացաւ:

—Ո՞ւր եմ ես, ձայն հանեց Սուսամբարն և ձեռքերը տարաւ դէպի աչքերը։

Աղջիկն սթափել էր։ դրսի թարմ և անօսր օդը նրա թոքերի մէջ կենդանարար շարժողականութիւն էր շնչել։ Սուսամբարն աչքերը ճրմլեց և նստաւ։

ԼԶ.

Հիւսէինը փախչում էր շտապ շտապ և յետ խռչկոտալով, ձորակի ամէն մի մացառը, և ամէն մի քարաժայռը ոտնաւորել, մարդիկ էին դառել ու իր ետևից վազում, իսկ ջրի խոխոջի ձայնն այդ մարդկանց ոտների տրոփիւնն էր համարւում նորա համար։ Լուսինը երևակայութիւնը իրականութեան էր փոխել պարսկի աչքումը, լուսնի երկայն տարածուած շուքը մի մատնաչափ առարկան մարդաչափ էր ցոյց տալիս։ Իսկ եթէ դրանք ամէնքը քարայրի միջից իրեն ետևիցն ընկնող դևերը չեն, ի՞նչ են ուրեմն։ Կասկած չըկար, դևերը հարիւրներով ձայն ձայնի տուած վանում էին մեր մոլորուած, սրտապատառ եղած Հիւսէինին։

—Ա՛խ անպիտան, Թիկունքիս ոսկրը կոտրուեց։

Այս ախը դուրս թռաւ մի ստուերի բերանից, որ երեսի վերայ գետին ընկաւ, երբ մի ուրիշ ուրուական դիպաւ իրեն ու ինքն էլ նորա

մարմնոյ վերայից գայթելով՝ միւս կողմը գլորուեց։

Երկու վայր ընկածներն էլ մեծ ցաւ զգացին։

—Հիւսէի՞ն, ձայնեց առաջին գլորուողը։

—Ալի՞, պատասխանեց երկրորդը։

—Ո՞ւր ես փախչում, ո՞ւր է աղջիկը, ո՞ւր է ձիդ։

—Լռի՛ր, շտապե՛նք այս անիծեալ տեղից հեռանանք, քարայրը մինչև բերանը լիքը սատանաներ էին ու աղջկանը ձեռքիցս խլեցին։

—Ցնդել հօ չե՞ս։

—Փախչի՛նք, Ալի՛, փախչի՛նք, տե՛ս, տե՛ս ահա գալիս են մեր քամակից, ահա՛ հասնում են։

—Անյաջող բա՜ղդ, աղջիկը կախարդած էր, Թովիչ դարվիշն այսպէս ասաց, պէտք է նրան մեզ հետ վերցնէինք, որ միշտ օձի գլուխը նորա լեզուի վերայ դնէր, թողէր, որ հմայքը ոչնչանար, իզուր մենք մեր բազուկների վերայ յոյս դրինք ու գուշակողի գիտութեան վերայ խնդացինք. ուղիղ ես ասում, հիմի ես էլ լսում եմ սատանաների ճիչն ու աղաղակը, ասաց Ալին ու լեզուն կապուեց, ոտքերը դողացին, հսկայական մարդիկը սորա աչքին էլ երևացին։

Նոքա երկուքն էլ բռնեցին Սալմաստի ճանապարհը և փախչում էին առանց յետ նայելու։

ԼԷ.

Մի քանի հարցեր միմեանց ետևից արեց Շահէնն այրի դռանն իւր սիրեկանին, բայց և ոչ մէկի օրինաւոր պատասխանը չը կարողացաւ ստանալ։

Աշխէն այսքանն ասաց, որ ինքը ծնողներին քնացնելուց յետոյ՝ ըստ սովորականին՝ շտապել է գալ պարտէզը՝ իւրեանց ամէնօրեայ ժամադրութեան տեղը, և յիշում է, որ պարտիզի մէջ կիսաճանապարհին իրեն գրկեցին. յափշտակողները պարսիկներ պէտք է լինէին՝ ինչպէս ինքն իմացաւ նորանց խօսակցութիւնից՝ իսկ թէ ո՞վք էին, ի՞նչ էր նրանց նպատակը և ի՞նչ պատահեց, նա հաշիւ չէր կարող տալ. Ամէնքից հաւաստին այս է, որ ինքն այժմ Շահէնի գրկումն է գտնւում ձորակի մէջ։

Այս խօսքերի դէմ միայն ուսերի շարժում եղաւ Շահէնի կողմից։

ԼԸ.

Բնութիւնը մեռածի պէս է, գիշերն իւր թանձր վերմակը ծածկել է բոլոր արարածների վերայ. Աբրահամենց գիւղումն ամէնքը խաղաղ քնած են, գիւղացին վաստակած իւր ցերեկուան աշխատութիւնից՝ հանգիստ է տալիս իւր խոնջացած ու վաստակաբեկ անդամներին։ Գարունը

գեղջուկ երկրագործի համար ամենասիրելի ամիսն է. (ո՞ւմ համար սիրելի չէ.) գիւղացին գարունն է վարում իւր դաշտերը՝ աշնանը քաղելու համար, գարունն է էտում, փորում և մաքրում իւր այգիները՝ աշնանը դեղին ոսկի նման անուշահամ խաղողի ողկոյզները ժողովելու և գինի ու չամիչ շինելու, գարնան հով ու զուարթ օրերն են, որ աշխատանքը այնպէս քաղցր են անում երկրագործ դասին, գարնան զովաբեր ու երկայն ցերեկը շատ կարճ է թւում բազմաշխատ վաստակաւէր գիւղականին, համեմատելով ամառուան տապի և ձմեռուան մահաբեր, ցրտաշունչ և կարճ օրուայ հետ։

Այսպիսի գիշերները միայն սոխակը արթուն կը մնայ և աչքը կթած դերի կը դառնայ արժանի լինելու իւր սիրելի վարդի բացուելուն. այս բնատուր քնարերգուի չափ սէր զգացող սրտերը միայն կը զրկեն իւրեանց անձը մայիսեան գիշերի հանգստութիւնից։

Շահէնի ու Սուսամբարի նման շատերը չէին կարող գտնուիլ մեր պատմած գիւղումը, որ տեսնէին, լսէին, կամ իմանային Որմեցու տղայի պարտիզում կատարուած գործողութիւնները, իսկ մեր սիրահարներն երկու երկայն տարիների անվտանգ տեսակցութիւնից յետոյ՝ երբէք չէին կարող այսպիսի մի դժբաղդ դէպք երևակայել, նրանց մտքով չէր անցնիլ նախազգուշութիւն ունենալ, և այդ իսկ էր պատճառը, որ

երկուսին էլ շուարացրել էր ու ոչինչ ելք չէին կարողանում գտնել այս առեղծուածքին: Բնական էր ուրեմն, որ ուսերի թոթուելուց աւելի ոչինչ չէր մնում մեր անփորձներին։

ԼԹ.

Սուսամբա՛ր, դո՞ւ ես դուռը բացողը:

—Ես եմ, մայրի՛կ, ծարաւ էի, ջուր խմելու գնացի սրահը:

Նա ձորակիցն եկաւ Տաճէնի հետ ձիու վերայ նստած:

Տաճէնը թողեց Սուսամբարին պարտիզում, և երբ վերջինս դռնակի մէջ աներևութացաւ, ինքը Հիւսէինի ձին արձակեց դաշտումն արածելու և առանց երկար մտածելու՝ բաց արեց իւրեանց դուռը:

Խ.

Գերչակի ձիթի ճրագը վառւում էր Աբրահամի սենեակի մէջ, այրուած շորահինը դաղած ձիթի մէջ թաթախած՝ մի դարշ խնձմնձահոտ էր բարձրացրել տանը. այդ խանձիլ կոչուած ապեղանին է, որ պատրաստւում էր արեան հոսանքի յառաջն առնելու: Այդ միակ ամենաճիշդ միջոցն է գիւղերի պառաւական դեղօրէից մէջ՝ արիւնը կանգնացնելու և վէրքը ողջացնելու դէմ,

կանացի փաշփշոցի բարակ ձայնը խեղդւում էր Սալբի նանի կոկորդի մէջ։

Աբրահամը թաղիքի վերայ ընկողմնած՝ թեկնել էր բարձի վերայ և երեսից արիւնն իջնում էր. ծերունու դէմքը դալկացել էր, նա ուժաթափ էր. նա աշխատում էր բարձրացնել կարմրախառն ալեծածան գլուխը բարձի վրայից, բայց այդ նրան չէր յաջողւում:

Առաջին խօսքը, որ լսեց Տաճէնը տուն մտնելուս, Աբրահամի պատուէրն էր իւր կնոջը, որ ձայն ու չփոթ չբարձրացնի, այլ շտապի վէրքը կապելու:

Տաճէնի աչքերումը փայլակը շողաց, նորա ծնկները դողացին և առանց իւր կամքի չոքացրին նրան։

—Ո՞ւր ես, անխոհեմ պատանի՛, սպասելու ժամանակ չէ, մայրդ իմ վէրքերս կը պատատէ, դու շտապիր դէպի ձորակը, թուրքերը տարան քո յիմարութեան զոհին, Սուսամբարեդ երկու թուրք փախցրին. մտի՛ր գոմը, դուրս քաշիր մեր սպիտակ Արաբատանի նժոյգն և հասիր պարտիզների ետևից, քեզ հետ զէնք վերցրո՛ւ, յափշտակիչներն երկու են, նրանք զինուորուած են և քեզ նախազգուշացնում եմ, որ նրանցից մէկը շատ ճարպիկ է. տես ահա՛ հօրդ վէրքը, նորա թեթևաշարժ ձեռքի շնորհքն է, բայց, ի հարկէ անխրատն իւր յաղթութեամբը պարտական է իմ ծերութեան։

—Հայրի՛կ, ներիր։

—Գնա՛, շտապի՛ր, դորա ժամանակ չէ, աղջկանն աչքից կը հեռացնեն և այնուհետ շատ ուշ է։

—Սուսամբարն ազատ է ամենայն վտանգից, կմկմաց Շահէնը, նա հիմա իւրեանց տանը հանգիստ քնած է, ես նրան խլեցի պարսկի ճանկից։

—Հօրդ հարազատ զաւա՛կը, ես ներում եմ քո մանկական անհեռատեսութիւնը, ուրախացաւ վիրաւորուած ծերունին և տեղի մէջ ուղիղ նստեց։

—Քարը բարձրացրո՛ւ, այս գիշերուան անցքերը տակը դի՛ր, թաղի՛ր, որդեա՛կ իմ, բոլորը մոռցի՛ր, գլխակապը պնդացնելուց յետոյ պատուիրեց ծերունին Շահէնին։ Հիմա կեղծ չփոթ պէտք է բարձրացնել, ամբողջ տունը պէտք է ոտքի հանել և իմ պատմածից ոչ մի խօսք աւելի ոչ ոք չպէտք է իմանայ։ Լսո՞ւմ ես, ո՛վ կին, բերանիցդ և ոչ մի բառ չըփախցնես, կանանց լեզուի տակին, ասած է ոսկի չկայ։

—Ճարս ի՞նչ, որ չլսեմ։

—Իսկ դու Շահէ՛ն, իմ որդի՛, խօսք տուր միւս անգամ Որմեցու աղայի պարտիզի պատի տակը չայցելելու։

—Հա՛յր։

—Հօրդ անքակտելի հրամա՛նն է։

—Չեմ կարող... իմ ուժից վեր է պահանջըդ... ես...

—Դու սիրում ես, այնպէս չէ՞։

—Խնայի՛ր որդուդ։

—Գոնէ մի քանի օրուան խոստում արա չտեսնելու Սուսամբարին։

—Շահէնը գլխակոր էր, նա լուռ էր...

—Տեսա՞ր ճակատիս բացուածքը, նայի՛ր երեսիս արիւնին։

—Շահէնը սարսափեց, նա նկատել էր հօր վէրքի խորութիւնը, մի բթաչափ ճեղքուածք էր այն, որ ծալեց իւր ծնկները։

—Խոստանում եմ։

—Ի՞նչ։

—Չտեսնուելու Սուսամբարի հետ, մինչև քեզանից հրաման չստանամ։

—Ապրի՛ս, զաւա՛կս, համբուրիր ձեռքս և թոյլ տուր ինձ քո երեսը պաչելու։

ԽԱ.

Մի քանի րոպէից յետոյ՝ Շահէնի աղաղակի վերայ սենեակը բազմութիւնով լցուեց։

Ծերունին հնարեց, իբր թէ դուրս գնացած միջոցին պատի տակից յանկարծ սրի հարուած է ստացել և եթէ Շահէնի ոտնաձայնը չլինէր, որ հետևել է իւր աղաղակելուն, գուցէ և կը սպանուէր չարագործներից։

Երկմտելու տեղիք չըկար, արեան կաթիլները հաստատում էին նորա խօսքերը։

Մինչև իւրեանց բակը գլխարկն արդեւք է եղել մի կաթ արիւն կորցնելու։

Այդ լուրի հնարողի և չինծու լինելը մինչև այսօր գաղտնիք մնաց,

ԽԲ.

Քաղաքական աշխարհն այժմ երերեալ դըրութեան մէջ է, ոչ ոք չգիտէ այսօր, թէ ի՞նչ է պատահելու վաղը, Լազարեանը թէև թողել է Թաւրիզի քաղաքապետութեան պաշտօնը, բայց իսպառ չի հեռացել, նա հրամանատար է ռուսական մեծ բանակին Դէյկարխան գիւղումը։

Գաղթականութեան տաք ժամանակն է, ամէն ոք իւր բեռնակիր չորքոտանիքն և սայլերը բարձած՝ դուրս է գալիս ճանապարհների վերայ ու խառնւում մեծ կարաւաններից մէկի խմբին.

Ծերունի Աբրահամի վէրքը շատ խոր էր, ուստի և նա մտքովը չանցկացրեց գաղթելը. նորա օրինակին հետեւեց բոլոր գիւղը։

Մէկն ամէնքի և ամէնքը մէկի համար՝ ուխտեցին Աբրահամի համագիւղացիքը և չըղիջան ոչ Լազարեանի, որ ինչպէս ասացինք, գիւղէ գիւղ էր ընկել ու ճառեր խօսում, և ոչ հոգևորականների համոզմունքներին։

Ահա մի բուռը ժողովուրդ, այն թշուառ

սակաւամասնութիւնից, որոնք դէմ գրին գաղթականութեան գաղափարին։

Մինը միայն չը մասնակցեց Աբրահամի և իւր համաբնակիչների ուխտին նոցա գիւղացիներից։ Դա Որմեցու տղայ Սահրատն էր, որ չը կամեցաւ հակառակելու իւր կնոջ թախանձանքներին և իւր Դէյկարխանցի փեսացուի հետ պատրաստուեց ճանապարհ ընկնելու։

ԽԳ.

Պարսկաստանը դատարկուեց. ամբողջ գաւառներ իւրեանց աւաններովն ու գիւղերովն ամայի մնացին, շատ տեղ հերկը կիսատ թողուեց և գութանի ապրանքը քշուեց, բարձուեց ու յառաջ վարուեց, շատ տեղ աշնանավար ցորեանը մինչև ծնկները հասած, հասկը քշած՝ երեսի վերայ անտէր բարձի թողի եղաւ և մի երկու պահապանի հսկողութեան յանձնուեց ջրելու, խնամելու և հնձելու. ամէնքը յոյս ունէին՝ քանի ռուսի ոտքը իսպառ չի ձգել Պարսկաստանը՝ ընտանիքը տեղաւորելուց յետոյ գալ և այս տարուան բերքը ժողովել։

Այս դրութեան մէջ Պարսկաստանի հայը ճանապարհ ընկած գնում է, գնում է նոր աշխարհ, թէպէտ և չգիտէ թէ ո՞ւր և ինչո՞ւ. յոյսը Լազարեանի խոստմունքի վերայ դրած՝ նա գնում է։

Հեշտ է բերանով ասել գաղթականութիւն բառը, բայց ներս թափանցենք հասկանալու իրականապէս այդ աշխարհաւեր մի քանի վանկերի միտքը և ահա կը զգանք այն մեծ արհաւիրքը, որ կոչւում է ազգերի կործանումն։

Լազարեանի կարգած պահապանները չըրջապատել են այս թանձր կարաւանը, փոշին երկինքն է բարձրացել և ամպանման սփռնացել, աչք ու կոկորդ տղմաշաղախ է արել։

Ոչխարի նման յառաջ են վարում դէպի Երասխի ափունքն ամէն կողմից պարսկաստանցի հայերին, իրար են խառնուել մարդ ու անասուն, մեծ ու փոքր և մի խառնիճաղանճութիւն դարձել, այնքան կերպարանափոխուել են ցըրտից, տօթից, քամուց ու փոշուց, որ հազիւ են ճանաչւում. մանաւանդ այլանդակուել են կանայքը։ Մի կողմից խեղճերն ուզում են կանացի պատկառանքը պահպանելու, տեղական դարևոր նուիրականացած սովորութեան համեմատ՝ իւրեանց դէմքը ոչ ոքի չըցոյց տալու, միւս կողմից ստիպուած են օրինազանց գտնուելու այդ ծէսերի դէմ. նոքա ոչ միայն բոկոտն, պատառոտուն ձորձերով, կիսամերկ իւրեանց երեխաներին խնամելու հոգսումն են, այլ և ամաչելով ձեռքն երեսին ծածկած՝ հարկադրւում են օտարների հետ խօսելու, որ աններելի յանցանքի չափ ներողամտութեան արժանի չէ. ի՞նչ անեն ողորմելիքը, ամէն մէկը մեղանից

նրանց դրութեան մէջ նոյնը կ՚անէր։ Մի երեխայ գրկին, միւսը շալակին, երրորդի սևացած արևկէզ կուռը բռնած, չորրորդը պատրաստւում է մի քանի օրից աշխարհ չնորհ բերելու, մի մեծ փաթոյթ էլ գլխին դրած, տընքալով, հևալով՝ ոչ թէ գնում, այլ քարշ է գալիս գաղթող հայ կինը։

—Մայրի՛կ, հաց, կատուանման սուր մլաւոցով նւում է շալակինը և ոտքերը իրար շարժում… մայրի՛կ, ջուր, պապակուեցի, էլ չեմ կարողանում մանգալ, սիրտս թուլանում է, վընգում է հետի քայլողը, երրորդն իւր սրտի ցաւերն արտայայտելու համար՝ շարունակ միակերպ նուոց ունի. սա ձայնը չի կտրում, մինչև որ մօր ցամաքած ծծի կաթի փոխարէն ստինքի չմքած մորթը ծամծմոտելով և ոչինչ նիւթ չառնելով՝ քունը նորա դեղնած աչքերը չըփակէ։ Խեղճ երեխայ, նորա անմեղ հոգին ի՞նչ հըրճուանք է զգացել, երբ մի այլ ժամանակ այդ ամենափափուկ բարձի վերայ իւր փոքրիկ գլուխը հանգստացել է, բայց հիմա մի չոր կրծքի տախտակի յենած նա և չի զգում նախկին հանգստութիւնը։

—Հա՞ց եմ ուզում, ի՞նչ անեմ, աղաղակում է շալակինը և ոտքերը թափահարում։

—Հանգիստ կաց, քաղցրի՛կս, հառաչում է թշուառ այրին՝ աչքերից արտասունքի փոխարէն կրակ թափելով, շուտով տեղ կը հասնենք,

տէրտէրենց սայլի վրայից կապոցը կառնեմ, քեզ հաց կը տամ։

Երեխան չի հանգստանում, նա օրօրելով իւր ոտքերը, արգելում է մօր քայլուածքը։

—Ա՜խ, Աստուա՛ծ, ե՞րբ պէտք է ազատուենք էս նեղութիւնից, ո՞ւր էր, թէ ես մեռած լինէի ու ինքը գտնէր իւր երեխաները, տրտնջում է կինը իւր աշխարհիս հոգսերից ազատուած ամուսնու ստուերի դէմ։

Անկարագրելի դրութի՜ւն, ահա վշտակոծ այրու ձեռքը թեթևացաւ, ոտքով քայլող՝ երեխան էլ չի հետևում մօրը, նորա աչքերը մարուեցին և փռուեց գետնի վրայ։ Մանուկն ոյժ չունի լալու, նորա բերանը տաղտուկ կերպիւ բաց ու խուփ է լինում և մայրը մի սուր ճիչ միայն արձակեց ու չոքեց որդու առաջին։

—Հեռո՜ւ, հեռո՜ւ անցկացէ՛ք Աստուծու սիրոյն, ոտնակոխ արէք երեխայիս, ուզում է այրին յետ մղելու ամբոխը, բայց լեռնաձորակի և քարքարոտ ճանապարհի վրայ այնքան տեղ չկայ, որ այդ հազարաւոր խուժանը կարող լինի ցրուած մանգալու, կամայ ակամայ իրարու հրելով, միմեանց կպչելով, դայթող ընկերներին կոխոտելով պիտի քայլէին։

Մանկամօր ճիչը դարձրեց վերակացուների ուշքը դէպի այս աղէկտուր տեսարանը, մահակի շնորհիւ և զինուորական հրացանի սուինի զօրութեամբ՝ հազիւ մի նեղ շաւիղ բացին ու կի-

սաշունչ երեխային վերցրին, այդպիսի դէպքերի համար նախապատրաստուած սայլակը տարան։

Ժամանակ չկար մանկանն ուշքի բերելու մասին մտածելու, իջևանի նշանակած տեղը հեռու էր, պէտք էր արևը մայր չմտած՝ հասնէին, որ գիշատիչ անգղների նման ծերպերի միջից ու քարերի տակից կարաւանին հետևող վրէժխնդիր պարսիկները չկարողանային գնդակներ տեղալ ամբոխի վերայ։ Գնդակնե՞ր, ոչ միայն գնդակներ, այնպիսի աներես յանդուգն մոլեռանդներ գտնւում էին, որ վագրի նման յանկարծ ցատկում էին գաղթականների մէջ ու մի քանի րոպէում ամենայն արագութեամբ դաշոյնի ծայրով թափում մի քանիսի աղիքները. հոգ չէր, թէ իրենք մաս մաս կը լինէին կատաղի ամբոխից։

Մոլեռանդութիւնը ծայրայեղութեան էր հասնում, արենարբու գազանները, որոնք ինքնապահպանութեան բնական ձգտումով խոյս էին տալիս, դուրս էին պրծնում և ազատւում մահից, այդպիսիներն իրենց համարում էին մարգարէի դրախտին անարժան և իւրեանց այդ ամենածանր յանցանքը քաւում էին կրկին ներս սողալով և մի քանի հայ սպանելով, մինչև իրանք էլ մարտիրոսացած՝ իւրեանց ընկերների ճանապարհն էին գնում։

Քանի անգամ բանակցութիւններ եղան Լազարեանի կողմից պարսից գաւառապետների

հետ այս օրինազանցութիւնների մասին, բայց նըրանք միշտ արդարանում էին կրօնամոլ խաժամուժի ամբողջ վարմունքը զսպել չկարողանալու պատրուակաւ։

—Բռնեցէ՛ք, մեզ յանձնեցէ՛ք, ասում էր պարսից տէրութիւնը, եթէ ձեր ներկայութեամբը չկախենք, դատապարտեցէ՛ք։

Օրէնքը պարսից օգտին էր օժանդակում, և ոչ մէկին չկարողացան ռուսաց զինուորները կենդանի բռնել, որ արդարութեան ատենին մատնեն. արենախանձ պարսիկը նախապէս մըտքումը դրել էր նահատակուելն և իւր երկիրն ու կրօնն արհամարհող փախստականների արեան մէջ լողալով՝ իւր բոլոր մեղքերը սրբելը. եթէ նա իւր անբաղդութիւնից ողջ ողջ ռուսաց ձեռքըն ընկնէր, նա ինքը սուրը սրտումը կը ցցէր և ուղղակի հուրիների աշխարհը կըթռչէր։

Այդ վրէժխնդիր արենարբուներից մէկն այդ օրը մի մեծ ծառայութիւն արեց. նա մի հարուածով վերջ դրեց վերը նկարագրած այրի կնոջ սրտատոչոր աղէտքներին. նորա դաշոյնը շատ սուր է եղել. նա ցցեց տառապեալ այրու կրծքին կապած երեխայի մէջքով մինչև մօր սիրտը։ Երկու ժամից յետոյ՝ երեկոյեան դէմ՝ այն կինն իւր երկու երեխաներով հանգիստ պառկեց իջևանած տեղումը փորած մի գբի մէջ. նա հոգւով միայն վայելեց աւետեաց հանդերձեալ երկրի բարիքը, իսկ նորա շալակի բեռի մասին

ոչինչ չեմ կարող ասել։ Այդպէս շատերը նոր հայրենիք հասնելուց յետոյ՝ մնացին առանց ծընողաց և ընտանեաց խնամատարութեան՝ դէպքի բերմունքին միայն յանձնուած։

—Դու չըկարծես, որ բոլոր գաղթողները նեղութիւն էին կրում, դարձաւ բժիշկս դէպի ինձ, նրանցից շատերն ուրախ և զուարթ ուխտաւորների նման ոչինչ հոգածութիւն չունէին։

Ամէն ցաւ ու տառապանք չքաւորների ու անտէրների համար էին պահած, պահապանների հայհոյեանքն ու մահակը միա՛յն դորանց գըլխին էին իջնում, քաղցն ու յոգնածութիւնը միա՛յն սորանց համար էր։

Գիւղական մելիքներն ու շատ գրաստների տէրերը՝ բացի անշարժ կալուածքից՝ ամէն ինչ իւրեանց հետ վերցրել էին, տնային ամէն մի չնչին կահ կարասիք, մինչև անասունների տակը մաքրելու ցախաւելները բարձած՝ հետը տանում էին, ամէն բարիք, խորովու կախած ամբողջ ոչխարներ և տապակած հաւեր ցրուելով էին գընում, այնքան գինի ունէին տկերով վերցրած՝ որ ջրի կարօտութիւն չունէին, ճանապարհի ձգութիւնը երբէք չէին զգում, միշտ հարբած էին։ Պիտի ասած, որ այս երջանիկները շատ լաւ փոխարինում էին պարսիկների արած անգթութիւններին։ Վա՛յ այն պարսկան գիւղին, որ ճանապարհի վերայ էր ընկած, միանգամայն աւերում, ամայի էին դարձնում։ Ի՞նչը կարող էր կառա-

ղի և կատարը տաք ամբոխի յառաջն առնել, մէկը չէր, տասը չէր, որ զսպել հնարաւոր լինէր. հարիւրներով աղաղակ բարձրացրած՝ մորեխի նման թափւում էին այդ գիւղերի այգիներն ու կիսահասնել արտերը ճղընակոտոր անում, կամ ոտնատակ տալիս, ոչնչացնում։

'Ի նախատինս վերակացու կարգուած սարին պաշտօնատէրների՝ պէտք է ասել, որ վերջիններս էին գրգռում կատաղի վայրենացածների վրէժխնդրութիւնը. աչքով նշանացի էին անում ու ինքեանք չըտեսնել ձևացնում։

Ոչ մի պարսիկ գիւղացի, ոչ մի կալուածատէր չէր յանդգնում այդ հարբած հրոսակների դէմ գալու. այնպիսին ձեռք կըվերցնէր անշուշտ իւր կեանքից։ Խեղճերը ճարահատած՝ դիմում էին վերակացուներին բողոքում, որոնցից մի սառը պատասխան ստանալով, լալով ու արտասուօք յետ էին դառնում։

—Վնաս չունի՛, գնացէ՛ք, կորէ՛ք, մենք գիտենք, թէ փոխարէնն ումից կառնենք, չէ՞ որ ձեր կոտորուած ազգականներից այս կողմերը մնացող յիմարներ կան, ատամները կրճտելով՝ գաղթողների քամակից գլուխները շարժում էին մնացած պարսիկները։

ԽԴ.

Կարաւանը կանգ առաւ նշանակած տեղումը, ամէնքին հանգստութիւն էր հարկաւոր, ամէն

ոք իւր ստամոքսին բաւականութիւն տալ կ'ուզէր, քաղցը դժուար բան է, բնութիւնն իւրը պահանջում է. այնպէս չէ՞, մի խորամանդ հայեացքով հարցրեց ինձ բժիշկս։

Ի՞նչ ցաւում եմ, որ դրական պատասխան տուի։

—Ապրի՛ս, որ սիրտդ հաղիւ գութ ընկաւ, իմ ծերութիւնս և քո տկարութիւնդ նոյնպէս կազդուրուել են ուզում։

—Մովսէ՛ս, ձայն տուեց բժիշկը, ասա ծառային, որ սորա համար կերակուր բերէ. իսկ ես գնամ տեսնեմ իմ պառաւս ի՞նչ է պատրաստել մեզ համար։ Մնա՛ս բարև։

ԽԵ.

Աբրահամը հեռզհետէ առողջանում էր. նա այժմ կարողանում էր տուն ու դուրս անել. նա նստում էր ծառերի ստուերներում և իւր չորս կողմը ժողովում գիւղի առաջաւորներին ու ծերունիներին, որոնց խօսակցութիւնը լինում էր միմիայն ռուսների հեռանալը, գաղթականութիւնն և իրանց վտանգաւոր դրութիւնը։

—Է՜հ, հայի կաշին հաստացել է, մեզ համար նոր բան չի լինիլ պարսիկների տալիք նեղութիւնները, ասում էր մինը. 'ի նախնեաց մենք լաւ օր չենք քաշել, էլի չենք քաշիլ։

—Ես ձեզ բռնութիւնով չեմ պահում, ցան-

կացողը կարող է գնալ, ամէն մարդի խելք իւր գլխին է, պատճառ չէր ուզում դառնալ Աբրահամը, ահա Սահրատը չուզեց մնալ մեզ հետ, ո՞վ է նրան մեղադրում։

—Ասում են՝ որ Սահրատի մեծ աղջիկը չէր ուզում գնալ, բայց նորա ոտքը ու ձեռքը կապել են ու սայլի մէջ տարածել, ասում են՝ որ Սահրատի կինն այնքան ծեծել է աղջկանը, որ չնչասպառ է եղել, ասում են՝ որ աղջիկը պարզ յայտնել է, թէ ինքը սիրում է մեր գիւղացի մի տղայի և իւր Դէյկարխանցի նշանածին չի ուզում առնել,

—Ո՞ւմ անունն է տուել, ահահար հարցրեց Աբրահամը։

—Ոչ ոքի չի յիշել, խուլ է թողել։

Աբրահամի կրծքից մի ծանր բեռն ընկաւ։

—Ամէն մարդ իւր զէնքը պատրաստ պահի, տեղից վեր կենալով պատուիրեց Աբրահամը, մօտ է մեր գլխի գալիքը, սկզբումը պէտք է աչքներս չըկտրուի, այնուհետև էլ ոչինչ չեն կարող անել։

ԽԶ.

Դեռ ռուսի ոտքը պարսից հողից դուրս չէր անցել, դեռ տեղ տեղ գաղթականութիւնը շարունակւում էր, դեռ պատերազմական ծախքերի վճարումը պարսից կողմից չէր վերջացել,

սակայն Սալմաստն արդէն սրբուել էր իւր գաւառներումը ու գիւղերում. մի քանի գիւղեր միայն մնացին, ասացի, որոնք հրաժարուեցին գաղթելուց։

Սալմաստի գաղթականութիւնը նոր մօտենում էր Երասխին։

Ամէնքը խօսում էին Սահրատի վերայ, որ միայնակ բաժանուեց իւր գիւղի համայնքից ու գնաց։

—Ա՛յ մարդ, ասաց մի երեկոյ Աբրահամին իւր կինը. Շահէնս այս առաւօտ մի պատառ հաց գրպանը դրեց, սպիտակ ձին հեծաւ, վերի այգին գնաց և մինչև հիմի չվերադարձաւ։

Աբրահամն այդ օրը տանը չէր եղել, հանդն էր գնացել։

—Ի՞նչ, Շահէնն այս՝ առաւօտ ձի է հեծե՞լ, հարցրեց Աբրահամը։

—Ես այն ժամանակը ոչինչ կասկած չըտարայ, բայց հիմի սիրտս շատ կախ է, նա երբէք այգին գնալուս զէնք չէր վերցրած։

—Զէ՞նք։

—Նա ասաց երկիւղալի միջոցներ են, պարսիկները մի չնչին պատճառ են պտռտում հայերից վրէժ առնելու։

—Կօշիկներս տո՛ւր, հրամայեց ծերունին, որդիդ գնա՞ց։

—Ես էլ այդ կարծիքին եմ։

—Սուրս և ատրճանակներս դուրս բե՛ր, երկայն հրացանը տա՛ր։

—Ուզում եմ ասել, սպասիր լոյսը բացուելուն, բայց ինչ անեմ, վա՜յ թէ երեխիս գլուխը մի փորձանք գայ։

—Սպասելու ժամանակ չէ, վաղը նրանք Երասխը կ'անցնեն ու ամէն բան ձեռքից կ'երթայ.

ԽԷ.

—Եղբայրներիս և ամէն հարցնողների համար՝ ես Սալմաստ եմ գնացել, խանը կանչել էր. հասկացա՞ր, ա՛յ կին։

—Մեր մեղքն է, պէտք է տանենք։

—Մնաս բարե՛, ո՛չ մի խօսք աւել պակաս։ Հա՛, ասա, որ Շահէնին էլ ինձ հետ տարայ։

ԽԸ.

Երասխ գետը յորդահոս գալիս է. գարնան առատ անձրևներն ու լեռների մեծ ձիւները փոքրիկ առուակներին ևս վտանգաւոր դիրք են տալիս. իւրաքանչիւր լեռան թմբից աննշան ձորակների միջով ահագին վտակներ են վազում։

Գաղթականների մի մասն արդէն անց է կացել Երասխը, իսկ մեծամասնութիւնը դեռ սպասում է։ Մինչև այն ժամանակը, թէպէտ,

միակ անցքը գետի միջովն էր, կամուրջներ կամ շարժական լաստեր չկային, բայց ռուսները լաստ են կապել, վրայովն անց ու դարձ անում. իսկ հիմա լաստն էլ չի օգնում, պարանը շատ բարակ է, վտանգաւոր է ահագին բազմութիւնը վրան թափել, ամէն րոպէ սպասւում է պարանը կտրուելուն, սրընթաց հոսանքը աչք է վախացնում։

Մեծամեծ կամուրջների հին աւերակները ցոյց են տալիս, որ վաղ՝ հայոց թագաւորութեան ծաղկեալ ժամանակը՝ Երասխի վերայ շատ տեղեր կոփածոյ քարից հսկայական կամուրջներ են եղել, բայց պարսից անողոք ձեռքը աւերել, ոչնչացրել է. Պարսկաստանում կանոնաւոր ճանապարհորդական հաղորդակցութիւններ հիմա էլ չկան, հաստանիւ ասիական ծանր սայլն երբեք չորս լուծ հուժկու գոմէշներով շատ անգամ ժամերով չէ-ին կարողանում անցկենալ հասարակական ճանապարհներում պատահած նեղ և քարքարոտ տեղերից ու կապանքներից, հեղեղը շաբաթներով կարաւանների գնացքն արգելում էր։ Այդ է պատճառը, որ մինչև այսօր էլ Պարսկաստանում սայլի գործածութիւնը յետամնաց վիճակի մէջ է. ձին, էշը, ջորին և ուղտը—ահա այն գրաստները, որոնք ազատում են պարսկաստանցուն ճանապարհորդութեան անյաջող պայմաններից։

Գաղթականները, բնական է, որ իրենց հետ սայլեր շատ սակաւ կ'ունենային, այնուա-

մենայնիւ և յիշեալ գրաստները շատ տեղ չէին կարող ազատել նրանց հեղեղի բացած խրամներից, եթէ ռուսաց յառաջահորդ զինուորները չօգնէին և չհեշտացնէին ամէն կապանքներ:

Եկան գաղթականներն և Երասխի մօտ արգելք ընկան. գետի յորդութեան հետ կռուել չէր լինիլ. Երասխը շատ անգամ է իւր սառը ծոցի մէջ ամփոփել ոչ միայն հատ ու կտոր մարդկանց, այլև մեծամեծ կարաւաններ, այլև խուռն բազմութեամբ ժողովուրդ:

Այս գաղթականների նախնիքների մեծ մասը պարսից սրերի հարուածներից քշուել Երասխի մէջ են լցուել և մի քանի տարուան կեանքը մի քանի վայրկենի փոխել: Շահաբբասը բիւրաւոր մայրերի իւրեանց գրկասուն կաթնակերների հետ անասունների նման դէպի Երասխն է վարել Պարսկաստան քշելուս, բայց միւս ափն անցկացրած ժամանակը կէս մասը չի գտել. գետը հարիւրներով խեղդել, տարել է և իւր ստորերկրեայ բնակիչ մեծամեծ ձկներին կերակուր բաշխել:

Ներկայ գաղթեցնողները Շահերի պաշտօնեաներ չեն, այժմեան գաղթողների քամակից վանող և վերադարձնողներ չկան. որքան կամենում են պարսից խաները, թող տրտնջան, ատամները կրճտեն, մոլեռանդների ձեռքով րոպէական տանջանքներ տան, հազարաւոր հայհոյանքներ թափեն լեռների գլխներից ու քարափների տակից, այդ ամէնը մի մազաչափ վնաս չի

կարող պատճառել. հայերի ականջները վաղուց դրանց ընտելացած է: Դաշնակցութեան 16-րդ յօդուածն է առաջնորդում այս 80.000 ժողովրդին, աշխարհաշինութեան նպատակաւ են աւերում Պարսկաստանի հայաբնակ գաւառները: Ամէն մի մասնաւորի անվտանգ տեղ հասցնելը գաղթականութեան առաջնորդի սուրբ նպատակն է. Լազարեանի հովանի աջն է հայերի պաշտպանը: Հարկ չկար, ուրեմն, զուր տեղը վտանգն աչքի առաջ առնելու և Երասխի մէջ խեղդելու դէպի փրկութիւնը դիմող անձնազոհներին:

Շատ չի քաշիլ, գետը կըհանդարտի, ջուրը կըպակասի և ժողովուրդն ապահով ու անփորձ ոտք կըդնի Ռուսաստանի նոր տիրապետած հողի վերայ՝ բուն Արարատեան երկիրը: Մի քանի օր, և ահա գաղթականները կ'արժանանան իւրեանց հայրենեաց յիշատակարանները համբուրելու:

Ոչ ոք չի մերժում, թէ Սալմաստ, Խոյ և այդ գծի վերայ մինչև Դաւրիժի բերանն ընկած երկիրը փառաւոր Հայաստանի գաւառներն են, բայց հայի մտքից վաղուց են թռել Հայաստանի սահմանները և այդ ցանկալի հայրենիքի անունով յիշում է նա գլխաւորապէս Էջմիածինը և Մասեաց լեռները:

Երասխի ափին, ասացինք, իջած էր Սալմաստի գաղթականութիւնը, նա սպասում էր ջրի նուազելուն:

ԽԹ.

Ամպոտ գիշեր էր, ամէն գիւղ իւր համայնքի հետ բռնել էր իւր յարմար իջևանը Երասխի ափում. ոչինչ ծածկոց, ոչինչ յարկ չէր պատսպարում ժողովրդին տարերքի խստութիւնից։ ամէն ոք սփռել էր գետնի վերայ մի կապերտ կամ փալաս, լցրել նորա վերայ իւր գերդաստանը և նոյնպիսի գորգ ու ջէջիմներով ծածկել. անձրևը բարակ շաղում էր, լռութիւնը համատարած էր։

Չենք կարող պնդել, թէ ամենքը քնած էին, բայց հաստատ էր, որ ոչինչ շարժումն չկար։

Թէպէտ շատ խմբերի մէջ պահապաններ էլ չեն դրել, մի սպայ իւր թիկնապահի հետ առաջնորդողն է եղել գաղթողներին, բայց ներկայ բանակին, եթէ կարելի է այսպէս կոչել, շրջապատած են պահապան զինուորներ. վերջինների հրացանները միմեանց խաչմերուկ դէմ տուած, ննջում են իւրեանց նշանակեալ կէտերումը, մի քանի աչալուրջները միայն հրացանն ուսերին անում են իւրեանց միակերպ քայլերը։

Խիստ մութն է, ըստ առածին՝ մատդ մարդի աչքը կոխելու լինիս՝ չի նշմարվի. Սալմաստի գաղթականների մէջ, Սահրատի իջևանին կուզեկուզ մօտենում է մի ստուեր, նա խիստ զգոյշ է, կերևի թէ տրեխներ ունի հագին, ոտքերի փոփոխելը բոլորովին չի լսւում։

Ստուերը մօտեցաւ Սահրատի բացօթեայ ննջարանին։ Մի անկողնում պառկած են Սահրատի բոլոր երեխայքը, ինքը, տանուտէրը մի կողմից և կինը միւս կողմից պատնէշ են հանդիսացել գերդաստանի փոքրիկ անզօրներին, նոցա ոտքերի տակ էլ լայնութեան վերայ պառկած է Սուսամբարը։

Ստուերը, կարծես, գիտէր ընտանիքի դասաւորութեան կարգը. նա Սահրատի կնոջ կողմից անցկացաւ դէպի ոտքերը. նա մօտեցաւ աղջկանը։

Սուսամբարն, երևի, սպասում էր անծանօթ անձնաւորութեանը. նա ձեռքը կապերտի տակից դուրս պարզեց։ Անծանօթը սեղմեց և չոքէչոք յետ դարձաւ։ Կարծես, նշան էր այն. աղջիկն ամենայն զգուշութեամբ դուրս սողաց կապերտի տակից և հետևեց առաջին կուզեկուզ հեռացողին։ Լռութիւնը չի ընդհատւում. ամէն ինչ նախկին դրութեան մէջն է, գիշերագնացների արարքը ոչ ոք չի նկատում։

—Վերջապէս, ազատ ես, իմ Սուսամբա՛ր։

Նրանք անվտանգ անց էին կացել զինուորների շղթայից։

—Բայց, Շահէ՛ն, մի՞թէ մենք է՛լ երկիւղ չունինք, քրթմնջեց օրիորդը։

—Դու այժմ ինձ հետ ես, և այդ բաւական է։

—Ի՞նչպէս չվախեցար զինուորներից։

—Դու տեսա՞ր, որ ոչ մինը տեղիցը չըշարժուեց:

—Բնած էին, այնպէս չէ՞:

—Ոսկիները քուն բերին նրանց աչքերին, կաշառքը մութը տեղը լոյս է տալիս:

—Բայց դու ի՞նչպէս իմացար, որ ես էի ձեռքդ սեղմողը:

—Մի՞թէ քո տուած նշանը չէր, մի՞թէ դու կարծում ես, թէ ես երէկ ցերեկով չըհասկացա՞յ քո արածը, երբ քարափի տակին ինձ տեսար ու մի ձեռքդ միւսի մէջ սեղմեցիր, դու ինձ նշան տուիր:

—Նրանով ի՞նչ հասկացար:

—Այն, ինչ որ տեսար ու օգուտն էլ քաղեցիր, դու նշանացի արիր, որ այս գիշեր կը գաս իմ քամակից, որ ձեռքս կը սեղմես ու յետ կը դառնաս և որ ես էլ պարտաւոր եմ քո ետևից գալու:

—Իմ հոգի՛ս, չըկարաց զսպել Շահէնն իւր յուզմունքն և կամեցաւ գրկել օրիորդին և կրծքին փակցնել:

—Ոչ, Շահէ՛ն, Աստուած կը բարկանայ, մենք դեռ թագ ու պսակին չենք արժանացել. դեռ ես Դէյկարխանցու տղայի նշանածն եմ համարւում: Խեղճն յոյս ունի էջմիածնումն ինձ հետ պսակուելու, ի՞նչ կը լինի նորա դրութիւնն էգուց առաւօտ:

—Քո մայրենական կալուածքից զրկուեցաւ խեղճ մարդը:

—Նորա նպատակն էր ինձ հետ ամուսնանալուց յետոյ՝ վերադառնալ Դէյկարխան, կալուածքներս ծախել և բերել Ռուսաստան: Ես մըտքով հօրս գլխահան արեց ու գիւղիցը հանեց. պէտք է ասած, որ հայրս երբէք չէր շարժուելու իւր տեղից, եթէ մօրս ստիպմունքը չլինէր: Հիմի թող մայրս իւր փափագին հասնի, կիսամեռ, կռներս կապած՝ սայլի վերայ դրեց ու տանում էր ռուսի երկիրը:

—Գնացողներին բարի ճանապա՛րհ, մենք մի կտոր հաց մեր տանն էլ կը գտնենք:

Այս խօսակցութիւնն անում էին սիրահարները, անցնելով մերձակայ բլրի միւս երեսը, ուր Շահէնը կապել էր իւր ձին:

Ծ.

—Պր̃ժ...ր̃ժ...ր̃ժ... բացուեց մթութեան միջից կարմրակոլոլ գնդակն և Շահէնի ոտքի տակ վայր ընկաւ:

—Հրացանն արձակուեց Շահէնի ձիուց ոչ հեռի՝ մի քարի տակից:

Շահէնը գրկեց աղջկանն ու չգիտէր ի՞նչ անի:

—Պր̃ժ...ր̃ժ...ր̃ժ...բացուեց երկրորդ գընդակը ուրիշ տեղից դէպի առաջին հրացանն արձակած կողմը:

—Ա՜խ, Հիւսէ՜ին... ես վիրաւորուեցի, գընդակը ուղղակի կրծքումս մխուեց. բարձրացաւ մթան մէջ մի կսկիծ ու մի գլորումի ձայն լըսուեց:

—Պը՜ժ... ը՜ժ... ը՜ժ... կրկնուեց երկրորդ տեղից մի գնդակ և նրան հետևեց մի նոր ցաւալի աղաղակ:

—Ալի՛, ես էլ քեզ ընկերացայ, գնդակը ջարդեց իմ աջ սրունքս: Լսուեց մի երկրորդ գըլորման ձայն:

Հրաձգութիւնից ձիանց խրտնելու վրնջոցը բարձրացաւ:

—Այսուհետև էլ չէ՛ք հասնիլ նպատակներիդ, վերջին հրացանի ձայնի հետ լսուեց դէպի վիրաւորուածները վազողի ձայնը:

—Էլի դո՜ւ... նուաղ պատասխան եղաւ վիրաւորածից:

—Էլի՛ ե՛ս, ես՝ կեղտոտ հայըս, հեգնաբար ընդհատեց սպանողը:

—Ա՜խ, էլի՛ հայըս, գոչեց Շահէնը, գրկից չըթողնելով օրիորդին:

—Այո՛, Շահէ՛ն, հա՛յըդ, էլի՛ հայըդ, միշտ հա՛յըդ: Մօտ արի՛, անփորձ պատանի՛, այստեղ բե՛ր Սուսամբարին:

Շահէնի ծնկները ծալուեցին, փոքր մնաց վայր էր ձգում աղջկանը գրկից:

Նա քարշ էր տալիս իր ընկերին դէպի հօր հրամայական ձայնը:

—Երկու անգամ որսը մեր ձեռքից խլելու համար դու չը պէտք է պարծենա՛ս, դու է՛լ մեզ հետ տեղնուտեղ պիտի մնա՛ս:

Այս խօսքերը պարսկերէն էին. այս ձայնի հետ բացուեց ատրճանակը ծեր Աբրահամի վերայ: Հիւսէինն ընկած տեղից մի յետին փորձ էլ արեց իր հակառակորդի դէմ:

Այս անգամ գնդակն աննպատակ չանցաւ:

—Զգուշացի՛ր, Շահէ՛ն, գոչեց Աբրահամը, հայրդ վիրաւորուեց, մի՛ մօտենաք, չարագործի ձեռքերն անվնաս են, է՛լի կրակ կ'ունենայ մօտը:

Քեզ սպանելուց յետոյ՝ թո՛ղ իմ կեանքս էլ չըլինի, ձայնեց Շահէնը:

—Մեռի՛ր, անօրէն պարսի՛կ, գաշոյնը հանեց Շահէնն և յարձակուեց Հիւսէինի վերայ:

Գիշերը թէև մութն էր, բայց աչքերն ընտելացել էին առարկան տեսնելու:

Մի վերջին խռխռոց վեր ելաւ, պարսիկը շարունակում էր կառանչելը:

—Կա՛ց, Շահէ՛ն, չըկրկնես հարուածդ, հրամայեց հայրը, դա կիսամեռ է, էլ ոչինչ չի կարող անել. մի քանի հարցեր ունիմ անելու, դեռ հոգա՛ իմ վէրքս կապելու, գնդակը բազկիս փափուկ մկանունքովս է անցել. ոչինչ վնաս չկայ, արիւնը միայն պիտի կտրել:

—Ահա՛ իմ գլխիս փաթաթանը, մօտ եկաւ Սուսամբարը և յետ անելով թաշկինակը, կա-

պում էր ծերունու կուրը։ Այս անգամ աղջիկն իրեն աւելի լաւ պահեց։

ԾԱ.

—Ֆաթմա՜... մասաքարև... որտես փափաղն անկատար թողի՜ր...է՞ս էիր ուզում, անխղճմտանք Հաջի սէյիդ Հասա՛ն, խոխռում էր Հիւսէինը։

—Լսի՛ր, լսի՛ր, Շահէ՛ն, այստեղ մի գաղտնիք կայ, ես բանի մէջ Սալմաստցի Հաջի սէյիդ Հասանի մատը խառն է։

—Խեղճ Ալի՜... դու գլուխդ քո ընկերի սիրուն զոհեցիր, բայց զուր, Ֆաթմէն ինձ չըվիճակուեց, նուաղում էր Թուրքի ձայնը։

—Ուշադրութեամբ լսե՛նք, ոչ մի խօսք չը փախցնե՛նք, պարսիկը հիմի շունչը կը փչի, լռութիւնը յարեց Աբրահամը։

—Թող հիմի Հաջի սէյիդ Հասանն իւր համար նոր փեսացու ճարի, նրան զրկի հայի աղջկանն իւր համար փախցնելու. ա՜խ Ֆաթմա, քո սէրդ երեք ամիս է ինձ տարագիր է արել, այս հայի աղջկայ ետևից է ձգել, հօրդ աչքը սորա վերայ էր, իւր ձեռքից ոչինչ չեկաւ, քեզ հետ կամեցաւ փոխել սրան, քեզ վարձ խոստացաւ սրան բերողին։

—Փոքր առ փոքր ես գլխի եմ ընկնում, ասաց Շահէնը, մի քանի անգամ Հաջի սէյիդ Հասանին պատահել եմ Սահրատենց փողոցներում

անժամանակ անցնելուս։ Յիշո՞ւմ ես, Սուսամբա՛ր, կարմիր մօրուքը։

—Գրողը տանի՜, նա մի օր ջրի ճանապարհին ինձ վախեցրեց, նրա աչքերի հայեացքը հիմա էլ սիրտս դողացրեց։ Այնուհետև ես միայն չէի համարձակւում ջրի գնալ։

—Ֆաթմա՜... անունդ տալով մեռնում եմ... Պարսկի խռնչիւնը կտրուեց, ամենայն ինչ վերջացաւ։

—Էլ ոչինչ գաղտնիք չըմնաց, ասաց Աբրահամը, խեղճ տղան սիրահարուած է եղել Հաջի սէյիդ Հասանի աղջիկ Ֆաթմայի վերայ. սէյիդ Հասանն երևի վաղուց տեսել է Սուսամբարին, առաջարկել է իւր աղջկայ սիրահարին սրան իւր համար տանելով՝ առնել իւր աղջիկը. փեսացուն էլ իւր ընկերներին է հետը քարշ տուել ու հիմի երկուսն էլ սէյիդի կրքերին զոհ գնացին։

ԾԲ.

—Ամէն երկիւղ փարատուեց, Շահէ՛ն, էլ քեզ հետևող չունիս, այժմ ինձ ասա՛, ո՞ւր ես տանում այս աղջկանը։

—Հա՜յր, մենք սիրում ենք միմեանց։

—Եւ ո՞վ իրաւունք տուեց քեզ։

—Սիրտս։

—Քանի՞ ժամանակ է։

—Մանկութիւնից։

—Թշուառ երեխա՜յք…

—Երկրորդ անգամն եմ քեզ խոստովանում, հա՛յր, դու գիտես, որ սիրում եմ Սուսամբարին, վա՜ղուց է, շա՜տ վաղուց է, որ մեր սրտերը միմեանց մօտեցել են։

—Բայց կարելի է այդ գլուխ գալու բան չէ։

—Ինչո՞ւ… ինչո՞ւ ուրեմն ընդունում էիք մեր տանը Սահրատի երեխաներին, ինչո՞ւ միշտ դու փայփայում էիր Սուսամբարին, ինչո՞ւ մայրըս ամենալաւ պատառներն իմ և սորա համար էր պահում, ինչո՞ւ մեզ զանազանում էիք ուրիշ երեխաներից, ինչո՞ւ չը նկատեցիք, որ միշտ իրար մօտ լինելով՝ մեր սէրը հասակներիս հետ զօրանում էր մեր մէջը, ինչո՞ւ միանգամից սրան հեռացնելով՝ պատճառ տուիք սիրոյ ճանգն ընկածներիս երկու տարի շարունակ գիշերները միմեանց տեսնելու, ինչո՞ւ ոչինչ նկատողութիւն չարիք, երբ ձեր որդին բոլորից քնացնում էր ու ինքը հեռանում տանից, ինչո՞ւ չը հարցրիք, թէ ո՞ւր էի այդպէս անժամանակ…

—Շարունակի՛ր, անբաղդ որդի՛ս, ես լսում եմ։

—Խոստովանի՛ր, հա՛յր, ու դու շատ անգամ արթուն ես եղել իմ գիշերաշրջութիւնից դառնալուս. ես այդ հասկացել եմ և կարծել եմ, որ դու միտք ունէիր Սուսամբարին ինձ համար ուզելու, բայց սորա նշանուած լինելու պատճառաւ՝ թոյլ ես տուել ինձ կողմնակի միջոցներ

ձեռք առնելը։ Սո՞ւտ է, հայր, արթուն չե՞ս եղել։

—Հիմա դու լսիր, զաւա՛կս, ես ամէն բան գիտէի, ես վաղուց նկատել էի ձեր սէրը, ե՛ս հրամայեցի մօրդ հեռացնել մեր տանից Սահրատի երեխաներին, ես երկու տարի ամէն գիշեր քո հետքդ պահել եմ, չի՛ անցկացել մի րոպէ, որ Որմեցու պարտիզի պատի տակին ես ներկայ չը լինէի ձեր երկուսիդ տեսակցութիւններին. դու ո՛չ մի անգամ չը զգուշացար յետ մտիկ տալու անկիւնի միւս կողմը, և ահա՛ դու կը բռնէիր մի աներեւոյթ այցելու, ձեր սիրահարութիւններին անկոչ վկայ. դու կը տեսնէիր մի ծերունի, որ կուչ էր եկել պատի տակին ու չորս աչքով հսկում էր իւր միակ որդու վերայ՝ երկիւղ կրելով պատանեկական անհեռատես հետևանքներից։

—Ա՜խ, Շահէ՛ն, յիշո՞ւմ ես հազը։

—Այո՛, Սուսամբար, հազը, այն հազը, որ ձեզ սարսափեցրեց և արգելք եղաւ րոպէական ոգևորութեանը։

—Հա՜յր…

—Մի՛ ամաչիք, որդի՛քս, գիտեմ, որ գիշերը ծածկում է այժմ ձեր ամօթխածութիւնից պատճառուած կարմրութիւնը, բայց ես ներում եմ այն միակ սխալմունքը։

—Հաւատա՛, հայր…

—Մի՛ աշխատիր, Շահէ՛ն, համոզելու, ես գիտեմ, որ այդ առաջին և վերջին համբոյրն է եղել ձեր սիրոյ գրաւականը, ապրի՛ Սուսամբարը,

մի քանի րոպէից դարձեալ դու մոռանում էիր քեզ, բայց սա Աստուծոյ երկիւղը յիշեցնելով՝ յետ պահեց քո վառ բորբոքդ։

—Ա՜խ, հա՛յր, դու ամէն բան տեսնում ես։

—Տեսել եմ, տեսնում եմ և մի՛ սխալիր, որ էլի տեսնեմ. այս անգամ վերջ պէտք է դնես այս անախորժ տեսարաններին։ Հօրդ հրամանն է, որ անխօս յետ դարձնես կրկին Սուսամբարին գաղթականների մէջ և նոյնպէս անխօս վերադառնաս ինձ հետ՝ մոռանալով սորա գոյութիւնը։ Իսկ դու, Սուսամբա՛ր, լսիր ծնողացդ հրամանը, գնա՛ Նոր երկիրը և քո փեսացուիդ հաւատարիմ ամուսին եղի՛ր։

—Պատանիները լուռ էին։

—Ձե՞զ եմ ասում, շեշտեց ծերունին։

—Հա՞յր...

—Եւ ոչ մի խօ՛սք,

—Խոնարհինք, Շահէն, համբուրենք հօրդ ոտքն ու ասենք, որ այդ շատ ուշ է, աղաչենք, որ կամ իւր ձեռքով մեզ էլ Թուրքերի նման ըսպանի, կամ իրարից չը բաժանի։

—Սիրավառները փարուեցան Աբրահամի ծնկներին։

—Անբաղդ զաւակնե՞րս... ես ձեր կորչելու պատճառն եմ... այդ անկարելի է...

—Ցցի՛ր, հայր, այս սուրը մեր սրտումը, թող մենք գրկախառնուած մեռնենք այս տեղ,

թող միանա՛նք այն աշխարհքումը, հանեց Շահէնն իւր դաշոյնը պատենից։

Ծերունին լուռ էր, նա դողում էր ամբողջ մարմնով, նորա մէջ կրքերը միմեանց ետևից յուզւում էին. Թէպէտ մութն էր, բայց նա չէր համարձակւում վեր նայել, որ մի՛ գուցէ սիրահարների աչքերն իւր աչքերին առնեն. Նա ծեր էր, այո՛, ջղոտ մարդ լինելով՝ նորա չորացած երեսին չը կար քանի մի երջանիկ ու կարմրայտ ծերունիների դիմաց գեղեցկութիւնը, բայց եթէ լոյս լինէր, ամենքս կը տեսնէինք, որ նորա արիւնը երակներից ջիղերի մէջն էլ տարածուել էր և վարդագոյն դէմք էր տուել նրան. եթէ նորա երակը շօշափէիր, կրակի նման տաք էր։ Նա ուզում էր, կարծես, խօսել և չէր վստահանում. Նա ամաչում էր, կրծքի վերայ մի մեծ բեռը ծանրացել էր և խեղդում էր նորան։

—Մի վճի՞ռ, մի խօ՞սք, հա՛յր, սպասում ենք, աղիողորմ կրկնեցին երկու ամոլները, մա՞հ, կամ կեա՞նք։

—Աստուա՞ծ իմ, ես վճռեցի, դուք պէտք է ամէն բանն իմանաք։ Վեր կացէ՛ք, սիրելի՛քս, նստեցէք աջ ու ձախ կողմս և լաւ ականջ դրէք՝ ինչ որ պիտի ասեմ. այն ժամանակը ձեզ եմ թողում հետևանքն ու վճիռը։

Շահէնն ու Սուսամբարը կատարեցին ծերի հրամանը, աջ ու ձախ բռնել էին Աբրահամի

դողդոջուն ձեռքերն և չրթունքներին մօտեցրած՝ սպասում էին։

Բժիշկս անխիղճ էր, նա մտքումը դրել էր իւր առողջացրած կուրծքը կրկին բորբոքումի ենթարկել։

—Նորանց սպասելը վնաս չունի, սառնասրտութեամբ ասաց բժիշկս իւր միապաղաղ ձայնովը, բայց շատ սպասեցին հիւանդ զինուորներըս իմ երեկոյեան այցելութեանը, դու գիտե՞ս, որ հիւանդի համար բժիշկը մեծ յոյս է. ես քեզ պատուիրում եմ Շահէնի ու Սուսամբարի մօտից չհեռանալու, և սպասելու ինձ մինչև վաղըն առաւօտ. միայն եթէ կամենաս, ասա՛ Մովսիսին, թող մի բաժակ սառը ջուր տայ քեզ։

Ասաց ու վեր կացաւ։

—Քեզ եմ հարցնում, ընթերցո՛ղ, այս ընդհատելու տե՞ղ էր։

ԾԳ.

—Չեմ կարող այսօրուան պատմութիւնս ըսկսել առանց ծանօթացնելու քեզ իմ հերոսներիս հետ, երկուսն էլ արժանի են խորամուխ ուշադրութեան, այսպէս սկսաւ բժիշկս միւս առաւօտն իւր խօսակցութիւնը։

Ես ոչինչ չը կարողացայ դիմադրել, ընկե՛լ ենք, պիտի տանինք, ծերերի յատկութիւնն է, յոգւոց հանելով լսեցի։

—Քեզ մտաւոր աչքով տեսնում եմ թռչելու Երասխի ափը, լեռան քամակը, փարատելու գիշերուան մթութիւնը, ցերեկ երևակայելու և մի թմբի տակից զմայլելու իմ սիրելիներիս արտաքին տեսքով. ա՛յժմ, քան ուրիշ ժամանակ արժէր նոցա երկուքին էլ տեսնել։

Ահա՛ երկու տատրակներ նստել են ծերունու աջ և ձախ կողմը, և անհամբեր սպասում են մի մեծ դաղտնիքի։ Նրանք բոլորովին հոգիացած են, ծերը մի քանի բառով միտք ունի նրանց սէրը մեռցնելու, բայց դժուար է, նրանց սիրտը զգում է մի չար վախճան, բայց բոլորովին չի յուսակտուր եղել։ Վերջին խօսքի մէջ Աբրահամն երկմտական դիրք բռնեց, նա էլ չի կարդում մերժողական մահահրաւէր վճիռը, նա իրանց է թողնում մտածելը։

Ո՜հ, ի՞նչ մեծամեծ բարիքներ է տուել մարդիս Նախախնամութիւնը, ի՞նչքան քաղցր և գթած է նա դէպի մարդկութիւնը. բնութեան արարիչն անթիւ պարգևներից և անխնայ շնորհքներից մինն էլ գեղեցկութիւնն է ստեղծել. որքա՞ն երջանիկ են գեղեցիկները, որքա՞ն այլ-և այլ տեսակ տպաւորութիւններ է թողնում սիրունութիւնն իւրաքանչիւր հասակի շրջանի մէջ և որչա՞փ մեծ է նորա ազդեցութիւնը սեռերի վերաբերութեամբ։ Ինձպէս մի ոտքը գերեզմանի դռանը դրած ծերունին չի կարող զգալ այն,

ինչ որ դու կ'զգաս սիրելիներիս պատկերը տեսնելով։ Լաւ նայիր ուրեմն։

—Զգիտեմ ընչի՞ն և ո՞ւմ նմանցնեմ Սուսամբարիս, մի փոքր կանգ առաւ բժիշկը, քո առաջին ներկայանում է յունաց առասպելական մի դիցուհի, որ ծունկը գետինը տուած, մի ձեռքը ծեր Աբրահամի ուսին մօտեցրած՝ թաղուել է մեռելական լռութեան մէջ։ Տե՛ս նրա սև, ծիծեռնակաթև մազերի հիւսերը մինչև ծնկները կախ ընկած, ծայրերիցն էլ մի մի գոյնզգոյն չորս կտորներ ամրացրած, համբրի՛ր, տասներկու են այդ հիւսերը։ Նայիր նրա լայն ճակատին, որի ստորին կողմը կամար են կապել երկու թանձր, թուխ և համահաւասար յօնքեր. ոչ սանրած և ոչ հարթած ու դեղած են այդ կամարները, բնութիւնն ինքն է տաշել, կոկել և իւր անսխալ կարկինով ձևել այդ շինուածքի հաստատութիւնը։ Այդ կամարների ներքև դրուած են աղջկայ եղնիկի աչքերը, որի բիբերից դուրս հոսող առաձգական ոյժը մի րոպէի մէջ կը հալէր ու կը մաշէր ամէն երիտասարդի սիրտն ու հոգին։ Այդ որքա՞ն կեանք, որքա՞ն գրաւիչ զօրութիւն, ո՞րպիսի հիասքանչ հայեացք, ո՞վ կարող էր չը խոնարհիլ այն ակնթարթի առաջ, երբ նա երկայն ու խիտ արտևանունքը միմեանց խըփելով՝ իւր սրտի զգացմանցը հաղորդ անել ցանկանար։ Ծինծու չէ Սուսամբարի գեղեցկութիւնը, ոչ մի մեծաքանքար վիպասան չէր կարող

նկարագրել այն փափկութիւնը, քնքշութիւնը, սպիտակախառն կարմրութիւնը, որ այդ րոպէից սփռուել էին Սուսամբարի սակաւ ինչ ձուաձև երեսի վերայ. արիւնի շրջանառութիւնը կարելի էր պարզ տեսնել նրա այտերի թափանցիկ մորթի տակից։ Նա լուռ էր, նա ոչ սիրտ և ոչ հակամիտութիւն ունէր այդ միջոցին ծիծաղադէմ երևելու, բայց հրեշտակական ժպիտն ինքնին խաղում էր օրիորդի բարակ շրթունքների վերայ։ Նրա բուն հայ—կանացի քիթը՝ փոքր ինչ դէպի ունգունքը կորացած՝ համապատասխան էր նրա յօնքերի կիսաբոլորակը լրացնող կզակի հետ, իսկ հիւսիսային եղջերուի փղոսկրեայ պարանոցը պահպանելով իւր վերայ աղջկայ կանոնաւոր յետ թեքուած գլուխը՝ կը գրաւէր այն րոպէին ամենաերևելի և տաղանդաշատ կենդանագիրներին. Ռաֆայէլի վրձինն էր հարկաւոր նկարելու բնութեան թարմ դուստր այդ մադօնային։

—Լաւ ժամանակի ես հանդիպել Սուսամբարիս, նայիր ու հիացի՛ր, նորա գլուխը բաց է, նորա գլխակապը դարձել է Աբրահամի վիրակապը, ուրիշ անգամ դու արժան չես լինիլ Սալմաստի գիւղացու հայ աղջկանն այս դրութեան մէջ տեսնելու. վաղը նա թաշկինակով փաթաթած կ'ունենայ գլուխը և ծածկած իւր դէմքի կէս մասը։

Սուսամբարի դէմքի գծագրութիւնը պատմելուց յետոյ՝ քեզ դժուար չէ հետևցնել, որ

այդպիսի մի կատարելատիպ էակի երեսի վերայ միշտ նկարագրւում է անմեղութիւն, քաղցրութիւն, բարեսրտութիւն, սէր և թախիծ։ Այս ամէն յատկութիւնները նրան ի բնէ են վիճակուած, թախիծը նա զարգացրել է իր սրտի մէջ օրօրոցից. որբին ուրիշ վիճակ չի սպասում խորթ մօրից։

Այսքան քնքշութիւն, նուրբ պատկեր և չը փչացած գծագրութիւն թէև հնարաւոր է միայն քաղաքի մէջ, պալատներում մեծացած աղջկանցը, գիւղացու նրբութիւնը կորչում է մշտական ծանր և խոժոռ աշխատանքի մէջ, բայց Սուսամբարը մի բացառութիւն էր, կարելի է ասել։

Սուսամբարի նկարագրութիւնն անելուց յետոյ՝ բժիշկս մի փոքր կանգ առաւ, ձեռքը ճակատին շփեց ու սկսեց Շահէնին նկարագրել։

Շահէնը Սուսամբարի հակապատկերն էր, շարունակեց բժիշկս. որքան մինը քնքուշիկ և բարակ, միւսը խոժոռ, յաղթանդամ և հուժկու. Շահէնն աղջկայ պէս բարձրահասակ էր, բայց նորա աչքերն աւելի խոր ընկած էին ու դէմքը ջղոտ. նորա կուրծքը խիստ լայն և գնացքն ուղիղ էր. նորա պարանոցի հաստութիւնն ու բարձրութիւնը յիշեցնում՝ էր մեզ պարսկական ըմբշամարտներին, իսկ նորա կոկորդի դուրս ցցուած խուչափողը ցոյց էր տալիս նորա կարծր կազմուածքն և պողովատի առողջութիւնը։

Հագնում էր Շահէնը կապոյտ ղատաքի կարճ բաճկոն և չաքերաւոր երկճղի կապայ մինչև ծունկը երկայն. երեք երիզի կոճակ փակում՝ էր կրծքի տախտակի ներքին մասը, իսկ վերը բոլորովին բաց էր։ Շապկի բացուածքի տակից երեւում՝ էր նորա մերկ կուրծքը, որի վերայ չորս մատնաչափ բարձրացել էր խիտ մազերի թաւուտ անտառը մսալից մարմնոյ մորթից։ Մի հատ կապոյտ կտաւի կարճ և լայն վարտիկ հասնում՝ էր մինչև նորա սրունքը, իսկ ոտքերին մի զոյգ պարսկական սրածայր կօշիկներ էին առանց չօրաբների, կամ գուլպաների։

Շահէնը 22—24 տարեկան էր այս ժամանակը, նորա մօրուքը մի քանի անգամ դերծուել էր, իսկ ընչացքն արդէն բաւականին հաստացել էին ու երկարել. այդ առնական որոշիչ նշանները նկարագրում էին Շահէնի երեսին մի հաստատ բնաւորութիւն, իսկ նորա հայեացքից փայլում էր հոգւոյ անդորրութիւնը, որից ժամանակն և արկածքները կարող էին յառաջ բերել մի մելամաղձոտ յատկութիւն։

Շահէնն իբրև գիւղացի՝ խիստ չափաւոր էր, գիւղացուց հեռի է պճնասիրութիւնը, նրան ծանօթ չէ շռայլութիւնը, նրանցից ամէն ոք մշակ ու երկրագործ է, նրանց իւրաքանչիւրի ձեռքերն էլ կոշտացած են գութանի մաճը բռնելուց, կամ բահի կոթը ձեռքի մէջ սեղմելուց, արեգակը միակերպ այրում, սևացնում՝ է և՛ աղքատի և՛

հարստի երեսը, կոչտացնում է նորա մորթը, և այդ խոժոռ կեանքը գիւղացուն քաղցր է և սիրելի, քան թէ պարապ, ուրիշի աշխատանքով իւրեանց փորը պարարող ծոյլ աղաների գաղիր և անասնական կեանքը։

Այժմ դու ճանաչում ես իմ սիրելիներիս, դարձաւ ինձ բժիշկս, հիմա ականջ դի՛ր Աբրահամի խօսակցութեանը և նորա հետևանքին։

ԺԴ.

—Շատ երկայն չի լինիլ իմ խօսելիքս, իմ զաւակնե՛րս, սկսաւ Աբրահամը, բայց ձեր սրտին անբժշկելի վէրք պիտի պատճառէ։

Ձեր առաջին այժմ ներկայանում է մի թարշամած ու բազմաթախիծ ծերունի, որ չի վստահանում ուղղակի նայիլ ձեր երեսին. նա պարանոցը թեք՝ իբրև յանցաւոր ներողութիւն պիտի խնդրէ ձեզանից, որ անբաղդացրել է իւր երկու արենակից ամենամօտ ազգականներին, իւր հարազատ միակ զաւակին և միակ թոռին։

—Ի՞նչ, հա՛յր, ի՞նչ ասացիր, թո՞ռը, ինչ թոռը։

—Այո՛, Շահէ՛նս, հայրդ ու մայրդ իւրեանց անխոհեմութեամբը մեղաւոր են իւրեանց որդու և թոռան առաջին. մենք մեր անչափահասութեան մեղքը քաւեցինք. մեր անհարազատ զաւակին անուն ու ազգ տուինք, վերջն էլ աստուածային հրամանով սուրբ սեղանի առաջ օ-

րինաւոր կապով միացանք. բայց ի՞նչ օգուտ, որ արիւնը քաշեց, Աստուած մեզ պատժեց, մեր զաւակի անուշ գտրիկն աչքներից չը հեռացնելու համար, մեր որդու անբաղդութեան պատճառն եղանք։

—Շատ մութն է, հա՛յր, պարզ խօսի՛ր, աղաչում եմ, այդքան համբերութիւն չունիմ, ես սկսում եմ կասկածել։

—Պար՛զ խօսիր... ի՞նչպէս խօսիմ, երեսը միս ու արիւնից է, ամաչում է։

—Ասա՛, հայր, ասա՛, յոգւոց հանեց Սուսամբարը, ես մի փոքր գլխի ընկայ. ես քո թոռըն եմ, այնպէս չէ՞։

—Այո՛, իմս Սուսամբա՛ր, Մարիամիս միակ պտո՛ւղը։

—Շտապի՛ր, հայր, սիրտս արիւնով լցւում է։

—Իմ մայրս—Մայրիամը քո անհարազատ աղջիկն է, այո՞. դու քո երիտասարդութեանդ ժամանակ դառն սիրոյ պտուղ ես ստացել իմ մայր Մարիամին. այդպէ՞ս է. լաւ հասկացայ, կրկնեց Սուսամբարը։

—Կիսով չափ այո՛, վերջումը դառն սիրուն քաղցրութիւնը փոխարինեց, սուրբ պսակը ջնջեց մեր երեսից նախատինքը և քո հարազատ պապդ ու տատդ էին, որ քեզ—Մարիամիս թշուառ որբին, բաց արին իւրեանց գիրկը, սիրեցին, համբուրեցին, գգուեցին, Շահէնիցը չը զանազանեցին ու անգիտակցաբար քեռու և

քրոջ որդու մէջ այս մահառիթ սէրը զարթեցրին, և հիմա երկու ձեռք արած մի գլուխ՝ ձեզ վտանգի մէջ ձգելով՝ ձեր հետքը չեն կարողանում թողնել։

—Ա՜խ հայր, ի՞նչ կը լինի պարզ խօսիս, Շահէնիդ առջևը փոքր առ փոքր բացւում է կորստեան անդունդը, շուտ արա՛, գլորի՛ր։

—Մի՛ արգելիր, Շահէ՛ն, իմ սիրելի մօրեղբա՛յրս, թողեց աղջիկը ծերի ձեռքն և անցկացաւ պատանու մօտ ու ձեռքը բռնեց, թող մեր պապը վերջացնի իւր պատմութիւնը։

—Ամէն բան պարզեցի, իմ ամբաղդնե՛րս, մնաց ասել, որ ձեզ նման ես ու իմ խեղճ պառաւս նոյնպէս արգելքի հանդիպեցինք. երկու տարի ձեզ նման մենք էլ տեսնւում էինք ամեն օր, մեր դժբաղդութիւնը նրանումն էր, որ ոչ ոք մեզ չը հանդիպեց, երիտասարդութիւնը մեր աչքերը կապեց, անխոհեմութիւնը մեզ կաշկանդեց և, ա՜խ, այն ինչ սև օր էր, երբ մայրդ, Շահէ՛ն, դեռ օրիորդի անուն կրելով, ամօ՜թ ինձ, յայտնեց, որ երեք ամսից մայր լինելու պատրաստ է։

Ծերունի Աբրահամն ուշաղնաց եղաւ, նա շրջուեց մէջքի վերայ և եթէ Սուսամբարը չէր բռնել, վայր պիտի ընկնէր։

—Ա՜խ Շահէն, պապս ձեռքից գնաց, օգնի՛ր, ճչաց աղջիկը։

—Հա՜յր... այս խօսքը միայն լսելի եղաւ հազիւ Շահէնի բերանից։

Սուսամբարի ոյժը չը կարաց տանել, կռների վերայ տարածուած ունէր ծերին, որի գլուխը յետ էր գնացել և թոյլ կախուել, իսկ Շահէնի գլուխը միւս կողմից ընկաւ նորա ծնկան վերայ ու ծանրացաւ։

Անտանելի՛ դրութիւն, մի նորատի աղջիկ, գիշերուան մթութեան մէջ, երկու սպանուած թշնամի գիւղների մօտ, լեռան թմբին, ամէն մարդից հեռու, միակ իւր սրտին ամենամօտ երկու սիրելիներին յենարան է դարձել։ Ի՞նչ անէր նա։ Ամենայն զգուշութեամբ ցած դրեց Աբրահամի գլուխը խոտի վերայ և թոյլ տուեց Շահէնին մնալու իւր ծնկան վերայ։ Եւ ողորմելին մոլորուած էր, բայց իրան չկորցրեց։

Այստեղ կանացի խնամածու բնութիւնն իւր վսեմ կոչումն արտայայտեց. այր մարդը որքան և ուժեղ, որքան և խոժոռ ու բիրտ կեանքի ընդունակ, նեղութեան մէջ չի կարող կնոջ չափ համբերատար լինել, կինը իւր որդուն, իւր սիրելուն, իւր նմանին օգնութիւն հասնելու միջոցին իրեն չի կորցնիլ. նա դիւրագրգիռ է, այո՛, նա թոյլ է կազմուածքով, նա երկչոտութեան հակամէտ է, բայց երբ կարեկցութեան տեղն եկաւ, կնոջ սիրտն զգում է իւր պարտաւորութիւնը։ Նա և՛ կ'արտասուի և՛ կը գործէ, և՛ կը մորմոքի և՛ կ'օգնէ։ Վսեմ է կանացի կոչումը։

Ո՞ր ծնող հայրը կարող է մօր նման համբերել իւր զաւակի կրած տանջանքներին, ցաւերին ու ծանր տկարութիւններին. շատ օրինակներ են եղել, որ հօր սիրտը չի տարել մահուան վերջին ճգնաժամում կեանքի հետ կռւող որդու սարսափելի րոպէներին ականատես լինելու. Նա երեսը դարձրել, հեռացել ու բաւականացել է իւր անձը կոծելով ու լալով, իսկ մայրը, հոգածու մայրն ատամները սխմելով, սիրտը քարացրել է և վերջին ճիգը թափել՝ խլելու իւր սիրելի զաւակին անգութ մահուան ճիրաններից։

Այո՛, շատ բաներում կինը բարձր է մարդից։

Լալիս էր Սուսամբարը և մտածում էր օգնել։

Բայց ի՞նչ օգնութիւն նա կարող էր անել այս վայրենի անապատում, ո՞ւմ դիմէր, ո՞ւմ կանչէր և վերջապէս ի՞նչպէս ցած դնէր իւր ծնկան վերայից այն քաղցր բեռը, Շահէնի գլուխը։

—Պապի՛, Շահէ՛ն, մրմնջաց Սուսամբարը մի քանի անգամ։

Պապն ու Շահէնը ոչինչ չեն լսում։

—Ա՜խ Աստուած, ա՛ռ իմ հոգիս…

Աղջիկն ակամայից գլուխը ցած թողեց դէպի իւր սիրելու երեսը։

Մի քանի կաթիլ արտասուքներ գլորուեցան նորա աչքերից և թաց արին Շահէնի այր-

ուող երեսը, Սուսամբարի շրթունքը հանդիպեցին տղայի դէմքին։

Ո՞ւր եմ ես, սթափուելով արտասուքի թացութիւնից՝ աչքերը բացեց Շահէնը։

—Վեր կաց, Շահէն, գոնէ ինձ խղճա՛, ներելի չէ քո այրական սրտին մի թոյլ աղջկայ խաղալիք լինել բաղդին, թողնել գիշերուան կիսին լեռների թմբլին դիակների մէջ. թուլասիրտ Շահէ՛ն, ա՞յդ է քո համբերութիւնդ։

Եւ Շահէնն ուշքի եկաւ։

—Համբերութի՛ւն, Շահէ՛ն, համբերութի՛ւն, շտապենք հօրդ յետ բերելու, նորա դրութիւնը այժմ շատ ցաւալի է՝ քան թէ մերը, ամօթը սրան ուշադնաց արեց։

—Ների՛ր ինձ, Սուսամբա՛ր։

—Դեռ հօրդ յետ բերենք։

—Հա՜յր, զարթնի՛ր, խնայի՛ր որդւոյդ, թըշուառ թոռիդ։

Այստեղ Սուսամբարը լուռ էր, նորա աղիքը գալարում էին, բայց նա և ոչ մի արտաքին այլայլմունք չը ցոյց տուեց. նա անցկացրեց իւր ձեռքը ծերի գլխատակն և գլխիկոր երեսին նայում էր։

Փրկարար էր օրիորդի արտասուքը, երկու կաթիլ բաւական էր թաց անելու ծերունու ճակատը՝ նրան զարթնացնելու համար։

—Իմ որդի՛քս, հառաչեց Աբրահամը։

—Վե՛ր կաց, իմ խեղճ պապի՛, քեզ չի վայելում կանացի բնաւորութիւնը։

Այս խօսքերի հետ աղջիկը համբուրեց ծերի ճակատը։

—Ի՞նչ քաղցր համբոյր... որդիական անոյշ ներողամտութեան պտո՜ւղ, մրմնջաց Աբրահամը՝ ուշքի գալով. ներո՞ւմ էք դուք, ի՛մ զաւակներս, ձեր կեանքը յաւիտեանս թունաւորողին։

Ի՞նչ կը լինէր ես քեզ լսած և ամուսնացած լինէի, հա՛յր, այս անբաղդութիւնն էլ չէր պատահիլ։

Ե՛լի ես եմ մեղաւոր, որդի՛, այն ժամանակն էլ ուշ էր, ես այդ գիտէի։

Այստեղ հայրը պատմեց, որ ինքն է եղել Որմեցու պարտիզումը պարսիկների հետ կռուողը, և Տահէնին միջոց տուողը դիպուածով այրի միջից ազատելու աղջկանը։

—Բայց ների՛ր, պապի՛, դու դեռ չվերջացրիր մօրս պատմութիւնը, ասաց Սուսամբարը։

—Քարասիրտ աղջի՛կ, դու չես խնայում իմ ծերութիւնս, բայց ես էլ թուլացողը չեմ, ես պիտի խմեմ այս դառնութեան բաժակը, որ ձեզ համար քաղցրացնեմ համբերութիւնը։

Ծերը պատմեց նոյնպէս, թէ իրեանց պսակուելուց երեք ամիս յետոյ՝ նորա կինը ծնել է Սուսամբարի—մայր Մարիամին, թէ իր կինը պսակուած օրից հիւանդ ձևացած՝ տանից չէր դուրս գալիս, թէ մկրտող քահանայի խորհրդով՝

ինքն իւր ձեռքով տարել է Մարիամին Դէյկար խանցի Աւագին, որը անզաւակ լինելով՝ ուրախութեամբ սնուցել է ու վերջը Աբրահամի խորհրդով ամուսնացրել Սահրատի վերայ, որից ծնել է ինքը Սուսամբարն ու մի քանի օրից մօրից զրկուել։

—Բայց ի՞նչն էր քեզ և մօրս միմեանց հասնելու արգելառիթը, հարցրեց Տահէնը։

—Հօրս նախապաշարմունքը, ինքը հարուստ էր, չը կամեցաւ չքաւորի բարեկամ դառնալ։

—Իրաւունք ես ունեցել հօրդ կամքին հակառակ գնալու։

—Հիմա, իմ որդի՛ք, վիզը ծռած՝ ձեր առաջին չոքում է ձեր հայրը, նա բաց արեց ձեզ մօտ իւր սրտի վէրքերը, ձեզ է մնում կամ կարեկցական աչք ձգել նորա վերայ, կամ դատապարտել ու անիծել։

Ծերունին ծնկան վերայ եկաւ։

—Հա՜յր, երկու կողմից բարձրացրին պատանիները, դու ոչնչով մեղաւոր չես, բայց մեր դրութիւնն ի՞նչ կը լինէր, եթէ քո հովանի աչքը չը հսկէր մեր վերայ. քեզ ենք պարտական մենք մեր անբծութիւնովը։

—Իսկ այսուհետև՞, իմ որդի՛ս։

—Այսուհետև, պատասխանեց օրիորդը, Տահէնն ինձ կը տանի, բաց կը թողնի մեր կարաւանի մէջ և մենք եղբայրական վերջին բարևի հետ խօսք կը տանք միմեանց մոռանալու։ Իմ

քեռի Շահէնն իւր ծնողների ընտրութիւնովը կուսնեայ մի նշանած, իսկ ինձ կը մնայ ամբողջ կեանքումս աղօթելու սորա յաջողութեան և բարեբաղդութեան համար։

— Իսկ քեզ, իմ դո՛ւստր, կը մնայ հնազանդ կին լինելու քո նշանածին, որդւոց ու թոռների տէր դառնալու նոր աշխարհքումը։

— Իսկ իմ սրտիս, հա՛յր, մահը միայն կը ջնջի Սուսամբարի անունը, այս օրից ինձ համար Սուսամբարը մեռած է և մահուան վերջին րոպէում խօսք է առել ինձանից իմ սէրս ուրիշներին չբաժանելու։ Մնաս բարև՛, հա՛յր, ինքդ կարող ես տանել քո թոռին հօրը յանձնելու։

ԾԵ.

— Կա՛ց, անբա՛ղդ Շահէնս, ձեռքը պարզեց Աբրահամը և կամենում էր բռնել։

— Ո՛չ, թոյլ տո՛ւր, հա՛յր, ես վճռել եմ, իմ սիրուհիս գերեզմանից կանչում է ինձ։

Շահէնն աշխատում էր դուրս սպրդիլ հօր գրկից։

Հայր ու որդի իրար քաշքշում էին։

Որդին դուրս ընկաւ հօր ձեռքից և փախս առաւ, կրկնելով միշտ վերի խօսքերը. ինքդ կարող ես քո թոռին իւր հօրը յանձնել։

— Իսկ ես կարող եմ ամէն տեսած ու լըսածներս Հաջի սէյիդ Հասանին պատմել։

Այս խօսքերն ասողը Ալին էր, որը երկիւղից կարծելով, թէ գնդակը կուրծքն էր մտել, ուշագնայ ընկել էր. գնդակը ծակել անցել էր նորա հագուստը կռնատակիցը։ Նա փոքր առ փոքր սթափուել էր ու փորսող հեռացել դէպի ձորը. յաջող րոպէն նրան օգնեց փախչելու։

ԾԶ.

Միւս առաւօտը Սուսամբարն իւր ծնողաց հետ Երասխն անց կացաւ. ոչ ոք չիմացաւ նորա բացակայութիւնը և վերադարձը։

ԾԷ.

Սալմաստի գաղթականութիւնն Երասխի այս ափումն է, պարսկական մոլեռանդ հալածանքից է՛լ երկիւղ չկայ, մօտ է նեղութիւններից ազատուելու և դարաւոր տառապանքներին վերջ տալու օրը, էլ խաչը չի հայհոյւում; հայը հիմի իւր տանն է, քրիստոնեայ հզօր բազուկն այժմ նորան հովանաւոր է, Աւետեաց երկիրն իր ամէն դրաւիչ յատկութիւններով առաջիդ բաց է։ Սակայն այս ամէն բարեյաջող հանգամանքներում մեծ խլրտումն է եկւորների մէջ, ամէնքի դէմքի վերայ յուսահատութեան նշաններ են երևւում, միմեանց երեսի չատ կասկածոտ կերպով են նայում։

—Ի՞նչ պիտի անենք, տեսա՞ր գլուխներս ինչ փորձանք եկաւ, պատասխանում է մինը միւսին։

—Ես առաջուց գիտէի մեր գլխի գալիքը։

—Հապա ինչի՞ եկար։

—Որովհետև հարևանս եկաւ։

—Հարևանդ կոյր էր։

—Ասած է. եթէ գնաս մի աշխարհ տեսնես ամէնքը կոյր են՝ դու էլ աչքերդ պինդ կապիր։

—Ափսոս մեր աշխարհի լիութիւն և առատութիւն։

—Իսկ դու ինչի՞ եկար, որ քո գիւղից ո՛չ ոք չկայ։

—Կնոջ չառի եմ հանդիպել։

—Վերջին խօսողը Սահրատն էր։

ԾԸ.

Վերոյիշեալ խօսակցութեան նման տրտունջներ առաջ եկաւ Սալմաստի բոլոր գաղթակաների մէջ. նոքա անցել էին նոր նուաճած երկիրը՝ Նախիջևանի խանութիւնը։

Գարուն էր, տեղական բոլոր բերքերի վերջացած միջոցն էր, անցեալ տարուան պատերազմը արգելք էր եղել վար ու ցանքս անելու, եղածներն էլ ռուս-պարսկական զօրքը ոտնատակ էր տուել, կամ ձիանոց կերակուր էր արել. տեղացիները որպէս և իցէ, իբրև հողեպահուստ,

կ'ունենային սակաւ ինչ պաշար, իսկ գաղթականները չը նախատեսանելով նոր հայրենիքի առաջին տարուան ձախողակի դէպքերը, վերցրել էին իրանց հետ միայն կարճ ժամանակուան ապրուստ, ընդհակառակն ամենաաննշան խեցեղէններն ու կաւեղէններն էին բարձել գրաստներին։

Գաղթեցնողներն այս մեծ սխալը չէին կարողացել աչքի առաջ ունենալու։

ԾԹ.

Գիւղ չը կայ, որ գաղթականներով լիքը չը լինի, տան գլուխ մի կամ երկու ընտանիք բաժանած են. գիւղացիք իրանց բնակարանների մէջ չէին կարող տեղաւորել անկոչ հիւրերին, իրանց ունեցած պաշարն էլ սպառուելու վերայ էր, շատերը մինչև սերմացու ցորենն էլ կերել, վերջացրել էին, կարօտութիւնն ընդհանուր էր, իսկ այդ նեղ ժամանակին նորանց էլ ծանրաբեռնել էին նորեկներով։

Բայց օդի տակ բաւական երկար ժամանակ դեգերուել էին գաղթականները, ճանապարհի տօթը, ցուրտը, անձրևը, փոշին և այլ անյարմարութիւնները մեծամեծ վնասներ էին պատճառել նրանց, Լազարեանի հրամանաւ՝ գիւղացիք պարտական էին յարկի տակ պատսպարել իրանց ազգակից տառապեալներին։

Գիւղացին երկյարկանի տների տէր չէ, մի մեծ հացատուն ունի նա, մի մառան, մի գոմ, մի մարագ։ Անասնոց ձմեռուան պաշարը պրծել էր, տաւարը վաղուց դաշտումն արածում էր և գիշերը տուն գալի, մարագներն էին միակ դատարկ տները, ուր լցրել էին գաղթականներին։ Մի փոքրիկ դռնակ ունի մարագը խոտ դարսելու և գլուխը կռացրած ներս մտնելու համար, տանիքից էլ մի ծակ, որտեղից դարմանն են ներս ածում ու պինդ փակում, այնտեղ ո՛չ ննջարանի յարմարութիւն կայ և ո՛չ վառարան։

Այսպիսի գետնափորներից մէկի մէջ էին բնակեցրած Սահրատի ընտանիքը Թմբուլ գիւղում։ Նոքա միայնակ չէին, մի ուրիշ ընտանիք նոյնպէս անկից էին տուած նրանց. փոքրաթիւ չէին գաղթականները. հինգ հազար գերդաստանից աւելի էին, այդքանին Նախիջևանի գաւառը չէր կարող կերակրել, բայց դորանց բնակեցրել էին այդտեղ, որովհետև մի առանձին տնօրէնութիւն չէր եղել։

Լազարեանը հասցրել էր հայերին Նախիջևան ու ինքը շտապել Պասկևիչի մօտ նոր հրահանգներ ստանալու, նա վերադարձաւ և սոսկալի կոտորուած ու նեղութիւն գտաւ ժողովրդի մէջ. Պարսկաստանից սկսած՝ իւրաքանչիւր գաղթականի օրական փող էին բաժանում, իսկ հիմի այդ գումարը վերջացել էր և եկւորները մեծ տագնապի մէջ էին։

Վ.

Սալմաստից դէպի արևմուտք երկու ժամուան ճանապարհ հեռու էր Ասլանիկը (Ծահէնենց գիւղը)։ Այժմ նախկին տեսարանը չունէր նա, անծանօթ անցւորն էլ կարող էր նկատել աւերիչ ձեռքի խիստ հարուածը, որ բերել էր նորա գլխին։ Ասլանիկի այգիները բոլորը այժմ ճղքակոտոր ու ջախուբուրդ էին արած, պատուական ցորենի հասուն արտերը ձիանոց ոտնատակ տուած, կարկտի ծեծածի նման ոչնչացրած, չոր ամայի անապատ էին շինած, իսկ տները կիսաքանդ աւերակ արած՝ կարծես մի մեծ երկրաշարժի հետք էր ներկայացնում, ո՛չ մի շնչաւոր արարած, ո՛չ մի Ադամայ որդի չէիր գտնիլ մէջը, Ասլանիկն աւերուած և բարձի թողի արած էր։

Իւր տեղը կ'իմանանք՝ թէ ո՛ւր է Ասլանիկի ժողովուրդը։

Այս այն գիւղն է, որտեղից երեք ամիս առաջ դուրս եկաւ Սահրատն իւր ընտանեօք, միայն նա էր, որ հեռացաւ ու գաղթեց դէպի Ռուսաստան. այժմ այս տեսարանին ներկայ եղող և Ասլանիկին մօտեցող ու սարսափահար եղած մարդն է մեզ պատմում Ասլանիկի դրութիւնը։

Դա գալիս էր նոր գաղթած հայրենիքից. դա Սահրատն ինքն էր։

—Բայց ինչի՞ էր վերադարձել Սահրատը և ո՞րտեղից։

ԿԱ.

Գաղթականների վիճակը Նախիջևանու գաւառում շատ ծանրացաւ. աղքատութիւնը, սովը և անհանգիստ կեանքը մի վարակիչ դալկութիւն սփռեց ժողովրդի մէջ. մահն իւր մանգաղն առել ընկել էր թշուառների ջանը և անխնայ հունձ էր անում, աւելի մատաղ սերունդը և թոյլ էակներն ընկնում էին մահուան ճիրանների մէջ. ընտանիք չկար, որից օրական մի, կամ երկու երեխայ իւրեանց պատառոտուն ձորձերում տեղացւոց գերեզմաններից փոքր ինչ հեռու հողին աւանդ չը տային. շատերին քահանայ էլ չէր հասնում։

Եթէ կարգադրութիւնը չէր շտապել գաղթականների վիճակը տնօրինելու, շուտով գուցէ կիսից աւելին կը պակասէին։

Կարգադրութիւն եղաւ համայնքների բաժանելու և ցրուելու Վայոց ձորի, Շարուրի, Նախիջևանի և Երևանի գաւառներումը։

ԿԲ.

Շուտով նախկին գիւղատեղերն ու պարսկական անողոք ձեռքից ամայացած աւերակները

շէների փոխուեցին, գաղթականները կամ իւրեանց թողած գիւղերի անուններովն էին կընքում իրանց նոր հայրենիքը և կամ տեղացիների ասածին համաձայն՝ պարսկական կոչում էին տալիս։ Մոռացուեցան այդպիսով բուն Հայաստանի մէջ հայ գիւղերի և աւանների անունները, այդ խորթ և օտար բառերով են այժմ յայտնի աշխարհագրական քարտէզների վերայ մեր նախնեաց հարազատ բնակարանները. օտարացին, բնագէտը, աշխարհատեսը այսօր այդպիսի վերափոխութեանց շնորհիւ՝ երկմտում է Հայաստանը հայերի սեփհականութիւն լինելու վերայ. ուրիշ տեղերինը որ թողենք, միայն Գառնւոյ գաւառումը միմեանց քամակից տասնաւոր հայաբնակ գիւղեր կան լու կամ լի պարսկական վերջաւորութեամբ —Դաւալու, Ղամարլու, Նովրուզլու Բէգ-Ջղաղլու, Ոուղուրբէքլու, Բաշնալու, Ջիդամլու, Աղհամզալու, Ղարահամզալու և ես ի՞նչ գիտեմ քանի տեսակ Լուեր միմեանց յետևից շարած են, իսկ այս Լուստ գիւղերը հայոցն են եղել և են ցայսօր. Արտաշատու լայնատարած դաշտի վրայ են փռուած դրանք, Դուինի շրջակայքումն են, սուրբ Լուսաւորչի տանջանաց տեղի-Խորվիրապի հարեւաններն են։

Այսպիսով են կորել, տասցինք, մեր անհատական սեպհականութիւնները, այսպիսով ենք մեր բուն հայրենիքին Պարսկաստան, Տաճկաստան, Քիւրդաստան, Վրաստան և այլ քանի մի

ստան—ներ կոչում, իսկ այս այն երկիրներն են, որոնց հողը հայի արիւնով է ներկուած, ուր ամէն մի քարի տակ հայ չիրիմ է, ուր ինչ տեղ փորես՝ հայի հողացած ոսկրոտիք, գանգեր և փառաւոր պալատների աւերակներ են դուրս գալիս։

Վերոյիշեալ գաւառներն, ասայի, նորից հայաբնակ եղան. կային, այո՛, առաջուց այդ տեղերն և շատ փոքր հայեր և բազմաթիւ պարսիկներ, իսկ հիմա ամէն կողմում լսւում է Պարսկաստանի աղաւաղած և կոշտ հայերէն բարբառը։ Այժմ այդտեղի պարսիկները կամ թողում հեռանում են իրանց անկոչ հարևանների դրացութիւնից և մի ուրիշ տեղ շէնացնում և կամ գլուխ են առնում, քաշւում դէպի այս նոր հիւրերի թողած երկիրները։

Պարսիկներից շատերը գաղթեցին Պարսկաստան։

ԼԳ.

—Վա՜յ գլխիս, այս ո՞ւր եմ գնում ես, այս ո՞րտեղ եմ, քնա՞ծ եմ, թէ արթուն, երազ հօ չէ՞, այս մեր Ասլանիկը չէ՞, ես շշկլուե՞լ եմ։

Ահա՛ ինչ խօսքեր դուրս թռան Սահրատի բերանից, երբ նա իւր ընտանիքը Սաւրի գիւղացիների հետ, Նախիջևանի մօտ, Թմբուլ գիւղումը տեղաւորելից երեք ամիս յետոյ վերադարձաւ Սալմաստ իւր ցանած ու թողած արտերը հնձելու, կալսելու և Թմբուլ բերելու։

Վերը մենք մոռացանք այս կէտը. գաղթականները միանուագ չեկան, ուստի զօրքը դեռ բոլորովին չէր դուրս դրել իւր ոտքը Պարսկաստանից, նա սպասում էր ստանալու պարսիկներից պատերազմական բոլոր ծախքերը, աւարտելու միանգամայն գաղթականութեան գործն և այնպէս թողուլ, հեռանալու։

Այդ բանից օգուտ քաղելով գաղթողները, իրանց դերդաստանը տեղաւորելուց յետոյ՝ նոցանից շատերը վերադառնում էին կրկին իրանց նախկին հայրենիքը՝ քաղելու իրանց այդ տարուան բերքը և միանգամից կտրելու իրանց ոտքը այն երկրից, ուր իւրեանց նախնիքը իբրև դերիներ դարերով նստել էին։

ԼԴ.

Սահրատը սառած մնաց, նա շփոթուած այս ու այն կողմը նայեց և ո՛չ ոքի չտեսաւ. մինը չը կար, որից կարելի լինէր տեղեկանալ այս մեծ փոփոխութեան պատճառը։ Նա գնաց ցնդածի նման վազելով դէպի իւր տունը։ Մի երկու ծածկ հազիւ ամբողջ մնացել էին, միւսներն անտէրութիւնից բլբլածք էին դարձել, կարծես տարիներով ո՛չ ոք չէր եղել մէջը. նա մըտաւ իւր պարտիզի դռնակովը, բոլոր ծառերը ճղքնահատ էին արած, բուսականութիւնն անջրութիւնից սալարել էր, խոտի նշոյլն անգամ

չը կար, երեւում էր, որ ձիանք էին արածել և գիշերել այստեղ։

Սահրատը մօտեցաւ մեզ ծանօթ խորհրդաւոր անկիւնին, այնտեղ՝ պատի տակին պարզ նշմարւում էին բոբիկ ոտների նոր հետքեր, պատի բաշի մի քանի քարերը թափուած էին, որից կարելի էր գուշակել, թէ այստեղից շարունակ անց ու դարձ է լինում, իսկ այդ շաւիղը տանում էր ուղղակի դէպի Աբրահամի տունը։

Սահրատն առաջ գնաց այդ շաւղովը, բայց Աստուած հեռո՜ւ տանի ամենքից նորա տեսածները։ Աբրահամի տան նշոյլն անգամ չէր երեւում, կարծես գիտութեամբ քար ու հող էին արել և միտք են ունեցել նոր շինութիւն անելու։

—Ի՞նչ անեմ, Աստուա՛ծ, այս ի՞նչ եմ տեսնում, մրմռաց իւր մէջ Սահրատը, դիցուք պարսիկները գիւղը քանդեցին, իսկ մարդիքն ո՞ւր են, ի՞նչպէս գաղթեցին, որ մենք չիմացանք և ո՞րտեղից անց կացան, և եթէ յօժարակամ գաղթեցին, ինչի՞ իրանց գիւղն այսպէս հիմնայատակ արին։

Այս մտածմունքի վրայ էր Սահրատը, որ մեծ սրահի պատն ընկաւ աչքին. այդ մի տունն էր մնացել իւր ծածկած դռնովը, և ահա՛ սրահի դռան քամակից մի նուազ կսկծալի ձայն հասաւ Սահրատի ականջին։

Նա դողաց, նա վախեցաւ մօտ գնալու, նա ուզում էր փախչել, նա չէր կարողանում իրան

հաշիւ տալ իւր երկչոտութեան մասին, բայց և չէր վստահանում մօտենալու։ Նա մի քանի քայլ հեռու գնաց և կանգ առաւ։

—Սահրա՛տ, լսուեց սրահից։

Սահրատն ինքն էլ չիմացաւ՝ թէ ինչպէս անգիտակցաբար մօտեցաւ դէպի ձայնը։

Չեմ կարող նկարագրել, ինչ որ Սահրատի աչքին ներկայացաւ, կամ ինչ որ նա այդ րոպէին զգաց. մի ծանր գարշահոտութիւն դիպաւ նորա քթին, նա գտաւ սրահը լիքը դիակներ և կտորուածք, արեան ճապաղիքը սառել, լճացել և լերդացել էին, շատ նեխած դիակներ ճանաչողութիւնից ընկած էին, այլք գազաններից այլակերպուած։

Սահրատն իւր աչքերին չէր հաւատում, դիակների մէջ նա ճանաչեց Աբրահամի եղբայրներից և ընտանիքից մի քանիսին, որոնց մէջ աւելի ցաւալի և սոսկալի էին մանկամարդ կանայքը՝ կիսամերկ սպանած և անպարկեշտ ձեւով մի կարգի վայր ձգած. ինչպէս երեւում էր, այնտեղ կատարուել էր անասնական տռփամոլութիւնը և կարծես վրէժխնդրութեան համար բոլոր այր մարդկանց կռները բամակներին կապած վկայ են կացրել իրանց անզուսպ վատշուէրութեանը, որից յետոյ նախ կանանցը և ապա այր մարդկանցը սրախողխող արել թափել են։

Մի երկու անգամ նայեց Սահրատն այս ցաւալի տեսարանին և ապա, կարծես, ինքն իրա-

նից պատկառեց, ամօթից աչքերը փակեց, մնացել էր կանգնած. նա մոռացել էր, որ իրան անունը տուող եղաւ։

—Սահրա՛տ, կրկնեց դռան յետևից նոյն ձայնը։

Կանչողը մի արեան մէջ շաղախուած դիակ էր, որի բոլոր դէմքը նոյնպէս արենկոլոլ էր։

Սահրատն առաջին անգամը չը կարողացաւ ճանաչել, նա այդքանը միայն եզրակացրեց, որ մարդին հարիւր տեղից վիրաւորել են և հազիւ կենդանի է։

—Մօտ արի՛, Սահրա՛տ։...

—Ա՜խ, Աբրահա՜մ...

—Այո՛, ես եմ։

Ծերունու երեսին ողջ տեղ չէր մնացել, ճակատին բացուած մեծ վէրքից վազած արիւնը մօրուքախառն իջել խառնուել էր կտրուած կախ ընկած թևի ուղեղի հետ։

—Լսի՛ր, Սահրա՛տ, բոլոր իմ տունս սուրը քաշեց Հաջի Սէյիդ Հասանը, նա ողջ գիւղն աւերեց, շատ տներ կործանեց, բայց բացի իմ ընտանիքից ո՛չ մի գիւղացու վնաս չտուեց։ Գիւղացիք երկու ամիս կայ՝ որ անցան Ռուսաստան և ինչպէս յետ եկողներից իմացայ, բնակեցրած են Բիւրական կոչուած Արագած լերան թմբան վերայ գտնուած գիւղումը։ Իմ բոլոր ընտանիքս կոտորեց Հաջի Սէյիդ Հասանը, բայց Աստուծոյ տնօրէնութիւնն այլ էր, Շահէնիս ճակատագիրը

խնդիր Հաջի Սէյիդ Հասանին կաթոլիկների չահամոլ միսիոնարները։ Նրանք գրաւելով պարսից խաների և բէգերի համակրութիւնը, իրաւունք էին համարում գաղթելուց յետոյ շրջելու մնացող հայերի մէջ և կաթոլիկական կրօնը քարոզելու, խոստանալով իրանց պաշտպանութիւնն անտէր և սակաւաթիւ հայերին, մեծ մեծ սպառնալիքներ ևս պաշար թողնելով հակառակողներին։

Այս կերպիւ գործի սկզբումը բաղդախնդիր քարոզիչները լաւ գիտենալով հայ առածի էական միտքը, թէ «երկաթը տաք տաք կը ծեծեն՝» յաջողեցան ո՛չ սակաւ զոհեր ունենալու. իսկ որոնք չը լսեցին, կամ միսիոնարների խօսքով ասենք, կամակորուեցին, նրանց մնում էր՝ կամ փոխել իրանց միտքը և քանի միջոց կար՝ հեռանալ այն երկրից, գաղթել միւսների հետ կորչել, կամ թէ կրել իւրեանց արժանի պատիժը,

Այո՛, կրեցին, մեծ մեծ պատիժներ կրեցին հայերը, միսիոնարների դրդմամբ տաքտաք երկաթների, եռացած ջրի և կամ սուր սուր ցցերի արժանացան բարբարոս և մոլեռանդ պարսիկներից։ Էլ ոչինչ իրաւունք չէր մնացել գաղթել չցանկացողներին, էլ խօսք չէին հասցնում իրանց պաշտպանութեան համար, իրաւացի կամ անիրաւացի տանջում, կեղեքում, յափշտակում և սպանում էին. ո՞վ էր հարցնողը, ո՞վ էր լսողճացողը. մեղաւորին պատիժն է արդարութիւնը, իսկ հայերը ոտից գլուխ նորանով են մեղաւոր,

որ իրենց կրօնակցին կանչել են պարսիկներին յաղթելու, ռուսին սիրել են, աշխարհքը դատարկուելու պատճառ են դարձել, ռուսաց զօրքի առաջին թափօրներ են արել և զանգակներ են հնչեցրել. իսկ հիմա մի քանիսն էլ մնացել են, որ իւրեանց վերայ ծիծաղին ու ամէն բան ռուսին իմաց տան. սուտ հօ՛ չեն ասում, եթէ կամիք՝ միսիօնարներին հարցրէք։ Եւ եթէ այսպէս, լաւն էն չի՞, որ այսօրուանից կոտորուին վերջանան և կամ կորչին հեռանան, որ նորանց կալուածքը իւրեանց սեպհականութիւն մնայ։

Ահա՛ այսպիսի միսիօնարական քարոզների հետ միացրեց Հաջի սէյիդ Հասանը Ալու տուած լուրը և առած բաւականին ձիաւորներ, ինչպէս տեսանք, ամէն գիշեր յարձակումներ էր անում Ասլանիկի վերայ. այն աստիճան նա յուսահատացրեց գիւղացիներին, որ նոքա լաւ համարեցին թափ տալու միանգամայն իրանց օճիքը և հեռանալու Պարսկաստանից։ Մի գերդաստան միայն չուզեց իւր խօսքը փոխել և սաստիկ պատժուեցաւ։

Սէյիդ Հասանը մի գիշերուայ մէջ մեծ բազմութեամբ յարձակուելով Աբրահամի տան վերայ, չփոթեց բոլորին, սուրը քաշեց, անխնայ կերպով կոտորեց բոլորին։

Մինը միայն կիսաշունչ մնաց, այդ ինքը տան նահապետը՝ Աբրահամն էր, որին վիճա-

դեռ չէր լրացել, նա կ'երևի, գնացել է նոյնպէս դէպի Ռուսաստան. Տաճէնս միայն ազատուեց մեր միջից։

ԻԹ.

—Ո՛չ, հա՛յր, սխալւում ես, Տաճէնդ Ռուսաստան չէ գնացել, Տաճէնդ չէր կարող ձգել իւր ծնողներին առանց առնելու նորանց վրէժը, տե՛ս ահա՛ բերել եմ Հաջի Սէյիդ Հասանի գլուխը։

Տաճէնը վայր ձգեց հօր առաջին դեղին մօրուքը և չուարածի պէս վիզը ծռած կանգնել էր։

Շատ ժամանակ չէր, որ Տաճէնն եկել էր, նա նոր ներս մտաւ սրահը։

Մենք չենք մոռացել, որ Տաճէնը բաց ընկաւ հօր ձեռքից և փախաւ, կրկնելով այս խօսքերը՝ թէ ինքդ տար քո թոռին իւր հօրը յանձնիր։

Երեք ամիս էր անցել այնուհետև և Տաճէնը չէր երևում, նա աստանդական թափառում էր ցորեկները այրերի և ձորերի մէջին, իսկ գիշերները լուսացնում էր ըստ սովորութեան Սահրատի պարտիզի պատի տակին։ Նա երբէք չը զարմացաւ, երբ մի օր իրանց գիւղացիներին տեսաւ գաղթելիս դէպի Ռուսաստան. այդ նոր բան չէր, նա ուրախ էր միայն, որ իւր ազգ ու ընտանիքն, իւր հայր ու մայրը մնացին միայնակ Ասլանիկումը։

ԿԶ.

Մի գիշեր՝ մինչ ըստ սովորականին Շահէնը դարձել էր իւր Թափառականութիւնից դէպի պարտէզը, Նա ամէն բան անկարգ գտաւ, ամէն տեղ աւերակ փողոցներ, ամէն անկիւնում ձիանոց հետքեր. Նա վազեց դէպի իրանց տունը և գտաւ կիսակործան. Նա քարացած մնաց: Շատ ման եկաւ, ո՛չոքի չտեսաւ: Փոքր ինչ հեռւումը Նա լսեց տրոփիւն և նորանց միջից մի պարսկի ձայն, որ ասում էր. «Թող հիմի Հիւսէյինին սպանեն, Թող Սահրատի աղջկանը փախցնեն Ռուսաստան»:

Շահէնը Թողեց իրանց տունը և ձիաւորների յետքից վազեց:

ԿԷ.

Հաջի Սէյիդ Հասանը գրգռուած Ալու խօսքերից, յարմար միջոց էր պտրտում իւր վրէժն առնելու. Նա մի քանի անգամ յարձակումներ անելով Ասլանիկի վերայ, շատ նեղութիւններ տուեց գիւղացիներին. ամէն գիշեր տասը քսան ձիաւորով ասպատակում, քանդում, աւերում էր տներ և այգիները, ոտնատակ էր տալիս արտերը, դաշտերը քշում էր նախիրը և ձեռքն ընկած Ասլանիկցուն հաւի ձագի նման մորթում էր:

Այս բանի մէջ մեծապէս օգնեցին վրէժ-

կուած էր մահ չտեսնել, մինչև կրկին չը տեսնէր իւր որդուն:

ԿԹ.

—Հա՛յր, ահա թշնամուդ գլուխը, քո որդիդ հանգիստ չէր մեռնիլ, եթէ իւր գերդաստանը ոչնչացնողը մի օր գոնեայ աշխարհքի մէջը կենդանի մնար, ես ուշ հասայ մեր տան քանդուելուն, բայց քայլ առ քայլ հետևեցի Հաջի սէյիդ Հասանին, թոյլ տուի ուրախ ուրախ իջնելու իւր տանը, հաւաքելու իւր կանանցը, մեծախօսութեամբ պարծենալու իւր չարագործութեանց մասին, և իւր ուրախութիւնը կատարեալ անելու համար՝ զեղխութեամբ մրափելու իւր հարճերի գրկումը: Այդ միջոցին քո որդիդ աչքերը վրիժառութեան արիւնով լցուած, սուրը ձեռին տուն ընկաւ և շնաստակ արեց Հաջի սէյիդ Հասանի բոլոր մեծ ու փոքրերին ու վերջն էլ նորա սրտիցը մի բուռն արիւն խմելով՝ գլուխն էլ սրի ծայրն առած՝ ահա՛ վայր է ձգում՝ քո ոտից տակին:

—Հօրդ արժանի զաւա՛կ, հազիւ լսելի ձայնով թոթովեց Աբրահամը, այսուհետև ուրախ հոգով իմ բոլոր ընտանիքի հետ աչքերս յաւիտեան փակում եմ. միայն խօսք տո՛ւր ինձ, ո՛րդի, հեռանալու այս երկրից որքան կարելի է շուտ:

—Ուխտում եմ քո և բոլոր այս նահատակների սուրբ արիւնովը։

—Մի ուրիշ խոստո՛ւմ և՛ս, քանդի՛ր քո վերջին վճիռը, դէպքը բերելուն պէս՝ ամուսնացի՛ր մեր օջախի ծուխը չըկտրուելու համար։

—Թէև ծանր է ինձ, հա՛յր, սակայն կըկրեմ և՛ այդ խաչը։

—Մի համբո՛յր, որդի՛, և Աստուծոյ օրհնութիւնը քեզ հետ։

Վերջին համբոյրի հետ ամենայն ինչ վերջացած էր. Աբրահամը էլ չը կար,

Հ.

Մի կարգ գերեզմանաթմբեր շարուած էին միւս օրը Ասլանիկի գերեզմանատանը. ոչ քահանայ կար այդ թաղման կարգը կատարելու և ոչ յուղարկաւորներ. երկու մարդ էին ամէն ծիսակատարները։ Դրանք Շահէնն ու Սահրատն էին։

ՀԱ.

Ի զուր Սահրատը հազարաւոր խօսքերով կամեցաւ համոզել Շահէնին գնալու Թմբուլ իւր նոր հայրենիքը. Նախիջևանի գաւառի առատութիւնը, Սաւրի գիւղացիների հիւրասիրութիւնն և քաղցր ընդունելութիւնը, որ ցոյց էին տուել

օտարագիւղացի Սահրատին, չգրաւեց Շահէնին, նա մի կերպով գլուխ առաւ, հեռացաւ և այլ չերևեցաւ։

Մի դէպք, վերջումը կը պատմենք, ստիպեց Սահրատին շատ որոնելու Շահէնին, բայց նա ասեղ դարձաւ կորաւ։

Ոչ մի Սաւրի գիւղացի խաչագող վերադառնալուս չկարողացաւ տեղեկութիւն տալու Շահէնից։ Սորան հետևեց Սուսամբարի սև հագուստի մէջ մտնելը և վարպետ, կամ կոյս անուն ստանալը։

Սահրատն ստիպուեց յետ տալ իւր աղջկայ նշանը։

—Բայց թէ ի՞նչ եղաւ Շահէնը, զուր տեղն ականջներդ մի՛ սրիր, ամէն բան իւր ժամանակին. այսօր բաւական է, վաղը կը լսես։

Ասաց բժիշկս ու վեր կացաւ։

ՀԲ.

Գաղթականները տեղաւորուեցին, առաջի, Նախիջևանի, Վայոց ձորի և Երևանի գաւառներումը։ Մեզ յայտնի է, որ այդ ժամանակն Երևանն անցել էր իւր բոլոր գաւառներով ռուսաց իրաւանց ներքոյ. Էջմիածինը գտնելով ազատութիւն պարսից բռնութիւնից, ինքն էր օգնում իւր նոր տիրոջը հաստատելու, ամրապնդուելու, մշտնջենաւորուելու այդ երկրներումը. Էջմիածինն ինքը գլխաւորապէս պատճառ դար-

ճաւ Պարսկաստանի գաղթականութեանը։ Եթէ
Պասկեւիչը ցանկացաւ է՛լ հայերին գաղթեցնելու,
ինքը Ներսէսն էլ օգնեց գործի յառաջ գնալուն,
մեծ հոգեւորականը խորհուրդ տուեց Պասկեւիչին
Լազարեանին հրաւիրելու։

Էջմիածինն ուրախ էր, նա իւր առաքելու-
թիւնը կատարեց, վերջացրեց. հիմա իւր շրջա-
կայ բոլոր աւերակները չէն են, հիմա Արարատ-
եան դաշտը լցուել է հայաբնակ գիւղերով, հիմա
Երեւանի չորս կողմը հայերի մեծամասնութիւն է։

Տեսաւ այս ամէնը Ներսէս աշտարակեցի
արքեպիսկոպոսն և ուրախ հոգւով, անդորր սըր-
տով գնաց Թիֆլիս իւր առաջնորդական աթոռը,
որտեղից եկել էր, գնաց, որ շուտով այն տեղից
ճանապարհ ընկնի դէպի ազատարար Նիկողայոս
կայսրը՝ խնդրելու նրանից հայերի համար շնորհք
և արտօնութիւններ։

Ներսէսն ուրախ էր այս գաղթականութեան
վերայ, միայն թէ նոցա վիճակը բարելաւացնե-
լու և մտաւոր զարգացման համար ճանապարհ
հարթելու էր աշխատում։

Շատերը մեղադրել են Ներսէսին այս գաղ-
թականութեան պատճառաւ, բայց նա միշտ
իրան բարեաց պատճառ է համարել։ Մի ան-
գամ ես լսեցի նորանից գաղթականութեան մա-
սին դատողութիւններ և մեծ իրաւունք եմ տա-
լիս, ոգեւորւում էր բժիկս պատմելով։

Մեծագործ հայրապետն երկար ու բարակ

համեմատութիւններ էր անում Պարսկաստանի
և ուրիշ ժամանակուան գաղթականութիւնների
մասին և դատապարտում էր միւսների սկզբնա-
պատճառներին։

—Ի՞նչ համեմատութիւն կայ Լեհաստանի,
կամ Հնդկաստանի գաղթականութեան և սորա
մէջ, ասում էր նա. առաջին երկուսը Հայաս-
տանն աւերելու նպատակաւ եղան, նրանցից յա-
ռաջ է եկել փուչ Նիկոլ եպիսկոպոսների և քա-
ղաքագէտ անգլիացիների ձեռքով կատարուած
կրօնական փոփոխութիւնները, ազգութեան և
կրօնի կուլ գնալը և հզօր տարրերի հետ խառ-
նուելը, իսկ սրանից Հայոց աշխարհքի վերա-
կենդանութիւնը։ Հայերը տարագիր ընկնելով
իւրեանց հայրենիքից, ընկնելով անծանօթ եր-
կիրներ, օտար հողի վերայ, օտար կլիմայի ենթար-
կուած, կորցրել ու կորցնում են իւրեանց մայրե-
նի լեզուն, կրօնը, ազգութիւնն և ամէն հարա-
զատ յատկութիւններ։ Այդպիսի գաղթականու-
թիւններին ենք պարտական, որ մեր ազգի մէջ
այժմ պառակտմունքներ կան։ Եթէ մեր ազգի
մեծամասնութիւնը Կոստանդնուպօլսում օտար
հողի վերայ չը լինէին արմատակալած, տաճ-
կական կրօնամոլ իրաւանց անիրաւութիւննե-
րին չէին լինիլ ենթարկուած, կաթոլիկ և բողո-
քական չահախնդիր հոգեւորականներն այսօր այս-
քան զոհեր չէին ունենալ արած և հօրը որդուց,

եղբայրը քրոջից հանած, տան մէջ երկպառակութիւն ձգած։

Վերոգրեալ գաղթականութիւններից ոչ սակաւ վնասակար էր համարում Ներսէսը 1827 թուին Տաճկահայաստանից Աղէքսանդրապօլի, Ախալցխայի և Ախալքալաքի գաւառներում վերաբնակեցրած գաղթականութիւնը։ Նորանով, ասում էր, Հայաստանի մի նշանաւոր կեդրոնը՝ Կարինն իւր շրջականերով դատարկուելով՝ տեղիք տուեց թուրք և քուրդ (և մենք կաւելացնենք չերքէզ) տարրերի բազմամասնութեանը, որից մեր խեղճ ազգի մնացեալ տարաբաղդ-զաւակներն այն օրից ցայսօր աւելի և աւելի ճնշուել և ճնշւում են։

Բայց Պարսկաստանի գաղթականութիւնը, բայց Երևանի նահանգի հայաշատութիւնը մեր ազգի յառաջադիմութեան և լուսաւորութեան համար հեռատես հայրապետը մի նոր դարագլուխ էր համարում։

Սրբազան կաթուղիկոսն ինձ տուեց մի տըպած նամակ, ասաց ինձ բժիշկս, որը քեզ եմ տալիս կարդալու, որի բովանդակութիւնը իւր մտադրութեանց իրագործումն էր ենթադրում, Երևանի երկիրը ռուսաց ձեռքն անցնելը և նորա գաւառները հայերով լցնելը նա վերնային մի առանձին շնորհք և խնամք էր ճանաչում դէպի հայոց անկեալ ազգը։

Ծերունի հոգևորականը նամակի հեղինակին փառաբանում և օրհնում էր, երկար ժամանակ խօսակցութիւնը թողած՝ խօսում էր Մեսրովբ Դաւթեան Թաղիադեանցի հանճարի և ազգասիրութեան վերայ։

—Ա՛ռ, ա՛ռ կարդա՛, ասաց ինձ Ներսէսը, իմ սիրելի Մեսրովբի գրածը, տես թէ ո՞րքան ուրախացել է նա՝ լսելով Երևանի ռուսական քաղաք դառնալը, տես թէ ի՞նչ միտք է ծնել նրա մէջ Երևանն առնելու երկրորդ տարումը։

Հանելով ծոցից մի դեղնած և իւղոտած տպած թերթ, բժիշկս տուեց ինձ կարդալու։

—Ահա՛ այն թերթը—Թաղիադեանցի գըրուածը, ասաց ինձ բժիշկս, կարդա բարձր ձայնով։

Ահա նամակի պատճէնը ծայրէ 'ի ծայր և տառէտառ։

«Աստուածասէր և Ազգասէր Հասարակու-
« թեանն Հայոց՝ փրկեալ Քաղաքին Երևանայ.
« Սրբակրօն Քահանայից, Բարեծնունդ Իշխա-
« նաց և համայն բարեպաշտօն Ժողովրդոց,

«Որդիապարտ Սիրոյ Նուէր։»

«Աչքներդ հազար լոյս ո՛ր մեր քաղցր Աշ-
« խարհքն պարսից դառն չարչարանքիցն ազա-
« տուեց, Քրիստոսի Տէրութեան ներքոյ ընկաւ։
« Փառք բարերարին Աստուծոյ, որ այսուհետև
« աւել նեղութիւն չէք ունենալէց, ազատ քա-

« ղաքի քաղաքացի պետք անուանիք, ձեր Ազ-
« գասիրութեան՝ իմաստասիրութեան լոյսն, և
« Արուեստից յառաջադիմութիւնն բոլոր Աշխարհ
« պետի տարածվին։»

« Իմ լա՛ւ Քաղաքացիք, եսպէս երջանիկ
« բախտի որ դուք էք պատահել, կարծեմ որ
« մեր Նախնիքն ևս Արշակունի թագաւորու-
« թեան ժամանակումն էլ չէին պատահել.
« զերա՛ թէպէտ և թագաւորութիւնն իւրեանց-
« ցըն էր, սակայն բարբարոսութիւն և զուլումն
« պակաս չէր։ Ուրեմն աղաչեմ, նախ՝ աղօթս
« առնէք որ Աստուած Ամենազօրմած կայսերն
« Նիկողայոսի Աթոռն միշտ հաստատ պահի,
« սուրն կտրուկ, և ամէն թշնամեաց վերայ
« յաղթո՛ղ։ Ապա՝ աղաչեցէ՛ք, որ նոյն Աս-
« տուածն մեր ազգին սէր միաբանութիւն տայ,
« երկար կեանք և բարի յաջողութիւն, որ կա-
« րենան ճանաչել թէ ի՞նչ է լաւն՝ և հետևել
« նմին։

« Մնաց որ, ես ծառայս ձեր թիւն 1823-
« ումն, սրբազնակատար կաթուղիկոսի հրամանաւն
« Հաղպատիցն ելայ, շատ չարչարանքով հասի
« Հնդստուն, մին տարի պարապ դէս ու դէն
« ընկայ, երկրորդ տարումն Կալկաթու Հայոց
« վարժարանումն վարպետութիւն արի, յետոյ
« սուրբ Երուսաղէմի նուիրակ Աբրահամ վար-
« դապետի շնորհօքն ծանօթացայ Ինգլիզի ե-
« պիսկոպոսին, որոյ անունն էր Ռիջինարդ Հի-

« բըր. մին խի՛ստ լաւ և ողորմած կարգաւոր.
« Որ իւր խարճօքն տուեց ինձ իւրեանց մեծ
« վարժատունն. և ես ներկայ Աստուծոյ ողոր-
« մութեամբն սովորում եմ Լատինի, Ինգլիզի.
« Յունաց և Պարսից լեզուն, և այլ զանազան
« արհեստանի։ Վերջապէս երբ որ լսեցի ներ-
« կայ մեր աշխարհի ազատութիւնն, սիրտս ու-
« րախութեամբ վառվեց, Ձեանդ ազգաց լու-
« սաւորութիւնն տեսնելով և մեր ազգի անլու-
« սաւորութիւնն, նախանձ մեծ ընկաւ հոգիս,
« և թէպէտ ես ոչ չա՛փ փողատէր վարդապետ
« եմ ո՛չ վաճառական, ո՛չ կարգ ունիմ ո՛չ աս-
« տիճան, սակայն Աստուած՝ որ միշտ տկարաց
« ձեռքօքն մեծ մեծ բաներայ կարող կատա-
« րել, վստահացնումայ ինձ իմ կարեաց դեօ-
« րայ ի՛մ Ազգիս, ի՛մ քաղաքիս և ի՛մ ծնող Աշ-
« խարհիս պիտանի լինիմ ձեր շնորհքօքն։ Բայց
« այս իմ պիտանութիւնս ուրիշ կերպով չէ լի-
« նելեց, եթէ ոչ վարժատուն հաստատէք և մեր
« երախայից միտքն լուսաւորէք։

«Ես մին խնդիր գրեցի Վրաստանու Ներսէս
« Արքեպիսկոպոսին թէ՝ որովհետև Ձորագեղի
« մօտի Անապատն քաղաքի մէջ տեղն լինելով,
« այսինքն Շհարի, Կոնդի և Ձորագեղի միջումն,
« հեշտ կը լինի մանկանց համար յամէն տեղաց
« հաւաքվիլ անդ վասն կարդալու. որովհետև
« բերթին բազարին ու գետին մօտայ, շատ յար-
« մար եմ համարում որ տեղն մին քաղաքական

« վարժատուն հաստատուլի մեր ազգի լուսաւո-
« րութեան համար, և Երևանայ առաջնորդի
« աթոռն փոխվի տանիլ Կողեոի մօտի սուրբ
« Զինաւոր եկեղեցին։ Նաև գրել եմ, որ եթէ
« որքաղանն հաճենայ շնորհել մեզ էն տեղն,
« ուրեմն գրի ինձ՝ որ ես տեղից զանազան Ազ-
« գի կարդալու գրքեր և տպարան որքան իմ
« աղքատ զօրութիւն կը խոստանայ՝ բերեմ և
« գամ անձամբ աշխատեմ վասն ձեր որդւոց և
« իմ եղբարց լուսաւորութեանն։

«Արդ, իմ ազնիւ քաղաքացիք խնդրեմ, որ
« գիրս ձեզ հասնելէն 'ի բայց շնորհ առնէք
« Շհարցի՛քդ, Կոդեցի՛քդ (Կոնդեցիք) Կարբեցի՛քդ
« Զորագեղցի՛քդ հաւաքվիլ նոյն Անապատումն
« յառաջ սուրբ Քահանայիցն խնդրել որ աղօթք
« առնեն առ Աստուած վասն բարի յաջողու-
« թեան գործոյն. ապա իմ էս աղքատ գրու-
« թիւնս կարդացէ՛ք խորհեցէ՛ք, ձեզ ընդունե-
« լի լինի իմ առաջարկութիւնս, ուրեմն միա-
« բանութեամբ երկու արզի գրեցէ՛ք, մինն սըր-
« բազնակատար կաթուղիկոսին՝ և միւսն սրբա-
« զան Ներսէս Արքեպիսկոպոսին Վրաստանու։
« Ե՛ւ խնդրեցէ՛ք որ էդ տեղն Ազգին ընծայ
« շնորհեն ձեռագրով մահրով և զապալայով։ Եւ
« երբ Աստուած կատարի ձեր խնդիրքն 'ի բա-
« րին, շուտ ինձ մին գիր գրեցէ՛ք. և ? ? ? կա-
« թուղիկոսի և Ներսէս առաջնորդի թղթերի
« օրինակք Նորանում փակեցէք, ուղարկեցէ՛ք

« Թաւրիզու Ինգլիզի դեսպան Մէկդոնալդ Հա-
« զարապետի ձեռքն, նա շուտով Կալկաթա կը
« հասցընի։ Երբ ես ձեր գիրն գտնեմ, կը գամ,
« Աստուծով, և էնպէս կը գամ որ ուրախանաք։

«Իմ Ազնիւ քաղաքացիք. գիտեմ որ մեր
« աշխարհի այսքան երկար ժամանակաց գե-
« րութեան տակ մնալն գիտութեան յարգն ոչ
« կարէ ներկայ լաւապէս ցուցանել ձեզ, բայց
« յուսամ որ շուտով կարողանէք ճանաչել։ Գի-
« տութիւնն՝ էն ազնիւ թագուհին այ, որ հա-
« խա՝ աղքատ հագուստով բախտաւորաց դը-
« ւանն կը դեգերի, ամմա՝ թագաւորաց թա-
« գին պարծանք ու փառքայ։ Տէրութիւն չկայ
« որ էս անտէր գիտութեամբս կանգնած
« և պահվում չը լինի. Ռուսաց էդ մեծ կայ-
« սերութիւնն, թէ յառաջ քան զսուրբն Պետրոս
« իւրեանց իմաստասէր թագաւորն ի՞նչ էր, և
« ներկայ ի՞նչ այ. յայտ է ձեզ։ Մին երեխայ
« եթէ գրել կարդալ գիտենայ, էն Արուեստա-
« նին որ բազում չարչարանքով վեց կամ եօթն
« տարումնայ սովորում, մին երկու տարումն
« կարէ հեշտ ու հանգիստ սովորիլ. էն սո-
« վորած արուեստն հնարքով հեշտացնիլ, և նոր
« նոր արուեստանի ես հնարել։

«Իրաւի՛ արուեստից անուն յիշելով այնքան
« եմ ամաչում որ կարող չեմ ասելս. գերա՛,
« մեր խեղճ աշխարհքն ի՞նչ մին լաւ արուեստ
« ունի. ո՛չինչ։ Էն արուեստանին որ չորս հա-

« զար տարով յառաջ աշխարհումս կային, ներ-
« կայ էլ կանք ես մեր Հայաստանու արուես-
« տանին. և ինչպէս կոպիտ սովրում են, էնպէս
« էլ կոպիտ սովորցնելով գնում են։ Արուեստ
« պայծառացնիլ չեն գիտում, նոր արուեստ
« գտնիլ չեն կարում, եթէ լսում են, որ մին
« տեղ աղջիկ գրել կարդալոյ սովորում, զար-
« մանում են, երբ Ինգլիզ կամ Փռանգ են
« տեսնում, կարծում են Աստուած է յերկնից
« իջել ոտներն ամպաթամթախ։ Եւ ի՞նչ է
« պատճառն աղաչեմ, եթէ ոչ գիտութիւնից
« զուրկ մնալն։ Կարծեմ ինձ վերայ կը ծիծաղիք
« եթէ ասեմ, որ Ինգլիզի և Փռանգի կնանիք և
« դստերքն վեց և եօթն լեզուի կարդալ գրիլ
« գիտեն, մեծ մեծ գրքեր են շարադրում, տպում,
« ասղարարութիւն, ձևկար, վաճառականութիւն,
« լաւ սազ ածել, պարգալ և այլն։ Բայց յու-
« սամ երբ որ ազնուութեան հոգին կը նորոգվի
« ձեր միջումս, և դա՛ռն գերութեան քաշու-
« թիւնն կը մոռանաք, էն վախտն կ'իմանաք թէ
« ի՞նչ է իմ լացս։ Ախ իմ լա՛ւ Քաղաքացիք,
« ա՛խ հոգիս հարայայ կանչում, հին խմորն
« թողէք. նոր Ազգի լուսաւորթեան և պայծա-
« ռութեան հետևեցէ՛ք։

«Ամօթ չի՞ ձեր իշխանազուն Որդւոց հա-
« մար դատարկ քուչէքումս ման գալ. կամ մի-
« նակ անտաշ դարբնութիւն. խառատութիւն.
« կատէպանութիւն (այգեպանութիւն) և թէթի

« զուշ քշել սովորի՞լ։ Ամօթ չի՞ ձեր խաթուն
. Դստերաց համար մինակ տուն սրբիլ սովորիլ.
« և մի գնձոտ մինթանայ (չրչազգեստ) ձևելու
« համար զատաքը կռնատակին դռնէ դուռն ընկ-
« նի՞լ։ Ու՞ր է ձեր վեհ հոգին, ո՞ւր է ազնիւ
« փառքն, ո՞ւր է ձեր աշխարհի ծանօթացած
« անունն, կորեա՞ն արդեօք. ո՛չ։ Աստուծոյ յա-
« տուկ ողորմութիւնն բացվել է ձեզ վերայ իմ
« ա՛զնիւ Քաղաքացիք, մի՛ ասէք թէ ջանք ա-
« նենք, փող ժողովենք լա՛ւ ապրենք. մոխի՛ր է
« մեր փողն, փո՛ւչ է մեր կեանքն, սնոտի՛ է
« մեր յոյսն, եթէ չենք ջանալէց որ մեր Ազգի
« երեխայից էն լուսաւորութեան դուռն բա-
« նալ, որ վաղն և միւս օրն կարողանան մարդի
« միջում մարդ երևիլ։

«Պա՛րտ է ուրեմն Աստուծոյ ողորմութիւնն
« ոտնատաք չտալ, նորա ձեզ տուած ազատու-
« թիւնն անմահ փրկութիւն համարել. ջանալ որ
« ձեր խանգատայ որդիքն կարողանան իմաս-
« տութեամբ թո՛ւր բռնել ընդդէմ թշնամեաց
« Աստուծոյ և բարերար կայսեր ձերոյ. և ձեր
« աղջկերքն՝ գրիչ, նոքա՝ քաջութիւն առնեն, և
« սոքա նորանց քաջութիւն գրեն. նոքա դառ-
« նան քաջ զօրք և զօրականք. և սոքա քաջ ի-
« մաստուն և լաւ Տանտիկնայք. և թէ կարենայ
« մեր աշխարհն մին անգամ իւր որդիք և դըս-
« տերքն էսպէս կատարելութեամբ ծաղկած
« տեսնել, չգիտեմ, ո՞ր մին Փռանգի աշխար-

« հիցն պակաս կմնայ, թէ լուսաւորութեամբ, թէ
« արուեստով, թէ ազնուութեամբ, և թէ երջանկու-
« թեամբ. և ո՛չ թէ մինիցն։ Ահա էսայ իմ ցանկու-
« թիւնս իմ քաղցր Աշխարհիս համար, եթէ որ
« հաճելի կլինի վերն գրածիս համաձայնիլ և կա-
« տարել, ուրեմն հեշտ է, մենք հիմի կգնենք և Աս-
« տուած կշինի. և ես ուրախ կլինիմ ապրիլ
« ձեզ համար՝ և մեռնիլ ձեզ համար։ Ապա
« թէ ոչ՝ էլ ուրիշ չեմ ու չուի պատճառ չու-
« նէք, և եթէ զանց կառնէք գլխից ըռադանե-
« լու համար, առաջ ահեղ Ատենին Քրիստոսի
« պարտականն դուք էք, և դուք պիտի լինէք».
« Ողջ լերուք։ Մնամ

Ի Կալկաթա նոյեմբերի 1 1828. Իգլիզի եպիսկոպոսի ճեմարանում.	}	Ազնուութեան Ձերոյ խոնարհ ծառայ Մեսրոպ Դաւթեան Թաղիադեանց 1):

---

1) Տպելով այստեղ հանգուցեալ Թաղիադեանցի նամակը, մենք մի մեծ պարտականութիւն կատարած ենք համարում: Նամակը տպուած էր մի թերթ գրելու թղթի վերայ 1828 թուին. Ներքեւը կայ Թաղիադեանցի ինքնաձեռագիր ստորագրութիւնը եւ այդ նշխարը մենք աւելի թանգ ենք համարում. Թաղիադեանցի նման մի անզոյգ եւ նշանաւոր հեղինակի ձեռքը մեր մատենագրութեան համար ապագայումը մեծ նշանակութիւն ունի: Ցանկալի էր, որ վիմագրութեամբ մշտնջենաւորուէր այդ մեծագին աւանդը:

Թերթը տպուած է, կարծեմ, Կալկաթայումը, հին ուղղագրութեան կանոնով մի քանի բառեր պատիւներով կրճատած: Մենք միայն այդ պատիւները չկարողացանք պահպանել. ապա թէ ոչ ուղղագրութիւնը, լեզուն եւ կէտադրութիւնը սրբութեամբ պահպանուած են:

Յայտնում ենք մեր խորին շնորհակալութիւնը մեր բարեկամ Աբգար Գիւլումեանցին՝ այժմ տէր Մեսրոպ քահանայ Ալէքսանդրապօլեցուն. նորան ենք պարտական այս նամակի լոյս տեսնելովը: Արժ. հայրը լսելով մեր ձեռնարկած վիպասանութեան մասին, ինքն անձամբ բերեց մեզ այս նամակն եւ խորհուրդ տուեց անմահացնելու:

Ծան. հեղ.

—Տեսնո՞ւմ ես, թէ ինչքան մեծ երջանկութիւն էր պարսկական մի քանի գաւառների ժողովրդի Երևան վերափոխուելը, ասաց ինձ բժիշկս նամակը վերջացնելուցս յետոյ, հասկացար, թէ որքան ուրախ էր Թաղիադեանցը Երևանի առումով, որ լսելով Կալկաթայից շտապում է ժամանակ չանցկացնել և նոյն օրից սկսել լուսաւորութեան գործը։ Բայց եթէ իմանար ազգասէր ուսումնականը, թէ Պարսկաստանից էլ գունդագունդ գաղթում և գալիս են Երևան մեր կորած մոլորած եղբայրքը, եթէ իմանար, թէ իւր թողած ամայի երկիրն ու աւերակներն այժմ հայերով լցւում են, ես կարծում եմ, որ ոչ թէ կը գրէր այդ նամակը, այ՛լ իսկոյն վազելով կը գար գրկախառնուելու մեր մի հօտ և մի հովիւ եղած ազգակիցներին։

—Ես կարծում եմ, սխալւում էր երջանկայիշատակ Ներսէսը, այս գաղթականութիւնը համապատասխանում է Կարինի գաղթականութեանը, այս էլ Հայաստանից Հայաստան գաղթեցնել կը նշանակի։

—Ի՞նչպէս, զարմացաւ բժիշկս։

—Մի՞թէ Սալմաստ ու Խոյը հայոց երկիրներ չեն, մի՞թէ մեր իշխանական գաւառը մինչև Թաւրիզ չի հասնել։

—Այդ բանի համար ես մի անգամ խօսեցայ ծերունի հայրապետի հետ, ասաց ինձ բը-

ժիշկս, նա թէպէտ հաստատում էր Խոյի ու Սալմաստի բուն հայ գաւառներ լինելը, բայց ասում էր, որ ի վաղուց անտի կերպարանափոխուել են նրանք, այսուհետև հարիւրաւոր տարիներ էլ եթէ պարսկաց անունը ջնջուի այն երկրից և հայերով լցուի, նոյնպէս դժուար է արմատացնել այն տեղ բուն հայկական ազգութիւնը։ Իսկ Էջմիածնի շրջակայքը պարապ թողնելով, կամ թոյլ տալով այդ սրբավայրերումը օտար ազգերի բազմանալը, մենք կեդրոնականութիւնից հեռանում էինք։ Ի հարկէ, եթէ հնար լինէր վերաբնակեցնել այդ տեղերը Հնդկաստանի, խոր Պարսկաստանի, Մոլդավիայի կամ նոյն իսկ Կ. Պոլսի հայերին, մենք ամենայն ուրախութեամբ թոյլ կը տայինք պարսկական սահմանագլխի հայերին իւրեանց տեղերը մնալ, որով սահմանը կ՚ընդլայնուէր։

Մի խօսքով, բժիշկս համոզուած էր, որ Պարսկաստանի գաղթականութիւնը Հայաստանի համար երբ և իցէ օգտակար զօրութիւն կ՚ունենայ և թէ Ներսէսը շատ հեռատես է եղել և չի սխալուել իւր հաշիւների մէջ։

Ես թէպէտ համակարծիք չէի և կարող ևս չէի լինել, բայց չուզելով երկար ու ձիգ դատողութիւններով հեռանալ մեր պատմութիւնից, խնդրեցի բժշկիս շարունակել իւր սկսածը։

ՃԳ.

Տէր Ղուկասեանց տունը Թիֆլիսի մէջ նշանաւոր է. այդ գերդաստանից մի երկուսը հնումը հմուտ բժշկներ են եղել. այդ տան շարունակութիւնը այսօր էլ պատկառելի է կացուցել իւր հռչակը և յարգը Թիֆլիսի ոչ միայն հայերի այլ և օտարազգիների մէջ. վերջին շառաւիղներից մինը յայտնի է ամէնքին իւր հերոսական քաջագործութիւններով ռուս-թուրքական վերջին պատերազմի մէջ. ցաւալի է միայն, որ նորա անուան հետ կպաւ Ալաշկերտի ու Բայազեդի կորստական գաղթականութեան խնդիրը։

Մեր միտքը չէ և ոչ տեղիք ունինք այստեղ յիշելու դիւցազն Արշակ Տէր-Ղուկասեանցին, մեր նպատակից դուրս էր խօսք բանալ վերջին գաղթականութեան վերայ, եթէ մեր վիպասանութեան հետ կապուած չլինէր այդ տան նախկին յիշատակի արժանի ժառանգներից մինը։

Չենք ուզում ճիշդ իրողութիւնը յականէ անուանէ մէջ բերել, և կամ պատճառն տալ, մենք միայն ցանկանում ենք որ այդ տան և ոչ ուրիշի հետ կապուած լինի մեր վիպասանութեան հերոսի՝ Շահէնիս կեանքի մի քանի կէտերը։

Ասենք ուրեմն, որ Տէր Ղուկասեան տունը

ասպնջական եղաւ մեր թշուառ, աշխարհէ աշխարհ տարագիր ընկած մոլորականին, ուզում եմ ասել նոյն ինքն Տահէնին. թէ ինչպէ՞ս, թող բժիշկս ինքը պատմի։

ՀԳ.

Տէր Ղուկասեան ընտանիքը մեծ շինութիւն էին անում. ահա բժշկիս միւս օրուան սկզբնաւորութիւնը, նոքա կառուցանում էին այն ժամանակուան Թիֆլիսի նշանաւոր տներից մէկը։

Շինութեան մշակները, ինչպէս և առհասարակ Թիֆլիսի օրավարձ մշակողները, մեծ մասամբ պարսկաստանցի ու տաճկաստանցի են, որոնք եկել են իւրեանց երկիրների ապրուստը դառն քրտինքով ու տաժանելի աշխատութեամբ հայթայթելու։ Պարսկաստանցիները յայտնի են իւրեանց նաւքաշութիւնով։ Ամենադժուար ու ծանր աշխատութիւնը նաւքաշներինն է. սրանք շինութեան հողը կամ ցեխը նաւակների մէջ ածած՝ ուսերին են առնում և ահագին բարձրութիւնը վեր ելնում։ Նաւքաշներն են ամէնքից շատ ստացողներն ու նրանց պատիւը բարձր է շինութեան տէրերի և վարպետների մօտ՝ ուրիշ մշակներից աւելի։

Տէր Ղուկասեանց նաւքաշների մէջ ամէնքից աւելի հռչակուեցաւ մէկն իւր արիաջանութեամբը, համեստ բնաւորութեամբն և, որ գըլխաւորն է, իւր մեծ ուժովը։

Նորան թէպէտ ուրիշ մշակները չէին ճանաչում, նրանցից և ոչ մէկի գիւղացին կամ ընկերը չէր նա, բայց նորա վերայ ոչ ոք չէր նախանձում։ Եթէ նորա համեստ վարքն և հեզութիւնը չլինէր, դժուար էր նորան օտար մըշակների հետ այնքան երկար ժամանակ ապրել։ Մշակների մէջ այս յատկութիւնը կայ, որ նորանք խումբ խումբ են գործում. ամէն մի խումբը բաղկացած է համագիւղացիներից կամ համշիրակներից, որոնք վարձւում են ի միասին շաբաթով որ և է շինութեան վերայ. միայնակ կամ անծանօթ մշակին դժուար է գործ ճարել այդպիսի մի հաստատ տեղում. կամաց կամաց նա պիտի կամ մասնաւոր ծառայութիւններ գտնի և կամ մի արտօնատէր վերակացու, կամ փահլաբաշու պաշտպանութիւնը և հովանաւորութիւնը խնդրի։ Այսպիսի անտէր ու անընկեր մշակը շատ անգամ ստիպուած է լինում մի քանի օրուան աշխատանքը կաշառ տալ մշակների վերակացուին։

Մեր նաւքաշ օտարականը, որի մասին պիտի խօսինք, ոչ կաշառել էր վերակացուին և ոչ օտարների միջնորդութեանն էր դիմել. նա դիպուածով բռնել էր մի պակաս նաւքաշի տեղ և իր անձանձիր աշխատութեամբը տանտիրոջը հաճոյացել էր։ Ամէնքը գիտէին, որ բժշկապետ Ս. Տէր Ղուկասեանցը Տահէն անունով նաւքաշին չի փոխիլ հարիւր իր նմանների հետ և

այս բաւական էր Շահէնի իրաւունքը բարձրացնել նորա ընկերների և վերակացուի մօտ։

Ի՞նչպէս եղաւ, ո՞րտեղից եկաւ, աւելորդ է ասելը, մենք մի օրից մի օր գտանք Շահէնին մի արխալղահնի մէջ, բոբիկ ոտքերով, սրունքը բաց, մի աղտոտ պատառոտուած շալկում Տէր Ղուկասեանց շինութեան մէջ նաւքաշութիւն անելուս։

Շուտով ամէնքն սկսեցին Շահէնից պատկառել, նա արտօնութիւն ստացաւ. Տէր-Ղուկասեանց տան շեմքովն էլ անց կենալու, նա թէպէտ քնում էր մշակների հետ նոցա համար պատրաստած տախտակի արտաքին երեսներից կազմած սրահի մէջ, բայց նա տան տիրոջ տանը կէս ծառայի պաշտօն էլ վարում էր։

—Շահէ՛ն, պղնձկարգը սրբոտի՛ր, Շահէն, բակերն աւլի՛ր, Շահէ՛ն, ձիանոց գոմը մաքրի՛ր։ Այսպիսի հրամաններ ամէն օր նա ստանում էր տան տիրոջից, կամ նորա տան գործակատարից և Շահէնն անտրտունջ բոլորը կատարում էր։

—Շահէ՛ն, շինութեան վերակացու, ես հրամայեց մի օր տանտէրը և մեր նաւքաշի ուսերը թեթևացան։ Նա էլ հող չի կրում, նա այժմ մշակների վերայ հսկում է, որ ծուլութիւն չանեն, որ միմեանց դէմ խռովութիւններ չհանեն, որ հանդարտ գործեն, որ շաբաթ երեկոներին իւրեանց ամբողջ շաբաթուան մշակածի վարձը

ճշդիւ ստանան, որ իւր ձեռքովն առաջիկայ շաբաթի համար էլ վարձուին։

Մի խօսքով վերակացուն կիսատանուտէրի դեր է կատարում, և եթէ ասենք, թէ որմնադիրները, որոնք ուրիշ վերակացուների մարդատեղ չեն դնում, տեսնելով տանտիրոջ քաղցր ակնարկութիւնը Շահէնի վերայ, իրանք էլ նրան յարգում էին, ապա կ՛իմանանք, որ Շահէնը հիմա մեծ պատիւ ունի իւր ծառայակիցների և ընկերների մօտ։

Ամէն մշակ պարծանք է համարում իրեն Սալմաստեցի կոչուիլը, որ տեղից Շահէնն էր, ամէնքը բարեբաղդ էին համարում իրենց, որ վերակացու «Շահէն եղբայրն» իւրեանց հացից մի կտոր կտրեց։

Ուրիշ վերակացուները ոչ միայն պահանջում էին մշակներից յարգանք և ծառայութիւն, այլ և մի մի մասը հանում էին իւրեանց համար մշակների շաբաթական վարձից։

Շինութեան տէրը ընդհանրապէս հաշւում է մշակներին և բոլոր փողը տալիս վերակացուին բաժանելու, իսկ այդ պարոնը նախապէս հանում է ամէն մէկի վարձքից իւր հանելիքը և մնացածը տալիս տիրոջը։

Շահէնը ոչ միայն այդ չէր անում, այլ և չէր թոյլ տալիս մշակներին մի ինչևիցէ չնչին ծառայութիւն անելու իրեն։

—Եղբա՛յրք, ասում էր միշտ Շահէնը մշակ-

ներին, ես իրաւունք չունիմ ձեզանից ծառայութիւն պահանջելու, ես ամբողջ օրը հանգիստ եմ, իսկ դուք արեգական տապից խորովւում և քրտնում էք. ես պարտական եմ ձեր հանգստութեան համար ձեզ ինքս ծառայեմ և ոչ դուք ինձ։

Ո՞վ չէր սիրիլ, ուրեմն, այսպիսի վերակացուին, հարկաւ ամէնքը նրա գլխովն երդւում էին։

Շատ անգամ վերակացուի խստութիւնը, կամ անհաշտ ու շահասէր բնաւորութիւնն արգելք է լինում շինութեանը. մշակները փախչում են դէպի լաւ վերակացուն. նա է մշակների և շինութեան տիրոջ մէջ միջամտողն և գործը յառաջ, կամ յետ տանողը։ Տան տէրը տեղեակ չլինելով մշակների ներքին հանգամանքից՝ մնում է մոլորուած, թէ ընչի՞ ուրիշների մօտ շատ ուրախութեամբ են գնում մշակները, իսկ իւր շինութիւնից փախչում, հեռանում են։

Վերակացուի քաղցր վարմունքից շատ բան է կախուած. նորա մէկ խրախուսական խօսքը կրկնապատկում է մշակների եռանդը և գործն յաջողապէս յառաջ է գնում։

Շահէնը վերջին տեսակ վերակացուներիցն էր։

—Դէ՛հ, ձեզ մատա՛ղ, ձեր կռներին ո՛յժ, եղբայրնե՛ր, քաջալերում էր Շահէնը, հալա՛լ է ձեր կերածը, գործեցէ՛ք, մի՛ խնայէք աշխատութիւնը։

Այսպիսի խօսքերն էին, որ ամէնքին զարմացրին. կարճ միջոցում Տէր-Ղուկասեանց այնպիսի ահագին շինութիւնը գլուխ եկաւ, վերջացաւ։

ՀԵ.

—Շահէ՛ն, ասաց Տէր-Ղուկասեանցը, շինութիւնն աւարտելուց և նորա վարձը լիուլի հատուցանելուց յետոյ, կուզե՞ս ինձ մօտ մնալ իբրև ծառայ։

—Մինչև մահս։

Շահէնը Տէր-Ղուկասեանց ծառան էր և գովանի ու հաւատարիմ ծառան։

ՀԶ.

Գաղթականութիւնից երկու տարի յետոյ՝ մի մարդ Ռուսաստանի ամբողջ խորշերը ման էր գալիս։ Նա միայն չէր. նրա ընկերները բոլորն իրանից պատուով էին։ Մեր ասած մարդը Երուսաղէմից եկած Ռուսաստանի գիւղերը նուիրակութիւնով պտտող մի քանի հոգևորականների ծառայ էր։

Սուրբ հայրերը, որոնցից մինը եպիսկոպոս, երկուքը վարդապետ և մինն աւագ սարկաւագ էր, բերել էին սուրբ տեղերից շատ մասունքներ և հոգեշահ առարկաներ։ Նոքա բաժանում էին

ջերմեռանդ նուիրատուներին փրկչական տեղերի սուրբ սպասներով կնքած մատնամաներ, բաշխում էին մեղրամոմի մէջ ամփոփուած սրբոց պատկերներ, տալիս էին Երուսաղէմում սրբագործուած ու դրոշմած պատանացու կտաւներ, անում էին խաչալուաներ և թափօրներ և այլն։

Ամէն տեղ մեծ սիրով յարգում էին Քրիստոսի գերեզմանի պաշտօնեաներին, ամէնքը պարտք էին համարում դիմաւորելու և իւրեանց տներումն ընդունելու սուրբ քաղաքից շնորհ բերած Աստուծոյ սիրելի յոյն հոգևորականներին։

Եթէ նորաեկները չգիտէին ռուսերէն, եթէ նոցա լեզուն բարեպաշտ ռուսները չէին հասկանում, բաւական էր, եթէ նրանց կարդացած աղօթքները իւրեանց հոգւոյ փրկութեան համար էր։ Եթէ իւրեանք՝ ջերմեռանդ ռուս հարուստ կալուածատէրերն և կամ միլիոնատէր վաճառականներն Երուսաղէմ էլ գնացած չէին, է՛լի մի և նոյն էր համարւում Աստուծոյ առաջին, երբ իւրեանց տուած լիաբուռն ողորմութիւնները ուղարկւում էին սուրբ հայրերի ձեռքով Յիսուսի անօրինական տեղեաց որևէ աւերակ վանքը վերանորոգելու։

Ո՛չ միայն գիւղերումն էին ընդունուած և յարգուած այդ լեզու չըհասկացող քարոզիչները, այլ և գաւառական և մինչև իսկ նահանգական քաղաքներումը։

Ահա շքեղ և պատուական զգեստը հագին՝ բարեմաղթութիւն է անում սրբազան նուիրակը բազմամեղ ժողովրդի հոգւոյ փրկութեան համար՝ իւր գլխին ժողոված անթիւ բազմութիւն, որոնց տուած նուէրներն ու գանձանակները բուռը բուռը լցւում են ափսէների մէջ սուրբ Երուսաղէմի անունով։

Իրաւունք ունէին աստուածասէր ժողովուրդըն իւրեանց կեանքն էլ չխնայելու. Երուսաղէմը, ինչպէս սուրբ միայնակեացներն ասում էին, թուրքի ձեռքին գերի և ճնշուած էր, սուլթանը մեծ հարկ էր առնում Քրիստոսի սուրբ գերեզմանիցը, վանքերը պարտքի տակ թաղուած էին, գիշեր ցերեկ անքուն հսկող, սաղմոս քաղող, իրանց անձը մոռացած սուրբ վարդապետներն ամէն օր թուրքերից ծեծւում և կողոպտւում էին, և այս ամէնի առաջն առնելու միակ հնարքը փողն էր. ո՞ր առաքինի քրիստոնեայն կը համբերէր, ուրեմն, և ձեռքից եկած օգնութիւնը կը խնայէր։ Մանաւանդ ե՞րբ կարելի էր մտքումն անգամ անցկացնել վերջին կոպէկը չը նուիրելու այդ սուրբ մասունքներին, երբ բերածները կամ Տիրամօր թաշկինակն էր, կամ Քրիստոսի հեծած հեգ աւանակի աջ ոտքը, կամ խաչափայտից նոր դուրս քաշած Յիսուսի ձախ ոտքի բևեռը և կամ Աստուածածնի աչքերից հոսած ու սրուակի մէջ ժողոված արտասունքը, որի մի կաթիլը միայն

բաւական էր ջնջելու ամէն մահտարաժամ և լցելու երկնային բարութիւնով ջերմ նուիրատուների տուն ու դուրսը։

Սովորաբար այս նոր առաքեալները շրջում էին իւրեանց սայլակներով. նոքա շատ չափաւոր և խստմբեր կեանք էին վարում, բաւական էր, եթէ մի սպասաւոր ունենային, մնացած ծառայութիւնն իւրեանք էին անում։ Վարդապետներն իւրեանց ձեռքով կապում, ամրապնդում էին սուրբ տեղերը տանելիք նուէրքները, իրանք էին ձիավարներն և ամէն ինչը, խստակեցութիւնը նոցա փոշետեսակ մեղքերը քաւում էր։ Իւրեանց ասելով՝ ուրիշ մեղքեր չունէին։

Երկու երեք տարի էր հոգևորականները միշտ փոփոխւում էին, իսկ նոցանից մինը, այսինքն ամենից ստորը, կամ լաւ ևս ասել՝ ծառան, մի կամ միւս խմբի հետ անդադար շրջում էր։

Եթէ մենք գաղտուկ հետևէինք Աստուծոյ պաշտօնեաներին, կը տեսնէինք, որ առանձին եղած ժամանակները նոյն և մի մարդիկը չէին, ինչ որ գիւղերումն ու քաղաքներումը ձևանում էին. էլ նոցա մէջ չէր երևում աստիճանի և պատուի զանազանութիւն, շատ անգամ միմեանց հետ կռւում էին, ծեծւում էին, իրարից խռովելով բաժանւում էին, բաժանելով նախապէս միմեանց մէջ սրբերի անուններով ստացած ընծաներն ու փայլուն ոսկիները։

Ո՞յք էին այս մարդիկը, ի՞նչ լեզուով էին խօսում և ո՞րտեղից էին գալիս. ահա քեզ հետաքրքրողը, ասաց ինձ բժիշկս. լսիր, որ պատմեմ։

Դոքա Սալրի գիւղից, Թմբուլ և Փոք Նախիջևանի և Վայոց ձորի գաւառներում վերաբնակած հայեր էին. դոքա խաչագողներ էին, իսկ այդ ծառայն, որ իւր պաշտօնն երբէք չէր փոխում, որ ուրիշների նման չահասէր էլ չէր, դա մեր Սահրատն էր։

ՀԷ.

Խաչագողների կեանքի պատմութիւնները շատ շատ են. նոցա արարքները անհաշիւ են. մենք թոյլ տանք Սահրատին նոցանից մի քանիսը միայն պատմել՝ մեզ զուարճացնելու համար և ապա տեսնենք, թէ ի՞նչպէս և ինքը նրանց ընկերանում էր և ինչո՞ւ։

ՀԸ.

Մի անգամ, ասում էր Սահրատը, գնացինք մի գիւղ. տեղական ռուս աւագ քահանան շատ հարուստ էր և կալուածատէր։ Այդ ամէնը մենք վաղուց լսել և տեղեկացել էինք։ Այն էլ մեր ուշադրութիւնից չէր փախել, որ քահանայի կինը նշանաւոր գեղեցկուհի էր և փոքր ինչ թեթև վարքի և բարքի տէր։

Այդ գիւղը գնալուց յառաջ՝ մի անտառում սայլակի վերայ վճռւեց մեր ներկայ արշաւանքը. բազմութեան ձայնը միշտ յաղթում էր և իմ ձայնս խեղդւեց ընկերներիս համաձայնութեան մէջ։

—Դու իրաւունք չունիս խառնուելու կամ արգելք լինելու, ասացին ինձ ընկերներս, քանի որ դու շահագիտական նպատակով չես շրջում։

Վերջապէս մենք եկանք և ամենայն վստահութեամբ իջանք քահանայի դուռը։

Ես իբրև ծառայ, ստիպուեցի երկայն մահակով հալածել քահանայի բակի շները, որ ինձ շրջապատել էին։ Գուցէ ծուիկ ծուիկ լինէի, եթէ օգնութիւն չհասնէին տէրտէրի ծառաները։

Կոտրտած ռուսական բարբառով հերիք էր ինձ յայտնելու Երուսաղէմի սրբազան նուիրակների շնորհաբեր այցելութիւնը։ Աւագ քահանան ժամանակ էլ չունեցաւ կօշիկները հագնելու. վերարկուն, որպէս և իցէ, գտաւ և վազեց աստուածառաք հիւրերին դիմաւորելու։ Ես չեմ մոռանալ այն սրտագին համբոյրը, որ աւագ քահանան տուեց սրբազանի աջին։ Զքնաղագեղ տիրուհին էլ բակի մէջ արժանացաւ սուրբ հայրերի կօշտ ու կոպիտ աջերին, իսկ իւր քնքուշիկ ճակատը դրոշմուեց փոխադարձաբար սուրբ նուիրակների կաթոգին համբոյրներով։

—Մեր ազա՛յք, որսը ճանկերումս է, ասաց

սրբազանը հայերէն. բայց պիտի աշխատենք միմեանց պատիւը վայր չձգել։

—Ոչինչ, մենք համաձայնել ենք նախապատուութիւնը թողնելու քեզ իբրև եպիսկոպոսի, բայց չմոռանաս, որ այդ քաղցր պատուը միայնակ վայելել չի կարելի։

—Մեր յիմար Սահրա՛տը միայն արժանի չէ այդ շնորհքին։

Ես յոգւոց հանեցի ու յանձն առած ծառայական պաշտօնս կատարում էի։ Ես ներս էի քաշում ձիանքը։

Ի՞նչ մեծամեծ պատրաստութիւններ, քանի՜ տեսակ խորտիկների հոգացողութիւններ են լինում այդ օրը քահանայի տանը. մի կողմից ոչխարն է մորթւում, միւս կողմից հնդկահաւերն ու սագերն են փետրւում. խոհանոցումը խոչքորակի ճիչն է ականջ ծակում, հաւերի գլխներն են մի տեղից միւսը թռչկոտում. կարծես հարսանիքի պատրաստութիւն է։

Ես իբրև ծառայ, եկել դռան շէմքին դէմ եմ ընկել, սպասում եմ տէրտէրիս հրամանին, իսկ սրբազանն ու հայրսուրբները փափուկ դահոյքների վերայ են բազմած։

Տան տիրուհին առաջին անգամը չէր վստահանում սուրբ կրօնաւորների մօտ նստելու, բայց վերջը սրբազան հօր քաղցր ակնարկութիւնն իրաւունք տուեց նրան հանգչելու նոցա կողքին։

Քահանան իւր տիրուհուն յանձնեց զբաղե-

ցնելու երկնառաք հիւրերին և ինքը գնաց փոյթ տանելու ընթրիքի պատրաստութեանը։

Մեզանից ամէն մէկն իւր միտքը յայտնելու չափ գիտէր ռուսերէն և այդ էլ հեշտացնում էր մեր յարաբերութիւնները մեզ հիւրընկալողների հետ։

—Սրբազանն ի՞նչ է առաւելապէս ախորժում, հարցրեց ինձ քահանան, ինչպէս ծառայից։

—Նորին սրբազնութեան համար ոչ մէկ է, ստիպուեցի ասել ես. երկու օր է, որ նորա բերանը կերակուր չէ մտել, նա ծոմ էր, բայց այս երեկոյ կարծեմ փոքր ինչ բան կը վայելէ, և եթէ իրաւունք է ստացել ի վերուստ, ապա ուտիքի կերակուր էլ կը ճաշակէ։

—Ի՞նչ ես ուզում ասել։

—Ուզում եմ ասել, թէ մեր սրբազանը շաբաթն երեք օր միայն ուտում է կամ խմում և այն՝ երկնքի հրամանաւ ու արժանաւորների ներկայութեամբ, մնացողների համար նա միշտ ծոմ է։

Այս լուրը մի ակնթարթի մէջ բոլոր տունը բռնեց և եպիսկոպոսի անունը հինգ անգամ աւելի բարձրացրեց։

Երեկոյեան ընթրիքի վերայ խօսակցութիւնը շարունակ սուրբ տեղերի և Մարիամ Մագթաղինացու վերայ էր, որ Յիսուսի ոտքերը լուաց և մազերով սրբեց։

Խմուեցին առատ առատ ոգելէն ըմպելիքներ. եպիսկոպոսը թոյլտուութիւն չունէր շատ խմելու, նոյնպէս և վարդապետները, իսկ տանտէրերը պարտական էին ուրախ լինելու և Աստուածանից գոհանալու այսպիսի երջանիկ օր պարգևելու համար՝ սրբազանն իրաւունք էր տալիս։

Սեղանի վերայ մի քանի ակնարկութիւններ եղան մեր գործերի յաջողութեան մասին. քահանան օղիների դրդմամբը մեծամեծ խոստումներ էր անում սուրբ տեղերին, իւր ականակուռ դաւաղանը, որը մետաքսէ կտորի մէջ հագցրած՝ սենեկի անկիւնումը դրած էր, նուիրում էր Երուսաղէմի յոյն պատրիարքին. իսկ սեղանի աչքը լիքը դրամը, որի բանալին, ինչպէս մի քանի անգամ ցոյց տուեց, գրպանումն էր, ընծայում էր Յորդանան գետի վերայ Տիրոջ մկրտուած տեղը կամուրջ շինելու։

Տիրուհին իւր կողմից յաճախակի քաղցր հիւրերի աչքերին էր դիմում և ինքն էլ նրանց սիրալիր համբոյրին արժանանում. նա էլ իւր անձը,—կանացի զարդերն ու գանձը նուիրական հիւրերի առաջին առատ առատ բաշխում էր. մինչև այնտեղը հասաւ, որ սրտի փափագը դէպի ինձ՝ այսպիսի արդար և առաքինի անձանց երջանիկ սպասաւորն էլ չկարողացաւ պահել, վեր թռաւ տեղից, ինձ գրկախառնեց ու լաց եղաւ։

Ի վերջոյ՝ սեղանը հաւաքուեց և քահանայի ննջարանումը իմ տէրերիս համար անկողին պատրաստուեց. տէրտէրին ընթրիքի սենեկից տանել չեղաւ. նա մնաց տեղնուտեղը գլորուած, իսկ տիրուհին, որպէս և իցէ, մտաւ ննջարանի կից սենեակը։

Ես իբրև սպասաւոր, պարտական էի իմ տէրերիս քնացնելուց յետոյ՝ ուրախ ընթրիք անենելու տէրտէրի ծառաների և աղախինների հետ։ Նոքա ևս գտնելով իրեանց տէրերին այդ դըրութեան մէջ, ինքեանք աւելի վատթար եղան, մնացին նստած տեղերը վայր ընկած։

—Սահրատ՛, լսեցի ես դրսից կեղծ եպիսկոպոսի ձայնը, ամենայն ինչ պատրաստ է. մեր ձիանքը դուրս քաշիր։

Եւ արդա՛րև, գիշերուայ մի ժամանակը վըստահօրէն տէրտէրի դռները յետ բաց արի ես և մեր սայլակը արագ թռչում էր դէպի միւս նահանգը։

Մեզ հետ էր և՛ ոսկեհուռ գաւազանը և՛ սեղանի միջի փողերը և՛ տիրուհու թանգագին զարդերը և՛ շատ հազուագիւտ իրեղէններ, որ ժողովել էին իմ ընկերներս տէրտէրի տանից։

Երեք օր մենք ճանապարհորդեցինք, երկու տեղ ձիանքս ծախեցինք և նորերը գնեցինք, մեզ ճանաչելն անհնարին էր. մենք էլ հոգևորականներ չէինք, մենք ռուսի ռամկի մուշտակներ հագած՝ արագ գնում էինք։

Երկու նահանգ անցնելով, երրորդումը կանգ առանք մի առաջնորդական քաղաքի մօտ և մըտանք մեր հոգևորական հագուստի մէջ, եպիսկոպոսութիւնն այստեղ միւս ընկերներիցս մէկին վիճակուեց, բայց ես միշտ ծառայ էի։

ՀԹ.

Քեզ ձանձրալի չէ՞ն այսպիսի միջանկեալ պատմութիւնները, ես կըցանկայի Սահրատի քաջագործութիւններից մի քանիսն էլ պատմելու, դարձաւ ինձ բժիշկս։

—Թէպէտ կը ցանկայի Շահէնիս ձեռքից չթողնել, բայց վնաս չունի, դոքա ևս հետաքրքրական են, խաչագողի կեանքն ինձ համար նոր բան է։

Ձ.

—Մեր ձիանքը կանգ առան եպիսկոպոսատան առջևը, ասում է Սահրատը, և մենք ամենայն հեզութեամբ և պարկեշտութեամբ հարցրինք առաջնորդի բարեհաճութիւնը՝ Երուսաղէմի նուիրակներիս ընդունելու մասին, և 'ի հարկէ յառաջուց ծառայի ձեռքով յայտնեցինք նորին Սրբազնութեանը Երուսաղէմի յունական պատրիարքից բերած օրհնալիր ողջունի և նուէրքների մասին։

Սրբազան առաջնորդն ամենայն սիրով դիմաւորեց իւր կարգակից արժանաւորներին։ Այս անգամ ես թարգմանի դեր էի կատարում, սուրբ նուիրակները միայն յունական աստուածահաճոյ լեզուն գիտէին, իսկ ես փոքր ինչ հասկանում էի ռուսերէն։

Երկու կողմից օրհնութիւններ առատ թափուեցին. մի կարճ գոհացողական մաղթանք կատարուեց մեր եպիսկոպոսից առաջնորդարանի դահլճի սուրբ անկիւնում բազմացրած խաչկալի առաջին. ծնրադրութիւններին հետևեցին եղբայրական համբոյրներն և հիւրերը հրաւիրուեցին հանգստանալու ընդունարանումը։

Երկար ու բարակ ողջոյններից և Երուսաղէմից տուած հարիւրաւոր տեղեկութիւններից յետոյ՝ մեր եպիսկոպոսը ներկայացրեց աւագ քահանայի նշանաւոր գաւազանը, որը, իբր թէ, ուղարկուած էր Երուսաղէմի պատրիարքից սորին սրբազնութեանն եղբայրական յիշելիք. նոյնպէս և արծաթէ ափսէի վերայ մատուցուեց սուրբ տեղերից բերած մասունքը—Աստուածածնի ճկոյթի եղունգը՝ սպիտակ մեղրամոմի մէջ հագցրած։

Երեք օր առաջնորդարանումը մնացինք. երկու անգամ մեր եպիսկոպոսն առաջնորդական զգեստը հագած՝ գոհացողական կատարեց. ժողովուրդը խուռն բազմութեամբ լցւում էր մայր եկեղեցին և ջերմեռանդօրէն ծունր կրրկ-

նում մեր սրբազանի բայաթիների երաժշտութիւնովը ոգևորուած։ Պէտք է ասել, որ մեր այդ ընկերի պարսկական բայաթին ինձ էլ շարժում էր, անպիտանի ձայնը շատ քաղցր էր։ Այսպիսի տեղերի համար մենք միշտ պահում էինք մեր ներկայ եպիսկոպոսի ձայնը։ Խոստովանելու էր, որ ձայնի հետ կեղծաւորուել ևս գիտէր. այդ երեք օրը նորա գլուխը չը բարձրացաւ և աչքերը գետնից չկտրուեցին. նա ամանչում էր աշխարհքիս ունայն փառքերին արժանալու համար. այդ ամէնը նա բեյխարի փորձութիւններն էր համարում, մանաւանդ կանանց երեսին նայելն իւր ապաշխարութեան օրերը աւելացնում էր, այդ երեք օրը մեր սրբազանը միաժում էր և պահոց կերակրներով էր յագենում։

Մենք թոյլտուութիւն տուացանք թեթևամիտ և սնահաւատ Առաջնորդից շրջելու իւր վիճակն և նուէրքներ ժողովելու. իրանից էլ բաւականի զգեստներ, սփռոցներ ու զանազան նուէրքներ բարձեցինք մեր սայլը Քրիստոսի գերեզմանի յունական մասը զարդարելու և պայծառացնելու համար։

ԶԱ.

Երեք տարի ես շրջեցի Ռուսաստանը խաչագողների հետ, պատմում էր Սահրատը, շատ չար

ու բարի տեսայ, շատ մարդկանց բնաւորութիւնների և դիւրահաւանութիւնների հետ ծանօթացայ, բայց ոչ մինն այնքան ծիծաղաշարժ չէր, որքան մի գիւղում պատահած անցքը։

Բանը նրանումն է, որ քանի գնում էր, հետզհետէ մեր պատիւը վայր էր ընկնում Ռուսաստանումը։ Քաղաքներիցը բոլորովին հալածւում էինք իբրև խաբեբաներ, մի երկու տեղից ոստիկանութեան հսկողութիւնից կաշառքներով դուրս պրծանք, մեծամեծ գիւղերումն հաւատընծայութիւնը պակասել էր. շատերն ուղղակի թուրք էին կոչում մեզ և մեր գրքերն ու խաչկուռ աւետարանները համարում էին կախարդական գրուածքներ. (Թէպէտ հոգիներին մեղք էին անում դրանով. մենք սովորաբար տանում էինք մեզ հետ հայերէն հին ժամագիրք, կամ սաղմոս, մի մի պղնձէ խաչ վերան կպցրած ու մի քանի հին ու մաշած թաշկինակների մէջ պատատած։)

Այդ անյաջողութիւնները մեզ պատահում էին գլխաւորապէս մեծ մեծ աւաններումն և գիւղաքաղաքներումը, իսկ խոր, յետ ընկած գիւղերի մէջ է՛լի նոյն յարգն ու պատիւն ունէինք։ Որտեղ արժանի վարձատրութիւն չէինք ձեռք բերում, գտնում էինք վհուկ պառաւներ և ուխտաւոր կանայք ու նոցա ձեռքով հրաշագործութիւններ անում։ Դժուար չէր այդ մեզ համար. արդէն մեզանից ամէն մէկը ճանաչում էր սըր-

բերի անունով գետին ընկնող, փրփրակալող, գուշակող կանանցը, բաւական էր, որ նրանց գրպանը մի քանի կոպէկ ձգենք, և ահա նրանք մեր ճանապարհ հորդող կարապետներն էին։

Ամէնքի մօտ մեր գալուստն աւետում էին և մեր ձեռքով սուրբ տեղերին ուղարկած նուէրների մէջ միայն քարոզում տգէտ ռամկի հոգու և մարմնի փրկութիւնը։

Շատ ծիծաղելի էր, ասացի, մի գիւղում պատահած դէպքը։

Մի անգամ երկու և երեք մեծ գիւղերից հալածուեցինք. պաշարներս պակասել էր, քաղցած իջանք մի գիւղի մօտ։ Ամառն էր, գիւղացիք դաշտերումը հունձ են անում և գիւղը համարեա դատարկ է. այր ու կին բոլորը դաշտային գործերով են զբաղուած։ Քանի մի ռամիկների հանդիպեցինք, որոնք սուտ քարոզիչներ անուանելով մեզ՝ հայհոյանքով հեռացան։

—Բաւական է, եղբայրնե՛ր, ասացի ես, թողէք ձեր փծնի արհեստը, հանեցէք այդ խարդախ հագուստը, մտնենք մեր սովորական հանդերձի մէջ, գնանք, մեր անցաթղթերի իրաւունքով դնենք մանրմունր գիւղական պիտոյքներ, մանրավաճառութիւնով փոքր ինչ փող վաստակենք ու դառնանք մեր հայրենիքը, արդար քրտինքով մեր հացը ճարենք։

—Դեռ մեզ այսօրուան քաղցածութիւնից փրկելու հոգսը քաշիր, նեղացած ասաց ընկե-

ըրս, թո՛ղ քո գայլի աւետարանն ու քարոզներդ։

—Մայրի՛կ, մօտեցաւ ընկերներիցս մինը մի ռուս գեղջուկ պառաւի, որը մի բղիկ լիքը թանձրացրած արաժան էր տանում; ծախի՛ր մեզ այդ կաթը։

Պառաւն ուշք էլ չը դրեց ընկերիս խօսքին, փնթփնթալով քաշուեց դէպի գիւղը։

—Ես պէտք է հետեւիմ անպիտան պառաւին, ասաց բարկացած ընկերս և գնում էր պառաւի քամակից։

Մենք ծիծաղում էինք նորա յանդգնութեան վերայ։

Կէս ժամ չը տևեց, պառաւը վերադարձաւ առա՛նց բղիկի և մեր առաջովը անց կացաւ։

—Տղա՛յք, մի հնարք եմ գտել, եկաւ, խմաց տուեց մեզ ընկերս, եկէք ինձ հետ, մենք այս գիւղիցը լաւ աւար պիտի դուրս տանենք, հետևեցէ՛ք ինձ։

—Սահրա՛տ, ասացին ինձ բոլորը, դու ճրգնաւոր ես, դու ձիանցը նայիր, մինչև մենք դառնանք. քեզ էլ կերակրի բաժին կը հանենք։

Արդարև, կարճ միջոցից յետոյ՝ ընկերներս ինձ բաժին բերին հացի մէջ դրած այն թանձր արաժանից։

Ընկերներս չը պատմեցին ինձ արաժանի մասին, բայց խորհուրդ արին այդ գիշերը նոյն գիւղի մօտ անց կացնելու։

Երեկոյ էր. ժողովուրդն արտերից նոր վե-

րադարձել էր, երբ զանգակները հնչեցին. խուռն բազմութիւն քահանայի և ծերունիների առաջնորդութեամբ դիմում էին դէպի մեզ. ես ոչինչ չըհասկացայ, բայց ընկերներս գուշակեցին և ծանրախոհ դէմք առան։

—Սուրբ հայրե՛ր, խօսեց քահանան, մեր գիւղումը մի հրաշք է կատարուել այսօր, որ մենք վերագրում ենք ձեր շնորհաբեր գալստեանը։

Քահանան պատմեց, թէ այն արաժանը, որ պառաւն այսօր մեզ ղլացել է տալ, կերակուր է դարձել պառաւի տան սուրբ անկիւնում բազմացրած մի նշանաւոր սրբի. նա ասաց, որ պառաւն արաժանը տուն է դրել, վերադարձել, իսկ երեկոյին գտել է, որ սրբի պատկերը իջել է պատից, սեղանի վերայ է դրել արաժանն և մի հացի հետ բոլորը կերել ու ինքը կրկին բարձրացել պատի վերայ իւր տեղը։ Իսկ այս նրանից է երևում, որ արաժանի բղիկը դատարկ է և սրբի պատկերի բերանն արաժանոտ, հացի փշրանքն էլ թափուած է սեղանի վերայ։

Մեր եպիսկոպոսն երեք ծունր դրեց, առաւ խաչակուռ սաղմոսը, ձգեց փորուրարը և թափոր անելով՝ գնաց դէպի պառաւի տունը, իջեցրեց մածնաքերան սրբի պատկերը և նրանով գիւղը թափոր տուեց, ու այն տունն ուխտատեղի անուանեց՝ յիշեալ սրբի անունով։

Այդ գիշերը մեր վերջին նուիրակութիւնն

էր, բաւականին փող և պարգևներ ժողովեցինք գիւղիցն և միւս օրը ճանապարհ ընկանք, երդուելով թողնել միւս անգամ խաչագողութիւնը։

ԶԲ.

Սահրատը խաչագողութիւնից ձանձրացած՝ դարձաւ Թմբուլ, բայց նա իւր ճանապարհորդական նպատակները դեռ լրացրած չհամարեց։ Նա Ռուսաստանից յետ դառնալովը մի բան միայն մտքումը դրեց, որ իրան հարկաւոր էր վերաբնակուելու Թիֆլիս, ուր իւր արուեստով կարող էր արդար հաց ճարել։ (Չգիտեմ ասացի՞, թէ Սահրատը լաւ հիւսն էր)։

—Ափսո՜ս, ասաց Սահրատը, զուր երեք տարին կորցրի, հարկաւոր չէր Ռուսաստանի խորքերը թափառելու, մօտիկ տեղերումը գուցէ կը գտնէի իմ կորուստը։

Մենք լռենք ու էլի՛ Սահրատի բերանը տանք չարունակելու իւր պատմութիւնը։

—Թմբուլի մէջ ամէնքն ինձ մեղադրում էին, ասում է Սահրատը, որ ես երեք տարի խաչագողներին ընկերացայ ու դատարկ ձեռքով վերադարձայ. ամէնքը մատնացոյց էին անում իմ ընկերներիս, որոց տները լիքն էին Ռուսաստանից բերած զանազան եկեղեցական, կամ արտաքին իրեղէններով,

Ուրիշների բամբասանքն ու ծաղր ու կա-

տակն ես առ ոչինչ էի համարում, բայց ի՞նչ կ՚անես, որ իմ ներսս հանգիստ չէր, մի առարկայ կար, որ խեթանի նման սիրտս ծակում էր։

—Իմ սիրելի Սուսամբա՛րս, ասացի մի օր աղջկանս, ստիպուած եմ մի քանի ժամանակ էլ օտարների յուսով թողնելու քեզ ու հեռանալու։

—Զուր ջա՛նք և անօգուտ վաստա՛կ, հայրի՛կ, գրածը ջնջուիլ չի՛, յուսահատ պատասխանեց դուստրս։

—Ո՛չ, դեռ սիրտս հանգիստ չէ, վճռեցի ես ու ճանապարհ ընկայ, բայց այս անգամի աստանդականութիւնս նման չէր առաջին երեք տարուանին։

—Ես սկսեցի իմ գնացքս ուղղել դէպի մեր նոր գաղթականների գիւղերը, ես յոյս ունէի նոցա մէջ նպատակիս հասնել։

Առաջին երկիրը, ուր մերոնք բնակուել էին, Նախիջևանի գաւառն էր։ Նախիջևանի գետակի երկու կողմը բռնել էին իմ հայրենակիցներս՝ լեռնադաշտից մինչև Երասխը։ Ես ամէն գիւղ շրջեցի, ամէն տեղ մի երկու օր անցկացրի և ամէն մէկ հարցերին այլ և այլ պատասխաններ էի տալիս։

Երկրորդ գաւառը Վայոց ձորն է, ուր բռնել են Պարսկաստանի գաղթականները։ Այդտեղ վերաբնակողներն աւելի ապահով են, քան թէ Նախիջևանցիք. նոցա տեղը լեռնոտ է, նոցա արօտն և երկրագործական ամէն յարմարութիւն-

ներն աւելի ընդարձակ են, քան թէ Նախիջևանինը։ Այդ տեղ բազմաթիւ վանքեր և հայկական հնութիւններ կան, որոնց մէջ Ամաղու վանքը, Սալիմայ քարվանսարայն և Պռօշի պալատը, բերդն ու եկեղեցին նշանաւորներիցն են։

—Պռօշի՞, հարցրի ես զարմացմամբ բժշկիս։

—Այո՛, Պահլաւունի Պռօշ իշխանի մեծագործութիւններն և հռչակն ի վաղուց անտի յայտնի է եղել Վայոց ձորեցւոց, նոցանից աւանդութեամբ անցել է գաղթականներին և այժմ ամէն մի Վայոց ձորացի—հայ ու պարսիկ Պռօշի վերայ շատ պատմութիւններ գիտէ։

Ես թէպէտ չէի հետաքրքրւում Պռօշի, կամ ուրիշների միջանկեալ վէպերով, ուզում էի լսել Շահէնիս անցքերը, բայց բժիշկս, ինչպէս յատուկ է ծերերին, ընդհատեց իւր խօսքն և Պռօշ իշխանի վերայ հետևեալ երկու աւանդական, առասպելախառն պատմութիւններն ասաց։

—Պռօշը մեծ, անուանի և քաջ իշխան էր, սկսաւ բժիշկս, Սահրատի խօսքերը կրկնելով։ Նա Վայոց ձորի և Գեղարքունւոյ տէրն էր։ Նա մի անգամ ծպտեալ կերպիւ գնաց Թէհրան, ուր պարսից շահերը գերի էին տարել Քրիստոսի գեղարդը։

Խելացի իշխանն աշխատելով մուտք է գործում շահի ձիանոցը՝ ախոռապետին սպասաւոր։ Իւր հաւատարմութեամբն և խոհեմութեամբը մեծ հռչակ է հանում և միմեանց ետևից մի

քանի ստորին պաշտօններից հասնում է մինչև նախարարական և գանձապետական աստիճանին։

Գանձարանն իւր ձեռքն է առնում հետևեալ պատուէրով.—այս փոքրիկ արկղը, որի առաջին ընդ միշտ մոմ է վառած և թանգարանի մէջ առաջին պատուաւոր տեղն է բռնում, պիտի շատ յարգանօք պահպանես. արկղի մէջ ամփոփուածը սրբազան աւանդ է՝ Էջմիածնի վանքից բերած. սորա լոյսը շարունակ պիտի վառուի և պատկառանօք երկրպագութիւն տրուի դրան։

Պռօշի սրտի փափագը կատարուեց. հիմի ինքը վերատեսուչ կարգուեց այն սրբութեանը, որի համար երկու տարի դեգերում էր։ Նա մի տարի էլ կացաւ ներկայ պաշտօնի մէջ, մինչև բոլորովին շահեց պարսից շահի հաւատարմութիւնը և ապա մի օր արքունի օդագնաց նժոյգներից մինը հեծած, գրկեց աստուածամուխ գեղարդը և փախաւ Հայաստան, շինեց ներկայ անուանի Գեղարդայ վանքը միապաղաղ քարից և այնտեղ ամփոփեց սրբազան աւանդը։

Ասում են, որ Գեղարդի արկղի վերայ կայ Պռօշ իշխանի յիշատակարանը, որը մինչև ցայսօր պահւում է սուրբ Էջմիածնումը։

Երկրորդ անցքը, որ պատմում են Պռօշի մասին, այն է, որ նա հռչակուած է եղել իւր քաջագործութիւններով և այդ ամէնն արել է նա իւր սրի զօրութիւնովը։

Այդ սուրը շինել է տուել ինքը Պռօշը կայծակի կտորից։

Մի օր մարդու մէկը գալիս գանգատւում է Պռօշ իշխանին, որ նախրորդն այդ օրն սպանել է մի քարի հարուածով իր կովը։ Նախրորդն հետևեալն է պատմում։ Կովը նախրից դուրս արածելուս՝ ինքն ըստ սովորականին մի ձեռաչափ քար է ձգել նորա քամակից վերադարձնելու. քարը դիպչելն, կովը գետին ընկնելն ու անշնչանալը րոպէական բան է լինում։

—Կարո՞ղ ես բերել այն քարը, հարցնում է Պռօշը։

Նախրորդը միւս օրը ներկայացնում է կովասպան քարը, կամ որ ճիշդն է ժանգի կտորը։

Կովատիրոջ բաւականութիւն տալով՝ Պռօշը հրաւիրում է բոլոր հմուտ դարբիններին և առաջարկում նոյն ժանգի կտորն իր համար սուր շինել։

Ամէնքը հրաժարւում են, բայց մի դարբին յանձնառու է լինում։

Արդարև մի քանի օրից Պռօշն ստանում է սուրը, բայց գուլթանի խոփի վերայ փորձելուց յետոյ՝ վերադարձնում է տիրոջը, սպառնալով մահուան պատիժ, եթէ նա իր իսկական սուրը չվերադարձնէ։

Քանի մի օրեր փոխելուց յետոյ՝ իշխանը ստանում է իր իսկական սուրը, որը մի հարուածում պանրի պէս միջից կիսում է խոփը։

Ահա այդ սրով էր, որ Պռօշը յաղթեց իր թշնամիներին, հալածեց պարսիկներին իր սահմաններից և կանգնեցրեց հայի անունն ու փառքը. այդ սուրն էր, որ մի անգամ ազատեց Պռօշի կեանքը, երբ պարսիկները միայն գտնելով, նորա քամակիցն էին ընկել բազմաթիւ ձիաւորներով։

Իր արագավազ երիվարի ոտքերին ապաւինած՝ փախս է առնում Պռօշը թշնամիների ձեռքից մի նեղ կիրճի միջով, բայց ստիպւում է կանգ առնել, արգելք ընկնելով ահագին ժայռից։

Այստեղ ահա յիշում է իշխանն իր սուրն և մի հարուածով երկու կտոր անում ժայռը և միջովն անցկենում։

Այդ տեղը մինչև այսօր տեղացիներից կոչւում է Պ ռ օ շ ա կ ա պ, կամ պարսկերէն Պ ռ օ շ դ ե ա բ ի։

Ասում են. Պռօշն իր մահուան ժամանակը կոչում է իր աւագ որդուն, տալիս նորան սուրը և հրամայում տանել ձգել Սևանայ լիճը, չեմ ուզում, ասում է, իմ մահից յետոյ սրանով արիւններ թափելը։

Տանում է Պապաք իշխանը՝ Պռօշի մեծ որդին սուրը և միւս օրը վերադառնում ու յայտնում է, որ նրա հրամանը իսկութեամբ կատարել է։

—Ի՞նչ երևոյթներ պատահեցին, հարցնում է ծերունին։

—Ոչի՛նչ։

—Գնա՛ բեր իմ սուրս, դու ինձ չես կարող խաբել, բարկանում է Պռօշը։

Որդին տեսնելով, որ հայրն իմացաւ խաբէութիւնը, յետ է բերում սուրը։

Միջակ որդին—Ամիրհասան իշխանն իւր աւագ եղբօր խորամանկութիւնն է գործ դնում; բայց ստիպուած է լինում նորից յետ բերելու հօր աւանդը։

Վերջապէս երեք օրից յետոյ վերադառնում է փոքրիկ Խաչի որդին, որին յանձնել էր հայրը սուրը՝ լիճը ձգելու և դունատ ու դալկահար դէմքով յայտնում է հօրը նրա հրամանը իսկութեամբ կատարելու մասին։

—Ի՞նչ երևոյթներ պատահեցին, հարցնում է Պռօշը։

—Լիճը ձգելուս պէս՝ ջրի մէջ կրակ ու ծուխ բարձրացաւ, մի գարշահոտութիւն տիրեց շրջակայքը և ես, երևի, այդ ծանր հոտը չկարողանալով տանել, ուշագնաց ընկել եմ լճի ափին երկու ամբողջ օր. երրորդ օրն է այսօր, ինձ գտայ հովիւների վրանի տակին ուշաբերած և ահա գալիս եմ քեզ տեղեկութիւն տալու։

—Հօրդ արժանաւոր որդի՛, ասաց Պռօշը, դու պիտի ժառանգես իմ անունս և իշխանական կոչումս, դու շատ չը ցանկացար աշխարհքիս մէջ, բայց ես քեզ շատ եմ խոստանում։

Այդ է պատճառը, ասում են, որ Պռօշի միջակ որդու յիշատակը յաւիտեանս կորուել է, Ամիրհասանն անժառանգ է մեռել, մեծ՝ Գապաք որդու ցեղը սոսկականներ են այժմ, իսկ կրտսեր՝ Խաչի որդու սերունդը բոլորն ազնուական են [1])։

Սահրատը շրջելով Վայոց ձորը, այն տեղից յուսահատ անց է կենում Շարուրի գաւառը, ուր վերաբնակուել են վեց գիւղեր Պարսկաստանի գաղթականներից. այնտեղ էլ չգտնելով իւր որոնածը, գնում է դէպի Գառնւոյ գաւառը։

Մօտ երեսուն գիւղ մի կարգով՝ Գառնւոյ գետի վերայ՝ փռուած են այդ գաւառումը. բազմաթիւ այգիք մի գծի վերայ՝ մէջ առած գիւղերը՝ հովանաւորում են իւրեանց սաղարթախիտ տնկիներովը և բարդի ուղղաձիգ ծառերովը արքունի փոստային ճանապարհը։

Սուրբ Լուսաւորչու վիրապին և իւր հայրենակիցներին այցելելուց յետոյ՝ Սահրատն այդ տեղից էլ ձեռնունայն դիմում է դէպի Երևանի և Էջմիածնի գաւառները, ուր բնակեցրած են շատ Մարաղեցիք, Խոյեցիք, Ուրմեցիք, Սալմաստեցիք և այլ Պարսկաստանի գաղթականներ։

—Աւա՜ղ, ասաց Սահրատը, ուրախ եղայ, որ արժանացայ մեր մայր Աթոռը՝ սուրբ Էջմի-

1) Պռօշի Խաչի որդւոյ սերնդից են յառաջ եկել Խուրով կամ Խուրեանց ազնուական գերդաստանը, իսկ մեծ որդու սերնդից են շառաւիղած գրքիս հեղինակը իւր ազգականներով։

ածինը համբուրելու, բայց ի՞նչ օգուտ, որ երկու ամիս վանքումը և միւս գիւղօրայքումը թափառելուց յետոյ, ստիպուեցի յուսահատ վերադառնալու Թմբուլ:

Եւ այսպէս չորս տարուան թափառականութիւնից յետոյ, շարունակեց Սահրատը, առայ Սուսամբարիս՝ արտասուքն աչքերին և տեղափոխուեցի Թիֆլիս՝ իմ հիւսնական արուեստով հաց աշխատելու, բայց և այնպէս ասեմ, որ յոյսս երբէք չէի կտրել. մի օրից մի օր սպասում էի որոնածս գտնելու:

—Բայց ի՞նչ էր որոնում Սահրատը, հարցրի ես անհամբերութեամբ բժշկին:

—Նա պտռտում էր Շահէնին:

—Շահէնի՞ն, ի՞նչ պատճառաւ:

—Լսի՛ր:

ԶԳ.

—Դու չե՞ս մոռացել, սկսաւ բժիշկս, այն դէպքը, երբ Շահէնն աներևութացաւ Սահրատի աչքից: Այն օրից ցայսօր նորա մասին խօսք չէր բացուել:

Սահրատը չը լինելով Սավրի գիւղացի, հարկա՛ւ, չէր էլ կարող խաչագողութիւն անել: Այդ արուեստը Սավրի գիւղացիների համար ժառանգական էր: Դեռ Ռուսաստան չը գաղթած՝ Սավրի գիւղացիք իւրեանց անգոսնելի արհեստը

գործ էին դնում Կ. Պօլսում և Տաճկահայաստանի հայաշատ քաղաքներում ու գիւղերում: Նոքա այն ժամանակն Էջմիածնի անունով էին խաչագողութիւն անում, ձևանալով Էջմիածնի եպիսկոպոսներ, վարդապետներ և միանձունքներ: Էջմիածնասէր հայերը Լուսաւորչի աթոռի անունով պապակուած՝ լիզում էին խաբեբայ նուիրակների ոտքերն և իւրեանց լիուլի նուէրները Էջմիածնի անունով նրանց քսակը լցնում:

Բայց երբ Սավրի գիւղացիք գաղթեցին Հայաստան, իւրեանց խաբէութիւններին աւելի առատ հունձ գտան Ռուսաստանի տգէտ գաւառների մէջ. և ի հարկէ Էջմիածինն այնտեղ կորցնում է իւր նշանակութիւնը. մէջտեղ է գալիս ընդհանուր քրիստոնէից նուիրական սրբատեղիքը՝ Երուսաղէմը:

Ստապատիր քարոզիչները գտան ռուս ռամկի թոյլ երակը, խաչագողները հասկացան, որ յոյն անունով կը գրգռեն ռուս ռամկի մոլեռանդութիւնը. ռուսի գիւղացին այսօր էլ ամէն մի յոյնի իւր հաւատոյ հիմնաքարն է համարում և յոյնի անուան դէմ երեսը խաչակնքում:

Այնքանը բաւական էր խաչագող արկածախնդիրներին յոյն ձևանալու համար. դժուար չէր այնուհետև երեսները յունական ձևով խաչ քաշելը. հարկաւոր էր միայն նախ աջ և ապա ձախ թուքի վերայ դնել ձեռքը. իսկ լեզուն ոչ մէկ էր. գիրը զանազանութիւն չունէր. դեռ աւելի

ընդունելի էր տգէտ ռամկի համար յունական գիրն և բարբառը, քան թէ իւր մայրենի լեզուով ընթերցուածքը։

Մեծ գիտութիւն էլ պէտք չէր խաչագողներին, նրանցից շատերը հայերէն կարդալ անգամ չէին իմանում. բաւական էր միայն մի երկու աղօթք անգիր գիտենալ և Յիսուս Քրիստոսի ու Մարիամ Աստուածածնի անունները յաճախ կրկնել. մեծ մասը մինչև անգամ զանազան առասպելներ ու խաղեր էին երգում ու կարդում։

Մենք իբրև օրինակ բերենք այստեղ խաչագողների մի երգը, որ նոքա «Հայր մերի» փոխարէն երգում էին։

«Մեր տէրը խիւր (հիւր) ի,
«Տեղը մուր ի,
«Թանը թթու ի,
«Բթեւը (դրգալ) փօլատ (պողպատ) ի.
«Տէ՛ր, դու խասնես տ՛անց (դոցա) խաւարին (հաւարին)։

Այդքանով շատ գործ կարելի էր կատարել և կատարում էին Սավրի գիւղացիք Ռուսաստանում. հերիք էր, եթէ ճարպիկութիւն գործ դնել գիտենային, որի մէջ ի նախնեաց անտի քաջավարժ էր ամէն մի Սավրի գիւղացի [1] և

1) Սավրի գիւղի մօտ գտնուած Փայաջուկ գիւղիցն է եւ մեր քանքարաշատ հեղինակ Մելիքզադէն, կամ որ մի եւ նոյն է Ռաֆֆին:

իւրեանց յաջորդ Թմբուլցիքն ու փոռեցիք [1]։

Սահրատն, ասացի, Թմբուլ գալուց յետոյ շատ աշխատեց իւր աղջկանն ամուսնացնելու, բայց չը յաջողուեց. աղջիկն յայտնեց իւր հօրն իւր կուսական ուխտը, որից յետոյ հայրն ստիպուեց սև չոր հագցնել նորան ու վարպետ անուանել։

Մանաւանդ սիրելի եղաւ Սուսամբարը Սահրատի համար, երբ մի վարդացաւից յետոյ նրա բոլոր ընտանիքը մեռան. կենդանի մնացին միայն ինքը Սահրատն ու Սուսամբարը, որը միակ պահպանող և խնամք տանողն էր հիւանդներին։

ԶԴ.

—Աղջի՛կս, ասաց մի անգամ Սահրատն իւր տան թշուառութիւններից յետոյ, ինձ շատ հետաքրքիր է քո ուխտի պատճառը, այժմ՝ քան ուրիշ ժամանակ, ես կարծում եմ, իրաւունք ունիմ հարցնելու քո գաղտնիքը, այժմ դու ինձ համար ամէն ինչ ես։

Սուսամբարը չը քաշուեց պատմելու հօրն իւր և Շահէնի յարաբերութիւններն և արգելքը։

—Ափսո՜ս, հազար ափսո՜ս, հառաչեց Սահրատը, մենք կորցրինք միջոցը, ես Շահէնին կարող էի այստեղ բերել և բարեբաղդացնել երկուքիդ էլ։

1) Այժմ թէ թմբուլցիք եւ թէ փոռեցիք թողել են իւրեանց պապերի արհամարհելի արհեստն եւ ազնիւ առուտրով ու երկրագործութեամբ են պարապում:

—Բայց ես ասացի, հա՛յր, որ այդ անկարելի էր, Շահէնն իմ մօրս հարազատ եղբայրն էր։

Նա պատմեց Աբրահամի և իւր կնոջ գաղտնիքը։

—Հազա՜ր ափսոս, կրկնեց Սահրատը, ես կորցրի ամէն բան, դու Շահէնի համար էիր պատրաստուած և ես կարծում եմ, որ դեռ ուշ չէ, ես երկաթէ տրեխներ կը հագնեմ, պողովատէ գաւազան կ՚առնեմ ձեռքս, աշխարհէ աշխարհ կը թափառիմ ու ձեզ ձեր սրտի բաղձանքին կը հասցնեմ։

—Ասում եմ, հայր, անհնարին է, մենք արենակիցներ ենք։

Ես եմ մեղաւորը, աղջի՛կս, ձեր մէջ արգելք չկայ. Թոյլ տո՛ւր ինձ, որ քեզ մի նոր գաղտնիք բաց անեմ. ներիր ինձ զաւա՛կս, այո, ես իրաւունք ունիմ քեզ զաւակ անուանելու, թէև չէ այդպէս։

—Ես քեզ չհասկացայ, հա՛յր։

—Այո՛, Սուսամբա՛ր, դու իմ զաւակը չես։

—Ի՞նչպէս, սարսափեց աղջիկը։

—Այո՛, իրաւունք ունէիր դու ինձ քեզ հայր ճանաչելու, իրաւունք ունէր Աբրահամը քեզ իւր թոռն ընդունելու, բայց իրողութիւնն այդպէս չէր։

—Ա՜խ Աստուած, այս ինչե՞ր են անցնում իմ գլխովը, ինչո՞վ մեղաւոր եղայ քո առաջին,

որ այսչափ փորձութիւններ յառաջս ես բերում։ Ասա հա՛յր, ասա որ դու սխալւում ես, ես քո հարազատ դուստրն եմ.

—Չէ, որդի՛, էլ ծածկել չեմ կարող. լսի՛ր ինձ. իմ առաջին կինը, Դէյկարխանցի Աւագի հոգեզաւակը՝ քո կարծեցեալ մայրը, արդարև ծնաւ մի աղջիկ։ Բոլոր գիւղացիք լսեցին և աչքալոյս եկան մեր տունը, բայց ոչ ոք չիմացաւ, թէ երեխայն ծծով ընկաւ ու անկնունք մեռաւ. մայրը կերակրելիս՝ քնել էր բարուրի վերայ ու երեխային խեղդել ծծի տակին։

—Ա՜յ մարդ, աղաչեց ինձ խեղճ կինս, եթէ դու ինձ համար ուրիշ երեխայ չես ճարել, ես ինձ կը սպանեմ, մենք աշխարհքի մէջ խայտառակ եղանք, մեր երեխան անկնունք եղաւ, ես մարդասպան եմ։

Երկու օր իմ թշուառ կինը զառանցանքի մէջ էր և երեխայ էր կանչում։

Ես չգիտէի, ի՞նչ անեմ, վերջը շտապեցի Սալմաստ՝ իմ մօրաքրոջս մօտ՝ նրան բերելու և մի ճար գտնելու։

Բաղդը մեզ յաջողեց, մօրաքոյրս մի աղքատ մարդու տեղ գիտէր, որի կինն երկուշաբաթ առաջ երկուորեակ էր ծնել ու մեռել։

Մի ժամից յետոյ ես ու մօրաքոյրս մի երկու շաբաթական բարուր գրկած՝ ճանապարհ ընկանք դէպի Ասլանիկ։ Սալմաստցի Աւետիքը տուեց ինձ ինքնայօժար իւր երկուորեակներից

աղջկանը՝ այսօրուան իմ սիրելի Սուսամբարին։

—Ա՜խ, ճիչ արձակեց Սուսամբարը։

—Մի՛ յուսահատուիր, աղջի՛կս, թող որ շարունակեմ պատմութիւնս և ապա ես էլ իմ պարտքս կատարեմ, աշխարհէ աշխարհ ընկնիմ, խաչագող դառնամ ու քո սիրեկան Շահէնիդ գտնեմ, բերեմ։ Մի՛ վախիր, երկար չէ իմ պատմութիւնս։ Խեղճ կինս մեռաւ, քեզ կրծքին կպցրած՝ Սուսամբար կանչելով, ինձ յանձնեց իւր զաւակի պէս խնամք տանելու քեզ ու երախայի ծծով ընկնելը ոչ ոքի չասելու։ Կարելի է ես չկատարէի էլ նրա վերջին կտակը, եթէ չահադիտական նպատակ չունենայի։ Դէյկարխանցի Աւագը անժառանգ էր, իմ կինս էր նորա օրինաւոր ժառանգը, ես քեզ սնուցի Աւագի կալուածքներին տէր դառնալու նպատակով, մի քանի տարի էլ օգուտ քաղեցի, բայց վերջը, ինչպէս տեսար, աշխարհքը փոխուեց, մենք մեր սեպհականութիւններն էլ պարսկին թողինք ու հեռացանք։

—Իսկ ի՞նչ եղաւ իմ հայրս։

—Ես մի անգամ Սալմաստումն օրհնել տուի նորա գերեզմանը։

—Ուրեմն ես անհայր ու անմայր որբ եմ։

—Ուրեմն դու իմ հոգեզաւակն ես, Շահէնի նշանածն ես. ես իմ հայրական պարտքս ուզում եմ գլուխ տանիլ, թողնել քեզ Թմբուլում և քո նպատակիդ հասցնելու համար՝ մինչև վերջին շունչս աշխատել, գտնել քո Շահէնին և խաղաղ սրտով հողը մտնել։

Ահա այս էր Սահրատի տարիներով թափառականութեան պատճառը։ Մեզ յայտնի է, որ ձեռնունայն վերադարձաւ, բայց ոչ յուսակտուր։

Թմբուլից նա վերաբնակուեց Թիֆլիս և երրորդ անգամ ամուսնացաւ։ Այդ տեղ նա զաւակներ ունեցաւ, որոնք իբրև խնամոտ քոյր էին ճանաչում Սուսամբարին։

Ամէնքն ուրախ էին Թիֆլիսումը, Սահրատի գործն էլ յաջող էր գնում, միայն Սուսամբարն էր տրտում և սևերի մէջ։

Հարևանները բոլորը սիրում էին Սուսամբարին և վարպետ կոչում էին տալիս։

Շատերն էլ խորհուրդ էին տալիս մտնել կուսանաց վանքը, բայց ոչ Սուսամբարն ինքը կամք ունէր և ոչ Սահրատը հաճութիւն էր տալիս։

—Չէ՛, ասում էր նա, իմ յոյս հաստատ է, որ մեր սև օրին մի ուրախ օր պիտի հետևի։

ԺԵ.

—Շահէ՛ն, հրամայեց միանգամ բժշկապետ Ս. Տէր Ղուկասեանցն իւր ծառային, իմ բոլոր հագուստներս պայուսակի մէջ ամրացրո՛ւ, ճանապարհի համար տաք մուշտակ դնել չմոռա-

նաս, ինքդ էլ քեզ համար հաստ հանդերձեղէններ գնիր և պատրաստուիր՛, վաղը մենք ճանապարհորդ ենք դէպի Մոսկուա:

Բժիշկը Շահէնին բաւականին փող տուեց:

Մի քանի օրից Մոսկուայումը մի հիւրանոցում իջևանեց մի կովկասեցի բժիշկ իր ծառայի հետ:

Դա Տէր-Ղուկասեանցն էր:

ՁԶ.

Բժշկապետ Տէր-Ղուկասեանցի Մոսկուայ գալն աննպատակ չէր. նա հրաւիրուած էր այնտեղ իւր արուեստով ծառայելու գիտութեանը և նա մեծ յառաջադիմութիւն էր անում բժշկական ասպարիզի մէջ:

Նորա հմտութիւնն և համբաւը դեռ ուսանող ժամանակից տարածուած էր Մոսկուայի մէջ և նա շուտով մեծ պարապմունք ունեցաւ:

Նա այն բարեխիղճ բժշկներիցն էր, որոնք ծառայում էին գիտութեանը և ոչ փողին, որոնք գիտեն մարդու նշանակութիւնը և որոնց աչքումը մարդը ճանճ ու այլ միջատ չէ:

Այսպիսի բժշկներն են, որ ընդ միշտ ժողովրդի աչքումը ունեցել են իւրեանց յարգանքը, այսպիսի բժշկներն են, որոնք բժշկականութիւնը ազատել և ազատում են շարլատութիւն կոչումից. ի մեծ ցաւ գիտութեան այս կարևոր ճիւ-

ղի, պիտի խոստովանել, որ շատ սակաւ բժշկներ կան Ս. Տէր-Ղուկասեանցի նման գիտութեանը նուիրուած. ընդհակառակը մեծագոյն մասը արհամարհելի է արել այս սուրբ արհեստըն և կորցրել է հասարակութեան հաւատը դէպի առ: Ամէն տեղից շուտ վերկենող, ամէն պառաւ, ամէն կախարդ անամօթաբար օգուտ է քաղել համայնքի տգիտութիւնից և մահուան դանակը ձեռքն առած՝ աջ ու ձախ զոհել է մարդկան ազգը:

Դեռ ներելի է այդ տեսակ խաւարի որդիներին, քանի որ նոքա անգիտակցաբար են ոտնատակ տալիս գիտութիւնը. անարգանքն աւելի զարգացումն և բարձր կրթութիւն ստացած այն բժիշկ կոչուած ժանտախտներին պէտք է առդրել, որոնք ծառայում են միայն փողին և որոնք անխղճաբար մտել են մարդկան ազգի որդւոց մէջ և գերեզմանների բնակիչներն աւելացնում:

Ի՞նչ անի ժողովուրդը, ջուրն ընկնողն ամէն մի ծեղից էլ փրկութիւն է սպասում, երեխայդ, կինդ, ծնողդ, սիրելիդ առաջիդ հաւինման թապատում է, ի՞նչպէս չը դիմես բժիշկ անունով գիտութեան տաճարից արտօնութիւնով դուրս թողածին, ի՞նչպէս խնայես քսակիդ բերանը. դու պատրաստ ես կեանքդ անգամ զոհելու, նրան մատաղ տալու, եթէ կը խլի նա մահուան դրկից քո ամենասիրելուն:

Շատ անգամ համոզուած ես դիմացի խաբեբայի անպիտանութեան վերայ, բայց էլի ապաստանում ես, բայց աւա՞ղ, դու քեզնուքեզը զրկեցիր քեզ ամենաթանգագին էակից։ Ի՞նչ անես, Ս. Տէր-Ղուկասեանցները շատ սակաւաթիւ են, որոնք գիշեր ու ցերեկ չը խնայեն իւրեանց անձը քո հիւանդիդ համար, որոնք մոռանան ամէն հանգստութիւն, ամէն աշխարհային վայելքներ և իւրեանց նշանաբանին միայն ծառայեն։

Մեր Տէր-Ղուկասեանցն, ասացինք, այս վերջիններիցն էր, նա ոչ պճնասէր ու շռայլ էր և ոչ գոռոզութեան գահից ստոր նայող, նա ժողովրդի ճշմարիտ բարեկամն էր, նա շատ սակաւապէտ ու հասարակ կեանք վարող էր։

Նրա դիրքը, համեմատելով իւր մեծ պրակտիկայի հետ, շատ բարձր կարող էր լինել, նա միջոց ունէր փառաղարդ և շքեղ պալատներում ապրելու և քառաձի կառքեր ու պճնազգեստ սպասաւորներ ու խոհարարներ պահելու, բայց նա բացի իւր Շահէնից, ուրիշ ոչ ոք չունէր, վերջինս էր և՛ ծառայ և՛ խոհարար և՛ ընկեր։

—Շահէ՛ն, տուն կը գայ ամբողջ օրը Մոսկուայի մեծամեծ փողոցներումը քարշ գալուց և յոգնելուց յետոյ Տէր-Ղուկասեանցը, ի՞նչ ունիս պատրաստած, մի փոքր տուր մարմինս կազդուրելու և որքան կարելի է՝ շո՛ւտ, ինձ աչքը ճանապարհին սպասողներ շատ կան։

Երկու տեսակ պարզ կերակրով բաւականալով՝ Տէր-Ղուկասեանցը գլխարկը դնում էր ու դռնէ դուրս։

—Շահէ՛ն, ձայն տուեց մի անգամ բժիշկը, շո՛ւտ կերակուր, շտապում եմ։

Բաւական միջոց անցաւ և ծառան ներս չեկաւ։

—Շահէ՛ն, կրկնեց Տէր-Ղուկասեանցն և կոչնական զանգակը մի քանի անգամ հնչեցրեց։

Ոչ ոք չերևեցաւ։

Երրորդ անգամին ինքն ստիպուեց մտնել խոհանոցը, ծառայի սենեակը, և ոչ մի տեղ չը գտաւ նրան։

Մի քանի անգամ բժիշկը վերջերումը նկատել էր ծառայի տարաժամ բացակայութիւնն և ո՛ւշք դնելու միջոց չէր ունեցել, սակայն այսօր չը կարողացաւ անտարբեր մնալ և երկմտեց։

Նա ծառայի սենեկումը կանգ առած՝ մըտածում էր, երբ աչքովն ընկան սեղանի վերայ թափած տետրակներն ու գրքերը։

Բժիշկը մօտեցաւ և հետաքրքրութեամբ զննեց. Նա զարմացաւ։

Նա գիտէր, որ իւր ծառան և ոչ մի լեզուով այբը չի ճանաչում, իսկ հիմա մի քանի ռուսերէն դասական գրքեր են, շարադրութեան տետրակներ և թուաբանական ձեռնարկներ։

Մոռանալով քաղցն և ժամադրութիւնը, բժիշկն աշխուժով թերթում էր տետրակները։

Նա հիացաւ, երբ մի քանիսի վերնագրերից իմացաւ, թէ այս ամէնը պատկանում են իւր ծառային, և թէ նա շատ ժամանակ չէ, որ սկսել է ու բաւականին յառաջադիմութիւն է արել:

Բժիշկն ուսերը միայն բարձրացրեց ու վերադարձած իւր սենեակը՝ սպասում էր։

ԶԷ.

Առաջին անգամները Մոսկուան շլացրեց պարսկաստանցի ծառայի աչքերը: Շահէնը թէպէտ տեսել էր Թիֆլիսը, հիացել էր նորա տեսարաններովը և համարել էր աշխարհքիս եօթը հրաշալիքներից մինը, բայց Մոսկուան իսպառ մոռացնել տուեց նորան Կովկասի մայրաքաղաքը:

Փոքր առ փոքր ընտելացաւ նա և այստեղի հետ, սովորեց վաճառափողոցը, մթերավաճառանոցը, ամէն իւր պաշտօնին հարկաւոր տեղերն և սակաւ ինչ ռուսերէն կոտրտել:

Նա ունեցաւ և իւր ծանօթներն ու հարեւանները, որոնցցի մինն, իւրեանց գրկեցի ծառան իւր հետ բաւականին մտերմացաւ:

Շահէնի բաղդիցն այս սպասաւորը գիտէր կարդալ ու գրել և ազատ ժամանակները կարդում էր նորա համար զանազան հետաքրքիր պատմութիւններ:

Մի անգամ նա կարդաց Շահէնի համար մի

հնդիկ նեգրի պատմութիւնը, թէ ի՞նչպէս այդ վայրենի գերին փախաւ իւր տիրոջից Հիւսիսային Ամերիկա և այնտեղ դէպքի բերմունքից ուսում առաւ և նշանաւոր բժիշկ դարձաւ:

—Մի՞թէ բժշկութիւնը կարդալով և ուսում առնելով են սովորում, հարցրեց զարմացմամբ Շահէնն իւր բարեկամին:

Այո՛, մինչև մարդս ուսում չունենայ, մինչև համալսարան չըմտնի, չի կարող բժիշկ լինել:

—Ընչի՞ համար, ուրեմն, Պարսկաստանումը մեր բժիշկներից շատերը կարդալ գրել չըգիտեն: Մեզանում ամէն մարդ կարող է բժիշկ լինել, սովորելով լոկ մի քանի դեղերի անուններ և հիւանդին մի քանի դեղահատեր տալով. բաւական է միայն, որ մի երկուսը վկայեն նորա հմտութեան համար և նա կարգին բժիշկ է:

—Ո՛չ, ասաց բարեկամը, այստեղ բժիշկը պիտի համալսարանական վկայական ունենայ:

—Իսկ եթէ մէկը փորձերով կարողանայ շատ բան սովորել, նա բժիշկ կը համարուի՞:

—Եթէ ուսումն էլ հետն ունենայ:

—Ափսո՜ս, որ ես կարդալ չգիտեմ, թէ չէ ես լաւ բժիշկ կը դառնայի:

Շահէնի ընկերը ծիծաղեց իւր բարեկամի միամտութեան վերայ. մի տգէտ գիւղացու իւր կարողութիւնից վեր ցանկութիւն յայտնելը ի հարկէ ցնորք էր:

—Կամենո՞ւմ ես քեզ կարդալ սովորցնեմ, հեգնօրէն ասաց բարեկամը։

—Ռոճկիս կէսը կը տամ, եթէ խոստմունքդ կատարես։

Հանաքը չհանաք դարձաւ, Շահէնն աշակերտ էր, և ինչպէս տեսանք, մեծ յառաջադիմութիւն էր արել. Նա այժմ բաւականին լաւ խօսում և գրում էր ռուսաց լեզուով։

ԶԸ.

—Ո՞ւր էիր, անպիտան տղա՛յ, խոժոռուած հարցրեց բժիշկը Շահէնին, ամբողջ ժամ է քեզ սպասում եմ։

—Ներիր, տէ՛ր։

—Բայց ո՞ւր էիր, հարցնում եմ քեզ։

—Շահէնը չէր վստահանում ասելու. Նա հարևանի ծառայի հետ գնացել էր դասական գիրք առնելու։

—Այդ ի՞նչ է թևիդ տակին։

—Գիրք, երկիւղիւ պատասխանեց Շահէնը։

—Իրա՛ւ, այդ ի՞նչ գրքեր ու տետրակներ են սեղանիդ վերայ թափած։

—Իմս են։

—Բայց դու կարդալ չը գիտես, դու ինձ այդպէս ես ասել։

—Այժմ գիտեմ։

Շահէնը մի առ մի պատմեց իր տիրոջը բոլոր եղելութիւնը։

—Ուրեմն դու հայերէն կարդալ գրել իմանում էիր, այնպէս չէ՞։

—Այսօր էլ այբի հոտը չեմ առած։

—Իսկ հիմա՞։

—Հիմա եթէ մի վարժապետ պատահէր, ռոճկիս միւս կէսն էլ նրան կը տայի՝ հայերէն սովորելու համար։

—Եւ ինչի՞ համար գլխումդ մտել է կարդալ գրելը։

—Բժ...բժ...բժիշկ... դառնալու, կակազեց Շահէնը։

—Ի՞նչ։

—Ներիր, տէ՛ր, չոքեց Շահէնը և ընկաւ Տէր-Ղուկասեանցի ոտքերը, շատ բան չեմ խընդրում քեզանից, տար միայն ինձ քեզ հետ բոլոր այցելածդ հիւանդների մօտ։

—Հա՛, հա՛, հա՛, բարձրաձայն ծիծաղեց Տէր-Ղուկասեանցը, բժիշկ է՞լ ես դառնում։ Նա կռնիցը բարձրացրեց։

—Ես նեղրիցն ինչո՞վ եմ պակաս. նա էլ հասակն առած ժամանակը գործին ձեռք տուեց։

Տէր-Ղուկասեանը մտախոհութեան մէջ ընկաւ։

—Դեռ կերակուր տո՛ւր ինձ, հրամայեց բժիշկն ու ինքն անկողնի վերայ պառկած՝ մտածում էր, մինչև որ ծառայն հրաւիրեց նրան ճաշելու։

ՁԹ.

Տէր-Ղուկասեանցի հիւանդների թիւն օր ըստ օրէ աւելանում էր, յաճախորդները շատանում էին։

Այս այն պատճառաւ էր, որ այժմ նա ոչ միայն իբրև լոկ բժիշկ այցելում է հիւանդներին, այլ և բերում է իւր հետ իւր ֆեյլդշերին, որը պարտական է օրը մի քանի անգամ գալ և տկարին պէտք եղած կարիքը հոգալ ու ամէն փոփոխութիւն բժիշկին իմաց տալ,

Խիստ ջերմեռանդ և գործունեայ մարդ է ֆեյլդշերը, նա չի ձանձրանում ամենազզուելի սպասարկութիւնն էլ կատարելու, նա ամէն մի հիւանդին իւր հօր, մօր, եղբօր, քրոջ և ամենամօտ արենակցի նման է նայում և, որ գլխաւորն է, ոչ մի կոպէկ վարձատրութիւն չի ընդունում։

Կարծեմ հասկանալի եղաւ, որ այս եռանդոտ ֆեյլդշերը մեր ծառայ Շահէնն է։ Այո՛, նա ինքն է, որ ոչ միայն ֆեյլդշեր է, այլ և գիտութեան աշակերտ։

Տէր-Ղուկասեանը զիջանելով Շահէնի թախանձանքներին, սկզբումն, իբրև կատակ, վերցրեց ծառային իւր հետ մի քանի հիւանդների մօտ, բայց շուտով նա համոզուեց, որ Շահէնի հետ կատակ անելու չէ։

Ինքը Տէր-Ղուկասեանցը չէր կարողանում

առանց զզուանքի նայել շատ հիւանդների անգրելի աղտոտութիւններին, այն ինչ Շահէնը ամենևին չէր խորշում։

Տէր-Ղուկասեանցը մի քանի նողկալի փորձերի ենթարկեց իւր ծառային և նա տարաւ ուրախութեամբ։

Էլ Շահէնը հանգիստ չէր տալիս իւր տիրոջը, նա տուն վերադառնալիս՝ հազարաւոր հարցեր էր անում այցելած հիւանդների, գրած դեղագրերի, դեղօրէից յատկութիւնների, տանելիք խնամքի և այլ և այլ հանգամանքների մասին։

Տէր-Ղուկասեանցը վստահ էր Շահէնի պիտանութեան վերայ և աներկմիտ ուղարկում էր իւր բոլոր հիւանդների մօտ։

Շահէնը հսկայական քայլեր էր անում բժշկական գիտութեան մէջ։

Ղ.

Վերջապէս ժամանակն է քեզ հետ լրջմտաբար պարապելու, ասաց յարգելի բժշկապետն և Շահէնի համար իւր ծախքով ուսուցիչներ հրաւիրեց։

Շահէնը թէ իւր դասերն էր պատրաստում և թէ ֆեյլդշերական պարտականութիւնն էր կատարում։

ԴԱ.

Տէր-Ղուկասեանցի Մոսկուա վերաբնակվելուց երեք տարի յետոյ՝ Լազարեանց ճեմարանում մը քննութիւն էր բռնում մի չափահաս ուսանող: Նա եկել էր վերջնական հարցաքննութեան ենթարկուելու: Նա ամէն առարկաներից գերազանց թուանշաններ ստացաւ, վկայագիրն առաւ և գնաց:

Այդ աշնանը նա մտաւ համալսարան բժշկական մասը:

Դա մեր Շահէնն էր:

ԴԲ.

Նոր կեանքը մեծ փոփոխութիւն չարաւ Շահէնի բնաւորութեան մէջ. Նա ուսանողական շրջանի մէջ էլ նոյն Ասլանիկցին էր, ինչ որ մենք տեսանք, նոյն հանդարտ և պարկեշտ նաւաքաշը, նոյն հաւատարիմ և սակաւապէտ ծառայն: Նա Տէր-Ղուկասեանցի տանը առաջուան դիրքն էր պահում, թէպէտ ազնիւ բժիշկն իւր կողմից իբրև հաւասարի հետ էր վարւում և չէր թոյլ տալիս միայնակ ճաշելու:

Համալսարանում Շահէնն այժմ իրեն համարում է ամենաերջանիկ ուսանողը. Թէև փող չունի, բայց ոչինչ պակաս չէ իրեն. մաքուր հագուստ ու կօշիկներ, գեղեցիկ տաք թանգագին

մուշտակ, որ ընծայել է իւր տէրը համալսարան մտած օրը, դասական պիտոյք և ամէն ինչ, որ ուսանողին անհրաժեշտ է, նրա համար կար և պատրաստ էր: Շահէնի ընկերներից շատերն երանի էին տալիս նրան, և այդպէս էլ էր:

ԴԳ.

Առաջին կուրսը Շահէնը յաջողութեամբ անցկացաւ, ամէն ոք ճանաչում էր նրան ինչպէս մի աշխատասէր և ծանր ուսանող. և արդարև նա չէր նմանում շատ իւր ընկերներին, որոնց սկզբումը տարել և տանում է ուսանողական ընկերութեան հոսանքը:

Խօսքս ուսանողական առաջին քայլի համար է, երբ նա ոտք է ուզում դնել այդ շրջանը, որը մեծ նշանակութիւն ունի ուսանողի ամբողջ կեանքի մէջ և որից կախուած է նորա ապագան:

Գալիս է աղքատ ու անփորձ գիմնազիստն աշխարհքի մի ծայրից. Իւր ճանապարհածախքից յետ պահած մի քանի կոպէկներով նա ընկնում է Ռուսաստանի մայրաքաղաքների լաբիրինթոսները:

Մինչև այդ օրը ոչ առօրեայ կենսական պիտոյքների կարիք է զգացել մեր նորաւարտ գիմնազիստը և ոչ առանց խնամակալի ապրել է:

Կովկասը լիքն է ամէն բարիքներով. Նահապետական կեանքը դեռ շատ տարիներ սեպ-

հականութիւն կը մնայ Կովկասին. մեր աշխարհքի ամէն մի քաղաքումն ու գիւղումը մարդս միշտ կարող է գտնել իրեն կարեկից անձնաւորութիւն։ Պատանի գիմնազիստը կամ հօր մօր ձեռի տակ է մեծացել և կամ անպատճառ մի գերդաստանի հսկողութեան ներքոյ է ապրել։

Ահա նա անփորձ արջառի նման դուրս է թողած աշխարհքիս փորձութիւնների մէջ. նա զգում է, որ լուծը վզին է, բայց ո՞ւր, կամ ի՞նչպէս պիտի գնայ, չգիտէ։

Գիմնազիական ատեստատը ձեռքին՝ մեր նորաւարտն յանդգնում է մի թեթև ճանապարհածախքով ուղևորուիլ դէպի Ռուսաստանի խորքերը, դէպի այն աւետեաց երկիրը, ուր բարձրագոյն կրթութեան մեղր ու կաթն է բղխում. նա գնում է գիտութիւն ստանալու։

Եթէ այդ մի և նոյն պարոնին ուսումն աւարտելուց և հայրենիք գալուց յետոյ՝ առաջարկելու լինէիր հինգ անգամ աւելի գումարով կրկին վերադառնալու իւր կրթութիւն ստացած տեղը՝ երկու ամիս միայն կեանք վարելու պայմանաւ, նա կը ծիծաղէր, կամ կը բարկանար այդպիսի անտեղի առաջարկութեան վերայ, բայց նա երբէք չէր ուզում մտածել, թէ հինգ անգամ աւելի սակաւ դրամագլխով ինքը մի ժամանակ վստահացել է չափելու հազարաւոր ասպարէզներ և բաղդի դիպուածքին իւր գլուխը խաղալիք է թողել։

Մենք չենք վերցնում այդպիսի թեթևսօլիկ անձնապաստան պատանու ճանապարհորդութիւնից որ և իցէ մի դէպք, վա՛յ է իրեն, եթէ նա հանդիպել է մեր շահասէր վաճառականներին, որոնք իբրև աւելի փորձառու մարդիկ յանձն են առել տանել մեր անծանօթ գիմնազիստին տեղ հասցնելու, ի հարկէ ճանապարհածախքը կիսով վճարելու պայմանաւ։

Այսպիսի պատանին անպատճառ խմած կը լինի դառնութեան վերջին բաժակը, այն մի քանի աւելացած կոպէկները, որ յոյս ունէր նա պահել նոր հայրենիքումը սկզբնական ապրուստի համար, սպրդեցան վաճառականի գրպանը և մեր ուսանողն առանց վերջին կոպէկի ընկաւ փոթորկալից կեանքի մէջ։

Թէ այսպէս, թէ այնպէս, աղքատ թէ հարուստ, պատառոտուն հանդերձով, թէ շքեղ զարդարուած և վերջին մօդայով պճնուած՝ պարտական է նոր ուսանողացու եղբայրս որոնելու մի որ և է ուսանողի ծանօթութիւնը

Շատ հեշտ է այս բանը Ռուսաստանի մայրաքաղաքներում. եթէ միջնորդ էլ չլինի, եկեղեցին կիւրակէ օրերը բաւականութիւն կը տայ այս պահանջին։ Պատարագը վերջանալուց յետոյ՝ բոլոր ուսանողները գումարւում են խումբ խումբ և միմեանց ուրախութիւնը տեղեկանում. այս ժամանակն ամէն մի անծանօթ աչքի է ընկնում և ուսանողների հարցասիրութեան առարկայ

գտնւում ու նորանց մէկի կամ միւսի հետ ծանօթանում։

Ահա՛ այս ծանօթութիւնիցն է կախուած, ասացինք, նոր ուսանողի ապագան։ Եթէ նա մտաւ ազգային զգացմունքներով վառուած շըրջանի մէջ, այնուհետեւ նորա կեանքի օղակները կցուելու են ազգայնութեան շղթայի հետ. այդ տեղ նա կստանայ կարեւոր խորհուրդներ, կը գտնի համանպատակ ընկերներ, կը մտնի համակոմական գործունէութեան ասպարէզը, կը լցնի իւր գլուխը զանազան օգտակար քամիներով, ազգի ապագան իւր և իւր նմանների մէջ կը գուշակի, թէպէտ և դրդմունքը այն օրուան ապրուստի փոխարէն մկներ են պարում, և այլ այսպիսի պղատոնական հերոսութիւններ, որոց ենթակայ կը լինի այնպիսին մինչև կեանքի վերջը։ Ահա այսպիսիներն են, որոնք մեր ազգային հասարակական ծառայութեան մէջ փայլում են։

Իսկ եթէ մեր նորաեկը հանդիպեց համամարդկային երևակայական գաղափարներով լի անհեռատես դասակարգի, նա էլ ոչ ազգ կը ճանաչի, ոչ հայրենեաց լուսաւորութեան վերայ կը մտածի և ոչ իւր մայրենի լեզուն զարգացնելու վերայ կը խորհի, նա բաւական կը լինի առաջին պատահողին ընդհանուր մարդկութեան պարտաճանաչութիւն քարոզել և իւր համար առանձին ապրել։

Բայց աւելի ողորմելիքն այն նոր ուսանողներն են, որոնք լինելով կարողութեան տէր ծնողաց զաւակներ, գալիս ու առաջին անգամից ընկնում են իւրեանց նման հարուստ դասակարգի ուսանողաց խմբի մէջ։

Այսպիսիները թէ իւրեանց և թէ օտարների համար յաւիտեան կորած են և ամենաթշուառներն են այս երջանիկ ընկերութեան մէջ, այսպիսիներիցը յաւիտեան ձեռք լուանալու է։

Ահա այսքա՛ն մեծ նշանակութիւն ունի նոր եկող ուսանողի համար առաջին անգամի ծանօթութիւնը։ Իսկ մեր պատմածից հետեւեցաւ, որ երեք գլխաւոր ճիւղի է բաժանւում ուսանողութիւնը և ամէն մեկն ունի իւր պաշտպանն ու ամբաստանողը։

Դ Գ.

Մեր Շահէնն առաջին կարգի, կամ այսպէս ասել, ազգային նահատակայուների մէջ գտաւ իւր ընկերակիցները։ Այդ բանին նպաստեց նըրան իւր բարերար բժիշկ Տէր-Ղուկասեանցը։

Մի բանում միայն Շահէնը չէր համապատասխանում այդ խմբին. նա առանին կեանքի մէջ փախչում էր ուսանողական բաղցրութիւններից. ուսանողական ոչ մի ներքին կեցութիւններին նա չէր խառնւում։

ԼԵ.

Մի առաւօտ Շահէնը զարթնեց և իրան անտէր որբ գտաւ։ Տէր-Ղուկասեանց բժշկապետըն էլ չկար. նա շատ ժամանակ չէր Թիֆլիս էր գնացել. դեռ նոր տեղ հասած կը լինէր, որ նորա մահուան բօթն եկաւ Շահէնին. այդ օրուան փոստը նրան ամսական թոշակի տեղ գոյժ բերեց։

Շահէնն այժմ աղքատ էր, նա մի շաբաթուան ապրուստի փող ունէր իւր քսակումը, բարերարը խոստացել էր առաջին փոստայով Թիֆլիսից ուղարկել. հիմա ի՞նչ անէր անտէր ուսանողն, ո՞ւմ դիմէր, ինքն էլ չգիտէր, արեգակը վաս տեղն էր մայր մտել, նա հիմի անօք ու անօգնական է. նա Աստուծոյ և մարդկանց աչքից ընկած մի օտարական է։ Նա թէպէտ ծանօթներ ունէր ուսանող ընկերակիցների մէջ, թէպէտ տեղեակ էր նոցա կրած նեղութիւններին, բայց մինչև այդ կէտը միայն լսելով էր, գործով ինքը չէր փորձել, մենք ասացինք, որ մարդամէջ մտնելուց փախչողի մէկն էր նա։

Երեք օր մեր Շահէնը սենեկից դուրս չեկաւ, համալսարան չը գնաց. նորան շատ զգալի էր իւր բարերարի կորուստը։

Մինչև այդ վերջին փոփոխութիւնը Շահէնի գլխովը շատ բան էր անցել իւր ուսանողութեան օրից, մի քանի անգամ մայրաքաղաքներում սո-

վորական եղած կողմնակի փորձանքներ նորան ուղեցել էին խճճել իւրեանց ցանցի մէջ, բայց նա միշտ խոյս էր տուել. նոյն իսկ իւր ընկեր ուսանողները կամեցել էին ուսանողական կեանքին անհրաժեշտ դարձած պայմանների տակ մտցնելու, բայց Շահէնը գլուխը տակը չէր առել, իրեն հեռու էր պահել։

Խօսքս անմեղ զբօսանքների մասին է, առանց որոնց ուսանողական կեանքը կարծես չի յարմարւում։

Ուսանողը շրջապատուած է այնպիսի հանգամանքներով, որ կամայ ակամայ պիտի կապուած լինի կանացի սեռի խնամութեան հետ։ Նա չունի իւր համար այնքան դրամագլուխ, որով հնարք ունենայ իւր ամէն պիտոյքը ժամանակին գնելու և հոգալու. փողը ծոցումն ունեցած միջոցն էլ նրան անհնարին է այդ երկրորդական բաներովը պարապելու. հարուստներն է՛լ դժուարանում են մայրաքաղաքների ամենատեսակ դժուարութիւններից իրենց անձը ապահովելու, ո՞ւր մնաց մի չքաւոր ուսանող, ում ամէն մի կոպէկը հաշուած է, այդպիսիներին իւրեանց նման մի աղքատ բարեսիրտ կին՝ իւր մատների պտուղունցով ապրող՝ հանում է մեծ դժուարութիւնից։

Անփոյթ ուսանողն իւր համալսարանական պարապմունքի հետ է, իսկ այստեղ մինը կայ, որ պատրաստում, լուանում, կարկատում, կրտ-

րուած կոճակը կպցնում է, և այս փոքր բան չը պէտք է համարել։

Եթէ այդ ամէն բաների համար անկարող ուսանողը փող մսխելու լինի, նա ի՞նչպէս կարող է իւր չնչին ռոճիկով, կամ դառն քրտինքով ձեռք բերած ամսականով իւր ամէն կարիքը լրացնել։

Ուսանողն ստիպուած է որոնելու այնպիսի մի կացարան, ուր տան տիրուհին, կամ նորա ծանօթներից մէկը կարեկցական սիրտ ունենայ դէպի ուսանողական դասը։ Եւ այդ կանայքը կան ու հոգում են։ Եւ ի՞նչ անել է պէտք, որ այդպիսի քնքուշ ու գթոտ կանայքն ինքեանք էլ կարիք են զգում ուսանողի կողմից մի փոքր բարեկամական համակրութիւն վայելելու. և ահա՛ սորանից յառաջ է գալիս մի հասարակ կար կարող կնոջ և մի ուսանողի մէջ սերտ բարեկամութիւն։ Իսկ այս ամօթ չէ համարուած ուսանողական շրջանի մէջ. այս չէ նշանակում պարկեշտութեան և չափաւորութեան սահմանից դուրս գալ. անարգանք չի համարւում մի քանի ուսանողների համար երբեմնապէս դժուարամարս դասախօսութիւններով գլուխները ծանրաբեռնելուց յետոյ՝ մի բաժակ թէյով, կամ մի շիշ գարեջրով ուրախ երեկոյ անց կացնելու իւրեանց բարեկամուհու հետ։

Ահա այսպիսի թեթև զուարճութիւններն են համարւում ուսանողական ընկերութեանց մէջ անմեղ զբօսանքներ։ Ընդհակառակն պարսաւելի

է այն ուսանողների կեանքը, որոնք պապենական մեծամեծ կալուածների ժառանգորդներ լինելով՝ ստանում են միլիօնների հետ խաղացող հայրերից, կամ միլիօնների տակը փորող հոգաբարձուներից ահագին գումարներ և ամենազազրալի ու շռայլ կեանքի մէջ տոգորուելով՝ դէպի կորուստ են դիմում։ Այդպիսի ուսանողներին կարելի է կոչել լուսաւորութեան անբարդ որդիք. դրանք ոչ միայն իւրեանց նշանաբանին չեն ծառայում, այլ և շատ սակաւամասնութիւնն է կուրս աւարտում և այն՝ մի կտոր վկայաթղթի համար։

Ես անարգանք եմ համարում ուսանող խմբի համար դորանց կեանքը նկարագրելը, ես չեմ ուզում մարդկութեան ապագայ յոյսերի շրջանի մէջ տեսնել այդ ժանտախտներին և նրանց դասակարգից համարել։

Իմ խօսքս այդպիսիների մասին չէ, դրանք արժան էլ չեն համարում ցած թողնելու իւրեանց աչքի միականի ապակին և ուսանողական նստարանի վերայ իւրեանց հետ մի կարգի նըստած մահկանացուին դիտելու, որի համար ես շատ ուրախ եմ. թէպէտ բացառութիւն ամէն դասակարգի մէջ միշտ լինում է։

Կարծիք չը կայ, որ վերջիններիս հետ Շահէնը ծանօթ էլ չէր լինիլ. նա իւր մելամաղձոտ բնաւորութեամբն առաջիններիցն էլ փախչում էր, այժմ էլ իւր թշուառութեան մէջ մտածեց

ամենևին յարաբերութիւն չունենալ ոչ ոքի հետ։

ԼԶ.

Լեզուով շատ բան կարելի է ասել, գործելուս բանը կը պարզի. հեշտ է մտածելը ոչ ոքի հետ յարաբերութիւն չունենալու, բայց այսօր փորդ քաղցած է, գրպանիդ վերջին սև փողն սպառուել է. տանդ ժամանակն էլ լրացել է, տանտէրը հիմի ներս կը մտնի, րոպէ առ րոպէ սպասում ես նրա սառը բարի լոյսին, որ կընշանակէ՝ կամ տանս վարձը տուր, կամ վերջին ունեցածդ գրաւի տեղ թող ու ինքդ բարով եկար։ Միտքդ բեր այս ամէնը և ահա կ'իմանաս Շահէնի դրութիւնը։

Ուրիշ ուսանողների համար սովորական բաներ էին դոքա, նրանք այդպիսի ձախող հանգամանքներից երկիւղ չունէին, նրանց համար ուսանողական տիրուհին մերձաւոր ընտանի ասել է, բայց Շահէնը տեղեակ չէր ոչինչ բանից, մինչև այսօր նա ապրել էր իւր բարերարի հետ և առօրեայ կեանքի դժուարութիւններին ծանօթ չէր, նա այսքան միայն գիտէ, որ ամիսը լրացել է, բարերարից փող էր սպասում, մահուան բոթը լսեց։ Նա մտաւ տուն, տարածուեց անկողնի վերայ և երեխայի պէս սուգ էր անում։

Տան տիրուհին Շահէնի պէս չէր մտածում, նա իւր կեանքը ուսանողների մէջ է անց կացրել, նա գիտէ, որ ուսանողից չը պէտք է ճիշդ

իւր ժամանակին վարձ պահանջել, նրա ժամանակամիջոցն այն օրն է, երբ կը ստանայ ու ինքն իրեն կը բերի կը վճարի։ Այդ պատճառաւ բարի տիկինը մտքովն էլ չէր անց կացրել Շահէնից փող պահանջելը. նա միայն մի բանի վերայ անհանգիստ եղաւ, բոլոր օրը նորա անկէց նոր ուսանողը տանից դուրս չէր եկել, օրը մթնել է ու Շահէնի սենեկումը ճրագ չը վառուեց։

Տիրուհին դուռը բախեց։

—Ներս մտէք, յուսահատ ձայն տուեց Շահէնն ու մազերը քաշեց. Նրա գուշակութիւնները կատարուեցին, տանտիկինը փողի է եկել անկարծիք։

—Ընչո՞ւ ճրագ չէք վառում, հարցրեց տիկինը։

Շահէնը պատասխան չը տուեց։

—Ես ձեզ հասկանում եմ, փող չունիք, այնպէս չէ՞։

—Այո՛, ցած ձայնով պատասխանեց Շահէնը։

Տանտիկինը վազեց, ճրագուէ մոմը ներս բերեց։

Շահէնի աչքերի ուռոյցքն իրան մատնեցին։

—Դուք այսօր չէք ճաշել։

Շահէնը լուռ էր։

—Աղջի՛կս, հեշտայեռը դիր, ձայն տուեց տիրուհին իւր դստերը։

—Ես ինչպէս տեսնում եմ, ձեր աղքատու-

թեան առաջին օրն է, դուք ուսանողական շըրջանից դուրս էք ապրել։

—Այսօր միայն կարօտութիւն եմ զգում բարերարիս մահուան պատճառաւ։

—Խե՛ղճ տղայ։

—Արդա՛րև խեղճ։

—Իսկ իմ միւս սենեկներում կենող ձեր ընկեր ուսանողները, որոնք վարձեցին ձեզ համար այս սենեակը, չը գիտե՞ն ձեր տարաբաղդութիւնը։

—Ո՛չ, մենք միմիայն համալսարանական ընկերներ ենք, ես նրանց մէջ երբէք չեմ խառնւում։

—Հարկաւո՛ր է, մճռեց տիկինն ու դուրս գնաց։

Շատ էլ ցանկանում էր Շահէնն այս երեկոյ միայն անց կացնելու՝ չեղաւ. երեք ուսանող՝ միեւնոյն բակի մէջ կեցողներ՝ իւր ընկերակիցներից՝ նորա մօտ մինչև կէս գիշեր ուրախութիւն էին անում տան տիրուհու և իւր աղջկայ հետ։

ԼԵ.

—Ի՞նչ ես քիթ ու մռութդ երկու գազ երկարացրել, աշխարհքումս ո՞վ է յաւիտենական ու անմահ, երեկոյեան երգերից ու զուրճութիւններից աչքերն ուռցրած՝ տուն ընկաւ Շահէնի մօտ իւր դրացի ընկերներից մինը միւս առաւ-

ւօտը, վեր կաց, շուտով հագնուիր, համալսարան գնալու ժամանակն է։

—Բայց ես այսօր ուսանելու ոչինչ չունիմ։

—Ո՞վ, դո՞ւ, այսքան հարստութեան տիրոջն ամօթ չէ՞ բանի հոգս քաշելը, վեր կա՛ց, հագնուի՛ր, գնանք, ահա քո այս օրուան ճաշդ, դեռ մի բան էլ կ'աւելանայ։

Ուսանողը վերցրեց Շահէնի սեղանի վերայից երկու մոմակալներից մինը և առանց տիրոջ հաճութիւնը հարցնելու՝ մի թերթ թղթի մէջ պատատեց ու վերարկուի գրպանը դրեց։

Շահէնը մի հայեացք ձգեց դէպի իւր հատ մոմակալն ու խօսք չասաց, նա մեքենապէս հագնւում էր։

—Շաքար ունի՞ս, հարցրեց ընկերը սուլելով որ և է ռօմանսի մի տողը։

—Փոքր ինչ կայ։

—Ուրեմն հարուստ ես, վեր կալ ինչքան քեզ կը բաւի, գնանք մեր սենեակը, հեշտայեռը պատրաստ է։ Սովորիր, եղբա՛յր, Աստուած քո ձեռքիցն առաւ բարերարիդ, որ քո վայրենութեան եղջիւրը խորտակուի,

—Բայց շաքար ընչո՞ւ վերցնեմ, եթէ թէյ տալու էք, շաքար էլ կ'ունենաք։

—Ո՛չ, ներողութիւն բրդի՛ր, մեր ամէն մի կտորը հաշուով է, այսօր դու զրկելով ինձ մի կտոր շաքարից, կը զրկես վաղուան թէյ խմելուց, ասաց ուսանող ընկերն և սառնասրտու-

թեամբ մօտեցաւ Շահէնի թէյի պարագայքին, համարեց շաքարները, վերցրեց երկու կտոր և ասաց՝ դու մեր երեքիցս էլ հարուստ ես, դու մի շաբաթուան շաքար ունիս, մենք ոչ։

Այդ օրը Շահէնը ճաշեց իր ընկերների հետ ուսանողական կոչուած պանդոկումը։

Նա ոչինչ չը վճարեց, այսքան միայն տեսաւ, որ իր ընկերի դրպանից մոմակալն անց կացաւ պանդոկապետի ձեռքը, իսկ նրանից մի քանի կոպէկ էլ թղթի մէջ ծրարուած՝ փոխադարձաբար ուսանողին հասաւ։

—Չասացի՞, որ մեզանից հարուստ ես, մոմակալիդ փողերն այսքանն էլ աւելացաւ, մի շաբաթ կեանքդ ապահոված է։ Բայց ինձ լսի՛ր, սովորիր այս տեղի կերակրներին, դու սխալ ես, շատ համեղ պատրաստուած են սրանք։

Ուսանողը փողերը տուեց Շահէնին, որի բերանը այդ օրը ոչինչ չէր մտել։

ԻԸ.

Դու մի՛ զարմանար, սիրելի ընթերցո՛ղ, եթէ քեզ ասացի, որ Շահէնի բերանն այդ օրը բան չը մտաւ. շնորհ բեր ինձ հետ միասին այդ պանդոկը, որի անունը իրենք՝ մեր անհոգ երիտասարդներն են հեգնօրէն «ուսանողական» կոչել, և կը համոզուիս, որ Շահէնը թէպէտ և եղել է գռեհիկ գեղջուկ, թէպէտ և օրավարձ

մշակ, ծառայ, այնու ամենայնիւ չէր կարող մի փոքր նրբացած ճաշակ չունենալ, այնուհետև դու չես մեղադրիլ նրան քաղցած ներս մտնելու պանդոկն և քաղցած փորով դուրս գալու համար։

Մեզ յայտնի է, որ գիւղացին իր կեանքն անմաքրութեան մէջ է անցկացնում, նա իր ձեռքովն է սրբում և շալակովը թափում անասունների աղբը, նա առանց զանազանութեան տեղի նստում է, ուր հանդիպում է, հագնում է աղտոտ հանդերձներ, շաբաթներով գործի շատութիւնից երես լուալու ժամանակ և յարմարութիւն չի ունենում, անլուայ ձեռքով ուտում է իր կերակուրը, և այլ շատ տեսակ անմաքրութիւններ, որոնց հակամէտ է գիւղացին։

Բայց այս պանդոկը մի ուրիշ զարշելի տեղ է, որից ամէն ոք կը զզուի. դա մի նկուղ է երկայն ընկած. մի կողմը շինած է հնոցը, ուր և՛ հաց է թխւում և՛ կերակուրն է պատրաստւում. նորա մօտ ժանգոտած կաթսաների ու թուճերի մէջ լցրած են զանազան տեսակ նեխած ու բորբոսնած կերակրներ, փոքր ինչ հեռու՝ մի երկայն կիսաջախջախ սեղան է դրած, որի վերայ ոչինչ սփռոց չկայ։ Այդ միևնոյն սեղանի վերայ ճաշում են ամենատեսակ մարդիկ, ամէն դասակարգից էլ անխտիր։

Միմեայն սեղանին նայելը բաւական է զզուանք յարուցանելու նոր անծանօթին այս

պանդոկը մտնելուս։ Իմ թշնամիս ոչ տեսնի, ինչ որ սեղանի երեսն է. դու այստեղ նստած ճաշում ես, քո մօտդ արբեցածի մէկը թափել է իր կերակուրը և հանդարտ սրտով գլուխը մէջը դրած՝ սատանի գիրկն է ընկել, չնթռկել։ Միւս կողմը, քեզանից հեռի սեղանի վերայ թափուած է երեկուանից կամ միւս օրուանից նեխած ու թթուած կաղամբաջուր, որից բարձրացած անուշահոտ բուրումը կարող է մաքառել հոտաւէտ իւղեր վաճառող նորաձև սափրիչի խանութի հետ։ Յատակի վերայ էլ մի՛ նայիր, ապա թէ ոչ, այստեղ դալդ ժամանակի կորուստ կը լինի, դու մի՝ րոպէ էլ չես կարող այս հասարակօգուտ տանը կանգնիլ։ Հասարակօգուտ եմ ասում և կատակ չեմ անում, ոչ ապաքէն այս տունը և՛ հիւրանոց է և՛ անտէրների պատսպարան. չե՞ս հաւատում, աչքդ դարձրու սոյն այս սենեկի դէպի երկայնութիւնը և ինձ հետ միասին ինքդ կը խոստովանիս ասածիս ճշմարտութիւնը։ Տեսնո՞ւմ ես այս մխից ու ծխից ապուխտ դարձած և ճանճերի կեղտոտութիւնից ներկուած երկու կարգ միմեանց դէմ շարուած մահճակալները, որոնց ամէն մինը բաժանւում է միւսից երկուսի մէջտեղը դրած կիսաբեկ սեղանով՝ իւրեանց վրայի երկ—երկու անագէ ժանգոտ ջրամանով, եթէ ամուր բնաւորութիւն ունիս, մի՛ զզուիլ հիմա մահիճների անդրջրհեղեղեան թանձր կեղտոտութիւնից և կոշտ քա-

թանի պատառուածքներից դուրս թափուած ու ճանճերի համար հանգստութեան տեղ ծառայող մրկած ու բորբոսնած խոտերից։

Եթէ սիրտդ կը բռնի, արի, նստիր այս պանդոկումը, ճաշիր և սքանչացիր մահճակալների տէրերի վերայ։

Պիտի ասեմ քեզ, որ իւրաքանչիւր մահճակալը մի մի բնակարան է, նրանք առանձին առանձին են վարձով տրւում, նրանց վերայ կը գտնես և՛ աշխարհքիս ամէն ձախորդութիւնների վերայ ծիծաղող ամենասուրբ նպատակի համար գլուխը յետ դրած ուսանող և՛ գրպան կտրող ճարպիկ ու յաջողաձեռն որիկայ և՛ բագոսի նախկին երգրպագու և՛ Աստղկեան սպասաւոր զինուորականութիւնից արձակուած սպայ և՛ մանկագող գնչու պառաւ և հասարակական տներից արտաքսուած Ափրոդիտեան ախտից վարակուած, զառածուած և գեղեցկութիւնը կորցրած դեռահաս կին և՛ պարկեշտ ու ամօթխած, բաղդի անողորմ հարուածներին ենթարկուած աղջիկ։

Միով բանիւ առանց խտրութեան կոչման և պաշտօնի տանուտէրն ընդունում է այս տանն իւր թանգագին հիւրերին, խնամում, կերակրում և ծառայում է նրանց։

Զը կարծես, որ շատ թանգ պէտք է վճարել. ամիսն երեք մանէթով կարելի է նստել,

վեր՝ կենալ, ուտել, խմել, ապրել և եթէ սիրտը կամենայ, միւս աշխարհքն անց կենալ։ Ամառն այցելուների սրութիւն է, մեծապատիւ պանդոկապետի ամենապատիւ. անկեցներից շատերը բարեհաճում են փողոցներումը պատերի տակին և հրապարակներումը բաց երկնքի քացցըր օդի մէջ էլ անց կացնել, և շատ խելօք են անում, ձմեռներն են այս տան տօնավաճառը, շատ անգամ կարեկից տանուտէրը կամելով իւր սրտացաւ ծառայութիւնն ամէնքին մատուցանելու, տեղ չունեցած ժամանակը մահճակալների տակին էլ վարձով տալիս է։ Տաք տեղ, ո՞վ չի ցանկանալ մնալ, ի՞նչ հոգ, թէ կուզէ կուզ պիտի մնի։

Ահա՛ դու նայիր այս այլազան և այլասեռ կենդանիներին, մարդկութեան այս թշուառ մասին, մտիր այն անկիւնում կծկուած ուսանողի դրութեան մէջ, որ աշխատում է լուսով մի քանի անգամ կարդալ, կամ գրել իւր լեկցիան, որովհետև առաստաղի միջակէտում վառուող աղօտ լապտերի տակին տարին մի անգամ է մաքրում՝ զատկէ զատիկ՝ ի պատիւ մեծ տօնախմբութեան. ուրեմն ուսանողը ժամանակ չունի գիշերը դաս պատրաստելու։

Նայիր ուսանողին, մի բոպէ խորհրդածիր քեղնուքեզ, տե՛ս, կարո՞ղ ես այս գազանական որջի մէջ և ապրել և դաս պատրաստել, տես նորա դրացի մահճակալի վերայ ի՞նչ հանդէս է։

Ահա պոշտօնազուրկ արտաքսուած սպան հիւր է եկել Վեներայի սպասուհիներից մէկի մօտ. նրանք երկուսն էլ երջանիկ են այժմ, նրանք գտել են աժանագին օղի պղպեղով թնդացրած և կամ սիվուխա կոչուած Ռուսաստանումը ստորին դասին հանրածանօթ խմիչքը՝ նրանք միմեանց կենացն են վայելում, գրկախառնում են, ազգային սիրերգներ են երգում, մինչև ցմահ իրարու սիրել և հաւատարիմ մնալ են ուխտում։

Այս ամէնը կատարւում է թշուառ լըջախոհ երիտասարդ ուսանողի աչքի առջևը, նրան կից մահճակալի վերայ։

Ի՞նչ ունի անելու խեղճ ուսանողը. եթէ կը ցանկանայ մասնակից լինելու այս անմեղ զուարճութիւններին, իւր պատուասէր դրացիքը պատրաստ են բաժանելու նորա հետ և՛ սիրալիր համբոյրներ և՛ օղի և՛ ամէն վայելչութիւն. իսկ եթէ «կողքը հաստ, աղքատ—հպարտը» չի ուզում ընկերանալու ընդհանուր ուրախութեանը, նրանց հոգն անգամ չէ. ամէն մարդ իւր տանն ինքնիշխան է. թող պարոն վայրենին երեսը միւս կողմը դարձնի, նրանք ուզում են ուրախութիւնը կատարեալ անել...։

—Ես չեմ կամենում քո լսելիքդ փչացնել, դարձաւ ինձ բժիշկս, այսքանը միայն իմացիր, որ Շահէնը թէպէտ այդ առաջին օրը չը ճաշեց

այնտեղ, բայց միւս օրը նորա համար սովորական դարձան թէ կերակուրներն և թէ նկուղի կեանքի գորշ պատկերները։

Մի քանի շաբաթից յետոյ այդ պանդոկի մի անկիւնի մահճակալի տնկէցն էր ինքը Տահէնը և շատ ախորժանօք ուտում էր սիսեռի, կամ ուղղապէս ասենք, Ռուսաստանի գ օ ր օ խ ի կճեպներից եփած խաշուն։

Այս կերակուրը նոյնպէս հանրածանօթ է մի կարգի մարդկանց. սիսեռը խաշում են, միջուկները առանձին կերակուր են պատրաստում, իսկ կճեպները նորից դնում են հնոցի մէջ, այնքան եփում, որ պարզ ջուրը փոքր ինչ դեղնագոյնի է փոխւում, ապա մի կտոր հոտած խոզի ճարպ են դնում մէջն ու բաժինը մի կոպէկով ցանկացողներին մատակարարում։

ԼԹ.

Տահէնը ժլատութիւնից չէր բնակւում ներքնատան մէջ, նա ստիպուած էր այդ անելու մենք գիտենք, որ նա ոչ մի բարեկամ չունէր՝ բացի իւր նման քաղցած ուսանողներից։

Ամէն բան գրաւ դրեց Տահէնը, ամէն ինչ ծախեց և մնաց միայն իւր մի ձեռք հագուստն ու գեղեցիկ տաք մուշտակը, որը ոչինչ բանով չէր ուզում ձեռքից թողնել։

Բայց և այնպէս այս գետնայարկի մէջն էլ

Տաճէնն իրան լաւ էր պահում, չարունակ ուսանողական ընկերական ժողովներում գտնւում էր, ազգային կարիքների վերայ էր մտածում և մի մի գիշեր մասնակցելով ուսանողական անմեղ զբօսանքներին, միշտ հեռու էր պահում իրեն գայթակղութիւնից։

Այդ իսկ պատճառով ընկերներից նա կոչւեց ճգնաւոր Տահէն։

Խ.

Ամէն բանի սկիզբն է դժուար, ամէն ինչ կամաց կամաց սովորական է դառնում։ Տահէնին հիմա տանելի էր պանդոկը, ասացինք, բայց մի բանի համբերել անհնար էր լինում. Նա միջոց չէր ունենում դաս պատրաստելու, իսկ առանց այդ անհրաժեշտ պայմանին ի՞նչ նշանակութիւն ունի ուսանողութիւնը։

—Անօթութեան համար դեռ չեմ հոգում, մտածում էր Տահէնը, դեռ ծախած ու գրաւ դրած իրեղէններիս դրամներից մնում են, դեռ երկու շաբաթուան ապրուստ էլ ունիմ։

—Դեռ սա շատ կը մնայ իմ պանդոկումս, մուշտակը երկու ամիս էլ կարող է ապրեցնել սրան, խորհում և ուրախանում էր իւր մէջ պանդոկապետը. համբերութեամբ սպասելով մուշտակը ձեռք բերելու երջանիկ օրին։

Այդ յուսովն էր, որ երկու օրը մի անգամ

պանդօկապետն իւր խոստմունքից դուրս՝ ներկում էր Շահէնի կօշիկները, որով համալսարան գնալը մի փոքր հեշտանում էր։

ԶԱ.

—Գիտե՞ս ինչ կայ, մի անգամ եկաւ Շահէնի մօտ իւր ընկերներից մինը, մեր լուսարարը մի շահաւէտ միջոց է գտել հաց աշխատելու և մենք պէտք է նրան օգնենք։

—Ի՞նչ։

—Մի ծխախոտի խանութ է վաճառւում, որ գնահատուած է 200 մանէթ, մենք այդ գումարը պիտի տանք և գնենք խանութը բարի տիկնոջ համար, նա մեզ կը վերադարձնի։

Շահէնը մի լիաբերան ծիծաղեց, վաղուց էր, որ այդպիսի կուշտ ու կուռ ծիծաղ չէր եկել նորա երեսը։

—Ի՞նչ ես դէմքդ ծամածռում, բարկացաւ ընկերը, մեռել ենք՝ պիտի տանք գումարը։

Բայց ո՞րտեղից։

—Հապա մենք որ քեզ խորհուրդ էինք տալիս ծանօթանալու ուսանողական առանին կեանքի հետ, ընչո՞ւ չէիր լսում։ Եթէ դու մեզանից դուրս չապրէիր, այսօր այդ հարցը չէիր տալ և ծաղրածանակ լինել մեր ընկերների առաջին։

—Ի՞նչ ես ասում, քեզ չեմ հասկանում, գրպանումս մանէթուկէս կայ, որով երկու շա-

բաթ էլ այս գաւառագիւղումը պիտի մնայի, առ քեզ տամ։

—Ո՛չ, փող եթէ հարկաւոր լինէր, քեզանից 75 կոպէկ կը հանէր, ուսանողը պէտք է մի շաբաթուան ապահովութիւն ունենայ, բայց քո մուշտակդ մինչև 15—20 մանէթ կարող է բերել։

—Ես չէի ցանկանայ մուշտակս ձեռքից թողնելու, ոչ թէ թանգագնութեան համար, այլ իբրև իմ հանգուցեալ բարերարի յիշատակ։

Տօ՛, խելքի պա՛րկ, ո՞վ է քեզ ասում ձեռքից թող. նախ՝ որ հիմա ամառն է, առանց այն էլ դու պէտք է տաս մուշտակագործին պահպանելու՝ եթէ չես ուզում ցեցից փչանայ, և դորա համար առ նուազն երկու մանէթ պէտք է վճարես, երկրորդ՝ որ մենք կը տանենք մուշտակագործի մօտ գրաւ կը դնենք, թէ իրանից փող կը վերցնենք և թէ կը ստիպենք պատասխանատուութիւնից գլուխն ազատ պահելու երկիւղից՝ լաւ խնամք տանի։

Եւ մեր ուսանողը չուզելով շատ խօսեցնել Շահէնին, մուշտակը վերցրեց մահճակալի վրայից, ուսին ձգեց և կամենում էր գնալ։

—Բայց 15 մանէթով ի՞նչ գլուխ կը գայ, հարցրեց Շահէնը։

—Քեզ ո՞վ ասաց, որ 200 մանէթը տասն և հնգով կը լրանայ. վեր կաց գնանք Թիւսիկեանցի սենեակը, տես, ո՛րքան բան ենք ժողովել. իմ երեք ձեռք փոխնորդից մի ձեռքն ենք մէջ

գրել, Գալստեանցի ժամացոյցը, Դադեանցի իրաւագիտութեան լեկցիաները, Տէր-Գրիգորեանցի հօր ուղարկած կողոպուտի վերարկուն, Բաբայեանցի տանից 50 մանէթ էր եկել երկու ամսուան ապրուստ, նրա համար թողել ենք միայն երկու շաբաթուան պաշար, մնացածը ձեռքից առել. պակասորդն էլ մի կողմից՝ որը փողով, որը գրաւ դնելու իրեղէններով մեր բոլոր ընկերներից ժողովում ենք. Սամուելեանցի տան տիրուհին էլ իւր երկու հեշտայեռներից մինն է գրաւ դնում և այդպիսով 200 մանէթը լրանում է։ Էս բանումը միայն տմարդ գտնուեցաւ Ս....եանցը, փող կենդանին 150 մանէթ չքաւոր ուսանողների անունով ժողոված փողն անազնուաբար կուլ տուեց՝ մենք ներեցինք. տարուան մեծ մասն էլ կամ մէկիս, կամ միւսիս մօտ է անցկացնում, որտեղ իմանում է թէ հեշտայեռ է դրուած՝ ձեռաց հոտով հասկանալով՝ տուն է ընկնում ու տզի նման կպչում, պոկ չի գալիս, մինչև փորը չի լցնում, իսկ այսօր նրա քսակումը մեր աղայքը տեսել են 50 մանէթ և ոչ մի կոպէկ չեն կարողացել վերցնելու. նախ՝ ասել է, թէ իրան համար են ուղարկել Ն....ից, բայց վերջը, երբ շատ նախատել են, խօսքը փոխել է, իբր թէ, չգիտեմ, ո՛ր գիւղի՝ թէ քաղաքի նոր բացուած ուսումնարանի համար ռուսերէն ձեռնարկներ ու ապագայում ուսանող աշակերտների համար կօկարդներ պիտի ուղարկէ։

Մերոնք էլ այդ ստախօս պարոնի ստոր բնաւորութիւնը վաղուց ճանաչելով՝ վճռեցին, որ այսուհետև մեր ամէնքի դուռը նրա համար փակ լինի և կտրուի նրա հետ ամենայն յարաբերութիւն։

—Ուրեմն քո ասելով մեր լուացարարը յանկարծ վաճառական է դառնալու, հարցրեց Ծահէնը։

—Այո՛, այսօր ես ինքս իմ ձեռքովը 200 մանէթ պէտք է տանեմ խանութատիրոջը տամ և մեր բարեկամ Վարվառայ Վասիլևնան վաղուան օրից խանութպան պիտի դառնայ։ Իսկ էգուց երեկոյ շնորհ բեր նորա մօտ թէյ խմելու. տիկին նոր խանութպանը խոստանում է առաջին օրուան տուն եկած փողը ծախսել՝ խանութը շնորհաւորելու համար։ Մնաս բարև՛, վաղն երեկոյ անպատճառ գաս ինձ մօտ, միասին գնանք։

Ուսանողը մուշտակն ուսին դուրս գնաց, պանդոկապետը աչքերը հետը չռեցան։

ԺԲ.

—Պարո՛ն, ասաց միւս օրը խոժոռուած դէմքով պանդոկապետը Ծահէնին, դուք պէտք է յիսուն կոպէկ կօշիկ սրբելու վարձ վճարէք։

—Բայց ես այդպիսի մի պայման ձեզ հետ չեմ արել։

—Ես էլ կօշկակար, կամ կօշիկ ներկող չեմ, ամէն մի քաղցած ու տկլորի խնամատար չեմ։

—Ես ձեզ չէի խնդրում սրբելու, ինքդ ցանկացար անվարձ այդ քաղաքավարութիւնն անել։

—Շատ խօսել չի հարկաւոր, կամ տուէք 50 կոպէկն և մի ամսուան վարձն էլ կանխիկ և կամ ձեզ համար բնակարան գտէք։

—Ինչո՞վ կորցրի ձեզ մօտ ունեցած վարկս ու յարգանքս։

—Մուշտակը ձեռքից թողնելով։

Տահէնը մատը կծեց։

—Շատ լա՛ւ, ասաց նա, տուեցէք 50 կոպէկը, վաղը կամ միւս օրը կանխիկ ամսականս կը վճարեմ, կամ դուրս կ'երթամ։

ԺԳ.

Վարվառա Վասիլևնայի նոր խանութն առաջին իսկ օրը մեծ առևտուր ունէր. Նորա յաճախորդներն այսօր անընդհատ մտնում ելնում են. Դրացիքը ապշած մնացել են, շատ նեղսիրտներ էլ սկսում են նախանձել և յուսահատիլ, եթէ այսպէս շարունակուելու լինի, իրանք ճանճեր պիտի համարեն. մի օրուան մէջ այսպիսի փոփոխութի՞ւն, երբէք այս խանութն այսքան ելումուտ անողներ չի ունեցել։ Բայց եթէ քըննելու լինինք նոր խանութպանի դրամարկղը, կը գտնենք, որ եկամտի մէջ մեծ զանազանութիւն

չկայ, իսկ խանութից արդարև բաւականին ծըխախոտ վաճառուել է։

—Ի՞նչ կը նշանակէ այս, շուարում ես ընթերցո՛ղ։

—Կը նշանակէ, որ Վառվառա Վասիլևնայի այցելուները բոլորն ուսանողներ են, և այդ պարոնները այսուհետև այս խանութից պիտի գնեն իրեանց ծխախոտը և այն՝ ապառիկ։

Խանութպանուհին չէ երկմտում, նա շատ ուրախ է իր ազնիւ յաճախորդներովը, նա գիտէ, որ ուսանողի քսակը փող մտնելուն պէս, առաջինն իր համար պիտի բացուի։

Շատ ուսանողներ մինչև անգամ իրենք չեն գալիս ծխախոտի, կամ ընկերներից մէկը հեռաւոր ընկերի մօտ գնալիս՝ մտնում վերցնում է, կամ նոյն ինքը Վարվառա Վասիլևնան հաշուէմատենից իմանալով, որ այս ինչ ուսանողի ծխախոտը վերջանալու մօտ է, իր սպասուհու ձեռքով ուղարկում է։

Այսօր առաջին երեկոն է, 10—15 ուսանող հաւաքուել են խանութի միջի սենեակը. Նոցանից և ոչ մինը չի պահում արտաքին քաղաքավարական ձևերը, մինը բաճկոնի կոճակներն է արձակել, միւսը թիկնոցն է հանել, երրորդը փողպատն է բացել և այլն։ Նրանցից որը նըստած է գահոյքին, որը պարզ յատակի վերայ տակն է դրել իր վերարկուն ու կքած՝ ձեռքը ծնօտին դէմ տուած՝ լուռ լսում մի ընկերի

փիլիսոփայական դատողութիւնը, մէկը գլուխը դրել է ընկերի ծնկանն ու տարածուած՝ մրմռում է ինչ և իցէ արիա, մի չորրորդը կռները մինչև արմունկները քշտած՝ թէյի բաժակներն է լուանում. մի ոմն հեչտայեռն է փչում և այլն. Իսկ այս ամէնի կառավարող տիրուհին բարի Վարվառա Վասիլևնան հոգածու տնտեսի նման անկիւնէ անկիւն է ընկել, ափսէներ է մօտ բերում, կամ պատասխանում է մի, կամ միւս ուսանողի սրախօսութեանը կարճ լակոնական նախադասութիւններով և ուսերին խփելով:

Մի խօսքով ներկայումս այստեղ թագաւորում է գեղջկական ընտանեկան պարզութիւնը։

—Գրաւ կը դնեմ, որ Տահէնը չի գալ, ասում է մինը, նա Վարվառա Վասիլևնայի աչքերի կրակից վախում է։

—Առէք վերջին քան կոպէկս, ուղարկեցէք գարեջրի, եթէ չգայ, վիճում է երկրորդը. ես տեսայ, որ մի օր Վարվառա Վասիլևնան և Տահէնը մէջկատակութիւն էին անում։

—Հոգուդ մեղք ես անում; մեր ճգնաւորը կանանցից փախչում է, ծիծաղելով մօտ եկաւ Վարվառան, ես նորան առաջարկում էի չապիկըն ուղարկել լուանալու և մատով ցոյց էի տալիս իւր պատռ օձիքը։

Օ՜, օ՜, օ՜, ուրախ խնդում բարձրացրին բոլորեքեան, ուրեմն այդպէ՞ս, շնորհաւորենք,

Վարվառա՛ Վասիլևնա՛, մեր ճգնաւորին մարդ ես շինել։

Այս միջոցին դուռը բացուեց և Տահէնը ներս եկաւ։

—Օ՜, օ՜, օ՜, նորից գոռուն գոչիւնը դրին ամէնքը, բարի՛, դարմանի տակի ջո՛ւր, գաղանիքներդ բացուեցին, Վարվառա Վասիլևնան քո վերայ քաղցր աչք է ձգել, շնորհաւորե՛նք, շնորհաւորե՛նք։

Տահէնը շփոթուեց, նա ոչինչ չպատասխանեց, մօտեցաւ սեղմեց տան տիկնոջ ձեռքը, յաջողութիւն ցանկալով նոր գործին, միւսներին էլ մի սառն ընդհանուր ողջոյն տուեց ու նստաւ ծխախոտի արկղի վերայ։

Զուր սուտ ճգնաւորութիւն մի՛ անիլ, մենք քաջ գիտէինք, որ դու պիտի գաս, այսուհետև քո օրդ սև է առանց Վարվառա Վասիլևնայի։

Տահէնը լուռ և մտախոհ էր։

Ընթերցողը կը կարծի, թէ մեր Վարվառա Վասիլևան մի փչացած, անբարոյական, փողոցային կին է, որ ընկած է մի խումբ ուսանողների մէջ։ Ընդհակառակն՝ մենք կ'ասենք, որ նա ամուսնական դիմակի տակ չքեղ պալատներում ծածկուածների շատերից աւելի համեստ և բարեբարոյ է։

Մենք չենք ժխտում, թէ այնպիսին լինե կին մարդ, միշտ կեանք անց կացնող երիտասարդ խմբի հետ, հակամէտ կը լինէր դէպի

մարդկային թուլութիւնը, սակայն բոլոր ուսանողները կըվկայեն, թէ նա և իւր նմանները շատ ազնիւ են վերաբերութեամբ ուսանողական չքաւոր խմբին և հաւատարիմ դէպի նրանցից մէկը միայն։

Վարվառա Վասիլևնաները հասարակական աների աղջիկներ չեն, նրանք և բարձր դասի ամուսնադրուժ խաբեբաներիցն էլ չեն, նրանք բոլոր ուսանողների ամենամօտիկ սրտացաւն և նրանցից մէկնումէկի սերտ մտերիմներն են։ Շատ սակաւ ուսանողներ ազատ են այդպիսի Վարվառաներից, բայց և իրենց հեռի պահող ազնուամիտներն էլ չեն մերժում, չեն ամաչում՝ իւրեանց ընկերի բարեկամուհու ձեռքը սեղմելու, անմեղ կատակներ անելու նորա հետ և երբև իւրեանց հարազատ քրոջ՝ վեր ու նիստ անելու այդ կարեկից կնոջ հետ։

Գնում է ուսանողը իւր հայրենիքն ամարանոց՝ ընտանեացը տեսութիւն. նա ամենայն վըստահութեամբ յանձնում է իւր ամէն ինչը Վարվառաներին և աներկմիտ ճանապարհ ընկնում. դեռ եթէ իւր ծախքը պակաս է, նոցա ունեցածիցն է լրացնում։

Աւարտում է ուսանողն իւր ուսումը, վերադառնում է հայրենիք, թողնում է այն աշխարհը, որ իրեն բարձրացրել է շատ իւր նմաններից, իւրեան բուն մարդկային կոչում է տուել, հրաժարւում է իւր նոր ճարած ընկերներից

և սրտացաւ բարեկամներից. երեսի վերայ է թողնում այն մի հատիկ արարածին, որ գլուխը պատրաստ է եղել զոհելու ամէն ժամանակ իւր համար, մի տխուր բաժանմունք, մի սրտաշարժ հրաժարական տեղի է ունենում հեռացողի, իւր ընկերների և Վարվառայի մէջ. նա առանց լացի, առանց անկեղծ գրկախառնութեան չի կարողանում վերջին մնաս բարեն ասել։

—Առ, իմ սիրելի՛ս, ահա սև օրի համար ժողոված կոպէկներս, ես գիտեմ՝, որ քո ծնողաց ուղարկածը քեզ բաւական չէ ոտ ու ձեռք նորոգելու և տեղ հասնելու համար. Վնաս չունի, ես կարող եմ որպէս և իցէ կառավարուիլ, մինչև դու ծառայութիւն կը գտնես, պաշտօն կը վարես, ռոճիկ կը ստանաս և իմ փողերս կ'ուղարկես։

Վարվառան բաց է անում իւր քսակը սիրելու առաջին և թափում նրա դէմ միջի եղած չեղածը։

—Ոչ, հոգեա՛կս, ձեռքն է՛լ չի մօտ բերում ուսանողը, ես իրաւունք չունիմ քեզ հացից զըրկելու, շատ կարելի է շուտով չը կարողացայ պաշտօն ճարելու, իսկ դու էլ միջոց չունեցար աշխատելու։ Ես կարող եմ հին հանդերձով էլ հասնել, և մի քանի ժամանակ էլ չքաւոր ապրել։

—Սխալ ես, այդ քո ասպարէզդ կը փակէ և դու յաւիտեան թշուառ կը լինիս. իմ միճա-

կըս որանից բարձրանալու չէ, իսկ քեզ սպասում է փայլուն ապագայ։

Վարվառան չի պոկւում սիրելու գրկից, մինչև որ վերջինս չի զիջանում և վերցնում փողերը։

Իսկ օրինակ կայ, որ չորս հինգ տարով ուսանողը միջոց չի ունեցել վերադարձնելու այդ դառն քրտինքով վաստակածը։ Ի մեծ ցաւ ուսանողական անաղարտ կոչմանը՝ պիտի խոստովանիլ, թէ կան և այնպիսի բացառութիւններ, որոնք անխղճօրէն են վարւում այս ազնուամտութեան դէմ, մինչև այսօր էլ չեն ուղարկել խեղճ կանանց փողը, սակայն նոքա, որոնք կենդանի են դեռ, անտրտունջ օրհնում են այս ապերախտներին, իսկ մեռնողները նոյնպէս օրհնելով գերեզման մտան,

—Ազա՛տ ես, իմ մտերի՛մս, ասում է վերջապէս ուսանողը վճռական բառն իր սիրուհուն, ազա՛տ ես այսուհետև մխիթարիչ լինել նոր ուսանող եկած մի անփորձի, բայց մի՛ մոռանար, որ քո քաղցր յիշատակն անմեռ պիտի մնայ ամբողջ կեանքումս. ընտանիքի հայր և ամուսին լինելս իրաւունք չի տալիս սրտիս մի անկիւնումը մի դատարկ տեղ չպահելու իմ ուսանողական դառնութիւններն ամոքող բարի տիկնոջ համար։

Եւ որպէս զի յաւիտեան չըմոռացուին ուսանողութեան երջանիկ օրերը, ուսանողը թողնում է ընկերուհու մօտ իւր աղքատ սեպհա-

կանութիւնից որ և է իր, որը ընդհանրապէս լինում է կամ սաւան, կամ հնոտի վերմակ և կամ իւր ուսանողական դասական առարկաներից մի ինչ, իսկ նրանից ստանում է փոխարէնը մի կոճակ, մի թաշկինակ և այլն։

—Գնա՛, իմ ազնի՛ւս, պատասխանում է այնուհետև հեծկլտանքի մէջ խեղդուելով հաւատարիմ Վարվառան, Պելագիան, կամ Ագրաֆինեան, ցանկանում եմ քեզ երջանիկ և քաղցր ամուսին և ընտանեկան բարեբաղդ վիճակ։

Այս խօսքերը բերանին առած՝ ուսանողի ընկերակիցները խլում են կիսաշունչ կնոջը մեր հեռացողի գրկից և բարի ճանապարհ մաղթելով՝ թաշկինակն օդի մէջ շարժելով՝ իւրեանց սրտանց օրհնութիւնը նրան ուղեկից դնում։

Ուսանողներն ամենայն ջանքով աշխատում են հետզհետէ բուժել խեղճ Վարվառաների սըրտի խոցերը։

ԺԴ.

—Կատակ ենք անում, ճգնաւոր եղբա՛յր, ասացին ուսանողներից մի քանիսը Ծահէնին, երբ նա չըկարողանալով տանել իւր ընկերաց երգիծաբանութիւնները, մի քանի րոպէ լուռ մնալուց յետոյ՝ աչքերն արտասունքով լցրեց, կատակ ենք անում, մենք գիտենք, որ դու բացառութիւն ես կազմում, դուր քեզ մի՛ նեղացնիլ, եկել ենք

այստեղ թափ տալու մեղանից հոգսերն ու մըտածմունքները՝ և, ի հարկէ, լըջմտօրէն դատողութիւն չպիտի անէինք։

—Բայց պարոններ՛...

Տաշէնը չը կարողացաւ շարունակել, նա ամաչում էր իր դրութիւնը յայտնելու իր ընկերներին և կամ չէր ուզում ուրախութիւնը խանգարելու։

—Մտքումդ մի ցաւ ունիս, որ չես կարողանում յայտնել, չըլինի՞ պանդոկապետը կօշտ ու կոպիտ է վարուել հետդ, ես տեսայ, որ մուշտակը վերցնելուցս յետոյ նա սաստիկ թթուդէմք ձգեց վերադ, ասաց երեկուան մուշտակատար ուսանողը։

—Ճի՛շդ այդպէս, ես վաղն առաւօտեան կանխիկ պիտի վճարեմ ամսականս, կամ թողնեմ կացարանս, եթէ չեմ ուզում բռնութեամբ արտաքսուիլ։

—Եւ դու այդ յիմար պատճառի համար վրդովուա՞ծ ես. տես, թէ որքա՛ն կորուստ ես ունեցել, որ սկիզբից մեր շրջանի մէջ չես խառնուել։

—Իզմիրեա՛նց, ասաց Վարվառա Վասիլեւնան իր սրտակցին, թող կը տա՞ս որ պ. Տաշէնին ինձ մօտ այս սենեկումը տեղ տամ; մինչև իր համար բնակարան գտնելը։

—Ամօ՞թ քեզ, որ ինձ դեռ լաւ չես ճա-

նաչել, դու կարծում ես, թէ ես կարո՞ղ եմ երկմտել քո հաւատարութեան մասին։

—Զուր մի՛ կռուիք, մէջ մտաւ Կաճկաճեանցը՝ ամենակրակոտ ուսանողներից մինը, մենք երկու հոգի ենք, երրորդին էլ տեղ կը լինի. այստեղից ուղղակի կերթանք կը վերցնենք Տաշէնի իրեղէններն ու կը գնանք մեզ մօտ։

—Հա՛, հա՛, Կաճկաճի մօ՛տ, Կաճկաճի մօ՛տ, բրաւօ՛, բրաւօ՛, ձայն ձայնի տուին ամէնքը։

Մեր անհոգ տատրակներն այս երեկոյ հիանալի ժամանակ անց կացրին Վարվառա Վասիլևնայի մօտ, բարեսիրտ տիրուհին իւր քաղցր ժըպիտովը ու սիրաշախաղ ակնարկութիւններովը ամէնքի սիրտն էլ շահում էր։

Ի՛նչ կերան, ի՛նչ խմեցին, իրենց անուշ, մենք միայն լսենք մի երգը, որ ուսանողներից մէկը շարադրել է։

Ուսանողի դրպանում
Հանապազ մկներ խաղում,
Մինչի շլինքն է պարտքում,
Կեցցէ՛, կեցցէ՛, կեցցէ՛ շատ,
Կեցցէ՛ ուսանողութիւն։

Համալսարան գնում է
Դասին քունը տանում է,
Ուսուցիչը պրծնում է,
Ուսանողը զարթնում է։ Կեցցէ՛ և այլն։

Գիշերը բաւականին անցել էր, որ ծխախոտի խանութը դատարկուեց։

ԺԵ.

Շահէնը համալսարանից չէր յետ մնում, միշտ շարունակում էր. Նա բնակարանի կողմից մի փոքր ապահոված էր, որպէս և ինքը, սխմուած ապրում էին երեք ընկերով, բայց ուտելիքի մասին մեծ նեղութիւն էր կրում. մի քանի օր նա ծանրութիւն դարձաւ իւր ընկերների վզին, բայց վերջը մտածեց, որ իրաւունք չունի ուրիշի գրպանից օրական ապրուստը դուրս կորզելու, ուրիշի հացն յափշտակել՝ իրեն սնուցանելու համար:

Նա սովորեց ծախել իւր նոր կօշիկներն և փոխարէնը հները գնել, աւելորդովը մի երեք չորս օր ապրուստ հայթայթելու, կամաց կամաց փոխնորդներից էլ երկ՛ երկու հատ մնաց, ամառուան վերարկուն էլ նոյն ճանապարհաւ գընաց, իւր մաքուր հանդերձն էլ փոխուեցաւ հըների՝ հնավաճառից մի քանի կոպէկներ վերադիր ստանալու յուսով: Իսկ այդ գեղեցիկ հագուստի փոխարէն Տէր-Գրիգորեանցի մեր յիշած մեռելատնի մահուտի գիշերահանդերձը ձևուեցաւ, Շահէնի և առաջինի համար մի մի անդրավարտիկ և մի մի բաճկոնի փոխարկուեց: Երկու գիշեր շարունակ յիշեալ ընկերները խելք խելքի տուին, իւրեանց տան տիրուհիների օգնութեամբը ասեղ բռնեցին և դերձիկութիւն արին: Երրորդ առաւօտը Շահէնն ու Տէր-Գրի-

գորեանցը՝ վերջինիս քահանայ հօր խնամատարութեան շնորհիւ՝ միատեսակ անդրավարտիկներով լեկցիա էին լսում:

Բայց և այնպէս մի քանի օրից մեր Շահէնը մնաց բոլորովին անհաց:

—Վնաս չունի, քանի կարելի է, անօթի մնանք, մինչև որ բնութիւնն իրենը պահանջէ և չգտնելով պատժէ ինչպէս գիտէ, վճռեց Շահէնն ու երկու օր անսուաղ մնաց: Բարեբաղդաբար նա ծխախոտ չէր գործ դնում, ապա թէ ոչ այդ սովը ամէն բանից զգալի պիտի լինէր:

Փա՛ռք և պատի՛ւ Վարվառա Վասիլևնային, էլ ուսանողներն ազատ են այսուհետև այդ մեծ կարիքից:

—Շահէ՛ն, Շահէ՛ն, տուն ընկաւ ընկերներից մէկը, քեզ մի պարսիկ, կամ պարսկաստանցի հարցնում է:

Շահէնը սարսափեց: Սալմաստից հեռանալուց յետոյ՝ նա պարսկաստանցիք տեսել էր միայն Տէր-Ղուկասեանց չինութեան մէջ:

—Ասում է որ շատ կարևոր գործ ունի հետդ:

—Լաւ չի՞ լինի, որ ներս կանչենք:

—Լա՛ւ:

—Ներս շնորհ բերէք, դուրս նայեց Շահէնըն և անծանօթն երևեցաւ:

—Դո՞ւք էք պարսկահպատակ Սալմաստեցի Շահէնը, դարձաւ անծանօթը դէպի մեր հերոսը:

—Ի՞նչ կը հրամայէք:

—Ձեզ մեր մեծափառ հիւպատոսը խնդրում է, ինձ հրամայած է կառքով տանելու ձեզ։

Ճահէնը խորհրդական հայեացք ձգեց ընկերների երեսին, նրանք էլ իրենց կողմից նոյն ակնարկութեամբ պատասխանեցին և Ճահէնը կառք նստաւ պատգամաւորի հետ։

Ուսանողները միմեանց հասկացան։ Ճահէնը խնդրեց ընկերների օգնութիւնը՝ նեղն ընկած ժամանակը, և նրանք իւրեանց բազկի վերայ վստահ լինելով, խրախուսեցին աներկիւղ գնալու կոչնակի հետ, խոստանալով հարկաւորութիւն պատահածին պէս՝ կեանքները չխնայելու։

ԾԶ.

Թէ ինչպէ՞ս եղաւ, ո՞ւմ հրամանաւ ր կամ միջնորդութիւնովը, Ճահէնը չկարողացաւ հասկանալ և մեկնել իւր ընկերներին, բայց հետեւանքն այն եղաւ, որ նոյն երեկոյեան Ճահէնը բոլորովին տեղափոխուեց պարսից հիւպատոսի տունը։ Բնակարան, ուտելիք, լուացք և ամէն ինչ նրան առաջարկուեց։

Ճահէնն այժմ հիւպատոսարանի ուսանող է։

ԾԷ.

Սկզբի ուրախութիւնը երկարատև չեղաւ, Ճահէնի նոր կեանքն առանց փոթորիկների չանց-

ցաւ։ Մտնենք նորա հետ պարսից կառավարութեան ներկայացուցչի պալատն և տեսնենք։

Ճահէնին տուին մի փոքրիկ սենեակ, ուր հազիւ մի մահճակալի տեղ էր։ Այդ բաժանմունք էր իւր նման մի քանի մանր վանդակների, մի մեծ սենեկից տախտակներով կտրատած և շինուած ծառաների համար։

Պիտի ասել, որ սենեակների բաժանմունքը առաստաղին չէր հասնում. բոլոր այդ ծակուծուկերը լուսաւորում էր մի լապտեր՝ միջակէտումը վառած։

Ճահէնը նախ կարծեց, թէ իրան՝ իբրև ուսանողի, գոնէ գիշերուան պարապելու համար ճրագալոյս կը տան, բայց շատ ցաւեց, որ ուսանողական պանդոկի լապտերի եղբայրն է այստեղ լուսաւորողը։

Այդքանով էլ բաւական կը լինէր նա, եթէ մի տեսակ հնարք գտնէր պարապելու։ Այստեղ և այդ միակ մխիթարութիւնից զրկուեց։ Հիւպատոսարանի ստորին պաշտօնեաները, ղալյոն լցնողները, խոհարարի օգնականները, որոնք Ճահէնի անմիջական դրացիներն էին, աւարտելով իւրեանց ցերեկուան աշխատանքը, այնպիսի աղաղակներ ու շառաչիւններ էին բարձրացնում, որ անհնարին էր դաս սովորելու։ Աւելացրու դրա վերայ և այն հանգամանքը, որ այդ որջաբնակներն ամենատեսակ ապականութիւնով շաղախուած էին, մինչև լոյս արբենում էին շռայ-

լաքար, ուտում ու երգում էին իւրեանց սե-ղանների հետ, ապա բաղդաւոր էր Շահէնն իւր ընկերների մօտ մերկ ու անօթի։

Ուտելիքի կողմից էլ երջանիկ չդառնուեց Շահէնը։

Թէյի չէր կարող սպասել առաւօտները, ըստ որում հեչտայեաը սովորաբար 8—9 ժամին էին դնում, երբ համալսարանում բժշկական դասերն սկսուել էին։ Հիւպատոսը նախաճաշիկ էր անում 12 ժամին, երբ նոյնպէս լեկցիաներ էին լսում, իսկ ճաշում էր երեկոյեան եօթը ժամին։

Ուրեմն Շահէնը ստիպուած էր ամբողջ ցե-րեկըն անօթի փորով անցկացնելու։ Դրանով էլ գոհ կը մնար նա, եթէ եօթը ժամին գոնէ գըտ-նէր ուտելու բան։ Հիւպատոսն իբրև պարսիկ խան, երբէք չէր կարող երևակայել անգամ, թէ մի չնչին հայի կտոր, պարսկահպատակ, ինչ կու-զէր թող նա լինէր՝ ուսանող թէ մշակ՝ վստա-հանար մտքովն էլ անցկացնելու իւր հետ սե-ղանակից լինելու։ Ինչպէս առհասարակ սովո-րութիւն է, թող Շահէնը հիւպատոսի սեղանից յետ տարած աւելցուկներից և փշրանքներից, ինչպէս կուզի, ձեռք բերի և յագենայ. իսկ եթէ այդքան շնորհք էլ չունի, չի կարող ծառաների հետ մրցել այդ ճարպիկութեան մէջ, թող սո-ված փորով մինչև միւս երեկոյ դիմանայ։ Ահա

ի՞նչ էր մնում Շահէնին անելու իւր գոյութիւ-նը պահպանելու համար։

Հիւպատոսի կարծիքով ուսանողը մի և նոյն ռամիկ տգէտն է, քանի որ փող չունի և մուրաց-կանութիւնով է ապրում։ Վերջն իմացուեց, որ հիւպատոսը Թիֆլիսից գրած իւր մի բարեկամի նամակն է յարգել, հանդուցեալ Տէր-Ղուկաս-եանցի մահուան անկողնում արած միջնորդու-թեան և խնդրանաց համաձայն։

Թէ ո՞րքան հասկացողութիւն ունէր մի տէ-րութեան քաղաքականութիւնը միւս տէրու-թեան մօտ պաշտպանող հիւպատոսը, մենք կա-րող ենք եզրակացնել հետևեալ իրողութիւննե-րից։

—Այս ի՞նչ թերթ է, որ կարդում ես, հարցնում է մի անգամ հիւպատոսը Շահէնին զարմացմամբ, այս ի՞նչ լայն ու մեծ է։

—Այս լրագիր է։

—Ի՞նչ կայ դրա մէջը գրուած։

—Ամէն օրուան անցքերը։

—Մի՞թէ բոլորը դու հասկանում ես ինչ որ կարդում ես։

—Այո՛։

Աջայի՜բ (զարմա՜նք.) մեր մօլլաները «Գիւ-լիստանի» միջի բոլոր բառերը տարիներով չեն հասկանում. իսկ եթէ այդ ահագին թերթն ա-մէն օր դուրս է գալիս, ինչպէս պատմում ես, և դու հասկանում ես, ուրեմն դու շատ երևե-

ըմ փիլիսոփայ ես. էլ ի՞նչ ես սովորում։

Մի երկրորդ անգամ հիւպատոսը հետևեալ հարցը տուեց Շահէնին։

Քո սովորած բժշկութիւնդ ի՞նչ բանի վերայ է հիմնուած, ծաղիկների ու դեղօրայքի՞, թէ գրբացութեան և Սօղոմոնի վեցհաղարեակի։

—Ծաղիկների ու դեղօրայքի, պատասխանեց Շահէնը, գիտելով, որ ուրիշ բառերով նորա գլուխը ոչինչ չի կարող մտցնել։

—Ափսո՜ս, շատ ցաւեց հիւպատոսը, գրբացութիւնով դու աւելի օգտակար կը լինէիր մեր աշխարհքին. մի օր մեր մեծ մուշտայիդն ինձ ասաց, որ Սօղոմոնին լաւ գիտեցողը մեռելը կարող է կենդանացնել։

ԺԸ.

Ստրկական խոնարհութեան սիստեմը հիւպատոսն իւր հետ բերել էր իւր հայրենիքից, ամէն մի ստորադրեալ կրաւորապէս պէտք է խոնարհէր ոչ միայն իրեն՝ ընդհանուր հրամանատարին, այլ և հիւպատոսարանումը մի կտոր բարձր պաշտօն ունեցողին։ Թարգման, քարտուղար կամ որևէ փոքր ի շատէ երեսատեղ ունեցող մէկը լիագօր իրաւունքի տէր էր։

Հիւպատոսի սպասաւորներից մինը կար, որից ամէնքը երկիւղ էին կրում և սրտաքուստ

շատ մեծ հնազանդութիւն էին ցոյց տալիս, իսկ ներքուստ խիստ ատում էին։ Թարգմանն ու քարտուղարն էլ ակնածում էին այդ սպասաւորից։ Ինքը հիւպատոսը շատ անգամ բարձր ձայնով և հրամայաբար չէր վստահանում այն ստահակի հետ խօսիլ՝ եթէ մի երրորդ օտար անձնաւորութիւն ներկայ լինէր. մեծաւորն՝ իւր պատուիցն ամաչում էր. մի անգամ չէր պատահել, որ յանդուգն ծառան նորանից բարձր գոչէր։

Այդ անպատկառ պատանին գլխաւոր ղայլոն տուողի պաշտօն ունէր հիւպատոսարանումը, թէև ոչ ոք նրան իւր պաշտօնը կատարելը չէր տեսել։ Նրա նիստ ու կացը, նրա իւր իշխանի մօտ ել ու մուտը պարսաւանքի արժանի էր, բայց ոչ ոք չէր կարողանում փաղաքշանքից աւելի ուրիշ խօսք ասել նրան։ Ամէնքը նրանից զզուել էին, բայց էլի ստիպուած էին կատարել նրա անտեղի պահանջները։

Սկզբներումը Շահէնն ուշք է՛լ չէր դարձնում աղայ Զամանի վերայ (այսպէս էր աղայի կոչումը), բայց սակաւ առ սակաւ նորա վեհութեան երկրպագութիւն տալու պարտաւորութիւնն ու կարևորութիւնն զգաց։ Շահէնն անտեղեակ չէր Պարսկաստանի ծէսերին. նա գիտելով աղայի հզօր զօրութիւնը, որ կարող էր մի րոպէի մէջ իրեն և այդ՝ իբրև ողորմութիւն տուած փշրանքներիցն էլ զրկել, վիզ ծկեց, գոնէ առ երեսս, անսանձ Զամանին։

Նա կարծեց, թէ բաւական էր մի արտաքին չինծու ժպիտ և խոնարհ ողջոյնը իր և աղայ Զամանի բարեկամութեան համար, բայց շատ սխալուեց։

Զամանը երևի կամեցաւ իր գերազանցութիւնը ցոյց տալ բոլոր ստորագրելոց մէջ, այդ պատճառաւ էլ մտքումը դրեց ամենամերձ յարաբերութիւն կապելու «Թագաւորական մեծ ուսումնարանումը կարդացող պարսկաստանցի աշակերտի հետ»։ Որքան էլ անարժան տեղ և անվայել պատիւ էր նշանակել հիւպատոսը Տահէնին, այնու ամենայնիւ ամէնքը նրա վսեմութիւնը և բարձր նշանակութիւնը ճանաչում էին։ Ուսումը տգէտ ռամկի մէջն էլ իր փայլն երևցնում է։

Եթէ Տահէնն իբրև համալսարանի ուսանող, կամ ըստ նոցա ասութեան՝ «Թագաւորական ուսումնարանի աշակերտ» կարող էր քարտուղարի և թարգմանի հետ ինչպէս հաւասար վարուել, (վերջիններս գոլով որքա՛ն և իցէ քաղաքակրթուած՝ յարգում էին Տահէնին) ընչի՞ ուրեմն աղայ Զամանն էլ Տահէնի հետ բարեկամ չլինի, նա ինքը մի՞թէ այդ երկու մարդկցը պակաս է։

Ահա այս գոռոզ իրաւունքներովը Զամանը կամեցաւ Տահէնի հետ սերտ բարեկամ լինել։

Բայց գիտէ՞ք ընչումն էր կայանում նորա բարեկամութիւնը։ Նա պահանջում էր, որ Տահէնը ամբողջ գիշերներն իւր հետ անցկացնի ար-

բենալով, անպարկեշտ կանանց հետ ուրախանալով ու երգելով։

Արի ու էշը ցեխից հանի՛ր, ուսանողական անմեղ զբօսանքներից փախչող ճգնաւորը ի՞նչ որոգայթի մէջ է ընկել։

Ի՞նչ երդումներ, ի՞նչ խնդիրներ, ի՞նչ բարեկամական ուխտեր չի կապում մեր աղայ Զամանը Տահէնի հետ, միայն թէ սա համաձայնէր գոնէ քաղցրաժպիտ երևելու, պագշոտ լեզու գործ դնելու իւր մշտական հիւր խանումների հետ խօսելուս։

—Թէ ինձ սիրո՞ւմ ես, թէ քո Զաման աղայի գլուխը քո համար թանգ ամի՞, թէ հարազատ եղբա՞յր ես…

—Բայց, աղայ Զամա՛ն, գլուխս ուզիր ինձանից պատրաստ եմ տալ, իսկ այդպիսի ընկերութիւններից ինձ հեռու պահիր. ես ժամանակ չունիմ երկար ժամերով նստելու, ե՛ս վաղուան համար դասեր պիտի գրեմ, ես կարող եմ արտաքսուիլ և այլն և այլն։

—Դու ամենևին մի՛ հոգար, ես խանին կը խնդրեմ, մարդ կուղարկի քո վարժապետներին կը հրամայի, որ չհամարձակեն քեզ պատժել. խանի հրամանը ոչ ոք չի կարող կոտրել, ինքը նախարարն է՛լ չի համարձակիլ մեր խանին ասել աչքիդ վերևն յօնք կայ, Ռուսաստանը հողի հետ կը հաւասարացնի։

—Այդ ամէնը ճշմարիտ է, ճարահատեալ հաստատում էր Տահէնը, դեռ հետն էլ աւելաց-

նում. ես գիտեմ, որ մեր ողորմած Շահի պէս քաջ Թագաւոր չկայ. բայց իմ վարժապետներս բոլորն Ինգլիզ ու Նեմսա են. Նրանց հոգը չէ, թէ խեղճ ռուսները ինձ պէս մի ճանճ ու մժեղի պատճառաւ կը զրկուին իւրեանց աշխարհքից. Բաւական է, որ մի երկու անգամ դասս չիմացայ, կռնիցս կը բռնեն, գլխիս տալով դուրս կը ձգեն:

Ի՛նչ կ'ուզես՝ ասա, աղայ Զամանն իւրն է պնդում: Մի օր ուղղակի գնաց հիւպատոսին գանգատուեց: Նոյն րոպէին քարտուղարն եկաւ և խանի կողմից սպառնացաւ Շահէնին, որ եթէ նա միւս անգամ կը յանդգնի աղայ Զամանին վշտացնել, թող իմացած լինի, որ ոչ միայն առանց հացի կը մնայ, այլ և շղթայակապ Պարսկաստան կը տարուի և սահմանագլխին ցցի վերայ կը տնկուի:

Այս էր ահա Շահէնի դրութիւնը, այսպիսի մի տուն էր ընկել. ի՞նչ անէր, միակ հնարը մնացել էր կրկին նոյն աղայ Զամանի սրտովը գնալը:

— Շա՛տ բարի, խղճայ հաճեցաւ աղայ Զամանը, ասում ես, որ դու ուխտել ես կեանքիդ մէջ կանացից հեռու մնալու, վնաս չունի, ուխտդ կատարի՛, բայց մի՞թէ կը խնայես այս երեկոյ ինձ հետ հիւր գնալու իմ մի բարեկամի տունը. կ'երթանք, կը նստինք, փոքր ժամանակ կ'անցկացնենք ու կը դառնանք:

— Թէպէտև վաղուան համար դժուար դա-

սեր ունիմ, բայց ի պատիւ քո՛ աչքիս վերայ:

— Հիմա իմ եղբայրն ու սիրելին ես, գրկեց Զաման աղէն Շահէնին և ջերմ համբոյր տուեց:

ԺԹ.

Առաջին անգամը ոչինչ չըհասկացաւ Շահէնը մեր աղայ Զամանի բարեկամի տունը մտնելուս. Նրանց դիմաւորեց, ինչպէս ծանօթացրեց Զամանը, տանտիկինն իւր երկու աղջիկներով, որոնք շատ յարգանքով ընկալան պատուական հիւրերին:

Փոքր առ փոքր տանտիկնոջ աղջիկները շատացան, նրանք դարձան մինչև 8—9 հոգի, ամէնքն էլ շքեղապէս պճնուած շղարշեայ ուսաբաց և լանջամերկ հագուստով:

Շահէնի աչքից յանկարծ աներևութացաւ աղայ Զամանը տանտիկնոջ հետ, իսկ հիւրասէր աղջիկներն իւրեանց նոր ծանօթին աւելի պատուասիրելու համար՝ շուրջ բոլորեցին և ամենատեսակ հաճոյքներով ու մեծարանքներով կամեցան զուարճացնել:

Շահէնի դրութիւնը շատ կրիտիկական էր, նա այժմ միայն հասկացաւ, թէ ու՞ր է ընկել, թէ ի՞նչպիսի թակարդ է լարել իրեն համար աղայ Զամանը. նա փորձանաց տանն էր:

Շատ դժուար է անսովոր մարդուն այսպիսի միջոցումը չենթարկուիլ գայթակղութեան,

կամ չչխոլթուխլ․ քրտինքը մեր ճգնաւորի ճակատից առու է եղել իջնում, մարմինը կրակի նման տաքացել է, բերանը չի բացւում մի խօսք ասելու։

—Ա՛խ, ներողութի՛ւն, ասաց Շահէնն ու վեր թռաւ, նա մի հնարքով իրան փողոց ձգեց։

Խե՞ղճ տղայ, կարծեց, թէ պղտորւեց. երկու քայլ չէր արել, որ մթան մէջ բռնեց նրան իւր սիրելի աղայ Ջամանը և քաշքշելով ստիպում էր վերադառնալու։ Ջամանը հաստատապէս երդւում էր, որ եթէ Շահէնն այս անգամ կը մերժէ իւր առաջարկութիւնը, գոնէ մի ժամաչափ չի փակուիլ որևէ կնոջ հետ առանձնապէս, վաղը իրեն Պարսկաստան աքսորել կը տայ. ըստ որում ինքը գրաւ է դրել մի ծանօթի հետ, որը նոյնպէս այժմ գտնւում է այդտանը, որ կարող է Շահէնին գայթակղեցնել, իսկ այժմ Ջամանը չի ցանկանում գրաւը տանել տալ։

Աղայ Ջամանի հաստատամտութիւնից երեւում էր, որ ասածն ստուգութիւն է։

—Անիծուի՛ս դու է՛լ, քո բարեկամդ է՛լ, քո խանդ է՛լ, յուսահատ բարկացաւ Շահէնը, մի փառաւոր ապտակ զարկեց աղայ Ջամանին ու շտապով հեռացաւ Մոսկուայի խուլ փողոցներով։

Նա տուն չը գնաց, նա բաւական ժամանակ աննպատակ թափառում էր։ Ի՞նչ անելը

չգիտէր, երբեմն ինքնասպանութիւնն էր մտքի մէջ կամզակերպւում, բայց խոհեմութիւնն ու զգացումը թոյլ չէին տալիս այդ ստոր և մարդկային կոչումին անվայել քայլն անելու։

—Պէ՛տք է մինչև վերջին շունչը մաքառել, մտածեց Շահէնն ու շտապ քայլերով գնաց տուն։

Նորա բաղդից աղայ Ջամանը դեռ չէր վերադարձել. տունը լռութիւն էր։ Նա ժողովեց իւր ծանրութիւններն ու դուրս եկաւ։

Կէս գիշերն անց էր, որ նա բաղխեց Կաճկաճի դուռը։

ԺԹ.

Շատ խորհեցան, շատ գլուխ տրաքցրին ընկերները, լուսադէմին էր, որ նրանք վճռեցին հանգիստ տալու իւրեանց աչքերին, բայց ոչ մի ելքի չեկան, լաւ համարեցին դէպքին թողնել հետևանքը։

Բայց որպէս զի միջոց ճարեն աղքատութեան դէմ կռուելու, միւս օրը մի յայտարարութիւն հրատարակեցին տեղական պարբերական թերթերից մէկում՝ հետևեալ բովանդակութեամբ։

«Մի ուսանող կամենում է դասեր տալ և պատրաստել համալսարան մտնելու։ Ցանկացողները կարող են հարցնել... փողոց, № և այլն»։

Կերևի աղայ Ջամանը չէր կամեցել վրէժխնդիր լինելու, Շահէնի քամակից ոչինչ չեղաւ։

ԾԺԱ.

Զքաւորութեան երեսը սև, մարդուս արժանաւորութիւնն էլ ոտնատակ է տալիս. միևնոյն մարդն այսօր հնոտի ձորձերով քո առնից կ'արտաքսուի, վաղը նոր և թանգագին հանդերձներով գլխիդ վերայ տեղ ունի։

Որքան կամիս կոչումդ և տիտղոսդ բարձրացրու՛, տասը դիպլոմ ցոյց տուր, եթէ արտաքին երևոյթդ շքեղ չէ, եթէ կայարանդ յարմար չէ, ո՛վ քեզ երեխայ կը յանձնի, ո՛վ իւր տունը կը հրաւիրի։

Ուսանողներն այս բանը շատ անգամ փորձով տեսել էին, յիմա՞ր էին ուրեմն, որ Շահէնի բնակարանի հասցէն նշանակեն յայտարարութեան մէջ։

Դեռ երեկ էր, Շահէնն իւր մաքուր վերնահանդերձը վաճառեց վաշխառու հաստափոր ռուս ռամկին և հնավաճառից փոխարէնն աժան գնով առաւ տասը տեղից կարկատուածը, որից աւելացած կոպէկները պահեց մի քանի օրուան սիսեռի ջուր խմելու համար, նորանց կացարանը տեսնողը կը զգուէր միւս անգամ այն փողոցովն անցնելու, ի՞նչպէս նա պիտի յանդգնէր այդ անձնապատառ քայլն անելու։

Բարեբաղդաբար Շահէնը ծանօթ էր մի կարողութեան տէր ուսանողի ընտանիքի հետ, յայտարարութիւնը նորանց անունով գրուեց։

—Բայց, ի սէ՛ր Աստուծոյ, նախազգուշացրեց Շահէնն իւր ծանօթ ընտանիքին, ոչինչ բանով թոյլ չտաք դաս խնդրողներին ինձ մօտ գալու, իմ տանս տեղը այդպիսիների համար գոյութիւն չունենայ, թող ինքեանք իւրեանց հասցէն թողնեն այստեղ, ես անձամբ կ'երթամ կը գտնեմ, թէկուզ դժոխքի վերին ծայրումն էլ լինին։

Եւ ի՞նչպէս կարող ես այդ կտրտուած կօշիկներովդ ու ցնցոտիներովդ փոքր ի շատէ մաքրասէր մարդու մօտ մտնել, հարցրեց նորան իւր ծանօթի մայրը։

—Ուսանողական կեանքի մէջ խորթ բան չէ միմեանց հագուստով ուրիշներին ներկայանալը, կամ համալսարան գնալը, միշտ շուտ զարթնողն ու առաջին դասն ունեցողն օգուտ է քաղում իւր ընկերի հագնելիքից և այլ ստացուածքից առանց տիրոջ կամքը հարցնելու և ես այժմ այդ դասակարգի խմբից մինը լինելու բաղդըն ունիմ։

Այս ասողը Շահէնն էր, փորձը վարպետ է չինում, կը կակղես՝ կ'ուտես։

ԾԺԲ.

—Մի դնդապետ կառքից իջաւ մեր դռանն և ձեզ է խնդրում, ներս ընկաւ տանտիրոջ աղջիկը հևալով Շահէնի մօտ։

—Խնդրեմ, ասացէք, որ սպասի, շփոթուեց Շահէնը։

—Բայց նա ահա բարձրացաւ պատշգամբը և տուն է մտնում, ասաց աղջիկն ու դուրս գնաց։

Վերջին բառի հետ արդարև դուռը բացուեց մի գնդապետ և ուղղակի մօտեցաւ Շահէնին։

Մեր ուսանողի ուշքը գլխին չէր, նա չիմացաւ թէ ինչպէս վարուի, աչք էր ածում գտնելու մի որ և իցէ մաքուր հագնելիք իւր կիսամերկութիւնը ծածկելու, բայց ի՞նչ և ո՞րտեղից։

Նորա սենեկի մասին գաղափար կազմելու համար՝ բաւական է մեր աչքներիս առաջին պատկերացնել մի ռուս գիւղացու խրճիթ, երկու պատուհաններով, տախտակամածը հնացած, վառարանից դուրս փչած ծխից պատի կէսը մրոտած, միւս մասերի ծեփերն էլ տեղ տեղ թափուած, մի կոտրած ու պարանով կապկպոտած աթոռ՝ հեշտայեռից թափուած կայծերից՝ հարիւր տեղից այրուած ու խանձոտուած՝ մի սեղանի մօտ դրած, երեք հասարակ մրկած մահճակալներով ծածկած, սեղանի երեսին գրքերն ու դասատետրերն անկարգ տարածուած, թամբաքոյի փշրունքն ու ծխախոտի թուղթը բոլոր տեղերը սփռած, պատի մի անկիւնումն էլ մի հնամաշ կրկնոց կախուած։

Ահա այսպիսի սենեկի մէջ մի պատկառե-

լի հիւր ընդունելու համար մոլորուել էր մեր Շահէնը։

—Մի՛ անհանգիստ լինիք, խնդրեմ, մօտեցաւ գնդապետը Շահէնին և ձեռքը պարզեց, թոյլ տուէ՛ք ինձ ծանօթանալու ձեզ հետ. գնդապետ կոմս Բ։

Շահէնի բերանը մի խօսք չեկաւ պատասխանելու։

—Այդ ամէնն առ ոչինչ համարեցէք, ինձ անծանօթ չէ ուսանողական քաղցր և անփոյթ կեանքը, ես և ձեր նախկին երջանիկներիցն եմ, այսքան միայն ինձ ասացէք. դո՞ւք էիք հրատարակել ուսուցչութեան համար։

—Ես... ես... ես եմ... կակազեց Շահէնը։

—Շատ ուրախ եմ, իմ որդուս պէտք է պատրաստել գիմնազիական հինգերորդ դասատունը մտնելու, կը խնդրէի ձեր պայմաններն առաջարկելու։ Նախապէս ասեմ, որ մենք կենում ենք մերձակայ ամարանոցում, ուր և տեղափոխուել պարտաւոր էք դուք այս ամառուան արձակուրդներին։

Ես կարծեմ ձեզ չեմ ասել, որ քանի օր էր արձակուրդներն սկսուել էին։

—Ինչպէս ձեր կամքն է... թոթովեց կրկին Շահէնը։

Գնդապետն երևի զգաց Շահէնի դրութիւնը, ուստի իւր կողմից առաջարկեց նորան մա-

քուր սենեակ, ուտելիք, լուացք, ճրագ և քսանուհինգ մանէթ փող։

—Այս է իմ վերջին խօսքս և վճարելիքս, ես չտապում եմ, եթէ դուք կը համաձայնիք, խնդրեմ պատրաստուեցէք գալու, իսկ ես ամէն ինչ կարգի կը դնեմ և ձեզ կը գրեմ։

Այս ասելով գնդապետը դուրս գնաց։

ՃԺԳ.

Երազ, թէ իրականութիւն էր Շահէնի տեսածը, ինքն էլ չէր կարողանում գլխի ընկնել։ Վիրաւորուած իւր ծանօթների վերայ, գնաց նրանց յանդիմանելու՝ իրեն այդ նեղ դրութեան մէջ դնելու համար։

—Հաւատացէ՛ք, արդարացաւ իւր բարեկամը, ոչինչ բանով չէի կամենում ձեր հացէն առել, բայց մարդը խիստ պնդեց և յայտնեց, ինքն ամարանոցումն է կենում, ձեզ անյարմար է իւր մօտ գնալը։ Ծա՛րս կտրած՝ չուզեցայ դէպքը ձեռքից թողնել, և ուրախ եմ, որ յաջողուեց։

ՃԺԴ.

Երեք օր էր, Շահէնի աչքը ջուր էր կտրել սպասելով, բայց նամակաբերը չկայ՝ որ չկայ, երազական պալատների մէջ կեանք վարելու ցը-

նորքները կորչում, անհետանում են. իրանից ոչ պակաս յուսահատ նորա ընկերակիցներն են, նոցա իւրաքանչիւր անհատը ընկերի բարեկամութիւնը կամ թշուառութիւնն իւրն է համարում։

Վճռեցին Շահէնի կողմից այսպիսի նամակ գրելու.

«Ձեր խոստմունքն ուշացաւ, երևի մոռացել էք, ես պարտք համարեցի ձեզ յիշեցնելու և խնդրելու, որ նեղութիւն չկրէք նամակաւ հաղորդելու, վաղն ինքս անձամբ կը գամ և բարեբաղդութիւն կ'ունենամ ձեզ հետ այն մասին տեսակցելու»։

Վաղը կը գամ.—շատ հեշտ է ասել, կամ գրելը, անձամբ կը գամ, բայց ընչո՞վ, ի՞նչ գումարից կառքի վարձ վճարել, այսօր Շահէնի վերջին կոպէկը մսխուեց սխեռաջրի վերայ։

—Կեցցէ՛ հանճարն և գիւտը, յանկարծ ճակատին զարկեց մուշտակ գրաւ դնող ուսանողը, շատ մտածել հարկաւոր չէ՛, ճանապարհի ծախք և մի երկու ամսուան ապրուստ էլ դեռ հետը, երկու ամիս գործ էլ չունենայ, չի մեռնիլ Շահէնը։

Բերանաբաց ամենքը նայում էին։

—Մի կողմը թո՛ղ, եղբայր, քո նախապաշարմունքդ, դարձաւ մեր նոր Կոլոմբոսը դէպի Շահէնը, դու փող ժողովիր, ես քեզ համար աւելի գեղեցիկ և թանկագին մուշտակ գնեմ։

—Ի՞նչ ես խօսում, ոչ ոք չըհասկացաւ ասածդ։

—Շատ պարզ, հեռացրո՛ւ գլխիցդ մուշտակըն իբրև յիշատակ պահելու երևակայութիւնը. ես իսկոյն և եթ կ'երթամ մուշտակագործի մօտ, կ'առաջարկեմ՝ բոլորովին գնելու, կամ թէ ստանալու իւր դրամը և վերադարձնելու մեր ապրանքը, ըստ որում ես, իբր թէ, աւարտել եմ ուսումս՝ հեռանում եմ հայրենիք: Կարծիք չըկայ, որ յիմար կը լինի շահասէր պարոնը զըրկուելով այնպիսի օգտաբեր առարկայից, կը գնի ուրախութեամբ, բայց ի հարկէ կիսագնի, որը մեզ համար միևնոյն է, խօսքը մի քանի պատուական մանէթներն են, որ քեզ կ'ապահովացնեն:

Որքան կ'ուզեն թող ծիծաղին, ասած՝ կատարած, մի ժամից յետոյ Շահէնն ունեցաւ իւր դրպանումը տասը մանէթ, մի ուսանողի պատկառելի դրամագլուխ:

ԾԺԵ.

Կոմը սիրով ընկալաւ և ներկայ ամսի վըճարքն սկզբից առաջարկեց:

Միւս օրը Շահէնը վերադարձաւ իւր նոր բնակարանը մաքուր հագնուած՝ ջենտելմէնի ամենայն յատկութեամբ:

Պէտք է իմանանք սակայն, որ նորա հագուստը նորոգուեց՝ էլի՛ ոչ առանց պարտքի: Ընկերներից մի կարողութեան տիրոջ երաշխաւորութեամբ պակասորդ փողը ամսէ ամիս պիտի վճարուէր:

Մուշտակի տասը մանէթովը կատարուեց մի ամենափառաւոր ուսանողական խնճոյք Վասիլաւա Վասիլևնայի մօտ:

Շահէնի նոր պաշտօնը շնորհաւորելու առիթով տուած երեկոյթը խիստ շքեղ և ճոխ էր:

ԾԺԶ.

Շահէնի համար նոր ասպարէզ է բացուել. ամէն օր նորա մօտ նոր խնդրողներ են գալիս, հռչակը շուտով տարածուեց և բարձրացաւ, ամէն ոք ուրախութիւն և պատիւ է համարում իւր որդիքը նորին պայծառափայլութեան կոմսի տնային ուսուցչի խոհական դաստիարակութեանը յանձնել: Եթէ կոմսը շնորհ է արել մէկին հաւատալու իւր զաւակի կրթութիւնը, այդ բաւական երաշխաւորութիւն է պարոնի անձնաւորութեան և բազմահմտութեան համար. մանաւանդ, որ փոքր պատիւ չէ ամէնքի մօտ հռչակ հարկանել, թէ իւր և կոմսի որդիքը միևնոյն մարդն է կրթում:

Այս մասին տիկինների ձգտումն աւելի մեծ է և օրինաւոր, շատ իշխանուհիք և ազնուական կանայք իւրեանց սրտի մէջ և՛ նախանձում էին կոմսուհու փառքին և՛ ցանկանում էին նորա

հետ ծանօթանալու. այսօր նոքա խիստ յարմար առիթ են գտել։

Վեհապանծ կոմսուհին մի բարձրահասակ միջակ տարիներով գեղեցկուհի է և անուանի արիստոկրատկա, նա ամէն երեկոյ շքեղ կառքի մէջ իւր 14 ամեայ դստեր հետ Շահէնի ընկերակցութեամբ շրջում է, կամ ճեմելիքում զբօսնում։

—Թոյլ կը տա՞ք, Ձերդ պայծառափայլութիւն, ստանալու Ձեր քաղցր ներողութիւնն և ծանօթանալու Ձեզ հետ, խնդրելով Ձեր բարեհաճ միջնորդութիւնը ձեր շնորհալի զաւակի յարգոյ դաստիարակին շաբաթը մի քանի ժամ մեր երախաների համար նուիրելու, Ձեր խնամատուն ընտրողականութիւնը ամենամեծ երաշխաւորութիւն է պարոնի ասպարիզի համար։

—Շատ ուրախ եմ, շատ շնորհակալ եմ, կոտրատելով ֆրանսիական լեզուով մեծամտանում էր կոմսուհին, պարոն Շահէնը թէև ժամանակ չունի, ի հարկէ կարիք ես չունի, սա միայն մեզ յարգելով իբրև նախածանօթ, յանձն է առել այս ծանրութիւնը, բայց ես յուսամ, որ իմ խնդիրս անտես չի անիլ և ձեր քնքուշիկներին համար մի քանի ժամեր նուիրելու խոստումը կ'անի։

Պայմանների վերայ խօսելն աւելորդ էր, ամենքը գիտէին, որ ժամը հինգ մանէթ է, կոմսուհին անպատուութիւն կը համարի իւր որդ-

ւոյ ուսուցչին պակաս գնով ձանձրութիւն տալը։

ՑԺԷ.

Առաջին ամիսը Շահէնի կեանքի մէջ նոր փոփոխութիւն չէր եղել, դասերը միայն աւելացել էին, գրպանը միայն հաստանում էր։ Ապառիկ ոչինչ չկար, ժամը լրացաւ, հնգանոցը գի՛ր քսակդ ու դուրս արի՛. կոմսի տանն էլ օրական երեք ժամ պարապելու պայմանաւորուել էր։

Կոմսուհին շարունակ սկզբի օրից պարտք էր համարել ներկայ լինելու իւր որդու դասերի ժամանակը։ Նա մեծ բաւականութեամբ սեղմում էր Շահէնի ձեռքը պարապմունքից յետոյ, մեծ բաւականութեամբ պատմում էր իւր ամուսնուն Շահէնի եռանդուն աշխատութիւնը և մեծ բաւականութիւն էր համարում իրեն մի քանի ժամեր նուիրելու իւր հոգեկի, այդպէս էր կոչում որդուն, վարժապետին զուարճացնելու և նորա աշխատութիւնը թեթևացնելու։

Հարկ չը կար ասելու, որ կոմսը նոյնպէս շատ ուրախ էր և շնորհակալ Շահէնից. նա ինքը թէպէտ շարունակ իբրև պաշտօնական մարդ տանը չէր լինում, բայց իւր կնոջ խօսքերից մի՞թէ երկմտելու տեղիք ունէր։

Սկզբումը Շահէնը պարզութեամբ ոչինչ մեկնութիւնների ոչ տեղիք և ոչ իրաւունք ունէր. բայց հետզհետէ նորա աչքերը բացուեցին և և նա գլխի ընկաւ մի վտանգաւոր իրողութեան.

նա պարզ հասկացաւ տիկնոջ խարդախ մտադրութիւնները, նորան հիմի ակնյայանի էին կոմսուհու հաճոյախօսութիւնների, քնքշութիւնների, նիստ ու կացի, զբօսանքների և այլ վարմունքների ներքին նպատակը։

Բաղդն ինքն իրեն կոյր կոյր եկել Տաշենի դուռը չոքել էր, բայց նա այն խելացիներից չէր, որ կարողանար օգուտ քաղելու այդ աստուածուհու յիմարութիւնից։ Ուրիշ շատերն, ի հարկէ, ուրախ կը լինէին այսպիսի հանգամանքից, կոմսուհին թէպէտ 30—40 տարիների մէջ, բայց իւր թարմութեամբը, հրեշտակային գեղեցկութեամբն և բարեկից շարժուացքներովը ոչ մի միջահաս օրիորդից պակաս չէր կարելի համարել, գեղեցկութիւն գնահատող ամէն նուրբ ճաշակի տէրերը բոլորն էլ երջանկութիւն կը զգային իրենց համար նազիկ կոմսուհուն երկրպագու լինելը, բայց մենք մեր անտաշ ուսանողին շատ վաղուց ենք ճանաչում։

Մենք գիտենք և չենք մոռացել, որ Տաշենի ընկեր ուսանողներից շատերը ցանկացան գոնէ մի անմեղ համբոյր քաղել տալու նորան իւրեանց Վարվառա Վասիլևնաներից, բայց վերջն ստիպուեցին նորան բացառութիւն համարելու։

Շատ անախորժ դէպք էր ուրեմն կոմսուհու վարմունքը Տաշենի համար։ Նա շատ սառնութիւն ցոյց տուեց տիկնոջ քաղցրութիւններին, սկզբումը չգիտենալ ձևացրեց, զուտ մարդասիրական և բարեկամական ցոյցեր և արտայայտութիւններ համարեց, բայց երկար չը կարաց շարունակել. մի օր կոմսուհին պարզ յայտնեց նորան իւր սէրը և սիրտը։

Ոչինչ ներողութիւններ, ոչինչ կողմնակի պատճառաբանութիւններ. կոմսուհին լսել անգամ չի կամենում, իւր սիրոյ փոխադարձը պահանջում է Տաշենից։

—Անհնարին բան էք պահանջում ինձանից, ձերդ պայծառափայլութի՛ւն, ես ձեր սաածներիցը չեմ։

—Տինծու խօսքեր են, դուք նազ էք ծախում, Ռուսաստանի մայրաքաղաքներումն այսօր ճգնաւորներ չեն բնակւում, այդ տեսակէտից հարիւր տարի առաջ էին նայում։

—Բայց դուք ամուսին էք։

—Այդոնք ես նախապաշարուած մոլեռանդի, կամ խորամանկ, կեղծաւոր ճիզուիթի քարոզներ են։

—Վերջապէս դուք հարսնացու աղջկայ մայր էք, ձեզ պարտք է այժմ ձեր դստեր համար փեսացու և ոչ ձեզ համար սրտակից որոնելու։

—Սրտի գործը կապ չունի մայրական պարտքերի հետ։

—Վճռաբար ասում եմ, ինձ քա՛ւ լիցի ձեր յարգելի ամուսնու՝ իմ բարերարիս ընտանեկան քաղցրութիւնը թունաւորել և նորա հաւատար-

մութիւնը դաւաճանել, այս շէմքը ոտք դրած օրիցս ձեզ մօր տեղ եմ ընդունել ինձ։

—Վաղուց պէտք է ասէիք, դուք ինձ պատուի տեղ էք դնում, ինձ արհամարհում էք, ինձանից նախադասում էք ծամռաստուող, խունջուկ մունջիկ անող իշխանուհի Նադեժդա Սիմիօնովնային, որը իմ աղախինների և ոչ իմ հաւասարս կարող է համարուիլ, իսկ ես, ի սէր ձեր, այնքան յիմարացայ, մինչ նորան իմ տունս ընդունեցի, իմ ընկերութեան մէջ խառնեցի, այո՛, այո՛, ես հիմայ հասկացայ, ձեր անցեալ օրուան վարմունքը ձեզ մատնեց, դուք սիրում էք նրան։

—Բայց, տիկի՛ն։

—Ոչ, պարո՛ն մի՛ պատրուակէք, էլ ինձ խաբել չէք կարող։

—Մեղք է ձեզ համար, կոմսուհի՛, մի օրինաւոր ընտանիքի պատիւն ու անունն արատաւորել, իմ յարաբերութիւններս դէպի իշխանուհին, ինչպէս և դէպի ձեզ, անկեղծ բարեկամական են եղել, և վերջապէս ձեր կամքով և յօժարութեամբն եմ իմ բոլոր աշակերտներիս ծնողաց, ի թիւս որոց և իշխանուհու հետ ծանօթացել։

—Զգուշացնում եմ ձեզ, պարո՛ն, վախենալ ինձանից, ես չեմ կարող տանել, որ մի չնչին իշխանուհի յափշտակէ ինձանից սրտիս առարկան, ես հողի հետ կը հաւասարացնեմ նորան, ես ոտնատակ կը տամ ամէնքի պատիւը, թոյլ

չեմ տալ ձեզ բացի ինձանից ուրիշի վերայ մըտածելու, թէ կուզ նա յունական յաւերժահարսունքներից ամենագեղեցկուհին լինէր։

—Աղաչում եմ, ձերդ պայծառափայլութի՛ւն, զուր կասկածներ մի՛ տանէք։

—Ես դեռ առո՛յգ եմ, դեռ գեղեցի՛կ եմ, դեռ երեսս չի կնճռակալել, ես սիրոյ կարիք ունիմ, իմ կեանքս սիրահարութիւններով եմ անցկացրել, ես շատերի աղերսանքը ոտնատակ եմ տուել ու այսօր ինքս եմ քո ոտքերն ընկնում։

Կոմսուհին խոնարհեց և ուզում էր փարել Տահէնի ծնկներովը։

—Ներեցէ՛ք ինձ, կոմսուհի՛, ես արժանի չեմ ձեր գգուանքներին. ձեր կոչումը, ազնուատոհմութիւնը, ձեր բարձր դիրքը հասարակութեան մէջ թոյլ չի տալիս ինձ՝ մի գռեհիկ գիւղացու, մի հասարակ օրավարձ մշակի, վերջումը բաղդի բերմունքով ուսանողական նստարանին հասնող, աւար հացին կարօտ, անտուն, անտէր բաղդախնդրի ձեր վսեմութեանն այլապէս նայելու, բայց եթէ իր բարերարի կնոջը, բարերարի՝ որ վերջին ճգնաժամին հասաւ ինձ օգնութիւն, խլեց անօթութեան և յուսահատութեան ճանկիցը մի աշխարհէ աշխարհ տարադիր ընկած հայի...

—Հայի՞, ճիչ արձակեց յանկարծ կոմսուհին, ասում էք հայի՞, ուրեմն դուք հա՞յ էք,

իւր քնքոյշ ու շողոքորթ դէմքը գազանային կերպարանքի փոխելով աստիճանաբար ձայնը բարձրացնում էր նա, դուք հա՞յ էք, երկրագնդիս վերայի ամենից անարգ ու անպիտան ազգի զաւա՞կը, ուրեմն դուք պարսիկ չէ՞ք, ինչպէս որ ինձ պատմել էք, այլ հա՞յ, որ եկել էք պղծելու մեր շնչած մաքուր օդը:

—Սխալ էք, տիկին, արհամարհական ակնարկ ձգեց Շահէնը. ես երբէք ձեզ չեմ ասել, որ պարսիկ եմ, այլ պարսկաստանցի, և եթէ կամիք, ես հայ եմ; այսօր այո՛, անարգուած, բայց ոչ անպիտան ազգի որդին եմ; իրաւ է, անտէր ենք, թշուառ ենք, նախկին փառքեր կորցրած ու աստանդական ստրուկներ ենք, բայց ազգութիւն, կրօն և ազնուութիւն պահել ենք և կը պահենք՝ քանի աշխարհքիս երեսին այդ ազգի մի որդին էլ շունչ է քաշում:

Դո՛ւրս, դո՛ւրս, շեշտեց խստաձայն կոմսուհին և նորա աչքերից ցայտում էին զզուանք և դառն արհամարհանաց կայծերը, մի քանի րոպէ առաջ սէր շնչող, կիրք շարժող պատկերը, վայրագ, մարդախանձ և արենկզակ կնճիռներով ծածկուեց:

—Եթէ իմ հայութիւնս ձեզ այդքան անհաճոյ է, ես շատ ուրախ եմ այդ մասին, իմ ազգայնութեան ուրիշ յատկութիւնն է ինձ ձեր ձեռքից ազատողը, ասաց Շահէնն ու դէպի դուռըն յառաջեց:

—Հա՛, հա՛, հա՛, բարձրաձայն կրկնաց կոմսուհին և Շահէնի յառաջը կտրեց:

—Թողէք, տիկի՛ն, շատ շնորհակալ եմ, որ ինձ պարզ յայտնեցիք ձեր դէպի իմ ազգն ունեցած ատելութիւնը:

—Հա՛, հա՛, հա՛, և դու հաւատացիր իմ դիտմամբ դուրս թողած խօսքերին և դու չընկատեցիր, որ քո հայրենասիրական զգացմունքովդ տասնապատիկ բարձրացար իմ աչքումս, այժմ՝ քան ուրիշ անգամ պիտի ձգտեմ քո սէրդ գրաւելու:

Այս խօսքերով կոմսուհին ձևացրեց, իբր թէ կամենում է գրկախառնուել Շահէնին, բայց նա խոյս տուեց դէպի անկիւնը:

—Ո՛չ, մի՛ վախիր, այժմ նախկին կիրքը չէ ինձ դէպի քեզ հրապուրողը, ազգասիրական եռանդդ փոխարինեց մոլի կիրքը սուրբ սիրոյ: Հանդարտուի՛ր, ազնիւ պարո՛ն, և անվրդով շարունակիր պաշտօնդ, իսկ ես այս աւետիքը կը հաղորդեմ ամուսնոյս, որի խորհրդով վարձում էի ձեր հաւատարմութիւնը, դուք այսուհետև մայրաքաղաքումս էլ մեզանից անբաժան կ՚ապրիք, դուք կրթելու էք և մեր դստերը:

Շահէնը յոգնած սեղմեց դուռն իր վերայ, պինդ ծածկող կոմսուհու ձեռքն ու ընկաւ գահոյքի մէջ:

ԾԺԸ.

Վերոգրեալ անցքից կէս ժամ յետոյ մի փառաւոր ոսկեզօծ քառաձի կառք կանգնեց իշխանուհի Նադեժդա Սիմէօնովնայի դռանը։

Սպասաւորը ոսկեծոպ երիզաւոր փեղոյրը հագած՝ իջաւ կառքի քամակից և բացեց բարձր դատիկոնի դուռը։

«Տիկինը տանն է» խօսքի հետ կառքի դըռնակը յետ բացուեց և շղարշների մէջ պաճուճուած մի բարեկազմ կին դուրս թռաւ կառքի միջից ու ոստոստելով մանրատոտիկ կաքաւի նըման վեր բարձրացաւ։

Դա կոմսուհին էր։

ԾԺԹ.

Կոմսուհին Շահէնի իւրեանց տունը մուտք գործելու օրից աչք դարձրեց նորա վերայ, նոյն իսկ օրը նա կազմեց իւր գործողութիւնների ծրագիրն իւր երեխայի դաստիարակի դէմ. ինչպէս փառասէր կին, նա ցանկանում էր ամէն բանի մէջ իւր հաւասարակիցներից վեր կանգնել. Շահէնի առնական դէմքը, ասիական գրաւիչ տիպը չէր կարող դառը տիկնոջ մտքումը չծնեցնել նոր փառասիրութեան առիթ, նա շատ լաւ գիտէր, որ այդ սևաչեայ բարձրահասակ երիտասարդով գրգռելու է շատերի սիրատարփ

կիրքը։ Այդ իսկ պատճառաւ էլ դիտմամբ տեղիք էր տալիս ամէնքի խնդրանացն և թոյլատրում էր Շահէնին շատ տներում դասատուութիւն յանձն առնելու։

Կոմսուհին շատ լաւ գիտէր, թէ ի՞նչ պիտի խօսուի կանանց խմբակների մէջ, թէ քանի՞ն իրանից աւելի գեղեցկադէմ երջանիկներից պիտի նախանձու տրաքին կոմսուհու բարեբաղդութեան վերայ, նա կամենում էր իւր գերազանցութիւնը և նրբացած ճաշակը՝ սիրահար ընտրելու գործումը՝ ամէնքին ցոյց տալու, նա հաստատ համոզուած էր, որ իւր նմաններից շատերը պիտի ամենայն ճիգ թափեն իւր ձեռքից խլելու այս կատարելատիպը, գիտէր և թոյլ էր տալիս մինչև վերջին կէտը այս հրդեհը բորբոքելուն, յուսալով ի հարկէ, որ յաղթութեան դափնին իւրն է լինելու։

Առաջին անգամը կոմսուհին Շահէնի սառնութիւնը դէպի ինքը վերագրում էր նորա ամաչկոտութեան և խոհեմութեանը, բայց վերջերումը յանկարծ նորա միտքը մի բան ընկաւ և սարսափեց. տիկինը կարծեց, թէ իւր սեռի ուրիշ երջանիկ մահկանացուները գողացել են նորա սիրոյ առարկայի սիրտը և բարձր շրջանում իւր անունը ծիծաղելիք է դարձած, թէ ամէն տեղում կանանց ժողովներում արհամարհանք և սառն հայհոյանք է բերանէ բերան պտտում իւր վերայ, մտածում էր կոմսուհին, և

այս նախատինքը կուլ տալու համար իւր կոկորդը շատ նեղ էր։

Ո՞վ կը համարձակի այն աստիճան յանդըգնանալ, ո՞վ կը վստահանայ նրան պառաւ անուանել, մի՞թէ իւր հարսնացու աղջիկն իրանից չքնաղ և գեղեցկուհի է, մի՞թէ նորա պատճառաւ ինքը կորցրել է «ջահել մայր» կոչումը, եթէ այդպէս լինէր, վաղուց նա նախանձած կը լինէր իւր զաւակի փառքին. ընդհակառակն արբունքի հասած դուստր ունենալն այսպիսի թարմ հասակում իրան մեծ պատիւ էր համարում. այդ նշանակում էր, որ ինքը շատ վաղուց է խլել իւր ընկերակիցներից հարսնութեան պսակը։ Բայց հիմա մի րոպէի մէջ Շահէնի պաղսրտութեան շնորհիւ՝ այդ վեհաշուք չքնաղուհին ինքն իրան նուաստացած, ստորացած, հողի հետ հաւասարուած տեսաւ։ Նա այժմ այն վիրաւորուած և մինչև սիրտը խոր խոցուած էգ առիւծըն է, որ վրէժխնդրութեան ծարաւ է և արհամարհում է իւր բոլոր կսկիծներն ու ցաւերը։

—Ի՞նչ, մի Նադեժդա Սիմէօնովնա սրտիս սիրելուն ինձանից յափշտակի՞, ձեռքիցս դուրս կորզի՞, ինձ արհամարհի՞, օ՜...օ՜...օ... ես լակ ձուի նման կը ճզմեմ նրան։

Սակայն և այնպէս փաստ է, որ հանգամանքները փոխուեցին, մի մեծ յեղափոխութիւն կատարուեց նորա բոլոր ծրագիրների մէջ, իրերի դրութիւնն այժմ շուռ եկաւ, հիմա նա ուրախ է իւր անյաջողութեան մասին. այսօր նորա նախանձայոյզ սիրտն ուրիշ կերակուր ունի, այն բարձրաձայն ծիծաղի, այն դուռը ծածկել հեռանալու մէջ ուրիշ նպատակ կար և նա եկել էր իշխանուհու տունը իւր նպատակի կատարումն աչքով տեսնելու. Նադեժդա Սիմէօնովնան, որ մի քանի րոպէ յառաջ իրեն համար վտանգաւոր ախոյեան էր համարում կոմսուհին, հիմա մի ընկած ու անարգուած կին է ներկայանում իւր աչքին, աւելի արհամարհուած՝ քան թէ մի անուանարկ աղախին։

ԺԻ.

—Խնդրե՛մ, ձերդ պայծառափայլութի՛ւն, դրան նիգը փոքրիկ ձիւնափայլ ձեռքերով քընքշօրէն յետ բացարեց իշխանուհի Նադեժդա Սիմէօնովնան՝ ծառայից իմանալով վսեմապատիւ հիւրի ո՛վ լինիլը։

—Հա՛, հա՛, հա՛, հա՛, հա՛, հա՛, մի անվերջանալի հեգնական ծիծաղ և արհամարհական շարժուածք պատասխան եղաւ կոմսուհու կողմից՝ հոյակապ դահլիճի մէջ՝ իշխանուհու ուրախ և պարզ ընդունելութեանը։

Տանտիկինը հիւրի կրկչոցը կանացի սամսարմունք և շողոքորթութիւն համարելով՝ ինքն էլ իւր կողմից նոյնը անելով մօտ եկաւ կոմ-

ռուհուն և կամենում էր ձեռքը բռնել, գուցէ և համբուրել:

—Ո՜հ, մի՞թէ... քիթը մեր քաշեց կոմսուհին և մի երկու քայլ արհամարհական ձեռնաշարժութեամբ յետ յետ գնալով, շարունակում էր խնդալը։

—Ի՞նչ է նշանակում ձեր վարմունքը, վիրաւորուեց իշխանուհին։

—Շնորհաւորո՛ւմ եմ ձեր բարեբաղդութիւնը, ցանկանո՛ւմ եմ աւելի մեծ յաղթանակ մեր մայրաքաղաքի գեղեցկուհիների վերայ, լա՛ւ որսակից էք ճարել։

—Ես ձեզ չեմ հասկանում։

—Այո՛, այո՛, ձեր հասակը, ձեր գրաւիչ աչքերը, ձեր փղոսկրեայ պարանոցը ձեզ իրաւունք են տալիս սոք պարծելու կոմս Ի. Ի. կնոջ հետ, յափշտակելու նորա տան ուսուցչին՝ այն սիրուն երիտասարդին, որն անկասկած ըստ ձեր համոզմանց անտարբեր չէ դէպի տան տիրուհին։

—Հա՞, հասկանում եմ այժմ ձեր դրութիւնը, կոմսուհի՛, ձեր այցելութեան շարժառիթը նախանձն է եղել, դուք սխալւում էք, տիրուհի։

—Հա՛, հա՛, հա՛, շատ հաղուագիւտ բանի էք հանդիպել, ձեզ եմ ընծայում ոտքով գլխով։

—Բայց ո՞ւմ։

Մի հայի կտորի։

—Աւելի վա՛տ ձեզ համար, խղճալի կոմսուհի՛, եթէ Շահէնը միայն իմ երեխաների ուսուցիչն է եղել, մենք ոչինչ մեծ կորուստ չենք ունեցել մի հայի մի քանի ժամանակ մեր տունն ընդունելով, իսկ դուք ձեր տան մէջ սնուցել էք ձեր չըսխրած հային և ձեր խօսքից երևում է, որ անձնատուր ևս եղել էք։

—Պատրուակուել չի՛ հարկաւոր, ես ամէն բան գիտեմ, մի աննշան, քաղցած փողոցներում ընկած հայն իւր բնական խաբէութեամբն ու սատանայական խորամանկութեամբը խնդացել է մեր քաղաքակրթեալ Եւայի աղջիկներիս վերայ։ Մենք կանայքս բաց աչքով կոյրեր ենք և այլ ոչինչ։ Ասիայի թխագոյն մեծ մեծ աչքերը մեզ շլացրել են և չենք իմացել, թէ մի հայի կտորի համար ենք գլխներս կորցրել։ Ի միջի այլոց, դուք՝ իշխանուհի՛, մեր ամէնքի մէջ երջանկագոյնն և գերադասը հանդիսացաք, պարսկաստանցի հայ մշակն՝ ուսանողական վարագուրի տակ՝ ձեր պատճառաւ ամէնքի սէրը յետ խլեց, որի համար եմ եկել ձեզ շնորհաւորելու, բարև՛ վայելէք։

—Կրկնում եմ, թշուառ կի՛ն, ամենաողորմելի արարա՛ծ, ես ինձ թոյլ չեմ տուել մի չընչին սխալմունք անելու, իսկ դու և՛ խաբուել ես սևաչեայ պարոնից և՛ քո մէջդ նախանձել, ես քո խօսքերը քեզ եմ վերադարձնում, բարև՛ վայելես հայիդ սէրը և քաղցրութիւնը։

Իշխանուհին սիգաբար դուռը կրկին յետ

բացարեց և ցուցամատով կոմսուհուն սանդուխքները ցոյց տուեց։

ՃԻԱ.

—«Խնդրում ենք կարճելու ձեր պարապմունքը մեր երեխաների հետ»։

Այսպիսի բովանդակութեամբ համառօտ նամակներ ստացաւ Շահէնը մի քանի ժամի մէջ իւր բոլոր աշակերտատէրերից։

—Ստացէք ձեզ հասանելի բոլոր վարձն և այսօր իսկ թողէք իմ տունս, մի ծրար էլ կոմսի կողմից հասաւ նրան սպասաւորի ձեռքով։

—Բայց ի՞նչն է պատճառը, չգիտե՞ս, հարցրեց Շահէնը կոմսի ծառային մի քանի կոպէկ տալով։

—Որովհետև ամարանոցի բոլոր բնակիչներըն իմացան ձեր հայ լինելը, իմ տիկինս էլ այդ լսելուց յետոյ ջղացաւով հիւանդ է, ես թէպէտ չգիտեմ հայն ի՞նչ է, բայց ասում են, որ հրէից էլ վատթար է։

ՃԻԲ.

Ամարանոցում աշխատած փողն ամբողջ տարին պահեց Շահէնին և հետևեալ ամառը տուեց նրան բժշկականութեան յարգելի վկայագիր։

ՃԻԳ.

Վաղուց միտք ունէի ընթերցողներիս ձանձրութիւն չպատճառելու աղագաւ յայտնել, որ իմ վիպասան բժշկիս անունը շատ կրկնելու չեմ. թող ամէնքն իմանան, որ եթէ բժիշկս չլինէր, ես այս ամէն մանրամասնութիւնները հանգամանօրէն պատմել չէի կարող և Շահէնի վերայ ոչինչ գաղափար չէի կազմիլ։

Մարդասէր բժիշկս իմ օտարութիւնն սփոփելու առիթով՝ ինձ Շահէնի հետ ծանօթացրեց. ո՞վ գիտէ, գուցէ մի ներքին միտք էլ ունէր, այդ էլ վերջը կ'իմանանք։

Եթէ իմ բժիշկը կուռս բռնած երկրէ երկիր չըմանածէր, ես ո՞վ, մայրաքաղաքների շըքեղ պալատներն ու սիրաշարժ արարածներն ո՞վ, ուսանողական կեանքի դառն և քաղցր ճիշդ նըկարագրութիւններն ո՞վ։

Ուրեմն քեզ հետ խօսողը, հետաքրքիր բանասէ՛ր, բժիշկս է և ես նորա թարգմանը, եթէ երբեմնապէս իրան էլ տեսնես, այն էլ քեզ օգուտ։

ՃԻԴ.

Ռուսաստանի արևմտահարաւային նահանգներումը խօլերան մեծ զոհեր էր անում, որ չըլինէր, որ մեծ մեծ գիւղերումը քանի մի տաս-

նեակներով հողինչային. ոչ քահանայ էր հասնում ջերմեռանդ ռամիկ ուղղափառին և ոչ օրինաւոր թաղումն, օրերով մեռածները վարակուածների հետ կողք կողքի ընկած՝ մնում էին, ապականութիւնն ամբողջ մթնոլորտը բռնել էր։

Սկզբում տեղական ոստիկանութիւնն ուշք չդրեց այս արևելքից եկած անկոչ հիւրին, տանուտէրներն ու ստորին պօլիցեականները դիտութեամբ ծածկում էին, բայց վերջում իշխանութիւնը սթափուեց, միայն անագան էր. հսկողութիւնը քաղաքներում հազիւ բաւում էր, գիւղերն իսպառ անխնամ էին։

Որչափ էլ լուրն ուշ հասաւ բարձրագոյն վարչութեանը, այնու ամենայնիւ անմիջական անօրէնութիւնը կանցառութեան չըտրուեց։

Նոր՝ Մոսկուայի և Պետերբուրգի համալսարաններից դուրս էին թողել աւարտավարժ բժիշկ ուսանողներ, նոքա դեռ մի քանի շաբաթ էլ ունէին ճանապարհի պատրաստութիւնները տեսնելու և իրեանց սիրելի ընկերներին հրաժարական ողջոյնն ասելու, երբ ընդհանուր հրամանն ամէնքի բաղցր երազներն և հայրենեաց սիրակէզ այցելութեան փափագը բողբոջի մէջ խեղդեց։

Բոլոր նոր բժշկներն առանց բացառութեան ուղարկուեցին վարակիչ հիւանդութեան դէմ կռուելու։ Ո՛վ ինչպէս յաջողեցրեց, ուղևորուեց, ճանապարհի հաղորդակցութիւնները շատ ան-

կանոն էին այն ժամանակը, փոստային սայլակները բաւական չէին բազմաթիւ պատանիներին միևնոյն ժամանակի մէջ մի ուղղութեամբ յառաջ մղելու։ Բազմաթիւ եմ ասում, որովհետև բարձր դասատան աշակերտներն էլ առանց աւարտելու ճանապարհ դրուեցին ցաւի յառաջն առնելու։

Կարգադրութիւն եղաւ գիւղական ծանր և անճոռնի սայլեր նոյնպէս գործ դնելու,

—Հայրենեաց պատգամ յոյսե՛ր, խրախուսում էին անփորձ ճանապարհորդներին իրեանց պրօֆեսօրներն և նոյն ինքն բարձր վարչութիւնը, դուք ուղարկուում էք ինչպէս ոչխարներ քաղցած գայլերի դէմ, գնում էք դէպի անվրէպ կորուստը, բայց իմացէք, որ ձեր կեանքի գնովը պիտի փրկէք հազարաւոր թշուառներին մահուան ճանկից։

Այս մի քանի խօսքերով կարճ ուղևորութիւնն էր, որ տաք գլուխ երիտասարդներին թևաւորեց։ Բոլորը միասին ուխտեցին մեռնել, կամ գիտութեան զօրութիւնը և նշանակութիւնը կենդանացնել Ռուսաստանի այն ժամանակուան տգէտ մեծամասնութեան սրտում։

ԺԻԸ.

Մարդկութիւնը պարտք է պահանջում, վճռեց Տահէնը, Ռուսաստանն ինձ հասարակ մշա-

կից գիտութեան որդու յարգելի կոչումը չնորհելուց յետոյ՝ ինչը կ՚արգելէ ինձ կեանքով պարտավճար լինելու։

Այս դրդիչն էր, որ մի օր նորա ձեռքն էլ մի կտոր անցաթուղթ տուեց և իր նման մէկ երախտապարտ հրէայ բժշկի հետ առաջնորդեց դէպի խօլերայի բունը։

ԾԻԶ.

Զարմանալի չէին թուում Շահէնին և իր ընկերին իջևաններում պատահած արկածքները։ Բոլոր ուսանողները քաջ ծանօթ էին մեր հերոսի աչքերի գրաւիչ մագնիսի հետ։ Ուսանողական ժամանակամիջոցում կանացի սեռից Շահէնի կրածներն իւր ընկերներին ամէնքին յայտնի էին։ Այս անգամ էլ խիստ անտարբերութեամբ էին վարւում մարդկութեան պարտաճանաչները գիւղացի ռամկուհի սիրուհիների հետ։

Ուզում եմ ասել, թէ իւրաքանչիւր քայլափոխում գիւղացի հարս ու աղջիկները նրանց արգելք էին լինում գիշերելու, ժամանակ անց կացնել և սիրուել, ահա ինչ էին առաջարկում պարզօրէն խարտիշագեղ գեղջուկուհիքը մեր սևաչեայ ճանապարհորդին. ինչպէս ռամկօրէն ասած է, ողջ ողջ կուլ տալ էին կամենում։

Հաստատ կարելի է ասել, որ ոչ մի անցորդ մեր երիտասարդների չափ հիւրասիրութեան չի

արժանացել. դեռ նոր նոքա իջևանած էին լինում, որ տեղական գեղեցկուհիքը շրջապատում էին ըստ իւրեանց ասութեան, արևելքի կրակոտ պաւակին։

Երիտասարդներն, ի հարկէ, միայն ծիծաղում էին միամիտ գիւղացիների վերայ. ահա միակ չահմունքը՝ որով օգուտ էին քաղում նրանք մոռանալու ճանապարհի տաժանելի նեղութիւնները։

ԾԻԷ.

—Ա՜յ խորթ բան, այս ի՞նչ սառն ընդունելութիւն է, զարմացմամբ միմեանց հարցրին բժշկներն, երբ մի մեծ գիւղում ոչ մի տան իրենց չընդունեցին։

Սայլապանը սովորաբար կանգ էր առնում իջևանների համար յատկացրած դռներին, կամ գիւղական տանուտէրի տան առաջը, ներս էր մտնում և յայտնում նոր հիւրերի գալուստը։ Դորան հետևում էր քաղցր ընդունելութիւնը և գեղեցիկ սեռի հաւաքուելը։

Սայլապանն իջածին պէս՝ առաջին պարտքն էր համարում նորեկ սևաչեայ բժշկի գովքն ամբողջ գեղը թնդացնելու։

—Եւ իրա՛ւ, այս ի՞նչ է նշանակում, ամէնքը մեզ այս գիւղում բացասեցին, այստեղ մի օտարոտի երևոյթ կայ։

—Կարծես, բոլորեքեան մեզանից վախում են, ինքն սայլապանն էլ առաջուանը չէ, նա մեզանից փախս է տալիս։

—Բայց ընչի՞ ամէնքը շփոթութեան մէջ են և որ գլխաւորն է, ամէնքի աչքն էլ իմ վերայ է տնկած, տե՛ս, մատնացոյց են լինում ինձ, նկատեց Շահէնը։

—Կա՛ց, ես տեղեկանամ, հարկաւոր է իրաւունք գործ դնել, պէտք է հրամանաթերթը ցոյց տալ և մեր տէրութեան պաշտօնեաներ լինելն ու յանձն առած պաշտօններս յայտնել իրենց, կարծիք յայտնեց Հրէան։

—Կանչէ՛ր սայլապանին։

Նա մօտ չի գալիս, նա է՛լ սարսափածի նըման է։ Շատ ստիպելուց յետոյ՝ ռամիկը ահահար մօտեցաւ Հրէայ բժշկին և նշանացի դէպի ինքը կանչեց նրան։

—Ոչ այս գիւղումը ձեզ կը հիւրընկալեն, վճռաբար յայտնեց սայլապանը և ոչ ե՛ս յանձն կ՚առնում արիոսական հեթանոսի հետ ճանապարհ գնալը, բաւական է՝ ինչքան իմ անգիտութիւնիցս մեղանչել եմ, շուտով պիտի գնամ ապաշխարեմ և քահանայից թողութիւն ստանամ։

—Ի՞նչ ես յիմար յիմար դուրս տալիս, շըփոթուեց Հրէան։

—Ո՞չ ապաքէն քո ընկերդ անհաւատ արմենին է։

—Քեզ ո՞վ ասաց։

—Ես լսեցի, երբ երկուսդ միասին խօսում էիք, նա իւր բերանով խոստովանեց, որ ինքն արմենին է։

—Յետո՞յ։

—Յետոյ էլ ոչինչ, եթէ մի մարդ արմենին, կամ արիանին (արիոսական) է, ուրեմն նա կռապաշտ է, նա հրէայից էլ վատ է, Յուդայ Իսկարիովտացի է։

Հրէան մի խոր յոգւոց հանեց։

—Իսկ այս գիւղացիք ո՞րտեղից գիտէին մեր խօսակցութեան մասին, որ սկզբից իսկ մեզանից խոյս տուին, հարցրեց Հրէան։

—Ի՞նչ թաքցնեմ, ես ինքս ինձ արդէն պղծուած համարելով՝ հերետիկոսների հետ միասին գալուս և խօսելուս մասին, ուղղակի ձեզ բերի քահանայի դուռը և պատմեցի մեր հոգևոր հօրը մի առ մի եղելութիւնը։ Նա ինքը նզովք կարդալով իմ գլխիս, պատուիրեց դռնեդուռը ձեզ պտըտել՝ իջևան գտնելու պատրուակաւ և ամէնքին տեղեկութիւն տալ։ Տէր հայրն ինձ խոստացաւ ծանր ապաշխարանքի և վերջը թողութեան արժանացնելու։

Մեր ճանապարհորդները սկզբումը սայլապանի ուղեղը հիւանդացած համարեցին, բայց իսկութիւնն աչքի առջև էր, երկմտելու տեղիք չկար, միմեանց երեսի նայելով՝ մնացին սայլակի վերայ նստած։

—Բայց մեր խօսակցութեան մէջ արիանին բառ չի եղել և կարիք էլ չկար, ընդհատեց հրէան երկար լռութիւնը, դառնալով դէպի Շահէնը:

—Խեղճն արմենին և արիանին բառերը չի կարողացել զանազանել:

—Սպասիր, ես ուղղեմ, մտածեց հրէան և հասկացրեց սայլապանին իւր սխալմունքը, նա հաստատ հաւատացրեց, որ իւր ընկերն արմենին է և ոչ արիանին է, թէ արմենինները ճըշմարիտ և ուղղափառ քրիստոնեաներ են, և հըրամայեց գնալ և ժողովրդին խաղաղացնել:

Սայլորդի պատմելով՝ գիւղական տանուտէրն ու ծերունիները հրապարակի մէջ ժողով կազմեցին:

Վճիռ կայացաւ ներողութիւն խնդրելու մեծապատիւ հիւրերից և ամենայն յարգանքով ընդունելու:

Ամէնքը միասին գիւղական պատուելիների առաջնորդութեամբ գլխարկները հանած՝ փոքր էր մնում մօտենում էին մեր երիտասարդներին, երբ գիւղի միւս ծայրից քահանան երևեց:

—Իրա՛ւ, մենք գլխաւորը մոռացել ենք, նկատեց նոցանից մի նախապատիւը և ամբոխը դարձաւ դէպի քահանան խորհուրդ հարցնելու:

—Նզո՛վք, նզո՛վք ու անէ՛ծք, անաթեմա՛, ականջները պինդ բռնեց ջերմեռանդ հոգևորականը, երբ արմենին բառը լսեց. այդ գարշելի-

ներն արիոսականներից էլ վատթար են, արմենինները հրէաներից էլ անպիտան են, նրանք հերետիկոս են, նրանք քրիստոնէութեան նախատինքն են, նրանք շուն են պաշտում, նրանք սեղանի քամակին մի մեծ սև շուն են պահում և օրը մի սպիտակ գէր ոչխար նորա համար մորթում և անուանում են զոհ, իսկ շանն սպասաւորում են չորս հոգևորական, որոնք կերակրում են շան կերածի յաւելուածովը: Թո՛ւք, թո՛ւք, թո՛ւք, երեք անգամ թքեց քահանան՝ դառնալով դէպի օտարականները, նախ դոցա այս կողմերն ուղարկողին, որ պատճառ է դարձել ուղղափառների երկիրը պղծելու, երկրորդ՝ բերող անպիտաններին, (սայլապանը կուրծքը թակելով՝ աղի արտասունք էր թափում) և երրորդ՝ ընդհանրապէս դրանց երեսը տեսնողին: Վա՜յ մեզ, վա՜յ մեզ, մենք ամէնքս անէծքի տակ ենք. մենք էլ հերետիկոսացանք, այսուհետև եօթը տարի մեր երկրի բերքը կը կտրուի, մեր գլխին երկնային բարկութիւնը կ'իջնի, կրա՛կ պիտի թափուի անձրևի փոխարէն և մեր դաշտերը լափէ: Ծունկ չոքեցէ՛ք, երեսներիդ վերայ գետին տարածուեցէ՛ք, հող ցանեցէ՛ք գլխներիդ, արտասունք թափեցէ՛ք առատ առատ, դուցէ սրբերը բարեխօս լինին. Աստուած այս պատուհասն ընդհանուր ուղղափառաց աշխահը չափաւ: Բայց որպէս զի մենք կարողանանք քաւել մեր ծանր յանցանքն և վերնային գթու-

թեանն արժանանալ, ծնկան վերայ մի սրտանց աղօթելուց յետոյ՝ պէտք է նզովել արիստականին ողջ ողջ պատառոտենք, ծուատենք և գէշը քարշ տալով՝ գիւղէս երեք վերստ հեռաւորութեամբ վայրենի գազանների կերակուր անենք։

—Իսկ միւս ընկերի՞ն, մէջ մտաւ ծերունիներից ամենախելացին։

—Իսկ միւս անպիտանին, եթէ ուղղափառ է արժանաւոր մեծ տալուց յետոյ՝ մի մութ սենեկի մէջ եօթն օր—եօթը գիշեր փակենք, օրական մեռնելուց պահելու չափ սև հաց տանք և երկու օրը մի անգամ ծարաւութիւնից չպապակելու չափ պղտոր ջուր։

Խղճալի բժիշկները քահանայի բարձրաձայն ատենախօսութիւնն իւրեանց ականջովը լսելին ու ապշած՝ միմեանց երեսի են նայում։

—Փախչի՞նք, բայց ո՞ւր և ի՞նչպէս, կըմկմաց Շահէնը, իմ դատակնիքս արդէն կարդաց, արիստականութիւնը գէ՛թ կեանքս կը խնայէր, իսկ արմէնինութիւնս, իսկ ազգս ինձ ուղղակի գազանների կերակուր արեց. դու գոնէ քեզ ուղղափառ ներկայացրո՛ւ և գլուխդ մահից ազատիր։

—Հոգ չէ՛, մենք սովոր ենք հալածանքի, պատասխանեց Հրէայն, եթէ դուք մի քանի մոլեռանդ ֆանատիկոս տգէտների մէջ էք անարգուած, մեր ազգը 19 դար է տանջւում է։

—Սակայն եթէ առջա քո ազգութիւնը ի-

մանամ։ աւելի կըկատաղին և քեզ իմ վիճակիս կ'ենթարկեն։

—Մեռնե՛լ և ապրե՛լ ի միասին, նահատակուե՛լ ձեռք ձեռքի տուած գիտութեան անունով, վճռեց հաստատապէս Հրէան։

—Կեցցե՜ս, ընկերի ձեռքը սղմեց Շահէնը։

—Անաթեմա՜, երեք անգամ նզովեա՜լ եղիցի, մի խառնաշփոթ ճիչ բարձրացրած՝ վերթըռաւ չոքած տեղից խաժամուժն և քահանայի առաջնորդութեամբ դրոհ տուեց դէպի թշուառները։

—Համբերութի՜ւն, յետ դարձաւ քահանան ձեռքը վեր բարձրացրած՝ դէպի ժողովուրդը։

Ամբոխը կանգ առաւ։

—Մօտ արի՛, մոլորեա՛լ, ցուցամատով յառաջ կոչեց սուրբ հայրը Հրէային։

Ճար չըկար, հրամանը կատարելու էր։

—Ծնկան վերայ ե՛կ այդտեղ։

Հրէայն խոնարհեց։

—Հիմայ խոստովանիր, թէ ի՞նչ կրօնի ես դու պատկանում։

—Հրէայ եմ։

—Անէ՛ծք, նզո՛վք, հայհոյա՛նք Քրիստոսի թշնամուն, երկուսին էլ նոյն մահով մեռցնե՛լ, անօրինեց քահանայն և ինքը մի կողմը կանգնած՝ մատով յառաջ մղեց խուժանին դէպի օտարականները։

Մոլեռանդ հրոսակները քաշքշած գազան-

ների նման ատամները կրճտելով՝ անհասկանալի ոռնոցով օդը թնդացրին և յարձակուեցին։

Բայց հրէային աւելի շուտ պիտի հասնէր նահատակութեան կարգը, եթէ մեր անվախ Շահէնը չը վազէր դէպի հաւատարիմ ընկերն և չը միանար նորա հետ։

—Չէ՛, մտածեց Շահէնը, իմ կողմից կնամարդութիւն է, սա իմ պատճառաւ է մեռնելու գոնէ թող իմանայ, որ իւր համամիտ ուղեկիցն իրանից շուտ կենազրաւ եղաւ։

Շահէնն արդէն հրէայիցն աւելի յառաջ էր ընկել, երկու քայլ՝ և ահա ինքն իրեն ձգելու էր բարբարոսների ճիրանների մէջ։

ՑԻԸ.

—Կացէ՛ք, կացէ՛ք, գոռաց տանուտէրը, երբ առաջին բռունցքի հարուածը նոր էր իջել մեր նահատակների գլխին։

—Կացէ՛ք, միանգամից հետևեցին մի քանի ձայներ։

Վերջին գոչողները ձիաւորներ էին՝ Նիզակները ձեռքներին, նորանք մի րոպէի մէջ յետ մղեցին խառնիճաղանճ ամբոխին։

Եկուորը գաւառապետն էր քանի չափ հեծելազօրով։

Խուժանը յետ քաշուեց, բայց չցրուեց, ջեր-

մեռանդ քահանան յառաջ վազեց և ժողովրդին կանգնեցրեց։

—Ո՞ւր էք փախչում, հաւատապաշտիկ մեղաւորնե՛ր, կուրծքը դէմ տուեց արժանապատիւ հովիւը, մի՞թէ վախեցաք մի քանի զինուորներից և գաւառապետից, ամօթ չէ՞ ուղղափառ քրիստոնէին, գոնէ օրինակ առնէիք անհաւատ արիոսական հայից և մեր Տիրոջը չարչարող հրէայից, թէ ի՜նչ քաջութեամբ սպասում էին մահուան։ Համբերեցէ՛ք՝ տեսնենք, եթէ արդարադատ գաւառապետը չի կամենայ՝ ինչպէս արժանաւոր ուղղափառ՝ մեզ հետ մասնակցելու, մենք գլխներս մահի կը տանք և քրիստոնէից աշխարհքիցն այս անէծքը կը բառնանք։

ՑԻԹ.

—Շատ և շատ շնորհակալ եմ ձեզանից, ճշմարիտ քրիստոնեայ եղբայրնե՛ր, ձայն տուեց գաւառապետը քաղցր դէմք առած, որ դուք այդքան ջերմեռանդ էք գտնուել դէպի մեր սուրբ հաւատը, Աստուած ինքն է ձեզ ներշնչել. այս անպիտաններն արժանի են մահուան, մեր ողորմած կառավարութիւնը ցանկանում էր սըրանց կախել, բայց սրանք փախել են, ապրէ՛ք, իմ որդի՛քս, որ թոյլ չէք տուել յանցաւորներին խոյս տալու արդարութեան առենից. ես ուղարկուած եմ սորանց ետևից, որ լինէին՝ գանելու

և տանելու էի. մեր նահանգական քաղաքում մը կախաղանը ցցած՝ սրանց է սպասում, անողոք դահիճը կարմիր շորերը հագին՝ պարանն օղակ արած՝ սրանց է մնում: Ուրեմն դուք միամիտ կացէ՛ք, սրանք այս րոպէից իմ կալանաւորներս են և օրէնքի անունով ես սրանց բանտարկում եմ. դուք վերադարձէք ձեր տները և միամիտ եղէք, որ ձեր քրիստոնէական սուրբ պարտականութիւնը կատարել էք:

Աստուածային շնորհքն և օրհնութիւնը լինի մեր արդարադատ դատաւորի վերայ, խաչակնքեց քահանան:

Դատաւորը գլխարկը հանեց և համբուրեց դէպի ինքը ձգուող աջը:

—Մենք քո ամենախոնարհ ծառաներն ենք, մեր հարազատ հա՛յր, մեր խնամակալ, մինչև ծունկը երկրպագութիւն էին անում ժողովուրդը դատաւորին:

Դէ՛հ, փախստականնե՛ր, նստեցէք ձեր սայլակի վերայ և թող իմ ձիաւորներից մէկը վարի ձեր ձիանքը: Իսկ դու՝ բարձրարժան սուրբ հա՛յր, ժողովուրդի արթուն և եռանդուն հովի՛ւ, շտապի՛ր լծել տալու քո սայլակը, կամ ձի նստելու և ինձ հետ միասին գնալու մեր սրբազան առաջնորդի մօտ, որից ես անձամբ խնդրելու եմ արժանաւոր վարձատրութիւն քո անխոնջ արիաջանութեան համար:

ՃԼ.

—Տղա՛յք, տնօրինեց դատաւորը իւր ձիաւորներից չորսին, երբ մի ասպարիզաչափ հեռացել էին գիւղից, կապեցէ՛ք այս խռովարար քահանայի ոտք ու ձեռքն և տարէ՛ք մեր կայարանումը բանտարկեցէ՛ք, մինչև որ սրան յանձնենք հոգևոր ատենի արդարութեանը, իսկ դո՛ւք, պատուական երիտասարդ բժիշկնե՛ր, գնացէ՛ք դէպի ձեր սուրբ նպատակն և պիտանի եղէք հայրենիքին ու մարդկութեանը, միայն թէ զգոյշ եղէ՛ք միւս անգամ չզրգռելու տգէտ ամբոխի մոլեռանդութիւնը:

Մեր տղայքը շնորհակալ եղան բանիմաց և խոհական դատաւորից և երկու հեծեալների ուղեկցութեամբ գնացին իւրեանց ճանապարհը:

ՃԼԱ.

Շատ մեծ չեղաւ մեր Շահէնի բերած օգուտը, ինքը Ռուսաստանի բնութիւնը չուտով իւր մեծագոյն տնօրէնութիւնն արաւ. ամառուան վերջըն էր, որ նոքա տեղ հասան, բայց այդ բառն իւր բուն նշանակութեամբը չի կարելի գործածել այդ ցրտաշունչ աշխարհի համար, յանկարծ մի պարզկայ կ'անի և մեր հայրենիքի նոյեմբերի կէսը մեզ կը յիշեցնի, էլ ի՞նչ վարակիչ հիւանդութիւն կարող է գլուխ պահել: Հե-

տեւաբար՝ Նորաւարտ բժիշկներին իրաւունք տրուեցաւ վերադառնալ իւրեանց հայրենիքը։

Ցաւ է միայն, որ մի քանի գեռահաս ազնիւ երիտասարդներ այդ Թշուառ բժիշկներից աշնան օրերում բուսած բողբոջի նման իւրեանց կոկոնի մէջ սալարեցան։ Սոցա Թւում և մեր պարսկաստանցի հայն էլ գուցէ լինէր, եթէ չը հասնէր նորան այդ կողմերը բնակուելու համար իբրև աքսոր ուղարկուած գերմանուհու խնամածութեան կենդանարար օգնութիւնը։

ՅԼԲ.

Օտարութեան մէջ սրտացաւ և կարեկից անձնաւորութիւնից աւելի մխիթարութիւն չկայ մարդուս համար, մանաւանդ Շահէնի նման անտէր ու անօգնականի։

Ես չեմ ասում, թէ Շահէնն այնքան անհեռատես լինէր, որ իւր հայրենիքը, կամ բարեկից Կովկասը փոխարինէր օտար երկրի հետ, բայց ի՞նչ պէտք է արած, շատ անգամ շրջակայ հանգամանքները գործել են տալիս մարդուն իւր չ-ցանկացածը։ Եթէ Շահէնը մի քանի կոպէկ ճանապարհածախք ունենար, և որ արդարացին է, եթէ իւր գլուխը փոքր ինչ խնայէր, զգոյշ լինէր՝ շուտով ցաւը հանդարտելուն պէս՝ իւր շատ նմանների օրինակին համաձայն՝ ինքն էլ պատերազմի դաշտից վերադարձող յաղթական պսակն

առած քաջ զինուորի պէս կը գար դէպի ուր սիրտը ձգտում էր, ի հարկէ, եթէ ոչ Սալմաստ, որտեղից մի անգամ ընդ միշտ յոյսը կտրել էր, գոնէ իւր երկրացիների նոր հայրենիքը, այնտեղ, ուր պիտի լսէր Սալմաստեցու աղաւաղած հայ բարբառը, կամ ուր հայի շնչով է լցուած օդը։

Նորա վերջին նպատակը Հայաստան գնալն էր։

Մէկ կողմից աղքատութիւնն ու հագուստի պակասութիւնը, միւս կողմից ամենամեծ անձնուիրութիւնը ճկեցին Շահէնին և ոտքերը տարածեցին։

Ինչպէս ասացի, վարակիչ հիւանդութեան վերջանալուն մօտ էր, որ Շահէնը տեղ հասաւ, բայց անխնայ գործողներից մինը հանդիսացաւ. ամբողջ նահանգը վարակիչ հիւանդութեան պատճառաւ բժիշկներով լցուել էին։

Շահէնն իւր ուրիշ համարուեստների նման զանազան հոտաւէտ դեղերով ու կծու թթուաներով չէր օծւում, կամ հեռուից տկարին մի երկու խօսք ասելով՝ պաշտօնը կատարած չէր համարում, նա Թշուառ վարակուածների ամէն մի երակն առանձնապէս զննում էր, ժահահոտ աղականութիւնների մէջ իբրև մի ծաղկահոտ բուրաստան էր ներս մտնում, իւր ձեռքերով տեսակ տեսակ օծանելիք էր քսում, ամէն բան

անում էր անձամբ, միայն թէ մահուան ճանկից դուրս կորզէր անմեղ զոհին։

Եկած օրից՝ երիտասարդ բժիշկն ամբոխի ուշադրութիւնը գրաւեց, իր հսկողութեանը յանձնուած գիւղացիների տները անխտիր ներս ու դուրս էր անում և ձեռքից եկած օգնութիւնը հասցնում։

—Մի աներևոյթ զօրութիւն գործակից է սրան, ձայն տարածուեց գիւղի մէջ, սա Աստուածանից մեզ մխիթարիչ հրեշտակ է ուղարկուած։

Այնուհետև ամէն բերանից օրհնութեամբ էր արտասանւում Շահէնի պատկառելի անունը։

—Արդա՛րև, Աստուծոյ մատը կայ մեր գիւղի վերայ հսկող, աւելացնում էին գիւղացիք, ապա թէ ոչ, ո՞րտեղից այս երկու անձնաւորութիւնները մեզ կը հանդիպէին. ի՞նչ կը լինէր մեր դրութիւնը, եթէ աքսորական կնոջը գործակից չը հասնէր մեր ազնիւ բժիշկը։

Նոցա խօսքը մի գերմանուհու մասին էր, երկու երեք տարի էր, այն կինը լոյս էր ընկել այս գիւղումն և ամենքի համակրութիւնը գրաւել։ Միջակ տարիք, բաւականին բարետեսիլ, գեղեցկակազմ ու բարեհամբոյր էր տիկինը։

Առաջին անգամները անծանօթ օտարուհին կասկածելի ոմն էր գիւղացի ռամիկների համար, բայց հետզհետէ նա անտաշ վայրենիների մէջ

առաջին խորհրդատուի դերն էր կատարում։ Ամէնքը յարգում ու սիրում էին նրան, ամէնքի դուռը նորա համար բաց էր, ամէնքի տան հիւանդապահն ու խնամածուն էր։

Այժմ է՛լ բարի գերմանուհին ընկերացել էր Շահէնի հետ և ուր որոշող սեռը բժշկի բազկիցը բռնում յետ էր քաշում՝ հիւանդ կանանցը պէտք եղած օգնութիւնը հասցնելու, այդտեղ գերմանուհին էր Շահէնի խորհրդով գործում։

Ռամիկն ամէն տեղ ռամիկ է, նախապաշարմունքն ամէն տեղ նոյնն է, քաղաքակրթութիւնն է միայն անարգել թոյլ տալիս, առանց սեռը հարցնելու, ձեռքից եկածին չափ ընկերին կարիքին հասնիս. ինչպէս մեզանում՝ նոյնը և Ռուսաստանի խորքերում, մանաւանդ 20—25 տարի սրանից յառաջ, այր մարդը վստահութիւն չունէր կանանց հետ մօտիկ յարաբերութիւն անելու, թող թէ նրանց մարմնին մօտենալու։ Հարեմը շատ հին է, նորա ոյժը դեռ շատ տարիներ, գուցէ և դարեր պիտի տևէ։ Մենք չենք ուրանում, որ Շահէնի աչքերը շատ կանանց սիրտ էր գողանում, մենք դեռ մի քանի անգամ պատմել ենք մայրաքաղաքում և գիւղերում Շահէնի գըլխումն անցածները, բայց այն ուրիշ ժամանակ էր, հիւանդ կնոջը կամ նորհաս օրիորդին հեշտութեամբ կպչել չէր կարելի։

Գերմանուհին այստեղ էր պիտանի։

ԾԼԳ.

Շատ չանեց Շահէնի հեղինակութիւնը, ժողովրդի կարծիքը մի քանի ժամանակից իսպառ փոխուեց նորա վերայ:

Այդ գիւղի, քան այլ տեղերի մէջ խօլերան իւր կոտորածն արեց, մի քանի տներ իսպառ բնաջինջ եղան, բոլոր ընտանիքն երկու երեք օրուան մէջ միմեանց ետեւից բռնուեցին և մեռան:

Մարդս շատ սառն էակ է, նա այդպիսի միջոցներում երբեմն այնպէս քարասրտանում է, որ սառնութեամբ տանում է ամէն պատահարներ, նա իւր սեպհական զաւակից է՛լ կարեկցութիւնը խնայում է: Քիչ օրինակ չի եղել, որ սովի ժամանակը ծնողն իւր զաւակին է կերել:

Նոյնանման խղճութիւն էլ այս դէպքումն էր կատարւում, ոչ միայն օտարներին՝ իւրեանց սեպհական ննջեցեալին էլ չէին մօտենում:

Ոստիկանութեան հսկողութիւնն ոյժ չունեցաւ բիրտ ռամկի վերայ, գիւղական տանուտէրներին էր յանձնուած տեղական միջոցներով այդպիսի դէպքերումը ձեռնհաս լինելու, իսկ այժմ այդ հնարքն էլ անգործադրելի էր. ինքը տանուտէրը ոչ այլ ինչ էր, եթէ ոչ նոյն և մի տըգէտ ռամիկը, և վերջապէս որի՞ն դէմ դնէր, ո՞ւմ ստիպէր, աչքի առջևն երկու որդիքը մեռան ու վերցնող չեղաւ:

Միակ մարդիկը, որ ամէն մեռածին հասնում էին, բժիշկն ու գերմանուհին էին: Վերջերումը նրանց պաշտօնը ննջեցեալ եղած տըներից որևիցէ հնարքով դիակները դուրս տանելն էր. երբեմն խնդրանօք, երբեմն ստիպմամբ գնում էին մի երկուսին նոյն ծառայութեան համար:

Շահէնի գալստից յետոյ՝ այս սարսափելի կոտորածքը մի շաբաթ տևեց, որովհետև մի գիշեր խիստ ցուրտ արեց և վարակիչ ախտի ազդեցութիւնը զանակի պէս կտրեց:

ԾԼԴ.

Նոր բան լսե՞լ ես, քչփչում էին ամէն ոք գիւղի մէջ, ասում են՝ պառաւ Մատրոնան երազ է տեսել, որ բժիշկ Շահէնն է եղել ցաւի առաջնորդը. նա է եղել մահ տարածողը:

—Եւ իսկապէս, երբեմն չենք միտք արել, չէ՞ինք տեսնում, ո՛ր տունը մտնում էր, մահն էլ հետն էր գնում:

—Դրա ապացոյցն էլ այն է, որ ինքը բժիշկն երկու օր է հիւանդ է ու մեր գիւղի տկարութիւնը թեթևացել է, համարեա բոլորովին չը կայ, քանի օր է, որ մարդիկ չեն մեռնում:

—Ի՞նչպէս վաղուց չիմացանք, որ սպանէինք ու այսքան անբաղդութիւնը մեր գիւղի գլխին չգար:

—Երթանք հիմա սպանե՛նք։

—Աւելորդ է, անկարծիք ինքն էլ շուտով կը մեռնի։

—Է՛լի մի նորութիւն կայ. ասում են՝ էդ անիծուածն անհաւատ հերետիկոս է, մի գիւղում ճանապարհին կամեցել են սպանելու, փախել է։

—Ո՞վ ասաց։

—Մի բժիշկ է պատմել իւր ընկերներից մէկին մօտիկ գիւղումը, իսկ մեր Միտրաֆանը, որ նորա մօտ ծառայելիս է եղել, լսել է։

—Եթէ այդպէս է, նորան սպանողն արքայութիւն կ՚երթայ։

—Ո՛չ, արդէն հիւանդ է, թողէք անտէր մնայ ու ինքն իրեն մեռնի, եթէ ուղղափառ քրիստոնեայ չէ, Աստուած նորան կը պատժի։

—Ես բժշկի համար չեմ ցաւում, մեր բարի գերմանուհին էլ նորա հետ բարեկամանալով ինքն էլ հերետիկոս դարձաւ։

—Ուրեմն շատ լաւ է եղել, բժիշկը հիւանդ է, գերմանուհին էլ նրան պահպանողը, երբ որ մենք ուշք չենք դարձնիլ, երեսի վերայ կը մնան, երկուսն էլ կը մեռնին։

ՃԼԵ.

—Ա՛յ զարմացք, մեր կարծածի պէս չեղաւ, բժիշկն ու գերմանուհին կատարեալ առողջ են,

բժիշկը մի քանի օր հիւանդ է եղել, բայց անվնաս է պրծել։

Այս լուրը բերողը մի գիւղացի էր, որ իսկոյն տեսել էր մեր օտարականներին և եկաւ խաժամուժի մէջ զարմացմամբ պատմեց։

—Դուք զուր էք ուրիշ բան սպասում, ոչ բժիշկն և ոչ իւր ընկերուհին կը մեռնին, նրանք մարդիկ չեն, նրանք սատանաներ են մարդի կերպարանքով, որ մեր մեղաց համար մեր գլխին պատիժ են ղրկուած։

—Ընչի՞ց գիտես.

—Երբէք տեսե՞լ ես նրանց եկեղեցումը։

—Եկեղեցու մօտովն անցնելն էլ ոչ ոք չի նկատել։

—Չէ՞ք յիշում, սկզբներումը՝ ցաւի դեռ թոյլ ժամանակն այդ անիծուածը մեզ խորհուրդ էր տալիս մեռածներին եկեղեցի չընդունելու, գիտմամբ վնասակարութիւնն էր պատճառ բերում, բայց ի հարկէ սատանան եկեղեցուն հակառակ է։

—Իւր ասածը կատարեց, տանուտէրին հրամայեց օրէնքի անունով արգելել եկեղեցին ննջեցեալ դնելը, իբր թէ դրանով մեռնողների թիւը չաւելացրեց։

—Բայց ի՞նչպէս խաբեց մեզ՝ մուխ ու ծխի և սատանայական զզուելի հոտերի մէջ նստացնելով։

—Այն անկասկած դիւական խունկը կը լինէր։

—Վա՜յ մեզ, ուրեմն մեր հոգիները հիմա բեհեզղեբուղի ճանգերումն են՝ դժոխքի վերին անկիւնումը։

—Ի՞նչ պիտի անել, ուսերը վեր քաշած մտածում էին գիւղացիք, գնանք քահանային հարցնենք։

—Սատանան խաչակնքել չի կարող, Աստուծոյ անունը տալուն պէս՝ անդունդը կը հալածուի, շատ հեշտ է իմանալը, լուծեց մեծիմաստ հովիւը դժուարակնճիռ հարցը, գնանք, ստիպենք Աստուծոյ անունով խաչակնքել։

—Մենք էլ ձեզ նման մարդիկ ենք և քրիստոնեայ, միմեանց երեսի նայելով ստիպուեցին ասելու Շահէնն ու գերմանուհին՝ խաչ քաշելով երեսներին յունական ծիսակատարութեան համաձայն։

Պէտք է ասել, որ մազաչափ մնաց, գերմանուհին իրեն և Շահէնին վտանգի էր ենթարկում. նա իբրև բողոքական՝ չէր ուզում խաչի նշանով իրեն տեառնագրելու, բայց Շահէնն աչք ու յօնքով համոզեց։

—Այդ ինչո՞ւ ձեռնոցներ էք հագել և միշտ կրում էիք մեր տները մտնելուս, դրանով դուք թագցնում էք սատանայական եղունգները. յայտնի է, որ դևերն երկար եղունգներ կ'ունենան։

Խեղճերն ստիպուեցին ձեռնոցները հանելու։

Բժշկական խորհուրդին համաձայն՝ ինքը Շահէնն ու գերմանուհին ժողովրդի մէջ վարակուելուց զգուշանալով՝ ձեռնոցներ էին կրում։

—Պէտք է դրանց մերկացնել, երկայն եղունգներ նոցա վերայ չգտնելուց յետոյ՝ պնդեցին մի քանի պառաւ կանայք, որ դևերը պոչաւոր են, անպատճառ հագուստի տակից սորա՛նք պոչ էլ կ'ունենան։

Ի՞նչ անել, ամբոխի մոլեռանդութիւնից ազատուելու համար և այդ արին. ռամիկ խուժանն ամօթ չը համարեց հրապարակի մէջ սատանայ կարծուածներին նախահայրերի վիճակին ենթարկելու։

—Յիսո՛ւս Քրիստո՛ս, խաչակնքելով ուսերը շարժում էին ամէնքը, դուցէ սորանք անպոչ դևեր են։

—Դիցուք, այստեղ հրապարակի մէջ Աստուծոյ անունից չհալածուեցան դրանք, եկեղեցո՞ւմն ի՞նչ կարող են դիմանալ սրբերի պատկերների առաջին, որոնց վրայ նայելուն պէս՝ գետինը կ'անցնին, անօրինաց քահանան։

—Աւելորդ է դիմադրելը, յառաջ անցէ՛ք դէպի եկեղեցին, ձայն տուեց բազմութիւնը, եթէ դուք դևեր լինիք, մեր սրբերի անէծքը

ձեզ կը խորտակէ, իսկ եթէ մարդիկ էք, ի՞նչ ասելիք ունենք։

Խեղճ գերմանուհին տխրուեց իր համոզմանց հակառակ իր ծայրայեղ վերանորոգիչ Լուտերի հիմնական վարդապետութիւնը ոտնատակ տալու։ Նա գլխիկոր հարկադրուեց մոմեր առնել և պատկերների առաջին վառել ու ծունր կրկնել, և այդ ծանր խաչ էր իր համար։ Գերմանուհին որքան և զարգացած կին, այնու ամենայնիւ բողոքականութեան չորուցամաք սկզբունքներով գլուխը լցրած՝ ընդդէմ էր ամենայն ծիսակատարութիւնների։ Նա միսիոներական պաշտօն էր կատարում, այդ իսկ պատճառաւ իբրև աքսոր ուղարկուած էր Ս. գաւառի գիւղերից մէկը։ Նորա աքսորանքը լրացել էր և եթէ խօլերան արգելք չլինէր, նա գնացած կը լինէր։

Մեր Շահէնը մի կողմից ծիծաղում էր մողովրդի սնահաւատութեան վերայ, միւս կողմից իբրև ճշմարիտ հայ—քրիստոնեայ, Լուսաւորչու հարազատ զաւակ՝ ամենայն յանդգնօք մերձենում էր նուիրական պատկերներին։ Շահէնի մանկութեան օրերում Պարսկաստանում թէև ցանցեր լարում էին կաթոլիկ և բողոքական մարդախաբ քարոզիչները, բայց հայերից շատ սակաւներն էին խճճուել նորանց թակարդների մէջ։

—Հեռացէ՛ք, աղաչում ենք, մեր գիւղից, որբեր էլ որ լինիք, մեզ համար եկմտելի էք,

մենք չենք ուզում ձեզ վնասել, օգո՞ւտ թէ վատ էք կամեցել մեզ համար, թող ձեր դիմացը գայ, խնդրեցին գիւղացիք մի օր Շահէնին, մինչև դուք չերթաք, մեր սրտերը չեն խաղաղուիլ, Տէրը ձեզ հետ։

—Այս հրաժարականն իւրեանց պաշար առած՝ օտարականները թողին տգէտ ժողովրդին։

ՃԼԶ.

—Շատախօս կաչաղակ ես շինել ինձ, ճար չըկայ, պէտք է վերջացնեմ, ասաց ինձ բժիշկս հետևեալ առաւօտը։

Նա այսպէս սկսեց.

—Ա՜խ, ինչի՞ ծանօթացաք ինձ հետ, ընչի այդքան ազնիւ բնաւորթիւն ունիք, ընչի՞ ինձ գրաւեցիք ձեր յատկութիւններովը։

—Ես երբէք տեղիք չեմ տուել ձեզ այլապէս ճանաչելու ինձ քան մի բարեկամ, դուք իրաւունք չունէիք ուրիշ ենթադրութիւններ հանելու, չնայելով մեր սեռերի զանազանութեանը, մեր տարիներին, մեր բնակարանների կից լինելուն, մեր մէջ միայն եղբայրական միութիւնն է թագաւորած եղել։

—Այո՛, բայց իմ համեստ առաջարկութիւնով ազնուութեան դէմ ես ոչինչ բանով չեմ մեղանչում, նորանով անբարոյականութիւնը չի թունաւորում ձեր ողջախոհ սիրտը, մեր բնա-

ւորութիւնները համապատասխանում են, մենք կը լինինք քաջեր և երջանիկ ամուսիններ, երկու երեք քնքուշիկ անմեղ արարածներ կը հարթեն մեր դէմքերից մելամաղձոտութեան կնճիռները և մենք միասին ապրելով՝ պիտանի անդամներ կը լինինք մարդկութեանը։

—Ես չեմ ասում, թէ երբևիցէ այդ լծի տակը չեմ մտնելու, ես շատ լաւ յիշում եմ ինձ կեանք տուող արենկոլոլ ծերունուն նորա վերջին շնչումը տուած խոստումս, հօրս անդառնալի հրամանը թէև ակամայ, բայց կատարելու եմ, սակայն ներեցէք ինձ, տիկին, Շահէնը մի որոշ ազգութեան անդամ է, մի օրից մի օր նա թողնելու է այս սառը կլիման, այս անհիւրընկալ ռամկութիւնը, որ նորա գործունէութեան առաջին օրից հալածում է իրեն՝ անհաւատ, հերետիկոս, արիստական և մինչև խոլերայի առաջնորդ ու գև կոչելով։

—Շատ բարի, բայց մեզ ո՞վ է ստիպում այս կողմերը մնալու, սորանից երկու տարի առաջ մեր կեանք մաշած գիւղում կօշիկներս յառաջներս դրին, մենք վերջացրած ենք համարեա այս աշխարհի հետ մեր հաշիւը, իմ ապաշխարանքի օրերն էլ վաղուց լրացել են, լուսաւորեալ Եւրոպան մեր առաջին է, գիտեմ քո քակդթոյլ չէ տալիս, բայց ես տեղ հասնելու չափ միջոց ունիմ; իմ հայրենիքս՝ լայնատարած ու քաղաքակրթուած Գերմանիան մեզ սիրով սա-

պընջական կը լինի, քո բժշկութիւնդ իմ ազգի մէջ մեծ յարգ ունի և մենք մի համեստ անկիւնում բաղդաւոր կեանք կը վարենք։

—Հայրենի՞ք, ա՞զգ, բարեբաղդ վիճա՞կ, պաւակնե՞ր, ի՞նչ քաղցր, ի՞նչ վսեմ, ի՞նչ հըրապուրիչ բառեր, խորին շնորհակալութիւն, տիկի՛ն, տուէք ինձ թոթուել ձեր ձեռքը։

Գերմանուհու ոտքերը գետնիցը կտրուեցին, նա կարծեց, թէ իւր առաջարկութիւնն ընդունուեց Շահէնից, նա ուրախ ուրախ պարզեց իւր ձեռքը։

Այս խօսակցութիւնը լինում էր Շահէնի և գերմանուհու մէջ խոլերան վերջանալուց երկու տարի յետոյ Ս. գաւառի մի գիւղում։

Երկու տարի էր Շահէնը բնակւում էր գերմանուհու հետ այս կողմերը մի բնակարանում. ինչպէս ասացի, Շահէնի ընկերները վաղուց վերադարձել էին իւրեանց հայրենիքը, բայց նա աղքատութեան պատճառաւ ստիպուեց ընդունել խոլերայից յետոյ այս կողմերի գաւառական բժշկութիւնը։

Գերմանուհին թէպէտ ազատ էր այնուհետև, բայց Շահէնից չէր բաժանւում, նա բըժշկի ընկերը, տանտիկինը և մխիթարիչն էր։ Ամէնքը Շահէնի ամուսինն էին համարում գերմանուհուն, բայց այդպէս չէր. մի քանիսը վերջումն իմացան և սկսեցին բամբասել երիտասարդ բժշկին, բայց նորա հոգն էլ չէր, խիղճն իրեն

չէր մեղադրում և այդ էր իւր լուռ պատասխանը, ուրիշներն ինչպէս կամին, թող ընդունեն, Շահէնը գիտէ, որ ինքը գերմանուհու դէմ իւր սրտումը միայն եղբայրական սէր է տածել, ուրիշ ոչինչ։

Մենք իրաւունք չունինք ասածներիս ճշմարտութեան վերայ երկմտելու, մեր կոպիտ ճգնաւորը մեզ վաղուց ծանօթ է, մենք տեսել ենք նրան ուսանողութեան շրջանում Վարվառա Վասիլևնաների ընկերութեան մէջ, հետն ենք եղել կոմսուհու առանձնախօսութիւնների ժամանակը, ի՞նչն էր ուրեմն, հարց է այստեղ յառաջ գալիս, Շահէնի կենակցութեան շարժառիթը գերմանուհու հետ։—Այդ բոլորովին բարի տիկնոջ ցանկութիւնն էր։—Թոյլ տուր ինձ քանի դու այս կողմերումն ես, քեզանից անբաժան ապրելու, խնդրեց Շահէնին հիւանդ ժամանակն իրան հարազատ քրոջ նման խնամք տանող տիկինը, և Շահէնն ուրախութեամբ համաձայնեց։

Իսկ գերմանուհու կողմից մենք չենք կարող երաշխաւոր լինել, նա իւր մտքումն ուրիշ նպատակ է ունեցել։ Վերոգրեալ խօսակցութիւնից մենք պարզ հասկացանք, որ խորամանկ և խելացի կինն առաջին օրից սիրահարուած է եղել մեր երիտասարդ բժշկի վերայ. ազատ ու ջահել այրի կին, բաւականին բարետեսիլ, ի՞նչ պատճառաւ պիտի արհամարհէր աշխարհիս վայելչութիւնները, մի՞թէ Շահէնն իւր սրտի ու-

զած ընկերը չէր, վերջապէս ե՞րբ կարող էր երևակայել անգամ խեղճ կինը, թէ երկու շարունակ տարի միասին ապրելուց և բնաւորութեամբ ու շատ յատկութիւններով համաձայն լինելուց յետոյ՝ այսպիսի մեծ արգելքի կը հանդիպի։

Երկու շարունակ տարի համբերեց տիկինն և միշտ սպասում էր Շահէնի կողմից լսելու առաջարկութիւնը, բայց երբ այդքան մօտ յարաբերութիւնից յետոյ ոչինչ ակնարկ կամ նշոյլ չընկատեց, նոր հասկացաւ, թէ ի՛նչպիսի անհատի հետ գործ ունի, ինչ անփշրելի ժայռի է հանդիպել իւր խոփը։

Ի՞նչ պիտի արած, գերմանուհին սկսաւ իւր կողմից նշաններ գործ դնել, սիրահարական լեզու բանացնել, կանացի շողոքորթութիւններ անել, սրտաքարշ ժպիտներ շարժել, բայց և դրանք չօգնեցին։ Միակ ճանապարհը մնացել էր ուղղակի առաջարկութիւն անելն և իւր սէրը յայտնելը։

Թէ ի՞նչ խօսքեր էր ծախսել տիկինը, մենք չգիտենք, մեզ միայն վերջին խօսակցութիւնն է յայտնի, մենք ականատես ենք, թէ ի՛նչ սիրալիր և ուրախ սրտով պարզեց գերմանուհին ձեռքը Շահէնին։

—Ուրեմն ես այժմ ամենաերջանիկ կինն եմ. գոչեց տիկինը, կարծելով թէ ձեռքը տալը Շահէնի կողմից համաձայնութեան նշան էր,

ուրեմն ես իմ հայրենիքումս կարող պիտի լինիմ պարծենալու՝ Ասիայի բնական ազնիւ ծաղիկը եւրոպական մշակուած պարտիզի ծաղիկների ոտների վերայ պատուաստելով, արեւելքի կործանուած աւերակների մի կոկած ու քանդակագործած քարով արեւմտքի հրաշալիքների ու փառաշուք հոյակապ պալատների ճակատը զարդարելով։

—Դուք կարող եղաք ձեր խօսքերով բորբոքելու իմ մէջ կիսաշէջ կրակը, դուք պատճառ դարձաք ոռոգելու սալարած բողբոջը՝ ժամանակին իւր հայրենիքում աճելու և պտղաբերելու, թող այդ աւերակի քարը շարէ իւր հայրենիքի բիւրաւոր աւերակներից մի խոռը և այդ բաւական է։ Այո՛, տիկի՛ն, դուք իմ պարտաւորութիւններս ինձ հասկացրիք, դուք իմ մէջ հայրենասիրութիւն զարթնացրիք, դուք ձեր առաքելութեան պարտքը կատարեցիք, գնացէ՛ք, ուրեմն, պարծեցէ՛ք ձեր հայրենակիցների մէջ, թէ մի չորացած, իւր մայրենի հողից դուրս խլուած, արեգակին ցոյց տուած արմատը դուք վերատնկել էք իւր բուն հողի վերայ։ Այս օրուանից ես ձեզ խոստանում եմ վերադառնալու այն թշուառ աշխարհը, որ Հայաստան է կոչւում, որն ինձ պէս շատ տարագիր եղած զաւակներին կարօտ է և նրանց դարձին անհամբեր սպասում է, ձեզ խոստանում եմ գնալ և մի տգէտ հայուհու հետ իմ կեանքս կապել,

իսկ իմ երջանկութեան քաղցր րոպէներում խոստանում եմ չմոռանալու ձեր արած մարդասիրութիւնը։

—Եթէ այդպէս է, եթէ դուք չէք կարող ձեռք քաշելու ձեր հայրենիքից, թոյլ տուէք ինձ զոհելու իմ աշխարհս քո պատճառաւ, յոյսը կտրեց գերմանուհին իւր հայրենիքի փառքով Նահէնին շլացնելու յաջող միջոցից։

—Ո՛չ, և՛ դուք չը պէտք է այդքան զոհաբերութիւն անէք, և ե՛ս չեմ կարող երևակայել, թէ մի գերմանուհի կարող է հայ զաւակներ ունենալ, հայութիւն ներշնչել իւր որդւոց մէջ, բուն հայ կնոջ պարտականութիւնները կատարել։

—Յանձն եմ առնում հոգով և սրտով հայանալու։

—Դորանով միայն կը համարուիս դու հայրենիքիդ դաւաճան որդի, կը սերմանուիս օտար հողի մէջ, բայց չես իւրանալ, իսկ քեզանից յառաջացած պտուղները կը լինին տխիպ և անհամ՝ նման անտառային վայրենի տհաս և դառըն պտղի, որ ոչ մարդկանց և ոչ ծմակի արջին են պէտք գալիս, քեզանից սերած որդիքը խորթ կը լինին դէպի իւրեանց հայրենիքն և անպէտք դէպի ընդհանուր մարդկութիւնը, իսկ այդ թշուառ արարածների մեղքը միշտ իւրեանց ծնողների վզին է։ Յաւիտեանս դատապարտելի

և ազգադրուժ են այնպիսի մարդիկը, որոնք ինչևիցէ պատճառով օտար ազգից աղջիկ կ'առնեն, կամ օտարին աղջիկ կը տան։

—Բայց ցեղն ազնուացնելու գլխաւոր պայմաններից մինն այդ է։

—Այո՛, բայց այդ հայի համար չէ ասած, հային այսօր հարազատ որդիք են հարկաւոր, նրանք դեռ ժամանակ չունին արտաքին կատարելատիպների վերայ մտածելու, մանաւանդ՝ որ շնորհիւ իւր ցեղի և օդ ու ջրի՝ այսօր հայը կովկասեան ցեղի մէջ առաջին տեղ բռնածներից մինն է։

—Ուրե՞մն։

—Ուրեմն դուք ինձ վերայ յոյս մի՛ կապէք, մօտեցել են մեր բաժանուելու օրերը, դուք դէպի արևմուտք կ'երթաք և ես արևելք։

ՃԼԷ.

Շատ խնդրեց, շատ աղաչեց գերմանուհին, բոլորն ի զուր, նրա աղերսանքն ու արտասուքը չկակղացրին Շահէնի քարի նման կարծր սիրտը։ Մի օր էլ, իւր գլխի բոլոր արկածքներն իւր բարեկամուհուն պատմելուց յետոյ՝ Շահէնը տուեց նրան իւր վերջին հրաժարականն և շունչը Թիֆլիսումն առաւ։

Շահէն ու Սուսամբար. ահա այն երկու նու-

իրական բառերը, որ մեր հերոսն իւր ձեռքով գրեց գերմանուհու յիշատակարանի մէջ։

ՃԼԸ.

Թիֆլիս—Վրաստանի մայրաքաղաքը—հայերի կիսահայրենիքը,—այն լիճը, ուր ջրի քաղցրութեան համար ամէն կողից ծուարել են հայերի մեծամասնութիւնը։ Ձուկը ծովումը կը մեծանայ. հայն իւր աշխարհը քանդուելուց յետոյ՝ սովորել է աշխարհէ աշխարհ ընկնել, առնել իւր տունը, գերդաստանն ու այնպիսի ծովեր որոնել, ուր իրեն համար լողալու լայն տեղ ունենայ։

Վնասակար է այդ ընթացքը, կործանարար է այդ սովորութիւնը, բայց հային մի անգամ վիճակուած է, գաղթականութիւնը հայի դառը ճակատագիրն է և նա աչքերը փակած՝ գնացել է և գնում է։

Փա՛ռք Աստուծոյ, ուրախ ենք, որ մի պատկառելի քանակութիւն հայերի իրենց համար բնակարան են ընտրել Թիֆլիսը, որ էլ՝ մօտ է մեր աշխարհին, մեր հայրենի աւերակների բեկորներին և այսօր մի հայութեան կեդրոն է կազմում այդ բազմամարդ քաղաքը, Թիֆլիսում ամէն օտարական հայ կը գտնի իւր ազգականը, ծանօթն և ընտանին։

Թիֆլիսն էր այն մագնիսը, որ քարշում էր

Շահէնին դէպի ինքը։ Հայրենասէր էր մեր բըժիշկը, բայց ո՞ւր էր հայրենիք, ո՞ւր տուն ու տեղ, ո՞ւր ազգ ու ընտանիք. բոլորը, բոլորն Ասլանիկումն իւր ձեռքովն էր թաղել, էլ ո՞ւր պէտք է գնար հայ որոնելու համար, եթէ ոչ Թիֆլիս։ Նա գալիս էր դէպի Թիֆլիս և քանի մօտենում էր քաղաքին, նորա սիրտը տրոփում էր։

Թէ ի՞նչն էր նորա այդ փոփոխութեան պատճառը, ինքն էլ չգիտէր, ո՞ւմ համար նա այդպէս շտապում էր օր յառաջ հասնելու, ինքն էլ չէր հասկանում։ Եթէ մէկը կար, որ իրեն ձգտում էր, որի կենդանութեան վերայ երկմտում էր, որին յաւիտեանս մեռցրել էր իւր սրտի մէջ. կամ որ աւելի ճշմարիտն է, ինքն էր նորա համար մեռած, այդ անձը Թիֆլիսումը չէր. նա հիմա կամ Թմբուլումը պիտի լինէր Սահրատի մօտ, կամ Երևանի նահանգումը մէկի հետ ամուսնացած։

—Եւ վերջապէս ինձ ի՞նչ, եթէ կամի, թող Թիֆլիսումն էլ լինի, ես ո՞վ, նա ո՞վ, մեր մէջ ամէն հաշիւ վերջացած է։

—Ի՞նչպէս թէ վերջացած է, կրկնում էր նրան մի ներքին ձայն, եթէ ոչինչ արտաքին հաշիւներ էլ չունենաս Սուսամբարի հետ, մի՞թէ դու կը մոռանաս, որ քո ամենամերձաւոր արենակից ազգականն է։

—Այ՛ո, այո՛, իմ ամենամօտիկ արենակիցն

է, իմ քրոջ աղջիկն է, ես իրաւունք չունիմ Սուսամբարի վերայ չը մտածելու, նրան չը սիրելու, խօսում էր ինքն իւր հետ Շահէնը։

Խեղճ տղա՛յ, քանի Թիֆլիսին մօտենում էր, իրեն կորցրածի պէս էր լինում։

ՃԼԹ.

Շահէնը Թիֆլիսումն է, նա այժմ հայերից կուշտ է, նա ամէն քայլափոխի հայի է հանդիպում, Սալմաստեցի իւր հայրենակիցներն ամէն տեղ հանդիպում են նորան, ամէն օր նա լսում է իւր աշխարհի կոշտ ու կոպիտ դարձուածները, և այժմ տուն է վարձել վանքի մայր եկեղեցւոյ շրջակայքումն՝ ամենահայաշատ կենդրոնումը։ Նա այս արել է նպատակով, այդ թաղումն են հաւաքուած նորեկներն ու գաղթականները։

Բայց Շահէնն այսօր մեր նախկին անկիրթը չէր, նրան ներելի չէր այդպիսի միջոցներ ընտրել իրեն ամուսին գտնելու համար. նա այժմ գիտնական է, նա բժիշկ է, մարդկութեան հիւանդ անդամների բարերարն է, նրա համար անվայել է երազական ցնորքների քամակից հողմարածութիւն անելը, տարիներն էլ նորան չեն ներում առաջուան գեղջուկ ռամկի ճանապարհը բռնելու, նրա համար դժուար չէր այն ժամանակուան քաղաքակրթուած աղջիկների հետ ծա-

նօթանալու և այնպէս իւր ընտրութիւնն անելու, բայց նա հեռու էր փախչում այդ դրական ճանապարհից, նա անպատճառ ցանկանում էր ամուսնանալու և այն՝ իւր երկրացու հետ։

—Մի քանի ժամանակ դեռ կը համբերեմ, մտածում էր Շահէնը, եթէ այստեղ չը գտայ, ուղղակի կ'երթամ դէպի Նախիջևան գաւառը մեր հայրենակիցներից ամուսին ընտրելու։

ԺԽ.

Երիտասարդ բժիշկը շուտ նշանաւոր եղաւ Թիֆլիսումը, նա շատ յաջող էր և թեթև ձեռքի տէր, նորա ձեռք տուած հիւանդը չէր մեռնիլ, վերջին շնչումն էլ համնէր, հոգին բերանիցը յետ կը դարձնէր իւր տեղը, դեռ այսպէս բժիշկ առաջին անգամն է Թիֆլիս գալիս, ինքն էլ շատ խոնարհ ու գլուխը քարշ տղայ է, կանչողին չէ չկայ, գիշերուան կիսին էլ քաղաքի էն ծայրիցը մի փոքր երեխայ ուղարկիր, քամակիցը կ'ընկնի, կը գայ։

Ահա այն գաղափարը, որ կարճ միջոցի մէջ Թիֆլիսի ժողովուրդը կազմեց Շահէնի մասին. կարճ ժամանակի մէջ նա Թիֆլիսի հասարակ դասի հայրը, եղբայրն ու բարերարը հանդիսացաւ, ժողովրդի սիրելին դարձաւ։

Մեր բժիշկը շատ շահասէր չէր, նա առանց ինչ ակնկալութեան դիմում էր իւր սրբազան

պարտականութիւնը կատարելու, աղքատներից բոլորովին ոչինչ չէր առնում, կարողութեան տէրերից վերցրածի մի մասն էլ չքաւորների համար դեղօրէից և ուրիշ անհրաժեշտ պիտոյքների էր ծառայեցնում։

Շահէնի այցելած տնանկներն երբէք դեղարանի դրամ չէին վճարում։

—Գնացէք և կ'ստանաք, ուղարկում էր նա ամէնքին դեղատուն։

—Դուք տուէ՛ք և ինձ վերայ հաշուեցէ՛ք, պատուիրում էր դեղավաճառին։

Եւ նա ճիշտ վճարում էր։ Նա այն բժշկներից չէր, որոնց դեղատների հետ ունեցած ներքին հաշիւը հիմա ամէն մարդի յայտնի է, իւր արուեստի դէմ այդպիսի եղեռնագործութիւն Շահէնի հոգուն և բնաւորութեանը հակառակ էր։

Օրըստօրէ ջահել բժշկի հռչակը բարձրանում էր ոչ միայն հայերի, այլ և օտարազգիների մէջ։ Ամենատեսակ գիտութիւն ատեցող պարսիկներն էլ հաւատ էին ընծայում այս նոր բժշկի հմտութեանը։

—Մեզանից է, մեր լեզուն հասկանում է, էդպէս մարդը մեր գլխի, մեր աչքի վերայ տեղ ունի, մենք ինչպէս վստահանանք դիմել լեզու չհասկացողներին, որոնք մեր շեմքը մտնում ու մեր վերայ թքում են, մեզ կեղտոտ ու ապականուած անուննն են տալիս, վերջը որքան

էլ վճարում ես՝ բաւական չեն լինում, իսկ իրեանց տուած օգուտը՝ ոչինչ։ Շատ լաւ էլ գիտենան իրեանց արհեստը, մեզ համար չեն, թարգմանի ձեռքով այդքան միայն կարելի է անել, ո՛վ իր հիւանդիցը ձանձրացել է, թող նրանց հրաւիրի։

—Ա՛յ, պատուական բժիշկ, ասում էին օտարազգիքը, մեր բժշկները հիւանդից հինգ գազ հեռու են կանգնում, երակին մօտենալուց յետոյ՝ ձեռքերը լուանում, կամ սրբում են, երկու րոպէ վայր ի վերոյ հարցեր տալուց և անմտածել դեղատոմսը գրելուց յետոյ՝ այցելութեան վարձն ստանում և իսկոյն հեռանում են՝ միւս օրը իւր ժամանակին գալու խոստմունքն անելով. այսինքն՝ պարզ յիշեցնելով միւս օրուան համար նոյնպիսի մի թղթադրամ պատրաստելը, իսկ սա և՛ բժիշկ է, և՛ ֆելդշեր, և՛ հիւանդապահ, շատ անգամ հիւանդի տիրոջ գգուանքով կատարած պարտաւորութիւնն իւր ձեռքովն է անում։

—Ո՛չ, եղբա՛րք, պատասխանում էր Շահէնն իւր համարուեստներին, երբ վերջիններս ուղղակի մեղադրում էին նորան՝ հիւանդների հետ այդպէս մտերմաբար վարուելու և իւր ձեռքով խնամք տանելու համար, դուք իրաւունք ունիք ձեզ բարձր պահելու, իսկ ես ինչպէս սովորել եմ, ինչ տեսել եմ, այն պիտի գործեմ։

Այստեղ նա մէջ էր բերում իւր բարերար Տէր-Ղուկասեանցին։

—Ռամիկների ռամիկն է, ծաղրելով արհամարհում էին Շահէնին մեր էսկուլապները։

Թող ինչ կամին՝ ասեն, բայց նորա դուռը սուրբ Գէորգի դուռն էր դառել։

ԶԽԱ.

Սուրբ Ցակոբայ պասի ուրբաթ երեկոն է, վանքի մայր եկեղեցւոյ տօնն է, ըստ Թիֆլիսեցւոց ասութեան վ ա ն ք օ բ ա է։

Գաւիթը բազմութիւնով լիքն է, ասեղ վայր ձգես, գետինը չի ընկնիլ, որ կողմը նայում ես՝ խայտաճամուկ կերպասների ու չղարչների մէջ կոլոլուած գեղեցիկ սեռն է վխտում։

Հազարումէկ տեսարաններ։ բազմազան գեղեցկուհիներ, երեսներն ալ ու սպիտակ դեղերով չպարած նորահարսներ ու օրիորդներ ամէն մի քայլին արգելք են լինում ներս մտնողին։ Թիֆլիսի ձմեռուան ամենապատուական և տաք օրերից մէկն է, դեռ մի կտոր ձիւն գետին չի ընկել, դեռ աշնան վերահանդերձներով են պտտում, գետնից փոշին բարձրանում՝ է, ո՞ւմ մեղադրես, ո՞ւմ զրկես այսպիսի փառաւոր տեսարանից։

ՃԽԹ.

—Մայրի՛կ, հոգուդ մատա՛ղ, թող քո գլխի փաթաթանը, դեռ արի, նայի՛ր, թէ իմ կրծկալը լա՞ւ է կապած, այս անպիտան աղախինն ինձ համբերութիւնից հանեց, ծանր ու բարակ ժամանակ է ծախում, սրա ի՞նչ հոգն է, թէ վանքօքեան կը վերջանայ:

—Բա՛, ի՞նչ ես քեզնուքեզ կորատում, աղջի՛կ, մի՛ վախիր, քեզ է՛լ բաժին կը մնայ, սպասիր երեսս ներկելուց պրծնիմ ու գամ:

—Բո ցաւն ինձ, մայրի՛կ, չտապի՛ր, կը մթնանայ ու...

—Մայրիկը մեռնի՛ արևիդ, դու կարծում ես, թէ ես նոր գեղեցկանալու կարիք ունիմ. իմ հագուիլ զուգուիլն էլ քո համար է, աղջիկ, անտղողը մօրն էլ կը նայի, եթէ ես օրինաւոր հագուած չըլլինիմ, քո ճանապարհիդ քար կը ձգեմ, ի՞նչ կ'ասեն՝ սրա մայրն ի՞նչ է որ ինքն ի՞նչ լինի:

—Երանի՛ իմանամ, մայրի՛կ, նա ի՞նչ գոյնն աւելի սիրում է:

—Դու անհոգ կա՛ց, սիրունի՛կս, ես քեզ համար այն չորն եմ կարել, որ իւր շաւղովը երեք անգամ բնականից աւելի գեղեցիկ ցոյց տայ քեզ:

—Վախում եմ, մայրի՛կ, սիրտս բաբախում է, երբ միտքս եմ բերում:

—Բացուած արեգակ ես, 15 օրուան լուսնեակ ես, հոգի՛ս, լայն շրջազգեստի խշխշոցի ձայնը սենեակը բռնելով, դուրս եկաւ երիտասարդ մայրն իւր հարազատ դստեր սենեակն և սրտի հրճուանքը չկարողանալով զսպել, գրկեց ու լիաբերան համբուրեց:

—Վա՜յ, վա՜յ, վա՜յ, մայրի՛կ, այս ի՞նչ արիր, մի կարմրադեղը բոլորը քսուեց պռօշներիդ, մի գործն երկու չինեցիր:

—Իրա՛ւ, ես ի՞նչ շատ եմ քսել, անպատճառ կամեցել ես բոլոր աղջիկներին սևացնել:

ՃԽԳ.

Միմիայն կանացի սեռը չէ այս երեկոյեան հանդիսականը, մենք շատ երիտասարդների ու պատանիների հետ գլխացաւանք ունինք անելու:

Ահա մի խմբակ, որի սեաւ մահուտէ եւրոպական հագուստի առաջն ու յետը բոլոր ալընձէ կոճակներ են շարած և գլխարկի վերայ ճակատի կողմից փայլում է մի աստղ, նոքա մեր քաղաքի նորահաս, կիսաբաց ծաղիկներն են, նրանց անունը աստիճանաւոր է, նրանք գրչի ծայրով մեր բաղդը որոշում են: Շատ անտարբերութեամբ են կանգնած նրանք, կարծես ուշք չեն դարձնում իւրեանց շուրջը կատարւող հանդիսին:

Թող մեր ծառայողներն այստեղ կանգնած

իւրեանց դատողութիւնները տան, նրանց մէջ խառնուած անկոճակ երիտասարդներն էլ, որոնք իրանց ուսումնական անուն են տալիս, թող երկրի վերայ կանգնած՝ երկնքի աստղերը քննեն, մենք է՛լի մի երկու կարգի մարդիկ, որոնենք այս հանդիսի մէջ և ապա թէ մէկ մէկ ծանօթանանք նրանց այս երեկոյեան նպատակի հետ։

Եթէ հաշուի տակ էլ չառնենք քնքուշիկ մայրերի սիրելի մանուկներին, որոնք սպիտակ չերքեզի չուխան հագած, նոյն գոյնով գլխարկը ծածկած, արծաթէ դաշոյնը կապած, մի կատարեալ չերքեզի որդու կերպարանք արտաքուստ միայն առած՝ իւրեանց քոյրերի հետ մօրիցն անբաժան լցուած են վանքի բակումը, եթէ սրանց էլ հաշուելու չը լինենք, ասում եմ, մենք չենք կարող ուշադրութիւն չը դարձնելու վանքի բակի արևելեան կողմը հաւաքուած փոքրիկ չարերի վերայ։ Հագուստները ցոյց են տալիս, որ ստորին դասակարգի երեխայքն են։ Ի՞նչ կրակ ու պատիժներն են երևում անպիտանները, ամբողջ ուխտաւորներին զզուեցրել են, հազար բարկացի ու գլխներին էլ չարունակ խփիր, նրանք էլի միմեանց քամակից վազվզում են, սրան նրան են դիպչում և կրկին ժողովում են իւրեանց կենդրոնատեղին։

Իմաստասիրելու արժանի է այդ ապագայ արհեստաւորների, վաճառականների ու Թիֆլիսի

բազմամարդութիւնը կազմող ապագայ ժողովրդի կեանքը, դրանք ուսումնարաններ չունին, դրանք կրթւում են Թիֆլիսի քունջուպուճախներում, ջրանցքների կամարների տակ, խոր ձորերում և հրապարակներում, ցերեկը դրանց դաստիարակներն են իւրեանց արհեստաւոր վարպետները, իսկ խանութները փակելուց յետոյ՝ այն սրիկաները, որոնք յայտնի են կ ի ն տ օ անունով և որոնց հիմի մենք պիտի տեսնենք վանքի դռի դռանը՝ պարսպից դուրս։

Ահա նրանց վարժապետները հաւաքուել են վանքի դռի առջևի հրապարակումը և քըչփչում են։ Այն գոյնզգոյն հաստ ոչխարենիքը, որ դրել են գլխներին, որոց ծայրը վեղարաձև է, իսկ դէպի ներքև լայնանում է, ուղտի բրդի մազից գործած չուխէն՝ չրջապատը արծաթէ կամ մետաքսէ երիզով պատած, քղանցքների ծայրերն էլ գըրպաններովը հանած, արծաթեայ չորս մատնաչափ լայն գօտին, սեաւ ու կարճ արխալուղը, կարմիր մետաքսէ կրծկալը նոյնպէս ոսկի ժապաւէնով պատած, չալի կրկնավարտիկը, կաշուէ զանգապանները սրունքների վերայ գոյնզգոյն երիզներով զարդարած, սրածայր կտուցը յետ ծալուած չէքմայ կոչուած կօշիկը՝ երկու բթաչափ երկայնութեամբ պայտի (նալչայ) մեխերով, ոմանց վերայ էլ անձայն չուստը, այս ամէնը պարզ ցոյց են տալիս, թէ սրանք հագնողներն ի՛նչ պտուղներ են։

Մենք տեսնում ենք այստեղ կանանց մէջ խառնուած մի կարգի մարդիկ էլ, Բուխարայու թանկագին ոչխարի գլխարկով, հագած քաղքի անուանուած երկան թեւերով կաբէն, խաղողի տերեւանման ծայրով, որին դօշ, կամ պարսկերէն ա լ ջ ա կ անունն են տալիս, կերպասի, ոսկի ժապաւէնով պատած արխալուղով զարդարուած.—դրանք մեր վաճառական դասն են կազմում, դրանց հետ մենք շատ գործ չունինք, դրանց քարշ են տուել այստեղ իւրեանց եսական ամուսինները, որոնք կամեցել են ընկերուհիների մօտ պարծենալու իւրեանց այրերի չքեղ հագուստներով ու մատների վերայ փայլփայլող անդամանդներով։

Մենք վերադառնանք կրկին լսելու մեր նկարագրած իւրաքանչիւր խմբերի խօսակցութիւնները, որպէս զի իմանանք այսպիսի ժողովների նպատակները։

Սկսենք ծառայող աստիճանաւորներից։

Բայց եթէ մեզանից մէկը բացի մայրենի լեզուից ուրիշ լեզու չը գիտէ, աւելորդ է դրանց մօտ գնալը, ինձպէս բոբիկների համար չէ դրանց խօսք ու զրոյցը, դրանք ամօթ և նախատինք են համարում մայրենի լեզուով խօսելը, դրանով նրանք անպատուած կը համարեն իւրեանց պաշտօնը և բարձր (!) դիրքը։ Ազնիւ պարոնները ակամայից միայն ստիպուած են վրացերէն խօսելու իւրեանց անկիրթ ու գռեհիկ ծնողներ-

րի և ծառաների հետ։ Ի՞նչ անեն խեղճերը, շատ էլ ատում են այդ աղճատուած կովկասեան լեզուն, բայց ոչ իւրեանց կիսավայրենի ծնողքն և ոչ իմերէլ ծառան այլապէս չեն հասկանում իւրեանց խօսածը։ Զենք կարող ժխտել, որ նրանց մէջը հայերէն հասկացողներ կան, բայց այդ թողել են իւրեանց վաճառական հայրերին, որ Թիֆլիսի անտաշ հայ բարբառով ապրանք ծախելու ժամանակը ջուրը քաշեն Երևնեցի, Գանջեցի ու Ղարաբաղցի չ ա ն ճ ր ա գ ն ե ր ի ն, կամ Ախալցխեցի կ ռ օ ն ե ր ի ն։

Վերջապէս, Աստուած իրանց հետ, մենք եկել ենք ուխտին հանդիսատես լինելու և այս րոպէիս կանգնած լսում ենք աստիճանաւոր երիտասարդների խօսակցութիւնը։

—Լաւ նայի՛ր, Վասեա՛, մեր մօտով անցնողին, ի՞նչ իւզալի պատառ է։

—Ճակատի փայլուն անդամանդիցը չե՞մ նկատում։

—Գիտե՞ս ով է։

—Հը՞մ, դու իմացի՛ր, Կօլեա՛, պարծենում է Վասեան, բացի օրը տասն անգամ հօրս ու մօրս անհանգիստ անելուց, կանցելեարումն էլ չեն ինձ դադար տալիս։

—Կը հաւատամ, եղբա՛յր, հէնց այսօր մայրս բացասական պատասխան տուեց, 10,000 մանէթը քիչ է, ասաց, իմ Կօլեան մի քանի տարի էլ որ կենայ, սեղանապետի օգնականու-

թիւն կը ստանայ, 15 հազարին էլ փող չեմ տասիլ։

—Շատ չէ՞ք մեծ մեծ բրդում, պարոննե՛ր, մէջ մտաւ մի երրորդը, որ շատ ժամանակ չէր Մոսկուայից՝ Լազարեանց ճեմարանի չորրորդ դասարանից վերադարձել էր իւր անընդունակութեան համար և իւր հարուստ հօր՝ շնորհիւ՝ առանց ամսականի ծառայում էր մի դատարանում, դա գեղեցիկ աղջիկ է, առանց փողի էլ կարելի է դորա հետ ամուսնանալ։

—Ի՞նչ կը նշանակի անփորձ լինելը, գիտես, սիրելիս, դորա գեղեցկութիւնը երկարատև չէ։

—Սխալ էք, պարոննե՛ր, դորա սպիտակ ու կարմիր թշերը, փղոսկրէ կուրծքը, թուխ թուխ աչքերը խիստ գրաւիչ են։

—Այդ ամէնը ոչնչացնելու և տակից մի այլանդակ սև ու դեղնած հրէշ դուրս բերելու համար բաւական է մի բաժակ ջուրը. այդքանն էլ շատ է, կամիս՝ ներս մտնենք դորա հետևից եկեղեցին և մասունքի առաջին՝ համբուրողների խիտ տեղը, ուր ամէնքը քրտնում են, նկատենք դորա ծնօտներով իջնող կարմրախառն պղտոր կայլակները։

—Իսկ այն պատի տակ կանգնողին ինչպէս էք հաւանում, խօսակցութեան մէջ խառնուեց մի ուրիշը, նորա գեղեցկութիւնը բնական է, այնպէս չէ՞։

—Այո՛, սակայն ի՞նչ օգուտ, հասարակ մանրավաճառի աղջիկ է, անփող, անբաժինք։

—Նա մեզ համար չէ, կինտոների բաժինն է, անտառի համեղ պտուղն արջն է լափում։

—Իսկ սիւնի քամակից մեզ նայող սպիտակ հագնողին ի՞նչ կ'ասէք։ Կօլեան կարմրեց։—Է՛հ, պարոններ, թողնենք աղջիկներին, ուրիշ բան խօսինք։ միւս կողմը նայելով՝ ասաց նա։

—Ո՛չ, Կօլեա՛, խաբել չես կարող, դու անտարբեր չես դէպի այն օրիորդը, ձեր մէջը մի բան կայ։

—Թողէ՛ք, խնդրեմ, գլուխ չունիմ ձեր յիմարաբանութիւններին, ես գնում եմ, մնա՛ք բարև։

Կօլեան անցկացաւ եկեղեցու միւս կողմը. բայց եթէ մենք նրանից աչք չը հեռացրինք, նա մի ակնարկ ձգեց օրիորդի մօտ կանգնած միջահասակ կնոջ վերայ և նոքա մտան եկեղեցին։

Կօլեան միւս դռնով ներս մտաւ

Ներկայ պարոնների դիտաւորութիւնը հասկանալու համար՝ բաւական է մեզ հետևելու Կօլին։

Եկեղեցու աջակողմեան կողմից պատկերները կարգաւ համբուրելով դէպի մասունքն են գալի յիշեալ տիկինն ու օրիորդը։

Աղջիկը, որպէս թէ ոչինչ չգիտէ և միայն իւր քրիստոնէական պարտաւորութիւնները կատարելով է զբաղուած. մօրն էլ եթէ վայր ի վե-

բոյ նայելու լինինք, նոյն ենթադրութիւնը կ՚անենք, բայց ոչ, նա շուտ շուտ դէպի եկեղեցու ձախակողմն է նայում, նա աչքով որոնում է մէկին, և այդ մէկը մեր Կոլէն է։ Ահա նա կըռացաւ իւր դստեր ականջին մի բան փսփսաց։

—Կէկէլ ջա՛ն, գլուխդ մի փոքր բարձր բռնի՛ր, վիզդ ուղիղ, թող կրծքից բաց տեղն երևայ, երեսիդ յաճախ խաչակնքիր, որ մատանիները տեսնուին, էն աղէն աչքը վրայիցդ չի հեռացնում, շատ ուրախ է երևում, անկարծիք քեզ հաւանել է, մե՜ռնեմ վանքի զօրութիւնին, սրտիս խորհուրդը կատարում է, ա՛յ գնաց մոմ առնելու։

Մօրից շուտ աղջիկն էր նկատել, բայց ընչի՞ն էր պէտք իւր սրտի ուրախութիւնն ամէնքին ցոյց տալու, դրան է՛լ տեղ և ժամանակ ունի, նա հիմա կեղծ պարկեշտութիւն է ձեռք առել և մեր սիրունը խոր աղօթքի մէջ է։ Սակայն ի զուր են մայր ու աղջիկ պատրուակւում, մի քանի կանայք սրանցից շուտ տեսան Կոլին մոմավաճառի մօտ դիմելուս։

—Հաւնեցա՞ր, Կոլեա՛ ջան, աչք չը դիպչի, շատ լաւն է երևում։

—Գեղեցիկ է, մայրի՛կ, բոլորովին իմ ցանկացածն է։

—Ես քեզ չասի՞, որ Վանքօբան սուրբ Սարգիսօբից պակաս զօրաւոր չէ։

—Իմ որդու առաջը գայ, ինչ որ ես քո

Կոլին եմ կամեցել, Նատօ՛, տեսնո՞ւմ ես ինչ պետլած (գեղեցիկ) է, մի աչք ածի՛ր, կը գըտնե՞ս սորա հատն ու կտորը, կարծես լուսնեակ լինի աստղերի մէջ դուրս եկած։

—Ես ու իմ հոգի՛ն, Թինաթին, արեգակ էլ որ չինես, չես մեզանչիլ, խոստացածիցս դուրս՝ քեզ մի ուսերի շալ էլ կ՚ընծայեմ։

—Աստուած կեանք տայ, Նատալիա՛, էս սուրբ աջն երկու ձեռքով քեզ բաշխէ՜։

Թինաթինը միջի մարդ, կամ մօցիքուլն էր։

ՃԽԴ.

—Տեսա՞ր, աղջի՛, լաւ է ճանգել Սալոմէն, ո՞վ գիտայ, ձեռաց աղջկանը կապեց կորուելուն։

—Ո՞ւր է։

—Ջես տեսնո՞ւմ, նրա աղջիկն է մոմ վառողը։

—Ո՞ւմ մոմն է։

—Ա՛յ, դիմացի կանգնած չինովնիկինը։

—Այդ է՛լ բաղդ է, կիսին արժանի չէ, հողե՜մ ձեր գլուխը, տեղիցը վեր կենողը չինովնիկ է պտռտում։

—500 թումանը դու էլ տո՛ւր, քո էդ պէծպծան աղջկայ համար նրանից լաւը գտնիմ, մի շաբաթ է հոգիս դուրս է եկել չատախօսութինով։

—Անհանաք, Թինաթի՛ն քո սարքած բանը կը լինի։

—Այնքան ինձ կեանք ու արև։

—Երկու աչքի՜ս վերայ, Թինաթի՛ն, դու իմ Սոփիօյի համար մի այդպէսը ճարիր, ես 500 թումանը փեսին, 10 թուման էլ քեզ տամ։

—Տասը թումնով հագիս ծախե՞մ; բերան է՛լ չեմ բանալ, քո ապրանքի հունարը չըգիտե՞ս։

—Հինգ թուման է՛լ քեզ մատաղ։

—Քսան թումանից հատ կոպէկ պակաս չեմ անիլ։

—Քո չարը տանի։

—Ուրեմն յետ մտիկ տուր կանանց վանդակապատին մէջքը դէմ տուած զինուորականին, հաւանո՞ւմ ես։

— Թինաթի՛ն, քո ցա՜ւն ինձ։

—Շատ լա՛ւ, Նատօյի ցաւիցը պրծայ, հաւանեց, մօմն էլ վառել տուեց, էստեղից էլ կ'երթանք նշանը կը տանք, ալմազէ մատանին ծոցումն ունի։ Հիմա դուք ոտքերդ կախ ձգելով, պատկերները համբուրեցէք, ես գնամ օֆիցերի հետ խօսեմ, ես եմ նորան այնտեղ կանգնեցրել։ Ասա աղջկանդ՝ թող գլուխը բարձր բռնի, բայց ի սէր Աստուծոյ այնպէս թող կանգնի, որ վզի տակի վէրքի տեղը չերևայ, գիտե՞ս, ուրիշ աղջիկ կայ պատրաստի, բայց քեզ մի՞թէ յայտնի չէ, որ քո ոտքը շատերի գլխից ինձ համար առաւել է։

—Դու չտապի՛ր, մենք մեր բանը գիտենք, յիմար հօ՛ չէ՞ինք, որ աղջկայ արատն երևեցնէինք, այնքան կարմրադեղ եմ քսել, որ փոսը լցուել է։

—Տեսնում եմ, շատ օրինաւոր սարքել ես, դէմքի ծաղկատար տեղերն էլ ուղղել ես, ասաց Թինաթինը կիսաժպիտ և մօտեցաւ սպային։

Մի երկու անգամ Թինաթինը գնաց ու եկաւ օրիորդ Սոփիայի մօր մօտ։

Վերջապէս զինուորականը մոմեր գնեց և մասունքը համբուրող Սոփիային ներկայացրեց։

—Խնդրեմ, օրիո՛րդ, եթէ կարելի է այս մոմերը վառէ՛ք։

Աղջիկը գլուխը կախ՝ առաւ և վառեց։ Շինծու կարմրութեան վերայ բնականն էլ աւելացաւ,

Սպայի սիրտն ուրախութիւնից ճխած։

—Շատ շնորհակալ եմ, Թինաթի՛ն, ասաւ աղջկայ մայրը, բայց 100 թումանս աւելի տարար, էլ իմ մարդի ձեռքից պրծնողը չեմ։

Այս երեկոյ մի քանի աղջիկներ իւրեանց համար բոլորովին անծանօթ և առաջին անգամը տեսած երիտասարդների մոմերը վառեցին։ Ուխտաւորներից շատերն էլ կոտրած սրտով վերադարձան։

Մեզ ծանօթ խմբակից մի երկուսին մենք այստեղ ճանաչեցինք։

ՃԽԵ.

—Հը՛, բան չըկարողացա՞ր ձեռք բերել։

—Միայն այս թաշկինակը։

—Գնա՛ անշնորհք, այս ամառ Բեթղեհեմի տօնին տեսա՞ր, ինչպէս ոսկէ ժամացոյցը ճանգս ձգեցի։

—Մարդուս գործը հօ՛ միշտ չի՞ յաջողիլ, Թելեթօքին ես էլ մի աղջկայ ճակատից զմրուխտէ քորոցը դուրս քաշեցի։

—Վնաս չունի, թող մի փոքր մթնի, նոր մեր գործն սկսենք, հիմի դեռ, որպէս թէ խաղում ենք։

Եւ մեր փոքրիկ ստահակ երեխաներն սկսեցին միմեանց ետևից վազել։

—Յետո՞յ։

—Կարծեմ ժամանակն է։

—Կվարտալնիքը շատ քիչ են։

—Չե՞ս տեսնում, այս կողմը ոչ ոք չկայ, մեր կտրիճներից ամէնքը մի տեղ փոքրիկ շըփոթներ են հանում և պօլիցիան իւրեանց քաշում, շատ լաւ միջոցն է, Գէվօ՛, սկսե՛նք, հրապարակը մեզ է մնացել։

—Սկսե՛նք, Միխօ՛։

Գէվօն երեք անգամ խռպոտ ձայնով հաչաց։

Վանքի գամի առաջը լցուեցին վերը մեր նկարագրած ղանդապաններով սրիկաներից։

—Միխօ ջա՛ն, գոնէ մեր աշխատանքը չը կորչի, ձեռքներս մի քիչ բան գայ, քանի՞ օր է ծարաւ պապակւում ենք, իմ չորացած կոկորդի ծակը երկու թունգի Կախեթի կարմիր գինով չի կակղանայ։

—Միամիտ եղի՛ր, էս մուշտակաւոր նպատակը բոլորովին ուրիշ է, բարեկենդաններին կամ զատկին սարքած մուշտակուիլը քէփի համար է, իսկ հիմա մեր գրպանի օգուտն է, ես ամէն բան կարգադրել եմ, երբ որ կռիւը կը տաքանայ, բազմութիւնը մեր գլխին կը ժողովի, մեր լօթիքն իւրեանց գործը կը տեսնեն կանանց մէջ։

—Մեր պստիկ սատանէ՞ն ինչ գործի է։

—Չե՞ս գիտում, նրանք իւրեանց համար անմեղ խաղեր են անում ու վազվզում են, ի՞նչպէս լինի, որ նրանք էլ մի քանի աւար չը դուրս բերեն։ Հէնց հիմայ մուկը Վասօն մի սպիտակ թաշկինակ բերեց ցոյց տուեց. հասարակ բան էր, իրեն ընծայեցի։

ՃԽԶ.

Մուշտակուիլը սարքուեց, գլխաւոր կառավարիչները՝ Միխակն ու Գէվօն միմեանց դիմաց ախոյեան կանգնած՝ կռիւը տաքացնում էին։ Նրանցից մէկը ներքի թաղեցի, միւսը վերի թաղեցի էր համարւում։ Ամէն կողմից մի քանի ե-

ընկնեք մեր երկու հերոսների խրախուսանքով մէջ մտան և սկսեցին իրար զարկել։ Այս մուշտակռուի սկզբնաւորութեան ձևն է. ոչ մի ժամանակ առաջուց մեծերով չի սկսում կռիւը։ Փոքրիկ երեխայքը գրգռում են երիտասարդների մէջ բորբոքը։

—Գէ՜հ, ձեզ մատա՛ղ, ապրի՛ն իմ Սէրգօն, Գիգօն ու Վանօն, ոգևորում է Գէվօն փոքրիկներին, խփեցէ՛ք, մի վախէք, կուրծքերդ դուրս ձգեցէ՛ք, վերի թաղի անունը ցեխը մի՛ կոխէք։

—Ձեզ տեսնե՛մ, Դարչո, Տիտիկօ՛, Սանդօ՛, ներքի թաղի երեսը պարզեցէ՛ք, իր կողմից խրախուսում է Միխօն։

Երեխայքը մի քիչ ժամանակ կռուեցան։ Շատ էլ ցանկանում էին պստիկները փախչելու մէջ տեղից, բայց միջոց չունէին, Միխօն ու Գիգօն մի քանի իւրեանց նմանների հետ երկու կողմից պատնէշի նման մանուկների առաջը կտրել էին։

—Հա՛յ, հո՛յ, գոռի՛ւն, գոչի՛ւն, ճի՛չ, աղաղա՛կ օդը բռնել է, սրիկաների խումբն իւրեանց հարայ հրոցով ուխտատեղում գտնուած բոլոր բազմութիւնն իւրեանց գլխին հաւաքեցին։

—Կորէ՛ք, անշնորհքնե՛ր, վերջապէս ձայն հանեցին իւրեանց կողմից Միխակն ու Գէվօն փոքրիկներին և յետ ծալեցին արխալղի թևերը. դէ՛հ, հիմի դուք մեր չերքեզկէքն ու գդակները պահեցէք մինչև որ մուշտակռիւը լաւ սովրիք։

—Հայա՛, ձեզ ղուրբա՛ն, տղէք ջա՛ն, սևերես լինի յետ փախչողը՝ գոչեցին Միխօն ու Գէվօն իւրեանց կողմի սրիկաներին և մէջ մտան։

Կրծկալի կոճակները յետ բացարած՝ կրծքի տախտակը բոլորովին մերկ, մազերը գզգզուած՝ գլխները մի կողմի վերայ թեքած՝ իրարու բռունցք է որ հասցնում են. էլ ոչ աչք են խնայում, ո՛չ երես, ոչ կողք, իրարու շարունակ ծեծում ծեծւում են, երբեմն էլ գարնան գոմից նոր դուրս թողած գոմէշների կամ գիրացած ոչխարների արուների նման՝ մին յետ յետ են թռչում, մէկ էլ նորից միմեանց բռնչքում։

—Ապրի՛ս, գոռում է կռուողների քամակին գիզուած հազարաւոր ամբոխը, հալա՛լ է Գէվօյի կերած հացը, էս տարի վերի թաղը կը յաղթի։

—Եթէ այդպէս լինի՝ Մեխակին էլ գիժ Մեխակ կոչել չարժէ, ձայն են տալիս միւսները։

—Եկ գրաւ դնենք, որ վերի թաղը կը յաղթի։

—Գլուխս կը տամ, եթէ ներքի թաղը չը ըլի։

—Ո՛ւհ, այդ ո՛ւմ քիթն արնեցաւ, սառուում են հանդիսատեսները։

—Ոչինչ, դուք ո՛ղջ լինիք, պատասխանում է կռուողներից մինը՝ քթից արիւնը աղբրի նման դուրս հոսելով՝ և շարունակում իւր գործը, թէ

կուզ աչքս էլ դուրս գայ՝ յետ քաշուողը չեմ, ինձ վերի թաղեցի Պէպան կ'ասեն։

—Ինձ էլ ներքի թաղեցի քոռ Մաթուս կասեն, պատասխանում է Պէպանի ախոյեանն ու նորից աւելի ոգևորութեամբ կռւում։

Կռիւը սակաւ առ սակաւ յառաջ է գնում՝ դէպի վանքի նեղ փողոցը, խուժանի մի մասը երեսները դէպի կռւողները դարձրած՝ յետ յետ են գնում, միւսները յառաջ են գալիս. Հերոսները մէջտեղն են, նրանց ոչ մի կողմը պարտութիւն չի յանձն առնում, հինգ հինգ, տասը տասը մէջ են մտնում, ծեծւում ու յետ քաշւում հանգստանում, երբեմն փոքր ինչ հանդարտւում է, երբեմն էլ սաստկանում. մանաւանդ խիստ է լինում, երբ որևէ թաղեցիք զգում են իւրեանց մարդիկների թուլութիւնը, իսկոյն խառնւում են։

Եկեղեցու բակում միայն մնացել են երկչոտ կանայքն, մեզ ծանօթ փոքրիկ աւազակները, նրանց համար այժմ է բուն տօնը, թէպէտ մութը դեռ չի կոխել, բայց նրանք իւրեանց գործն յառաջ են տանում, որը ծածուկ, որը յայտնի յարձակւում են մի աղջկայ կրծքին կամ գլխին և դուրս կորզում, ինչ որ ճանգներն է ընկնում. բայց այսպիսիները սակաւաթիւ են, նրանցից մեծ մասը գրպաններն են կտրում։

Այս երեկոյ սրանց կողոպուտն յաջող եղաւ։

—Հո՛ւ... ո՛ւ... ո՛ւ... ամօ՛թ վերի թաղեց-

ւոց, ապրի՛ գիժ Միխակը, գոռում են ներքի թաղեցիք և ամբոխը։

Եւ արդարև՛, կեցցէ՛ գիժ Միխակը, նա սրել է իր երեսի ներքին մասի խալի վրայ բուսած մի փունջ երկայն մազը և լանջը բաց՝ շարժում է իր թևերը. Նա մի քանի ժամանակ մի կողմն է քաշուել և զուարճանում իր քաջերի յաղթութիւնով, բայց երբ տեսաւ, որ ներքի թաղը մօտ է լքանելու, որից յետոյ դժուար էր իւրայիններին սրտապնդել, մի երկու անգամ ինքն իրեն գլուխն աջ ու ձախ գոմէշի նման այս ու այն կողմը դարձրեց և որոտաձայն գոչումով մէջ մտաւ։ Մէջ մտաւ և որքան զօրութիւն ունէր գործ դրեց։

Այնուհետև վա՜յ նրան, որ Միխակի բռնցքի տակն ընկաւ, էլ նրա հետ կատակ անել չի լինիլ, նա էլ մէկի կամ երկուսի հետ չի՝ որ գործ ունի, ով մի անգամ հանդիպում էր նրա պողովատէ հինգ փթանոց բռնցքին, երեսն յետ էր դարձնում և փախս տալիս, որովհետև նա կամ քթից զրկուեց, կամ աչքից, կամ բազկից. Միխակի հարուածն անվնաս չէր անցնիլ։

Այդպէս է գիժ Միխակը, նա Թիֆլիսի մուշտակռուի ծաղիկն է, նա, ինչպէս յիշում ենք, սկզբումն միտք չունէր այսպէս ահեղ կերպիւ ծանրացնելու կռիւը, նրա և իւրայինների միտքը ուխտաւորների զարդերիցն օգուտ քաղելն էր, մեծ և նշանաւոր կռիւները նա

պահում էր մեծ և հանդիսաւոր տօներին,— զատկին, բարեկենդանին և այլն։ Բայց ի՞նչ անես, բանն ուրիշ կերպարանք առաւ, երբ յանկարծ փողոցի մի ծայրից երևեցաւ սպիտակ նժոյգի վերայ նստած գեղեցկատեսիլ իշխան Արշիլը՝ մուշտակռուի Արէսը։ Այս անձը իւր խմբովը—վրաց երիտասարդ իշխաններովն երկու աչքի նման սիրում է գիժ Միխակին և առհասարակ մուշտակռուի հերոսներին, նորա երևելուն պէս՝ մուշտակռիւը նոր կերպարանք է ստանում, ամէն մի թոյլ կռուարարն էլ սիրտ և ոյժ է առնում; ամէն ոք աշխատում է իշխան Արշիլին իւր գլուխը սիրել տալու, չի անցնիլ մի մուշտակռիւ, որի ժամանակ դրամական վարձատրութիւն չստանան քաջ կռուարարներն իշխան Արշիլից։

Այս անգամն էլ իշխան Արշիլի ներկայութիւնն էր, որ մի հասարակ մուշտակռուին ամենաահեղ ձև տուեց

Բայց ահա յաղթուած վերի թաղեցւոց կողմից մի քանի աղիւսի կտորներ օդումը խաղացին։

—Քա՛ր, քա՛ր, քա՛ր խառնեցին, գոչեց ահագին ամբոխն ու ամէն ոք սկսաւ փախս տալ։ Գլուխ ազատելու միջոց է, քարը տեղում է կարկտի նման, ողջ ողջ թրծած աղիւսներ են գալիս։

Ահա՛ մի կռուողի աչքը ճղուեց,—այդ գիժ

Միխակի բռնցքի շնորհքն է, մի ուրիշի ճակատից արեան առուակ է հոսում,—այդ քարի դիպած տեղիցն է։

Շատ ուշ է, ոստիկանութիւնն ոյժ չունի խուժանը ցրուելու, երկու կողմն էլ մուշտակռիւը թողեց, քարէկռիւն սկսաւ, ցածր պատերին էլ աղիւս չմնաց, վանքի շրջակայ հաւանների դռները փակուեցին, բայց լուսամուտներն էլ փշրուեցին. քար ձգողն աջ ու ձախ չի նայում, նա շպրտում է. լուսամուտ փշրուի, մարդ մեռնի, աննպատակ գետին ընկնի,—այդ ձգողների համար միևնոյն է, նա միայն աշխատում է հակառակ կողմին փախցնելու համար քարգործ դնել։

Վերջապէս ոստիկանութիւնը մի խումբ ձիաւոր զօրքով մէջ մտաւ, վերջիններս երկայն նիզակները շարժելով՝ յաջողեցին ցրուելու ամբոխը։

Մութը գետինը բռնելով էր, որ երկու քար վերջին հարուածը տուին. դոցանից մէկը մի կոզակի գլխիվայր ձիուց երկիր կործանեց, իսկ միւսը հանդէպի պատուհանը փշրեց և սենեակումը կանգնած սևազգեստ օրիորդի քներակին դիպաւ։

Արիւն չըհոսեց, միայն տեղը սևացաւ և ուռեց, բայց օրիորդն ուշագնած եղաւ։

Կռիւը դադարելուց յետոյ՝ ուխտն իւր կարգին շարունակուեց մինչև ութ ժամը։

ՃԽԷ.

Այս երեկոյ կռիւը վերջաւ առանց փայտէ կռուի։ Պատահում էր այնպէս, որ փայտեայ սրեր էին մէջ գալիս և առանց խնայելու իջնում գլխացի մարդին։

Աւելորդ է ասել, որ փայտեայ սրերն նախապէս պատրաստած՝ հետերը տանում էին։

Եթէ քաղաքից դուրս պատահէր մուշտակուը՝ քարի կռիւը խիստ վտանգաւոր էր լինում, հարիւրներով հանդիսատես ձիաւորներն էլ խոյս էին տալիս, պարսաքարը շատ հեռու և չեշտակի էր սլանում։

Պարսակռիւը առանց մահուան դիպուածի հազիւ էր վերջանում։

ՃԽԸ.

—Թը՜խկ, թը՜խկ, թը՜խկ։

—Ո՞վ էք։

—Բժշկին եմ ուզում։

—Ես եմ։

—Հայի՛ր, տէր բժի՛շկ, աղջիկս ձեռաց գընաց, մուշտակուի քարը լուսամուտից ներս ընկաւ սենեակը, դիպաւ դստերս քներակին, նա այժմ անշունչ է։

Շահէնը նոր էր տուն եկել։

—Մի փոքր համբերի՛։

—Գուցէ արդէն ուշ լինի։

—Ուրեմն գնա՛նք, ասաց բժիշկը վերցնելով լուսամուտից մի երկու փոքրիկ սրուակ։

ՃԽԹ.

—Այսօր քեզ ծանօթացնելու եմ մի նոր ընտանիքի կեանքի մանրամասնութիւնների հետ, այսպէս սկսաւ բժիշկս միւս առաւօտն իւր յառաջաբանը, էլ շատ ձանձրալի հարցեր չ՛առաջարկես, գուցէ Շահէնիդ հետ շուտ չը հանդիպինք։

Գլուխս թեքեցի ուսերս վեր քաշելով և բազկատարած երեսին նայեցի։ Ուզում էի ասել. դու քո Աստուածը, քարն էլ է քո ձեռքին՝ ընկոյզն էլ։

ՃԾ.

Քսան տարու չափ մի գերդաստան թափառում էր Կովկասի զանազան կողմերումը։ Մեծ չէր այդ ընտանիքը. հայր, մայր և մի արու զաւակ իւրեանց մխիթարիչ.

—Սօնեա՛, Միկիչ, ահա այն քաղցր բառերը, որով ամուսինները իրար կոչում էին։ Շատ փաղաքշական էին այն երկու նուազական անունները, բայց ափսո՜ս, որ երկար չը մնացին երկու սիրելիների բերանում. 10—12 տարի է,

որ այդ անուններն էլ չեն լսում, թէև երկուսն էլ կենդանի ապրում են աշխարհիս երեսին։

Ի՞նչն էր ուրեմն պատճառը նրանց երկարատև լռութեան։

—Մենք ասացինք, որ մի փոքրիկ երեխայ էր այդ գերդաստանի մխիթարողը։ Եւ արդարև, ամուսնական կեանքի մէջ զաւակից աւելի երջանկութիւն չկայ, երկու յաւիտեանս միմեանց հետ ապրելու ուխտած անհատների կապը զաւակն է ամրապնդում։

Երկու տարի էր անցել մեր բարեկամների ամուսնութեան օրից, որ նոցա միայնութեանը մի նոր ընկեր էլ աւելացաւ. մի սիրուն, թխլիկ ու գմբլիկ աղայ նոցա տան ծաղիկն եղաւ։

ԺԾԱ.

Երկու ամոլները—Մկրտիչն ու Սօնեան իրենց երջանկութեան 7—8 տարիներումը շարունակ թափառական կեանք վարելու էին ենթարկուած։

Արքունական ծառայութիւնը, ուր գտնւում էր ինքը Մկրտիչը (այսպէս ենք կոչելու տղամարդին), նրան ձգում էր երբեմն Կուբան գետի ափերը, մի ժամանակ՝ Դաղստանի լեռները և մերթ Կախեթիայի գինեէտ լեռնադաշտը։

Ի՞նչ պէտք է մեզ նորա պաշտօնի անունը յիշելու, այդ մենք կ'իմանանք իր տեղումը,

այսքան միայն գիտենալ մեզ բաւական է, որ Մկրտիչը նշանաւոր դէրք ունէր և մեծ համարում էր ստանում իր այցելած բազմազան ազգերի և ժողովրդի մէջ, ամէնքը նորա կարեւորութիւնն էին զգում, ամէնքը սիրով նորա ոտքըն էին գլխում։

Մկրտչի պաշտօնի մէջ ուրիշները հարստանում էին, իսկ նա ապրում էր միայն իր չոր ռոճկով, և այդ կենսական առաջին պիտոյքը շատ սահմանափակ էր նոյն միջոցներումը։

Հետզհետէ միայն հասկացւում է, թէ գործիչին հաւատարիմ պահպանելու և արհաջանութեան մէջ վարժեցնելու համար հարկաւոր է նորա աչքը լի պահել, ապա թէ ոչ գործն առաջ չի գնալ ։ և գողութիւնն ու, յափշտակութիւնը տեղի կ'ունենան։

—Տո՛ւր և պահանջի՛ր, արդարութեան օրէնքն է այս, չես տալ՝ չես էլ առնիլ, պահանջելու էլ իրաւունք չունիս։

Բայց մեր Մկրտիչն այդ ընդհանուրի կարգիցը չէր. նա ասում էր՝ քեզ չափի՛ր, հաշիւդ տե՛ս և ապա մտի՛ր պաշտօնի մէջ. եթէ գտնում ես, որ ստացուածովդ բաւական չես լինելու, գործի մէջ մի՛ մտնիր, ուրիշ կողմով հաց աշխատի՛ր։

Մկրտիչները հազուագիւտ են, բայց կան. իսկ այդ եղածները միշտ վայելել են իրենց բարձր իշխանաւորի համակրութիւնն և հասարակութեան սէրը. միայն մերձաւոր ծառայա-

կիցներն են, որոնք երկիւղ կրելով իւրեանց բռնած մութը գործերից՝ աշխատել և աշխատում են ամէնքի մօտ պաշտօնակցի անունը և պատիւը սևացնելու:

Մկրտչի նման ազնիւներից շատերն են զոհ գնացել բամբասանքի և ամբաստանութիւնների, բայց մեր Մկրտիչը տոկուն էր, նա դիմանում էր, սակայն ոչ առանց հալածանքի. իւր արդարութիւնն էր մեղաւորը, որ նրան տարագիր արեց, իւր ծառայակիցներին էր պարտական, որ այսօր Կովկասու հաստատադիր լերանց շղթայի մի ծայրից մինչև միւսը նրա անունը փառաբանում են, Չերքեզահայը, մի բուռն Ուտիացին իւրեանց լեռնական ջարդ ու փշուր կոկորդախօսութիւններով չեն կարողանում առանց ափսոսանքի յիշել Մկրտչի ներկայութիւնը, Կախեթիայի վրացախօս հայն իւր աղօթքի մէջ Մկրտչին մտաբերելը պարտականութիւն է համարում, նրա համար կեանք ու արև է խնդրում:

ՃԾԲ.

Դեռ շատ ժամանակ չէր՝ նշանակուել էր Մկրտիչը Չերնօմօրիայի կողմերում պաշտօնատար, դեռ նա ոչինչ տեղեկութիւն չունէր այս կողմի ժողովրդի վերայ, դեռ միայն այսքան լսել էր, որ անհաշտ Չերքեզները յաճախ անցնելով Կուբան գետի միւս երեսից՝ յարձակում-

ներ են անում, գերիներ են տանում և աւերմունքներ են պատճառում:

—Միկի՛չ, մեր լուսամտի տակին մի քանի ստուեր են շարժւում, սարսափած ներս ընկաւ նորա կին Սօնեան մի մթնագիշեր իւր մարդու մօտ:

—Զինուորներ կը լինին, որոնք մի վրանից միւսն են անդադար երթևեկում:

Մկրտիչը բնակւում էր զօրանոցում, նրա պաշտօնը շարունակ զինուորական է եղել:

—Կարծես չերքեզներ լինէին, դողալով ասաց կինը:

—Չերքեզնե՞ր, կնոջից ոչ պակաս սարսափեց Մկրտիչը: Նա կամեցաւ ծառային ձայն տալ:

Այս անցքը պատահեց Ստաւրապօլի մօտերքում՝ մի զօրաբնակ տեղում, որ տեղից չերքեզները երեք օր յառաջ մի ամբողջ ձիու ջոկ Կուբանն անց էին կացրել, և հէնց այդ էր պատճառը Մկրտչի և կնոջ երկիւղի, այդ յարձակմունքների աղագաւ՝ այն ժամանակը Չերնօմօրիայի երկիրը զօրքերով լցրած էին:

Միայն չերքեզը չէր ռուսաց պետութեան հոգածութեան առարկան, ամբողջ Կովկասու լեռները հարիւր տարուց աւել էր անհանգիստ էին արել ռուսաց կառավարութիւնը և մեծամեծ գնդեր իւրեանց մէջ կլանում էին: Ամէնքին յայտնի է, թէ քանի՛ արիներ են սւացել

Լեզգիստանի անմատչելի լեռների ծերպերումն ու Չեչենստանի թաւուտ անտառներումը։

Էլ ժամանակ չունեցաւ Մկրտիչը դուռը բանալու, չորս չերքեզներ ներս ընկան սենեակն և նրանցից մէկը հայերէն բարև տուեց։

Նրանք ընկան Մկրտչի ոտքերն ու շարժմունքներով նշանացի խնդրուածք էին անում։

—Ո՞վ էք, ի՞նչ էք կամենում, փոքր ինչ սրտապնդուած՝ սակայն ոչ առանց վրդովմունքի հարցրեց Մկրտիչը։

—Հայ-քրիստոնեայ... Գրիգոր Լուսաւորիչ... թոթովեցին մարդիկը։

—Ի՞նչպէս թէ հայ, մի՞թէ դուք հայեր էք։

—Հայ-քրիստոնեայ... Գրիգոր Լուսաւորիչ, կրկնեցին նոքա և երեսներին խաչ քաշեցին։

—Ո՞րտեղից էք, ի՞նչ էք ուզում, ընչի՞ չերքեզի հագուստ ունիք, մի քանի հարցեր իրար ետևից շարեց Մկրտիչը բարձրացնելով ծընկան վերայ եկած մարդկանցը։ Բանից դուրս եկաւ, որ խեղճերը լեզու չեն հասկանում և միայն վերոյիշեալ երեք բառերն ունէին, որ մսխեցին ու մի կողմը կանգնեցին։

Անծանօթները նշանացի հասկացրին, որ իրանց մի թարգման է հարկաւոր։

—Մենք հայեր ենք, այսպէս խօսեցան եկող չերքեզները խանութպանի թարգմանութեամբ, (վերջինս բանակի պաշար հայթայթող էր, Մկրտիչը նրան կանչել էր տուել, նա լաւ չերքեզերէն հասկանում էր), բայց երկու հարիւր տարուց աւելի է, որ գտնւում ենք չերքեզների մէջ։ Մենք կորցրել ենք լեզուն և ազգային գլխաւոր յատկութիւնները և միայն աղօտ կերպիւ պահպանել ենք մեր կրօնը, և հէնց այդ քրիստոնէութիւնն է, որ մեզ ստիպեց թողնելու լեռներումը մեր հողերը, տները, ազգականներին և ստրուկներին և գալ մտնել ռուսաց հովանաւորութեան ներքոյ։

—Ուրեմն դուք ուզում էք ռուսահպատակ լինել։

—Մենք արդէն հինգ տարի է, որ Կուբանն անցել ենք այս կողմը, և հպատակութեան երդում ենք տուել։

—Ի՞նչ է ուրեմն ձեր ցանկութիւնը։

—Խնդրում ենք ձեր պաշտպանութիւնը ընդդէմ մեր ներկայ հազարապետի և բանակի ռուս քահանայի։ Մենք 500 տուն չափ կանք, և թէպէտ մենք շատ էինք, բայց սակաւ առ սակաւ սեպհականացնելով չերքեզների բնաւորութիւնները և երբեմնապէս էլ դուրկ մնալով հոգևորականից, անխտիր առնում էինք մահմետականների աղջիկներ և փոխադարձաբար ալ-

ջիկ էինք տալիս, այդպիսով խառնուեցանք չերքէզների հետ։

—Ձեր ասելով դուք մկրտւում էիք և քահանայք էլ ունենում էիք։

—Այո՛, միշտ գտնում էինք մկրտուելու դէպքեր, թէպէտ ոչ չարունակ, երբեմն Եկատարինոդարից, Մոզդոկից, կամ Ղզլարից մեզ համար քահանայ էր գալիս և պտըտում մեր մէջ, բայց շատ ժամանակ էլ քանի մի տարիներով մնում էինք առանց օրինակատարութեան։ Սակաւ չէ պատահել, որ մեր եղբայրները թաղուել են մեր ձեռքով և մեր նորածինները մընացել են առանց մկրտութեան։

—Եւ, ի հարկէ, բոլոր ձեր աստուածապաշտութիւնները գաղտնի էին լինում ձեր մոլեկրօն մահմետական հարևաններից։

—Ո՛չ, երբէք չերքեզի կրօնականները մեզ նեղութիւն չեն տուել. ընդհակառակն նրանց հետ վայելում էինք ամէն արտօնութիւն, պահում էինք ստրուկներ և համարուած էինք տեղացի լաւ երկրագործներ, հարուստներ և քաջ զինուորներ. չերքէզը միայն իւր զէնքովն ու ձիովն է պարապած, իսկ մենք մեր զինուորական կրթութեան հետ՝ ձեռքից չենք թողել մեր նախնիքների արիաջանութիւնը, եթէ մեր վար ու ցանքսը չլինէր, մեր դրացիքը քաղցած կը կոտորուէին, մեր ամէն մինը մի գիւղի չափ ձիանց ջոկեր ունի։

—Հիմա ի՞նչ նեղութիւն են տալիս ձեզ, հարցրեց Մկրտիչը։

—Մեզ առաջին անգամը բերին և բնակեցրին հաշտ անչերքէզների և նողայների մէջ, խոստանալով, ի հարկէ, շուտ մեզ նրանցից բաժանելու, այսինքն նրանց մեզանից հեռացնելու. վերջն իմացուեց, որ նրանց միտքն ուրիշ է եղել։

—Ի՞նչպէս։

—Տեղական ռուս քահանան լսելով մեր քրիստոնեայ լինելը, եկած օրից սկսած՝ մեր ետևիցն է ընկել և ուզում է մեզ Կուբանը լցնել և նորից մկրտել։ Մենք, ի հարկէ, նրան սիրով պատասխանեցինք, որ այդ մասին կարիք չունինք, ըստ որում քանի քանի ժամանակից հետէ լոյս է ընկել մեր մէջ մի վարդապետ, որ էլի մեզանից է, նա կատարում էր մեր բոլոր ծիսակատարութիւնները լեռնականների մէջ և այժմ էլ մեզ հետ է։

Այս ամէն փաստերը բաւական չէին քահանային, նա մեզ անհաւատ նողայների և չերքեզների հետ է հաշւում և մեզ համարում է մահմետականներ և հերետիկոսներ։ Քահանային լսելով՝ այս կողմերը կառավարող հազարապետը՝ մեզ տուած ոչ մի խոստումը չկատարելուց յետոյ՝ ամէն տեսակ նեղութիւններ մեզ տալիս է։

—Դուք գնացէք, վերջին խօսքը տուեց Մկրտիչը, չերքեզահայերի հետ երկար խօսելուց

և ամէն մանրամասնութիւններն իմանալուց յետոյ, շուտով դուք կ'ունենաք մեծ պաշտպան։

ՃԾԳ.

Բազմադիմի հնարքների հետ՝ ռուսաց կառավարութիւնը գործ էր դնում՝ պաշարման գործը թեթևացնելու համար՝ և քրիստոնէական կրօնը տարածելը։

Իսկոյն և իսկ մի գիւղ կամ քաղաք վերցնելուն պէս՝ թողնում էր այդ տեղը պահապան զօրքի հետ և մի հոգևորական։

Այս բանը շատ տեղ մեծապէս օգնում էր տիրապետութեան գործին։

Ոչինչ համանմանութիւն չկայ օսերի մի գիւղում գտնուած արժանաւոր հոգևորականի և նորեկ չերքեզահայերի մօտ եղած քահանայի մէջ։

Առաջինը կարճ միջոցի մէջ զսպեց արենկեր օսերի վայրենութիւնը, իսկ երկրորդը փոքր էր մնացել նորեկներին իսպառ յուսահատեցնում էր։

Առաջինի կեանքից մի երկու կարճ իրողութիւնները ցոյց են տալիս արժանաւոր հոգևորականի գերազանցութիւնն երկրորդի վրայ։

Նորաշէն եկեղեցին, ուր կարգուած է եղել այդ քահանան, շատ անգամ պէտք է եկել ձմեռ ժամանակը օսերին իբրև ժողովարան։

—Տէր հա՛յր, եկեղեցու դուռը բաց արա՛,

գանք մի քիչ նստենք, ծխախոտ քաշենք, ժամանակ անցկացնենք, ասել են օսերի երևելի իշխանները։

—Շատ լա՛ւ, սիրելի՛ք, դուք Աստուծոյ որդիքն էք, Աստուած իւր տանը սիրով ընդունում է իւր զաւակներին։

Եւ այդ մարդիկը ոտքերն երկար տարածած՝ եկեղեցում ամենատեսակ դատարկաբանութիւններ են արել։

—Փոքր ժամանակ էլ, իմ որդի՛ք, մէջ էր մտնում յանկարծ քահանան, մեր Աստուծոյ հետ խօսենք։ Այս քաղցր խօսքերով նա սկսել է ժամասացութիւնը։

—Սպասի՛ր, յանկարծ կանգնեցնում է օսի մէկը քահանային բուրվառ անելու ժամանակը, կրակ տուր ինձ ծխախոտս վառելու։

Քահանան իւր ձեռքով հանում է կրակը բուրվառից և ուրախ ժպիտով դնում անասնանման մարդու ծխամորճի վրայ։

—Տէր հա՛յր, ներկայանում է օսը քահանային, անցեալ օրն այս ինչ հիւանդին դու մի դեղ տուիր և առողջացաւ. այսօր իմ այծս է տկարացել, նոյն դեղից տուր, որ չսատկի։

Բարի քահանան համոզալից խօսքերով հասկացնում է մարդի և այծի մէջ եղած զանազանութիւնը, թէ այն դեղը, որ ինքն ունի՝ հոգևոր դարման է և չէ կարելի կենդանիների համար գործ դնել։

Իսկ ի՞նչ ես կարծում, սիրելի ընթերցո՛ղ, ի՞նչ դեղ էր այն։

—Հաղորդութիւն։

Այսպիսի շատ դէպքերում օսերի քահանան կարողացել է անբաններից լեզուով միայն դանադանուող իւր ժողովրդի մէջ քրիստոնէութիւնը տարածել և տէրութեան հաւատարիմ հպատակ յառաջ բերել, իսկ չերքեզահայերի մէջ եղող քահանայի և նոյն ժամանակուան անհեռատես կառավարչի շնորհիւ՝ մազաչափ էր մնացել, ամէն բան տակն ու վերայ էր լինում։

ՃԾԴ.

Դեռ նոր չերքեզահայերի գաղթականութիւնը կազմուել էր, դեռ ամէն ոք իւր սկզբնական պիտոյքը հոգալու վերայ էին, որ տեղական զինուորական քահանան նոցա մէջ երևեցաւ,

—Շատ ուրախ ենք, տէր հա՛յր, պատասխանեցին նրան գաղթականները, մենք ի բնէ քրիստոնեայ լինելով, ինքներս ցանկութիւն ունինք եկեղեցի շինելու և մեր նախնեաց սուրբ կրօնը համարձակ պաշտելու, այդ իսկ պատճառաւ գլխաւորապէս մենք ձգեցինք մեր տունն ու տեղը, բայց խնդրում ենք թոյլ տաս մեզ երախաների համար մի մի խրճիթ հիւսենք, արե-

ւի, անձրևի տակից նրանց պատսպարենք և ապա ինքներս կը դիմենք ձեր օգնութեանը։

—Ո՛չ, դեռ հարկաւոր է ձեզ մկրտել և այնուհետև մինչ դուք տներ շինելու հոգսում կը լինիք, եկեղեցին ձեր համար պատրաստ կը լինի։

Ոչինչ բանով քահանային չէին կարողանում համոզել չերքեզահայերը, երէցը լսել անգամ չէր ցանկանում նոցա մկրտուած լինելը, նոցա հայութիւնը. դուք հերետիկոսներ էք, պնդում էր, և ձեզ նորից հարկաւոր է կուրանը լցնել ու մկրտել։

Մի քանի անգամ չերքեզահայերը դիմեցին տեղական հազարապետին։ Նա էլ հոգևորականի խօսքերն էր կրկնում։

Այդ էր պատճառը, որ հինգ տարի իւրեանց վարդապետի խօսքով դիմադրեցին չերքեզահայերը և ի վերջոյ ստիպուած եղան կոմնակի օգնութիւնների դիմել։

Առաջին անգամ նրանց պատգամաւորներին տեսանք մենք Մկրտիչի մօտը։

ՃԾԵ.

—Տաապի՛ր Կուբանի այս կողմի բանակի մէջ տեսնուել իմ սիրելի Մկրտչի հետ և գործիր նրա խորհրդով ու համարձակ։

Այսպիսի մի կարճ հրաման ստացաւ Ստաւ-

բապօլումը Պատկանեան տէր Պետրոս քահանան Ս. Պետերբուրգից։

Քահանան թուղթը բանալուն պէս՝ սարսռեցաւ, ձեռագիրն իրեան ծանօթ էր, մանր մանր կարճ ու կտոր և խիտ գրուածք էր այն. այդպէս գրում էր մի մարդ։ Շատ արագութիւնից և չատ սևագրութիւնից և այդ անձի ձեռագիրը մանրացել և մինչև կէտերի էր հասել։

Այն գրողը Ներսէս Աշտարակցին էր։

1843 թուի վերջերումն էր, երբ տէր Պետրոսն ստացաւ Ներսէսի կարճ նամակը։

Երկրորդ անգամ կաթուղիկոսական աթոռի կոչումն էր, որ ստիպեց արժանաւոր հոգևորականին չզլանալու իւր ծառայութիւնը իւր սիրելի ազգին։ Նա նոր համաձայնութիւն էր տուել և Բեսարաբիայից գնացել էր Ս. Պետերբուրգ՝ ներկայանալու կայսեր։ 14 երկար տարիներ էին, Ներսէսն սպասում էր այս շնորհքին արժանանալու, և ահա նա իբրև ընդհանուր հայութեան ներկայացուցիչ, հասաւ իւր բաղձանքին։

ՃԾԶ.

—Այո՛, իմ նուիրական պարտաւորութիւնս էր, տէր հա՛յր, իբրև հայ այս իրողութիւնը յայտնելու կաթուղիկոսին, այսպէս պատասխանեց Մկրտիչը Տէր-Պետրոսի հարցին, և ես կար-

ծում եմ, որ դրանով մի յանցանք չեմ գործել։

—Բայց դուք կարող էիք նախապէս ինձ իմաց տալ։

—Ներեցէք, որ իբրև նորեկ, ես այս կողմերը ոչ ոքի հետ դեռ ծանօթութիւն չունիմ։

ՃԾԷ.

Արագապէս թռաւ Պատկանեան հայրը չերքեզահայերի մէջ և համարձակ պաշտպան հանդիսացաւ հայ կրօնին։

Չերքեզահայերը տեսնելով հայ քահանային՝ իւրեանց հարազատ ազգակցին, բացէ ի բաց մերժեցին իւրեանց ճնշող ռուս հոգևորականի առաջարկութիւնները։

Սկսուեց մի մեծ գործ։

Ռուս քահանան թէպէտ չի վստահանում ազատօրէն գործելու, բայց հովանաւորուած ներկայ զինուորական կառավարչի գործակցութեամբը՝ պնդում է, որ իւրն է իրաւունքը մոլորեալներին դարձի բերելու. իսկ Տէր-Պետրոսը ապացուցանում է, որ սորանք և՛ ազգով և՛ կրօնով հայ են և կարօտ չեն դարձի։

Տէր-Պետրոսին օգնում է և միակ ուսեալ անձը չերքեզահայերի մէջ՝ Կարապետ Խրիմփարդապետը, որը, երևի, գնացած լինելով Խրիմու կողմերից, 20—25 տարի է կատարելու է

եղել իր ժողովրդի հոգևոր ծխակատարութիւնները։

Այստեղ կոչւում են իբրև վկաներ անգրագէտ և անլեզուագէտ չերքեզահայերը, որոնք իւրեանց բերանով պատմում են, թէ իւրեանք տարին երկու մեծ տօն ունին, որոց մինը կատարում են գարնանը՝ 50 օր պաս պահելուց յետոյ, վերջին երեկոյ կարմիր ձուով և ձկնեղէններով շատանալով, իսկ միւսը՝ ձմրանը՝ ութ օր պահեցողութիւնից յետոյ, և այդ հանդէսը նոյնպէս տօնում են մի երեկոյ։

Աւելորդ չի համարւում չերքեզահայերին խաչակնքել տալը. ըստ հայկական եկեղեցական ծէսի նրանք ձեռքը նախ դէպի ձախ՝ և ապա դէպի աջ կողմն են տանում։

Գուցէ դեռ շատ պիտի նեղութիւն տային ռուս քահանան և հոգաբարձուը չերքեզահայերին, եթէ Տէր-Պետրոսը չը յայտնէր այս եղելութիւնը կուբանեան գլխաւոր զինուորական կառավարիչ Զասսին, որը պատուիրում է ոչ միայն դադարեցնել այդ անտեղի պահանջը, այլ և հրամայում է մի փայտեայ հայկական եկեղեցի շինելու չերքեզահայերի համար, բայց յայտնի չէ՝ կրկին ռուս. քահանայի թելադրութիւնո՞վ, թէ թշնամի չերքեզների ապստամբութեան շնորհիւ կարճ միջոցի մէջ այրուեց։

ՑԾԼ.

Եկաւ Ներսէսը կաթուղիկոսանալու և այն օրից չերքեզահայերին մի մեծ պաշտպան աւելացաւ։

Իշխան Վօրօնցովի և Ներսէսի սերտ բարեկամական յարաբերութիւնները ոչ ոքից անյայտ չէր։ Չերքեզահայերն էլ ծծկեր երախայի նման Տէր-Պետրոս Պատկանեանի ձեռքով իւրեանց բոլոր աղերսները շաբթի այս գլխին գրում են, ամսի միւս գլխին յայտնւում են Ներսէսին։

Տէր-Պետրոսը նշանակուեց Ստաւրօպօլու նահանգի հայերի ընդհանուր բարեկարգութեանց վերատեսուչ և այդ գլխաւորապէս այս նոր ժողովրդի ցաւերին դարման տանելու համար էր։

Չէր ձանձրանում հայրապետը որդեսէր մօր պէս գուրգուրելու և շոյելու չերքեզահայերին. նրանց համար ամէն ժամանակ միջնորդութիւն էր անում իշխան Վօրօնցովին։

Պատկանեանցի թելադրութեամբ գրուած խնդրի համաձայն՝ Ներսէսը իրաւունք տուաւ չերքեզահայերի բնակութիւնը հաստատել տալու և իւրեանց անունը հայոց փոշիացած մայրաքաղաքի անունով Արմաւիր կոչելու։ Սրանով հայրենասէր մարդը յիշեցնում է Կովկասի փոշիների տակից 200 տարուանից թաղուած և այժմ երևան եկած ազգակիցներին հայոց նախնի փառաց հաշակը։

Զերքեզահայերը հիմա ոչ միայն իրենց պապերի կրօնը կարողացան համարձակապէս պաշտել, այլ և ամենայն քաղցրութեամբ իրենց խռպոտ և դժուարադառնալի լեզուի մէջ ընտելացրին հայ-քրիստոնեայ երկու միացած և մի ընդհանուր նշանակութիւն ստացած բառը:

Նոցա ուրախութեանը չափ չկար:

Խեղճե՜ր, աժան չնստաւ ձեզ այդ շնորհքը:

ՅԾԹ.

Ես շատ լաւ հասկանում եմ, հա՛յր, որ ձեր վիրաւորանքն ինձ էլ վերաբերում է:

—Բայց այդ ամէնը կ'անցնի, եթէ մենք կարողանանք մի հնարքով մեր նպատակին հասնել, եկեղեցին արդէն այրուեց և մենք կարող ենք տեղական զօրքի անունով մի ուղղափառ եկեղեցի կանգնեցնել և հետզհետէ նրանց դէպի մեզ քարշել:

—Այդ այսուհետև առաւել քան անհնարին է, փոխարքայի հրամանն է. Արմաւիր բառը մենք չենք կարող փոխել նրանց գիւղի վրայից և միայն այդ բառը բաւական առհաւատչեայ է նրանց հայութեանը:

—Ուրեմն ի՞նչ անենք:

—Պէտք է խոհեմութիւնը ձեռքից չթողնել, հարկաւոր է այնպէս անել, որ իրենք դիմեն քո ոտքը և խնդրեն քո հովանաւորութիւնը, իսկ այնուհետև քեզ է մնում նրանց համոզելը:

Այս խօսակցութիւնն եղաւ ռուս քահանայի և զինուորական մերձակայ կառավարչի մէջ:

ՅԿ.

Աւելորդ չեմ համարում այս տեղ մէջ բերել Արմաւիրցիների մի խնդրագրից քաղուածները: Գրաբառ է այն, բայց մեր գործին չի գալ նոյնութեամբ արտագրելը, ճշտօրէն թարգմանութիւնիցն էլ միտքը չի տուժում: Թուղթը գրուած է Ներսիսին չերքեզահայերի թամատայ կոչուած գիւղապետներից, կամ այսպէս ասել՝ ծերակուտից:

«Մեր վերջին յոյսը դուք էք, Վեհափառ Տէ՛ր, մենք շատ լաւ հասկացանք մեր անլեզու և անտիրունջ լինելը և միայն Աստուծոյ և ձեր վերայ ենք ապաւինել:

Այժմ Կովկասու զինուորական իշխանութիւնը ձգեց մեզ այնպիսի ծանր լծի տակ, որ ոչ մեր նախնիքը և ոչ մենք տեսել էինք: Մեզ լծի տակ ձգեցին ըստ օրինակի նօղայից և աւելի ծանր՝ քան թէ նրանց: Մեզանից պահանջում են, որ միշտ պատրաստ ունենանք 80 ձիաւոր պատերազմ գնալու, այնպէս, որ երբ նոքա վերադարձան, միւս 80 ձիաւորները գնան և երրորդը փոխանակի երկրորդին. հարկադրում

են ուժ ձի պատրաստ ունենալ օտարազգի պաշտօնեաների հեծնելու համար, չորս ձի էլ՝ մեր պրիստաւի դուռը կանգնած։ Բացի դրանից ուղարկում են մի քանի ձիաւորների դրով կամ հրամանով մի քանի հարիւր ասպարէզ՝ այն էլ՝ ամբարըշտաց մէջ....

Մեր կենաց վիճակը թեթևացնելու և հեշտացնելու յուսով՝ մտանք Մեծ Կայսեր հզօր հովանաւորութեան ներքոյ, և մինչ մեր կառավարիչները մտքներումս էլ չէին անց կացնում, մենք յայտնեցինք մեր յօժարութիւնը՝ հաւատարիմ հպատակութեան երդումն տալու, յուսալով՝ թէ ինչպէս մեր եղբայրները—հայերը ամբողջ Ռուսաստանումը կան և վայելում են նորա խնամքը, մենք ևս կը հանգստանանք։

Նեղեքուեցինք, յափշտակուեցինք լեռնական որիկաններից, մեր զաւակները տուինք նրանց զոհ և գերի, որպէս զի ազատուինք նրանցից և մտնենք մեր նոր հայրենիքը, յուսալով՝ որ այս տեղումը մխիթարուելով՝ կը մոռանանք մեր առաջին վշտերը։

Մեր նախկին ծանօթները թշնամացան մեզ հետ, որովհետև թողինք նրանց, այդ պատճառաւ էլ քանի՞ քանի անգամ այստեղ՝ մեր նոր աւանումը նրանք յափշտակեցին մեր ձիանոցը, եզների և ոչխարների ջոկերն ու հօտերը։

Քանի՛ քանի անգամ նրանք սպանեցին մեր մարդիկներին և գերի տարան, երկաթի մէջ

մաշեցին։ Այս ամէնը մենք տարանք, համբերեցինք, յուսալով՝ թէ Մեծ Թագաւորի ողորմութիւնը կը քաղցրանայ մեր վերայ և կը սփոփի մեր սրտերը ողորմածագոյն պարգևագրով։ Որովհետև եթէ մենք նեղութիւն ենք կրում, գոնէ մեր զաւակները հանգչէին նորա գայսոնի խնամոց ներքոյ՝ ինչպէս են Նախիջևանի, Ղրիմի և Մաճառու Սուրբ խաչի հայերը։ Այլ փոխանակ մխիթարութեան՝ այս ծանրութիւնը դրին մեր վերայ։»

Սորան հետևում է չերքեզահայերի մի քանի խնդիրները, որով միջնորդ են բռնում Ներսիսին Վորոնցովի մօտ ինչ ինչ արտօնութիւններ տալու իրենց և նոցա հետ միասին բնակեցրած նօղայներին հանելու իւրեանց միջից։

Մենք վերն ասեցինք, կարծեմ, թէ չերքեզահայերի հետ միասին եկան և մահմետական նողայներ և տեղական իշխանութիւնը խոստացաւ հեռացնել նրանց հայերի միջից, բայց ինչպէս այս խնդրից երևում է, խոստմունքը չի կատարուել, որովհետև հայերը թախանձում են, որ եթէ բարձր իշխանութիւնը յարմար չի համարել նրանց առանձին բնակութիւն տալու, մի ուրիշ տեղ յատկացնի Ստաւրապօլի նահանգումը, ուր նոքա տեղափոխուեն և նորից մի Արմաւիր անունով աւան շինեն։ Մենք թէպէտ, յաւելացնում են նրանք, տուն ու տեղ ենք հաստատել և 50 կրպակ ենք շինել, որոց վերայ

ծախսել ենք մեր տասնամեայ վաստակն ու աշխատանաց քրտինքը՝ բայց մենք սիրով կը թողնենք ամէնը, միայն թէ՝ ազատուինք այս դառն ծառայութեան լծիցը,

Այս խնդիրն էր պատճառը, որ չերքեզահայերին ստիպեց երեք ամսից յետոյ մի ուրիշ խնդիր էլ թողնել Ներսիսին,

Խեղճերից ստիպում էին տունը մի մարդ տալ պատերազմ գնալու, երբ նրանք յայտնեցին իւրեանց անկարողութիւնը, ամենատեսակ նեղութիւնների ենթարկեցին. և ոչ այսչափ միայն, մի օր էլ յանկարծ առաջնակարգ իշխաններին բանտարկեցին։ Սոքա այնպիսի պատկառելի անձինքներ էին, որոնցից լեռնական չերքեզներն անգամ ակնածում էին։

«Շատ աղաչեցինք, գրում են նրանք Ներսիսին, թէ մեզ մի նեղացնէք, մինչև մի ողորմութեան հրաման գայ մեզ իշխան փոխարքայից, կամ մեծ Թագաւորից, որոնց խնդիրք ենք տուել, բայց չը լսեցին։ Մեզանից մի քանիսին տարան Ն. գեներալի մօտ, որը մեզ հետ ոչինչ չխօսեց, այլ հրամայեց մեր թամատաներին բռնելու և բանտ դնելու։ Ապա մի քանի օրից յետոյ նրանց հանեցին այն բանտից և շղթայած ուղարկեցին Տեմիեանսկի բերդը, ուր կան մինչև ցայժմ ոտքերը փայտ դրած և ուռած,

Նորից մի քանի օրից յետոյ՝ կոչեց պրիս-

տաւը Նոխուպշ Գասպարովին և Ալլահէրդի Տարչինովին և ուղարկեց Պրոչնոկոպ բերդը, ուր են մինչև հիմա բանտումը, միայն այն պատճառով, որ նրանք ներկայացան (իբրև պատգամաւոր) ձեզ ու փոխարքային և մեր ցաւը յայտնեցին։

Էլի քանի օրից յետոյ կոչեց 10—12 մարդ, թէ գեներալը ձեզ պահանջում է, մենք կարծեցինք, թէ որևէ գիր կամ հրաման պիտի ցոյց տայ, բայց յանկարծ բռնեցին էլի՛ երեք հոգի, այսինքն Բարսեղ Կուսիկովին, Բախ Տէրտէրովին և Համբուկ Տոնպազովին։ Մենք ասացինք, թէ մեզ էլ բռնեցէ՛ք, բայց ինքը գեներալը չերևեց մեզ. այլ պրիստաւի ձեռքով բանտարկեց նրանց ու մեզ վռնտեց։

Ահա՛, սրբազան հա՛յր, այսպիսի տխուր յուսահատութեան մէջ ենք և ոչ մի գործ կատարելու սիրտ չունենք, ուր տեղ որ երկու կամ երեք մարդ կը տեսնեն խօսելով, մեր միջից երկու ընտանի թշնամի իսկոյն ունինք, կը մատնեն. այս փորձանքի մէջն ենք։—Մենք էլ, որ եկել ենք Ստաւրապօլ, ծածուկ ենք եկել, որ մեր արտասուաց աղաղակը հասցնենք քեզ»։

ՃԿԱ.

Վերոգրեալ նեղութիւնները չէին քահանայի և իւր պաշտպանի սրտի իղձը։ Ներսէսը գործում էր և բարձրագոյն արդարութիւնը

պաշտպան հանդիսացաւ Արմաւիրցիներին. բոլոր նրանց խնդիրները ընդունելութիւն գտան. մինչև անգամ կրկին տէրութիւնից հրաման եկաւ հաստատ քարաշէն եկեղեցի կանգնեցնելու նրանց համար, և ոչ այնչափ միայն, այլ և ի պատիւ նրանց՝ փոխուեց իբրև բացառութիւն օրէնքի մի կէտը. իրաւունք տուեց Արմաւիր եկող և քրիստոնէութիւն ցանկացող մահմեդական չերքեզներին իսկոյն և իսկ մկրտել հայոց դաւանութիւնով առանց հարցնելու նախարարի կամքը։

«Համբերել և յուսալ»—գրում էր շուտ շուտ Ներսէսը արմաւիրցիներին Տէր-Պետրոսի և Մկրտչի ձեռքով։

Համբերեցին, յուսացին և մեծ կայսեր ողորմութիւնը հասաւ նրանց։

Այս կուլ տալու բան չէր, ռուս քահանան և իւր պաշտպանը մինչև ի մահ վիրաւորուեցին, բայց ձեռքներից ոչինչ չէր գալ, պարտական էին բարձրագոյն իշխանութեան հրամանը բառացի կատարելու։

Խնդացին արմաւիրցիք, օրհնեցին Ներսէսի, Տէր-Պետրոսի և Մկրտչի կեանքը, բայց վերջինս զոհ գնաց։

Վիրաւորուած զինուորական իշխանաւորը հետազօտեց գաղտնի լրտեսների ձեռքով և իմացաւ չերքեզահայերի մերձակայ պաշտպան

աշխարհականի անունը ու մի օր էլ նորա փոխադրուելու հրամանն արձակեց։

Նա էլ ատամները կրճտեց Պատկանեան բազմաշխատ քահանայի վերայ զինուորական իշխանաւորը,—բայց նա իւր ասպարիզից դուրս էր, հոգևորական վերարկուն հովանի էր տէրտէրին։

ՃԿԲ.

Ոչինչ դիմադրութիւն անել չէր կարելի։

Փօստի սայլակը զօղանջելով տանում էր Կովկասեան ահռելի ծոյի ծերպերի միջով մի սակաւաթիւ ընտանիք։

Հայր, մայր և մի փոքրիկ սիրունիկ արու զաւակ։

Մկրտիչն էր այն։

Արմաւիրցիների հակառակորդ մերձակայ զինուորական իշխանն իւր բարեկամ քահանայի հետ նոյնպէս տեղափոխուեցին. նոցա տեղը եկան նորերը, որոնք արմաւիրցիների բարեկամն եղան,

ՃԿԳ.

Էջմիածնի հոգևոր դպրոցում ու Թիֆլիսու Ներսիսեան ուսումնարանում մի քանի երեխայք ընդունուեցին։ Նրանք ոչ մի բառ հայե-

րէն չը գիտէին, ոչ ոք նրանց չէր հասկանում. կոկորդային խուլոտ ճառաճկութիւններ էին նրանց հագագներից դուրս գալիս և ամէնքի ծիծաղն ու հետաքրքրութիւնը շարժում:

Փոքրիկ վայրենիները չերքեզահայերի ձագեր էին:

Հեռատես Ներսէսը նրանցից ապագայ քահանայացուներ և Արմաւիրի լուսաւորիչներ էր պատրաստում:

ՅԺԴ.

Ուտիական ազգը յայտնի է պատմութեան մէջ շատ հին դարերից հետէ: Այդ սակաւաթիւ ժողովուրդն, ի թիւս ուրիշ շատ սահմանակից ազգութիւնների, իւր քրիստոնէութիւնն ստացել է գլխաւորապէս հայ լուսաւորիչներից. մեր երջանկայիշատակ նախահայրերը՝ սուրբ հայրապետներն ամէն ժամանակ ուղարկում էին իւրեանց քարոզիչները դրացի ցեղերի մէջ և ճշմարիտ կրօնի լոյսը տարածում:

Ուտիացիք, ի շարս մեր շրջակայ հարևանների, իւրեանց կրօնապահներին և դրականութիւնը մեզանից էին ստանում: Աղուանից, վրաց և այլ մերձակայ ազգերի կաթուղիկոսները մեր հայրապետներից էին կարգ ստանում և նրանց իրաւասութեանն ենթարկւում: Մեր հիւսիսային

դրացիներից մի քանիսի գիրը մեր բազմաշխատ և անմահ Մեսրովբի շնորհքն է:

Այն օրից ցայսօր հայերն իւրեանց շրջակայից վերայ բարոյապէս ազդեցութիւն միշտ ունեցել են:

Եղել են ժամանակներ, որ այդ կարգը խանգարուել է, վրացիք բոլորովին բաժանուել են հայ եկեղեցուց, մի քանիսի կողմանէ ևս երբեմնապէս զեղծումն պատահել են, բայց հայրապետական գահի իրաւասութիւնը միշտ ճանաչուել է, մեր կաթուղիկոսական Աթոռն առաջնակարգութեան պատիւը շարունակ վայելել է:

Հետզհետէ անքրիստոնեայ պարսիկների, մոնղոլների և թաթարների անդադար բռնութիւնները, աւերմունքներն և յարձակմունքները, նոյնպէս և խորամանկ յոյների խարդախ քաղաքականութիւնը կուլ են տուել այդ ազգութիւններից մի քանիսին, բայց ինքը հայութիւնն էլ անմասն չի մնացել ազգութիւններն անհետացնելու վնասակար գործին օգնելուց:

Պէտք է խոստովանել, ի փառս հայ անուան, որ պատմութեան ոչ մի թերթումը չենք գտնիլ հայի գործ դրած բռնակալութեան, կամ խարդաւանութեան մասին յիշողութիւններ, բայց գործողութիւնն ինքն իրեն է կատարուել, համադաւանութիւնը այդ ցեղերի մի մասը ձուլել է հայութեան մէջ:

Եթէ հայը չկորցնէր իւր ինքնուրոյնութիւնը,

պահպանած լինէր քաղաքական աշխարհի մէջ իւր անկախութիւնն և բարձր դիրքը, այդ լեռնական քրիստոնեաներից և ոչ մինը կ'անհետանար, հայ ազգն երբէք չի աշխատել իւր նմանների անհետացնելու, անհատականութեան սրբազան նուիրականութեան դէմ երբէք չի մեղանչել, բայց նա իւր անկումով ուրիշներուն կորչելուն նպաստել է. եթէ հայն, ասացի, իւր ոյժը պահած լինէր, իւր դրացի քրիստոնեայ ազգերն այսօր ամբողջապէս ապրում կըլինէին և ազգութիւնների շղթայի մէջ իրեանք էլ մի օղակ կ'ունենային:

Ազգ չըմնաց արևելքից մինչև արևմուտք, որ ոյժ ստանալուն պէս հայերից մի մեծամասնութիւն չըկորզէր, բարբարոս շահամոլ աշխարհակալները տիրապետելու և Հայաստանի անթիւ բարիքը լափելու դիտմամբն են սրածարակ արել, կիսով չափ պակասացրել մեր հայերին, կրօնամոլ դենպետները անձնական օգուտների և իւրեանց տգէտ տէրերի վերայ ազդեցութիւն պահպանելու նպատակով են ատրուշանների ու մզկիթների փոխել մեր սուրբ եկեղեցիներից շատերը, իսկ մեր հաւատակից կոչուած քրիստոնեայ յոյն եղբայրն իւր դաւաճան քաղաքականութեանն է ծառայացրել մեր դէպի իրանց ունեցած եղբայրական համակրութիւնը. այդպիսով ուզեցել է մի բարի լուսի՝ մեր ազգութեան արմատն չորացնել, սով, սրածութիւն, կոտորմունք մի կողմից

են հայ ժողովրդի ամբողջութեանը հարուածել, բաժանմունք, երկպառակութիւն, բանտ ու աքսորներն են միւս կողմից պառակտել Թադէոսի, Բարդուղիմէոսի և Գրիգոր Լուսաւորչի արիւնով սրբագործուած արևելեան քրիստոնեաների ապաւէն ու նեցուկ ազգին:

Հայի մասին խօսելով՝ չեմ ասում, թէ մեր միւս շրջակայ դրացիներին վնաս չեն տուել, աշխարհն այսօր մեր աչքի առաջին է, իսկ այդ ազգութիւնների միայն անուններն են մեզ պատմութիւնից յայտնի, իրանց տեղն այսօր մահմետականներ և հայեր են բնակեցրած, արաբ ընթերցմունքը, ղուռանն ու թաթարերէն կամ թուրքերէն լեզուն են նրանց մի մասի ներկայացուցիչները, հայ անունն է միւս բաժնի որոշ կոչումը:

Ազգերը, հարկաւ, չփոխուեցին, ամենայն ստուգութեամբ ներկայ սերունդը հին նախնիքների ժառանգներն են, բայց անուններն և կրօնը փոխած:

Ալուանք, Ծոփք, Լփնիք, Ուտէացիք և այլն այսօր կոչւում են Լեկզիք, հայեր, վրացիք,

Կրկնում և երեքկնում եմ, եթէ հայոց անկախութիւնն ապրում լինէր, նոյն ազգերը մեր շնորհիւ իւրեանց գոյն ու հոտովը իւրեանց գոյութիւնը պահում կը լինէին, իւրեանց առանձին կրօնն և ազգութիւնը կ'ունենային, բայց եթէ հայ ազգը չը կարողացաւ դիմանալ և այն-

քան շատութիւնից այսպիսի սակաւաքանակութեան իջաւ, ինչ հնար էր ուրիշներին դէմ դնել։

Այսչափով էլ գոհ ենք, որ ի շնորհս մեր ազգային—քրիստոնէական եկեղեցու՝ թէպէտև փոքրամասնութիւնը, այնու ամենայնիւ իբրև հայ ապրում ենք, մեր բազմութիւնն էլ կորած է անդառնալի մեծատարր մահմետականութեան, յունականութեան և հռոմէականութեան մարդակուլ որկորի մէջ։

Մենք ասացինք, որ հայ ազգն երբէք չի ձգտել բռնութեամբ ուրիշի ազգութեանը դաւաճանելու յոյնի և այլոց նման, բայց մենք չենք մոռացել, որ Հայաստանի խորթ որդիքը՝ անհարազատ Արշակունիքն աշխարհակալ նպատակներով դուրս գալով խոր արևելքից՝ ուզում էին բոլոր ազգ ու ազինք մի կաղապարի մէջ ձուլել։ Նրանք էին, որ ստիպում էին հրէաներին խոզի միս ուտելու, իւրեանց տիրապետած աշխարհի հարազատ անուանի նախարարական ցեղերը ջնջելու, Մուրացան և այլ օտարազգի ցեղապետութիւններ հաստատելու, հայոց ազգային որոշ յատկութիւնները ոտնատակ տալու և իւրեանց անսովոր ծէս ու կարգերը մեր մէջ մտցնելու։ Արեցին Արշակունիք այս ամէնը, բայց իւրեանք ժամանակի հարուածից ոչնչացան և իւրեանց տարադրեալ ազգի մէջ մէրուեցին, կորցրին անունները և հայ բառով ճանաչուեցին։ Այն

մարդիկը՝ որոնք ուզում էին հայ անունը ջնջել, այսօր նոյն անուան շնորհիւ՝ իւրեանք ապրում են պատմութեան մէջ։

Միայն Արշակունիք չը պատժուեցին չարաչար, շատ անկուշտ մեծ տէրութիւններ անհետացան աշխարհի երեսից։ Շա՛տ լաւ էլ եղաւ, խոտորնակին խոտորնակ, ուրիշին հոր փորողն ինքն է գլխի վերայ տնկւում, քչով չըբաւականացողն իւրն էլ կորցնում է, շատին ձգտողն՝ ունեցածիյն էլ զրկւում է՝ նման Եզովբոսի շան, որ միսը բերանից թողեց, ագահաբար ստուերի քամակիցն ընկնելով։

Բնական է այդ, ոյժը ցրուելով՝ թուլանում է, քարն իւր տեղը ծանր կը լինի։

ՃԿԵ.

Հիւսիսային կորած անյայտացած ազգութիւններից մի ամենաչնչին մնացորդ շատ ժամանակ չէ, որ լոյս աշխարհ եկաւ։

Այդ նշխարն Ուտէական ազգի մի աննշան հիւլէն էր, որ մնացել էր լեռնականների մէջ։

Նուխու մօտ երկու մեծ գիւղ պահել էին իւրեանց լեզուն և աղօտ կերպիւ քրիստոնէական մի քանի արտաքին ծիսակատարութիւնները։

Այդ Նիժ և Վարդաշէն գիւղերն էին, որ շատ ժամանակ չէ յայտ եկան։

Դարերով այդ գիւղերը իրանց կրօնի և

լեզուի շնորհիւ լեռնական լեզգիների մէջ էլ չէին խառնուել. իսկ մի քանի տարի է ահա՛, որ նրանց անհետանալն սկսուել է։

Նրանցից մի մասը վրացի քահանաների աշխատութեամբ ձուլւում են ուղղափառութեան մէջ, միւս մասը մեծամեծ հալածանքներ տանելով, ինքն իրեն ձգեց հայոց եկեղեցու գիրկը։

ՃԿԶ.

Յարութիւն բէգ Մելիքեանը՝ լեռնական դըրացիների ահ ու սարսափը ռուսաց հովանաւորութեան ներքոյ դողացրել էր լեզգիներին։ Նա մի քանի պատերազմներում գտնուելով՝ շատ քաջութիւններ էր գործել լեզգիների դէմ, և հէնց այդ էր պատճառը, որ լեզգիքն իւրեանց երեխաներին լռել էին տալիս Յարութիւն բէգի անունով, նրա անունն էր, որ ամէն մի լեզգու բերանում անիծւում էր և կ'երևի, նորա հսկայ նախնեաց անունն էր, որ պահել էր վերոյիշեալ երեք գիւղը լեզգիների հետ խառնուելուց։

Ոչ ոք չէր կարող առանց հիացքի, հրճուանքի և պատկառանքի նայել այն բարձրահասակ, գեղեցկադէմ, սևաչեայ և հուժկու Յարութիւն բէգին։

Միմիայն նորա հաստ և սև ընչացքը տեսնողի վերայ և՛ սարսուռ և՛ զարմացք էր ներշնչում. երկու անգամ պատ էր տուած այդ թան-

ձըր մազերի փունջն ականջովը, և այդ շատ վայելում էր իւր հերոսական կազմուածքին։

Յարութիւն բէգի երկայն և կորովի բազուկները, լայն և դուրս պրծած կուրծքը համապատասխան էին մարմնի մասերին։

ՃԿԷ.

Ճիշդ Արմաւիրի դէպքին նման իրողութիւն էլ յառաջ եկաւ Նիժում և Վարդաշէնում։

Զերքեզահայերին գուցէ վատթար հետևանք յառաջ գար, եթէ Մկրտչի շնորհիւ և Պատկանեան քահանայի աշխատութեամբ օգնութիւն չը հասնէր հայոց բարձր հոգևորականութիւնը՝ Ներսիսի անձնաւորութեան մէջ, իսկ այստեղ ոչ ոք խորհուրդ չը տուեց սկզբներումը ուտիացիներին դիմել հայոց հոգևորականութեանը։

Վրացի քահանայքը լինելով ռուսաց բանակի մէջ՝ սկսան իւրեանց քարոզութիւնները։

Ուտիացիք լսելով քրիստոնէութեան անունը՝ առանց խորութեան դիմեցին նրանց գիրկը։ Ժամանակ չը կար իւրեանց մէջ սուրբ աւանդ պահած ծէսերը յիշելու, ուտիացիք այդ մասին գաղափար անգամ չէին կազմել, դարերով մահմետականութեան մէջ սխմուած՝ այսօր իւրեանց նախնեաց սուրբ կրօնքին են հանդիպել. էլ ո՞վ կը խնայէր մկրտելու իւր երեխային և մկրտուելու։

Ձերքեզահայերի նման գոնէ մէկը չունէին իւրեանց մէջ ուտիահայերը վարդապետ անունով, որ կարող լինէր հասկանալ նոր ընդունած կրօնի և իւրեանց նախկին քրիստոնէութեան մէջ եղած զանազանութիւնը։ Երկու գիրք միայն պահել էին իւրեանց մէջ իբրև սրբութիւն և այն ուտիերէն էին, իսկ նրանց կարդացող ոչ ոք չկար։

Մեր Մեսրովբի աշխատասիրութեան վերջին մնացորդն՝ ուտիացւոց դրականութիւնից՝ այդ երկու գիրքը միայն մնացել են. հաւանական է աւետարան, կամ սուրբ գիրք կը լինին։

Այս դէպքից օգուտ քաղելով վրացի հոգևորականներն՝ աղատ քարոզում և մկրտում էին։

ԾԿԸ.

Մի՞թէ։

—Այո՛, այսպէս ենք մենք խաչակնքում։

—Նախ ձախ և ապա աջ կո՞ղմը դնելով ձեռքը։

Ճիշդ այդպէս։

Եւ անծանօթը ուտիերէնից թուրքերէնի թարգմանելով «Յանուն Հօրը»՝ կնքեց իւր երեսը հայ եկեղեցու ծիսին համանման։

—Ինչ ինչ պահեցողութիւն ունէի՞ք դուք, հարցրեց խօսակիցը։

—Ի՛նչպէս չէ, տարին երկու մեծ տօն ունէինք, որ ծածուկ կատարում էինք. մինը գարնանը և միւս՝ ձմռանը. այդ երկու հանդիսաւոր տօնակատարութիւնները մենք անում էինք 50 օր գարնանը և ութն օր ձմռանը պաս պահելուց յետոյ։ Մենք մեծ ուրախութեամբ և հանդիսով կատարում ենք այդ երկու նշանաւոր երեկոները. կարմիր ձուով և ձկնեղէններով էինք բաւականանում, այդ երեկոները միս ուտել անհնարին է։

—Ուրեմն դուք հայեր էք, հայոց եկեղեցու անդամ, պատմութիւնը ցոյց է տալիս, որ ուտիացիք հայոց եկեղեցուն են պատկանել, իսկ դուք այսօր ապայուցանում էք այդ ձեր խօսքերով։

—Իսկ այն քահանաները որ մեր մէջ մկրտում և հովւո՞ւմ են։

—Դրանցից և ոչ մինը հայ չէ, դրանք վրացիք են և յունական կրօնին են պատկանում։

—Եթէ այդպէս է, ես կը պնդեմ և մեր կրօնականները հայից կը խնդրեմ։

—Շատ լաւ էլ կ'անես. ես այդ բանումը քեզ կ'օգնեմ՝ միայն ծածուկ, ռուսաց կառավարութիւնը թէև հալածանք չունի կրօնների դէմ, թէև ռուսաց մէջ ամէն ազգ ազատ է իւր կրօնը պաշտելու, բայց երկրորդական պաշտօնեաների մէջ պատահում են ֆանատիկոսներ, որոնք խիստ կրօնամոլութիւնից գործում են

հակառակ ռուսական քաղաքականութեան նըպատակների։

Այդ բանի համար ահա ես մի գիշերուայ մէջ ջրօրհնէքի պարզիկայ ցրտերին ենթարկուեցի հալածանքի և ստիպուեցի մի օր ձիւնի բուքի տակին մնալ։ Գուդաւուրի սարումը ձիւնի ամբարտակը բլեց մեր վերայ և մենք ծածկուեցինք խաւարի մէջ։

Բարեբաղդաբար այդ ժամանակը մենք իջած էինք պահապանների համար շինուած տանը՝ երեխայիս ցրտատար ոտները տաքացնելու. ձիւնի ահագին կոյտը բարձր լեռան կատարից ծածկեց տունը մինչև լուսամուտների գլուխը. իսկ եթէ մենք ճանապարհին լինէինք. մեզ ևս պիտի հանդիպէր մի քանի ճանապարհորդների ցաւալի վախճանը, տասը հոգի փակեցին Գուդաւուրի լեռնաձորումն իւրեանց աչքերը՝ այն կեանքումը հոգու աչքերը բանալու աղագաւ։

—Ի՞նչպէս թէ դու կրօնի պատճառաւ հալածուեցիր։

—Այո՛, ճիշդ ձեզ նման էին չերքեզահայերը Կուբան գետի ափումը. իւրեանց հայրենի կրօնի մէջ նրանց պահպանել ուզելուս համար՝ ես այսօր աքսորուած եմ Կովկասի այս կողմերը։

—Վնաս չունի՛, ինձ Սիլիկեան Յարութիւն բէգ կ'ասեն, դու ճանապարհներն ծածուկ ցոյց տուր, ես կը դիմեմ ուր հարկն է, մինչև ողոր-

մած կայսրը կ'երթամ և իմ նախնիքների կրօնից չեմ հրաժարուիլ։

Այդ օրը մի քանի նամակներ Յարութիւն բէգի անունով գնացին ուր հարկն էր։

Ընթերցողն իմացաւ, որ Սիլիկեանի խորհրդատու և նամակակիրը մեր անհանգիստ Մկրտիչն էր։

Նա ինքն իւր բերանով ասաց, որ աքսորուած է եղել Նուխու կողմերը։ Նա իւր պաշտօնով միշտ կարևոր էր զօրանոցներում. Կուբանի կողմերը կառավարող զօրապետը չէ համարձակուել մեր Մկրտչին պաշտօնից բոլորովին զրկելու, տեղափոխութեան պատրուակաւ աքսորեց։

ՃԿԲ.

Նիժն ու Վարդաշէնը մի օրուայ մէջ փոխուեցին, վրաց քահանաներն ամենայն տեղ արգելքի հանդիպեցին, ոչ ոք չի կամենում նըրանց ընդունել, ամէնքը միևնոյն պատասխանն են տալիս.—մենք հայեր ենք, շուտով հայ քահանայ կ'ունենանք, որտեղից եկել ես, այն կողմը գնա՛։

Շատ համոզեցին քահանաները, շտապեցին հասկացնել, որ քրիստոնէութեան մէջ զանազանութիւն չը կայ, որ հայերն իւրեանք էլ միևնոյն Քրիստոսի հետևողներն են, որ քան թէ առանց հոգևոր մխիթարիչի մնան, ինքեանք նոյն պաշտօնն են կատարում, որ վերջապէս իւրեանցըն է առաջին նախապատիւ եկեղեցին, որ իւր-

եանք մեծ բարիքներ կարող են անել. այդ ամէնն ունայն խօսքեր են, մեծամասնութիւնը լսել անգամ չի ցանկանում։

Խեղճ քահանաների խուփը քարին առաւ, երբ յանկարծ մի օր էլ Նուխուայ հոգևոր կառավարութիւնից հայ քահանաները գաւազան-ները քարշ տալով՝ բուսան այդ գիւղերում։

Բաժան բաժնութիւն, խռովութիւն, երկպառակութիւն մտան ուտիացիների մէջ. տուն չը կար, ուր վրաց քահանաները պաշտօն վարած չը լինէին, մարդ չը կար, որի տունը գէթ մի անգամ օրհնուած չը լինէր։ Այժմ վրաց հոգևորականներն օրինաւոր կերպիւ պահանջում են իրեանց մկրտած — հաղորդածներին, տէրութիւն անել են ցանկանում, օրէնքի զօրութեամբ նոքա թոյլ չեն տալիս հայ քահանային ոտք դնելու, ո՛ւր մի անգամ իրեանք ներս են մտել։

Օրինաց հնազանդութիւնը պարտք է, բայց ուտիացիք էլ իրեանց ասածի են, նոյն բառի պոչիցն են բռնել. — մենք հայ ենք։

Գտնուեցան նրանց միջից այնպէսներն էլ, որոնք երկուսի սիրտն էլ չը կամեցան կոտրել, վրաց կրօնի մէջ մկրտուածներին նոյն դաւանութեան մէջ թողնել խոստացան, այսուհետև եղածներին հայ տէրտէրներին բաշխել յանձն առին, այդպէսները շատ չէին, բազմութիւնն իսպառ կամակորուեց և հայութեան տունը բաց չը թողեց։

Վերջիններիս էլ մեղադրել չէր պէտք, երկուսից մէկին ընդունել հարկ էր, կարելի չէր միևնոյն ժամանակ երկու այլևայլ դաւանութիւնների հոգևորականներին տուն հրաւիրելու՝ մէկը հօրը հաղորդելու, միւսը որդուն կամ կնոջը խոստովանեցնելու, թաղելու։

Մեծ դժուարութիւն էր այս, բայց տարաբաղդաբար եղաւ. իսկ սորանից դուրս եկան ամենամեծ թշուառութիւններ, շատ տան հացը հարամուեց, մարդը կնոջից զզուանքով յետ քաշուեց իբրև հերետիկոսից, կինը մարդի երեսը տեսնել չը ցանկացաւ մահմետականից աւելի վատթար համարելով, եղբայրները, որոնք ըստ տեղական սովորութեան՝ մինչև խորին ծերութիւն միասին կ'ապրէին և տան հիմքը հաստատուն անդրդուելի կը պահպանէին, ամէն մէկը մի երկու երեխայ, կատուի նման բերանն առած՝ մի մի ծակի մէջ մտան. քանդուեցան, աղքատացան, սնանկացան, գործերն երեսի վերայ ընկած մնաց, ապրուստ հայթայթելը դժուարացաւ, անգործութիւնը, ծուլութիւնը մէջ մտաւ և միայն կրօնական վիճաբանութիւնները տեղի ունեցան։

Քահանաներին էլ այսքանն էր պէտք, կրօնական վիճաբանութիւնը, կրօնը մեկնելն իրեանց խելքիցն էլ դուրս բան էր, ներկայումս մենք ձեռնունայն ենք մնում հասկացող քահանայ որոնելիս, թո՛ղ թէ այն ժամանակը։ Այս

մասին Թող մեր երկու հարևան ազգերից—հայերս և վրացիք—ոչ մինն ուրախանայ և ոչ միւսը տրտմի, վաղը առածին պէս—առաւօտը մերոնք մեռնին, ճաշին նրանցը, կամ ընդհակառակն,

Բացառութիւններն օրէնք չեն։

Այսպիսի քահանաների շնորհիւ էր, որ արիւնհեղութեան ծայրը մինչև այսօր էլ տևում է ուտիացիների մէջ։

ԾԷ.

Յարութիւն բէգը կրակ էր կտրուել, նա ձիու վերայ նստած՝ ուտիական գիւղերն էր շարունակ թափառում, գոռում, ճչում և չարաչար երդւում էր իւր սեպհական զաւակին էլ չխնայելու, եթէ նա դաւաճանելու լինէր իւր նախնեաց դաւանութիւնը, ընդունելու լինէր իւր տան վրայ քահանաներին։

Քնած չէին և վերջիններս, ակն ընդ ական և ատամն ընդ ատաման, այնպիսի անհատներ յառաջ բերին, որոնք իւրեանց պապերի չարածը գործեցին։ Ո՞վ էր լսած ի նախնեաց անտի, որ Սիլիկեան տան փոքրիկ երեխայն անգամ ընդդիմադրութիւն լինէր, ո՛վ կը մտածէր, թէ նահապետական այդ տունը իւր որևէ անդամի ձեռքով անարգուի. Սիլիկեանները, երևի, ուտիական նախկին նախարարական ցեղի շառա-

իղներ՝ մշտապէս վայելել են իւրեանց ազգակիցներից յարգանք և համակրութիւն, բայց այսօր այդ տան գլխաւոր անդամի երեսին սառը խօսքեր ասողներ եղան, իսկ առաջին վիրաւորիչ բառը խթանի նման ծակեց Յարութիւն բէգի սիրտը։

—Այդ բառը լսելու օրից սկսած՝ ականջներս բամբակ եմ դնում, սիրտս ապակու նման փշուր փշուր է եղել, այն օրն ընկաւ ճակատիս առաջին խորշոմը, այն օրն իմ մազերիս մէջ սպիտակներ երևեցան, ասում էր միշտ Յարութիւն բէգն և սրտանց մի խոր ա՜խ քաշում։

Կաթսան լցուել էր ուրեմն, տանիլ չէր կարելի, Յարութիւն բէգը վիրաւորած արջի նման իւր որսորդների վերայ յարձակուեց, ուխտեց հաստատապէս վրաց քահանաների հետքը կտրել։

—Ի զուր ոյժ մի՛ գործ դնիլ, արիւնդ մի՛ պղտորիլ, Յարութիւն բէգի ականջը քաշեց մինը, որին մենք իսկոյն ճանաչեցինք. խօսքս Մկրտչի մասին է.—եթէ կարողանաս քո գերդաստանիդ և ազգականներիդ մէջ չընդունելու, այդ չափն էլ սակաւ քաջութիւն չէ, էլի երկու գիւղերի մեծ բաժինը շահած կը լինիս այդպիսով, միայն յաջողեցնէիր այսուհետև եղածներին չմկրտել տալու, անցածների հետ ընկնելն աւելորդ է, օրէնքին հակառակելը ոչ հնարաւոր է և ոչ

պէտք, օրէնքն ամէն ազգի և աշխարհի մէջ ա-
նողոք է։

—Թո՛յլ տո՛ւր, թէ Աստուած կը սիրես,
վրդովուած դուրս գնաց Մկրտչի մօտից Յարու-
թիւն բէգը և ուղղակի յայտնեց վրաց քահա-
նաներին, որ ոչ մի գիւղում իւր ազգակիցների
տները չհամարձակուին ոտք դնելու։

—Անհնարին և անտեղի պահանջ է, պա-
րո՛ն, հեգնօրէն ասացին նրան օրէնքի այդ կէ-
տին շատ լաւ տեղեակ հոգևորականները, քո
հարազատ զաւակիդ չես կարող մեր ձեռքից
առնելու, եթէ նա մեր եկեղեցական ծէսով
մկրտուած է։

—Ի՞նչպէս թէ իրաւունք չեմ ունենալ իմ
զաւակի վերայ, գոչեց աներկիւղ հսկան, եթէ
այդպէս լինի, Սիլիկեան տոհմը կորած է, այդ
մեծ գերդաստանի անդամներից շատերը ձեզա-
նից մկրտուած են։

—Նրանցից ձեռքերդ լուա՛։

—Լաւ է՝ ասացէք, ողջ ողջ գերեզման մը-
տիր։ Օ՛...օ՛...օ՛... բարկութիւնից իրեն կորա-
տում էր Յարութիւն բէգը, վա՛յ նրան, որ իմ
ազգակիցների մէջ էլ երկպառակութիւն ձգեց,
թող չը լինի այն օրն Յարութիւն բէգը, եթէ
նա կուրծքը դէմ տուած պաշտպան չը հանդի-
սանայ Սիլիկեան մեծ ցեղին։

Այս անձնապաստանութիւնովն էր, որ նա դի-
մեց իրաւաբանների դուռը, կամ ստոյգն ասենք,

իրաւունքն իւր ոտքով նրան հրաւիրակ եկաւ։
Այժմ հասկացուեց վրացի քահանաներից
Յարութիւն բէգի կատաղութեանը դառն ժպի-
տով տուած անխօս պատասխանը։ Նրանք էին
բողոքել Սիլիկեանի դէմ, նրանց խօսքովը սա
ատեան կոչուեց։

Ամէն տեղ օրէնքի խիստ կէտերը Յարու-
թիւն բէգի առաջը դրին, մկրտուածին դարձ
չը կար, պատասխանատուութիւնը սաստիկ էր։
Նամակներն ու խնդիրներն այս ու այն կող-
մը տարածուեցին, դրողը տանու էր, վճարելու
կարիք չը կար, բայց ամէն տեղից նոյն և մի
պատասխանն էր գալիս — օրէնքն անհնարին է
քաքտել։

ԾՀԱ.

—Ուղարկի՛ր այստեղ Յարութիւն բէգին,
նամակ է ստանում Մկրտիչը Թիֆլիսի իւր օ-
րէնսգէտ ընկերների մէկից, թող է՛լ այս մի
թզաչափ մարդու օգնութեանն ապաւինի, ծե-
րունին այստեղ է։

Մատնացոյց էր լինում ուղղակի Ներսիսին,
որ այն ժամանակները կողքին էր ընկել ու
Թիֆլիսից չէր հեռանում։ Քանի՛ անգամ օրէնքի
զօրութեամբ հոդւածները ծերունու առաջը
դրուեց ասուեց, որ Հայոց կաթուղիկոսը չորս
ամսից աւել իրաւունք չունի բացակայելու իւր

ամբոխից—էջմիածնից, բայց նա միշտ յարգելի պատճառներ էր գտնում օրէնքի այդ կէտն իւր օրինազանցութեան դէմ քաղցրացնելու:

—Ժողովրդիս մեծ մասն այստեղ է, սորա աւելի կարիք ունին իմ հոգևոր մխիթարութիւններին, ասում էր մեծ հայրապետը և կողքը դէմ տալիս, Թիֆլիսում նստում:

Ներսէսն էլ չը կարողացաւ զգալի օգնութիւն անել Սիլիկեանին, օրէնքը շատ պարզ էր, վրաց քահանաների մկրտածները ընդ միշտ վրացի կոչուելու և լինելու են:

ԾՀԲ.

—Կարո՞ղ ես մի հնարքով Թիֆլիս գալ, նստած գրում էր Մկրտչին իւր բարեկամներից մէկը. Սիլիկեանների խնդրի մասին լրջմտօրէն կը խորհէինք միասին, Ներսիսի խօսքովն եմ քեզ կանչում.....

—Լաւ չէի կարող գալ, եթէ գլխիս տալով դուրս չանէին, պատասխանեց այդ թերատողերին նամակագրի ուսից նորա չրթունքներին դրոշմուած մի համբոյր:

Համբուրողը Մկրտիչն ինքն էր, որ լռելեայն մտնելով իւր բարեկամի սենեակը, ոտքերի մատների վերայ յառաջ էր եկել և գլխավերևը կանգնած՝ կարդացել իրան ուղղած նամակի սկզբնաւորութիւնը:

—Ի՞նչպէս, դու սատանայ էի՞ր, ո՞ր քամին պտըտե՛ց:

—Շատ հասարակ կերպիւ: Արմաւիրի փորձանքը Նուխումն էլ ինձ հասաւ, իմ մեծաւորներիս կողմից իբրև խռովարար և գրգռիչ, եթէ ոչ իբրև աքսոր, գէթ որպէս փոխադրութիւն՝ վիճակ ստացայ. ինձ ուղարկում են Լագոդեխ:

—Ի հարկէ քո համար միևնոյն է:

—Ի՞նչ կարծիք:

—Կի՞նդ, երեխա՞յդ:

—Առողջ, ուրախ և զուարթ: Աբրահամիկս շատ կայտառ և կենդանի երեխայ է, նա է մեր միակ մխիթարանքը, ե՞րբ կարող կը լինէինք տանել առանց նրան այսքան նեղութիւնները:

Երկու բարեկամները Ներսիսի խորհրդով խելք խելքի տուին և Ցարութիւն բէգի համար մի խնդիր գրեցին, իրեն յանձնեցին ու ճանապարհ դրին դէպի Մոսկուայ: Այս Մկրտչի Լագոդեխ գնալուց երեք տարի յետոյ էր, այդ երեք տարումը ոչինչ չեղաւ այս կողմերումը գործել:

ԾՀԳ.

Ուտիական աննշան ժողովրդից այսօր երկու տարր է գոյացել. նոքա լեզուով, բնաւորութեամբ, տեղական ծէսերով և սովորութիւններով ուտիացիք են, իսկ նրանցից մի մասը վրացի

և միւսը հայ կոչումն է ստացել։ Սակաւ առ սակաւ մայրենի ուտիական լեզուն անհետանում և տեղը վրացերէնն ու հայերէնն են անց կենում։

Հայ խօսքի յառաջ գնալուն օգնեց Ներսէսը. նրա հրամանով հինգ երեխայ սովորում էին ուտիացիներից Թիֆլիսի Ներսիսեան դպրոցումը՝ քահանաներ և ուսուցիչներ պատրաստելու նպատակաւ։

ՃՀԴ.

—Ձեմ ուզում քեզ մոլորեցնելու, տեսնում եմ, որ շատ մտածմունքների մէջ ես մեր Մկրտչի անձնաւորութեան մասին, քեզ խնայելով այս անգամ միայն նորա ի՛նչ պաշտօնի տէր լինելը կ՚ասեմ, այդքանով պիտի բաւականանաս, դարձաւ ինձ բժիշկս,

—Ձեր կամքն է։

—Մկրտիչը զինուորական բժիշկ էր։

Բժիշկ Մկրտիչը նշանակուեց Լագօդեխումն և բնակւում էր այն տեղ։

Նորա օրովը ծագեց ռուս-տաճկական պատերազմը 50 թւականներին

Աշխարհն արիւնը տանում էր։ Արևելեան կնճռոտ խնդիրը, որ գուցէ դեռ շատ ժամանակ պիտի եւրոպական քաղաքագէտների քունը կրտրի, այդ թուականների սկզբներումը նորից զարթնեց։

Եւրոպական առաջնակարգ տէրութիւնները, բաւական չէ, որ դաշնակցել էին տաճկի հետ՝ միամիտ տաճկի ոյժը սպառելու և Ռուսաստանի ընդլայնուելուն արգելք լինելու խորամիտ նպատակաւ, մի կողմից էլ կովկասեան լեռնականներին էին գրգռել։

Դաղստանի մէջ միայն գլխաւոր ճանապարհները կտրելու համար զօրք մնաց և այն՝ շատ սակաւ։ Վերին Դաղստանումը, կամ Կախեթիայի հիւսիսային կողմը՝ Զաքաթալից մինչև Կուարել մի գունդ միայն կար, որոնց գլխաւոր բանակատեղին թէպէտ Լագօդեխումն էր, բայց իրանք ցրուած էին։ Վրաստանի մայրաքաղաք Թիֆլիսն էլ շատ ապահով չէր, երկու հարիւր չափ զինուոր միայն մնացել էին՝ տեղական իրաւարաններում և գանձարանում պահապան լինելու, մնացածը բուն բանակի մէջ էր։ Շատ էլ կարիք չըկար Թիֆլիսում զինուորական ոյժը բանելու, ամէն օր զինուորի հրացանն ու սուինը տեսնում էր, մեծամեծ վաշտեր Ռուսաստանից Թիֆլիսի միջով Աղէքսանդրապօլ էին գնում։ Թիֆլիսի հիւրասէր ժողովուրդը համեղ ճաշերով մինչև քաղաքադուռն էր նրանց ուղեկցում։

ՃՀԵ.

Գնդապետ իշխան Օ-ն Վերին Դաղստանում թողած գնդի մէջ նշանաւոր դիրք ունէր և ըն-

ժիշկ Մկրտչի շատ մտերիմ բարեկամն էր։ Իշխանն իր անձը երախտապարտ էր համարում բժշկին. վերջինս մահի ճանկից խլել էր իշխանի սիրելի և սիրուն ամուսնուն, որին մի քանի անգամ մեծամեծ փողեր մսխելով Եւրոպա տարաւ, բայց ճար չը կարողացաւ անել տալ. բոլոր բժշկաց ասուլթեան համաձայն, տիկին իշխանուհին թոքախտ ունէր և պիտի շուտ մեռնէր։ Մկրտիչը հերքեց և առողջացրեց։

ԾՀԶ.

—Տապալի՛ր վերցնել բժիշկ Մկրտչին և գալ, գիր ստացաւ Օ. իշխանն իր կնոջից, եղբայրդ մերձ ի մահ է, բժշկաց յոյսը կտրուել է, ողջ Թիֆլիսը ոտի մէջ է։

—Բայց կի՞նս, բայց երեխա՞յս, ի՞նչպէս թողում այս խառը ժամանակը, ուզում էր չը գնալ բժիշկը։ Սակայն իշխանը չէր դադարում աղաչելուց։

—Իրա՛ւ, լաւ միտքս եկաւ, Ճավճավաձէնց ընտանիքը Ծինանդալումն են, ամենապահով տեղն է, դիլմների վերայ կը պահեն, նրանց մօտ թողունք, պնդեց Օ։

Մկրտիչը խօսք չը գտաւ հակառակելու։

ԾՀԷ.

Շամի՛լը, Շամիլն Ալազան գետի այս կողմն անցաւ, Ծինանդալ գիւղն աւերեց, Թելաւի դըռանը թողի ես և շտապեցի լուր բերելու, հասաւ սուրհանդակը Թիֆլիս, այս մահագոյժ համբաւը տալու։

—Շամիլը Թելաւո՛ւմը, Թիֆլիսից մի օրուան ճանապարհի վերա՛յ, վաղն այստեղ կը լինի՛, շփոթն ընկաւ քաղաքի մէջ։

—Մախաթի սարի վերայ լեզգու ձիաւորներ են երեւում, քաղաքը լրտեսում են, դողալով պատմում են միմեանց ամէն ոք։

—Ասում են Շամիլն իր ամէն մի նայիբին (զօրապետ) տասը հատ Թիֆլիսի գեղեցկուհի է խոստացել, իսկ հասարակ զինուորներին՝ երկ երկու հատ։

—Բաս չը գիտես այդ ճանապարհներն ո՞վ է սովորցրել, ասում են՝ Հաջի—Մուրատն ինքն է։

—Ի՞նչ Հաջի—Մուրատ։

—Նա, որ անցեալ տարի իբր թէ Շամիլից ապստամբած՝ եկաւ Թիֆլիս կացաւ մի քանի ամիս, տեսա՞ր ինչ պատիւներ էին տալիս. էլ տեղ չը թողեց՝ շըջեց, Կախեթու կողմերը, Ջաքաթալայ, Նուխի՝ բոլորը պտըտեց, մինչև անգամ հաւատացին՝ վառօդատունն էլ ցոյց տուին, որ քաղնիների սարի գլխին է. ասում են, երբ որ մտիկ է տուել վառօդատանը՝ ասել է.

եթէ ես իմացած լինէի իմ թշնամի ժամանակս ձեր վառօդի շտեմարանի այս տեղը, վաղուց Թիֆլիսը կրակ տուած կը լինէի։

—Ի՞նչ ես խօսում, եղբա՛յր, երազումդ ե՞ս, Հաջի—Մուրատի գլուխը չէ՞ր, որ անցեալ տարի Նուխու կողմից փախչելիս Արղութենց Մովսէս իշխանը կտրել տուեց և ուղարկեց Վօրոնցովին, չը տեսա՞ր, սեղանի վերայ բազմացրել էին, ամէն մարդ իրաւունք ունէր մտնելու տեսնելու։

—Ասում են՝ սուտ է եղել, այն ուրիշ գլուխ էր։

—Սուտը սուտ խօսողն է, ես նրան կենդանի էլ տեսայ ու կտրած էլ։

—Կարելի է կենդանացել է, կարելի է սատանայ էր, ապա թէ ոչ բացի Հաջի—Մուրատից մեր քաղաքի ճանապարհներն ո՞վ գիտէր։

—Ուրեմն վա՜յ մեր օրին։

—Մայրի՛կ, վախում ե՛մ։

—Սիրտդ պինդ պահի՛, Կեկել ջան, Աստուած ողորմած է, Թելեթը մեզ կը պահի։

—Լեզգին ինձ կը տանէ։

—Եօվանու գլուխը միթէ մեռած է, Կեկել ջան, երկու տարի էր գիշեր ցերեկ քեզ համար քունս կտրել էի, օրը տասը մոցիքուլ էի ղրկում, քո մօր սիրտը հազիւ կակղացրի, հիմի ես հեշտութիւնով քեզ լեզգու ձեռքը կըտամ, խանչալս

տեսնում ես, տասնի փորը մի խփելով կըթափեմ, սրտապնդումէր օրիորդին իւր նշանածը։

—Հա, քո ցաւն ինձ, Եօվանէ ջան, թէ որ լեզգին գալու լինի, դու Կեկելիս փախցրու տար Ծմինդա Բարբարէ, այնտեղ ժամի մէջը պահիր, երեսս նորա ոտքի տակը, նա չի թողնի, որ սրա մի մազին դիպչեն, նա ու Թելէթը նրան սիրում են, փեսացուին գրկեց ու համբուրեց զոքանչը, իսկ Եօվանէն էլ Կեկելի արտասուխառն աչքերն էր լպստում։

Այսպիսի խօսակցութիւններն անհանգիստ էին արել ամբողջ Թիֆլիսը։

ՑՀԲ.

Գնդակի նման ծակեց բժիշկ Մկրտչի սիրտը Ծինանդալն առնելու և Թելաւը պաշարելու լուրը, աշխարհը գլխին մթնեց, սիրելիների հոգսըն իրեն մոլորեցրեց, նա կամենում էր նոյն րոպէին դուրս ընկել և գնալ։

Անկարելի՛ է, բժի՛շկ, յայտնեց նրան Օ. իշխանը, ես ոչ թէ հիւանդին չը թողնելուդ համար եմ ասում, արդէն նա առողջանալու վերայ է, բայց ճանապարհները փակուած են, ասում են՝ լեզգիքը խումբ խումբ հինգ, տասը ձիաւոր բոլոր կողմերը շրջում են, ասում են՝ Թիֆլիսի շրջակայքն էլ համարձակ ոտնատակ են տալիս։

—Ի՛նչ կուզէ, թող լինի, փոստի սայլակին ոչ ոք չի մօտենալ։

—Դէպի Թելաւ երթևեկութիւնը դադարեցրած է, ձեզ փոստի ձիանք չեն տալ։

—Մի ձի, ուրեմն, տուէ՛ք ինձ և այլ ոչ ոք։

—Այդ էլ անկարելի է, քո կեանքդ վըտանգի տակ չենք թողնիլ դնելու, սուտ լուրեր կը լինին իշխանուհի Ճավճավաձէների յափշտակութիւնը, մարդիկ են ուղարկուած՝ վաղը կը վերադառնան, ճիշդ լուր կը բերեն։

—Տաք վիճաբանելու ժամանակ շատ կը գտնիք, դուրս եկէք պատշգամը, նկատեցէք հեռադիտակով Մախաթի սարի ստորոտումը պտըտող լեզգիներին, տուն մտաւ իշխան Օ.-ի եղբայրը։

Ա՛յ յանդգնութիւն, ես Լագօդեխումը պիտի լինէի, որ դրանց ճանապարհ ցոյց տայի ոչ դէպի Թիֆլիս, այլ Մահմետի արքայութիւնը, պարծեցաւ Օ. իշխանը։

Բայց դու տես, թէ ի՞նչպէս աներկիւղ մօտենում են զինուորական վրաններին։

—Ես և դու նոյնպէս կը մօտենանք, քանի որ գիտենք, թէ դատարկ են, լեզգին խելք չունի՞։

—Ի՞նչ անենք, եղբա՛յր, մեղադրելու տեղիք չունինք, եկած զօրքին հաշիւ ու համար չը կայ, բայց Աղէքսանդրապօլու բանակումը մի կաթիլ ջրի նման կուլ է գնում, դեռ Բէհբուտովը մի կողմից պահանջում է։

—Եւ արդարև, ի՞նչ պէտք է անենք, եթէ

այդ անպիտան Շամիլի երևիլն ստոյգ լինի և մի օր էլ Թիֆլիսը պաշարի, 500 ձիաւորով Թիֆլիսի գլխին Աղայ—Մահմատ—խանի փորձանքը կըբերի, ամբողջ քաղաքումը 150-ի չափ զինուոր հազիւ կան՝ իբրև պահապաններ թողած. Նոքա էլ օրն ի բուն հրացանն ուսին Թիֆլիսի շրջակայքումը զինախաղութիւն են անում, մէկ վըրանախմբից միւսի մօտ տեղափոխուելով։ Դորա պատճառն է, իբր թէ լեզգիների աչքերը կապելը, որպէս թէ քաղաքը պաշտպանուած է մեծ զօրքով, բայց այդ ստահակներն ահա իբրև իւրեանց տունն են մտնում ու դուրս գալիս վրանների մէջ։

—Ի հարկէ մի տնօրէնութիւն կը լինի, իշխան Լևոնը վաղուց գնացել է, նա կարծեմ կոչուած է այս մասին խորհրդակցելու, շուտով կը գայ։

—Շտապեցէ՛ք, եղբարք, զինուորելու, ներս ընկաւ իշխան Լևոնը, իսկոյն բոլոր քաղաքացիք, ազնուական վաճառական, արհեստաւոր, պարապորդ թափառականներ, ամէնքը զինավառուած՝ դուրս կրդան Մախաթի սարի տակը՝ Կուկիու ընդարձակ դաշտումը զինավարժութիւն անելու, արդէն հրացաններ, վառօդ ու գնդակ չունեցողներին բաժանում են, բոլոր խանութները, պաշտօնատեղերն և ուսումնարանները փակուեցին, 18 տարեկանից վեր ամէն ոք զէնք է կրելու։

—Այդ ո՞ւմ խելքն էր։

—Կեցցէ՜ համքարը, կեցցե՜ն ուստաբաշի-
քը, նրանց քաջասրտութեան պտուղն է. մենք, ի
հարկէ, ինչպէս և միշտ, նրանց հրաւիրելը մըտք-
ներումս էլ չէինք անցկացրել, ո՞վ են տգէտ
համքարի մարդիկն, կամ մեզ վայե՞լ է միթէ
նրանց հետ նստել խօսելու, երկար խորհրդակ-
ցելից յետոյ ոչինչ եզրակացութեան չը հասանք:
Վաճառականներից խորհրդի հրաւիրուած եր-
կու գլխաւորները փող էին առաջարկում, բայց
ընչի՞ և ում համար, մեզ մարդիկ էին հարկա-
ւոր, կանոնաւոր զօրք էր պէտք. մտածում էինք
Ալէքսանդրապօլ գնալու համար Վլադիկավկա-
զից արդէն ճանապարհ դրած գունդը յետ պա-
հելու, բայց նոյն րոպէին Բէհբուդովի սուրհան-
դակը տուն ընկաւ և մի ցաւալի կոտորուածքի
դոյժը տալուց յետոյ՝ խնդրեց նոր զօրք հաս-
ցնելու, օսմանեան բանակն, ասում է, ժամէ ժամ
է կրկնապատկւում, քանի ջարդում ես՝ սնկան
նման տեղը բուսնում են:

Այդ լուրը մեզ բոլորովին շփոթեց. մնա-
ցինք իրարու երեսի նայելով:

—Ա՛յ անբախտութիւն:

—Մէկ էլ՝ օրապահը յայտնում է, թէ
համքարի ուստաբաշիքն ու աղսաղխալիքը (ար-
հեստապետներն ու նոցա խորհրդականները)
դռանը հաւաքուած՝ ներկայանալ են խնդրում:

Շատ խորհելուց յետոյ՝ ներս ընդունեցինք:

—Այսպէս բան չի լինիլ, տեա՛րք, խօսե-

ցան Նոքա, լեզգին քաղաքիս չորս կողմը լլտե-
սում է, ասում են Թելաւն առել է, էգուց
Թիֆլիսի վերայ է յարձակում անելու. մեզ յայտ-
նի է, որ բարեխնամ կառավարութիւնը միջոց
չունի զէնքով մեզ պաշտպանելու, ամէն կողմից
թշնամիքը շրջապատել են, իրաւունք ենք խընդ-
րում հրաման տալու մեզ զէնք վերցնելու և
քաղաքը պահելու, միայն թէ հրազէնք չունե-
ցողներին տրուէր:

—Որպէս թէ մեծ ամօթ կը լինէր մեր
ազնուականներին ու վաճառականներին մեզ
աջակցել, խօսքը շարունակեց մի ծերունի ուս-
տաբաշի:

—Գնացէ՛ք, պատրաստուեցէ՛ք, հրամայեց
նրանց և տնօրինուեց առանց յետաձգութեան
ողջ քաղաքը զինավառել և դուրս բերել, ըստ
որում նոյն րոպէին լուր հասաւ, թէ քանի չափ
լեզգի Կուկիայի դաշտի վերայ խփած վրաննե-
րի մօտ արձակ համարձակ շրջում են:

—Թէ չես հաւատացել, առ դիտակը և նա-
յիր, տուեց իշխան Լեոնին Օ. հեռադիտակը:

ԾՀԹ.

Մի ժամ չը քաշած՝ Թիֆլիսում մեծ տե-
սարան էր, որի նմանն առաջին անգամն էր կա-
տարւում: Անիւրի հրապարակից սկսած՝ մինչև
Կուկիու կամուրջի միւս երեսը, միմեանց քամա-

կէս կարգ կարգ շարուած հինգ հինգ գնում են չափահասները հրացանն ուսերին․ առանց զէնք վերցնելու մնացին ղառամեալ ուժահատներն, երեխայքն և կանայքը։

Այս մնացողներից առաջին կարգը պաշտգամբներում, կամ դռան առաջին նստած՝ գըլուխը դողացնելով աղօթում և յաջողութիւն էր մաղթում նոր զինուորներին, երկրորդները—կըրակի կտոր երեխայքը՝ ականջ չը կախելով պօլիցիականների մահակներին ու սպառնալիքներին, ոտքի տակ ընկնելով՝ յառաջ էին վազում ուռայ կանչելով դէպի Կուկիա, իսկ երրորդները՝ երկչոտ կանայքը, թէպէտ սրտները սև, բայց պճնուած ու զարդարուած պաշտգամբների, պատուհանների ու բարձր կտուրների վերայ միմեանց հրելով՝ տեղխլուկ էին անում։

Ամենից առաջ գնում էր ձիաւոր զօրքը։ Ուրիշ ի՞նչ անուանենք մեր նոր զինուորներին, նրանց յառաջընթացներն էին ազնուականները։

Իշխաններից յետոյ գնում էր հետևակ դասը՝ վաճառականները՝ մի մի ասիական սեպհական հրացան ուսերին․ նոցանից յետոյ՝ այս շարժումին սրտանց համակրող և գլուխը քաղաքի ապահովութեան համար մահու տալու պատրաստ աներկիւղ և քաջասիրտ համքարը։

Վերջիններս զինուորուած էին ունեցողները՝ իւրեանց զէնքերով, մնացածներն արքունի հրացաններով։

Մի շաբաթ տևեց այս գործողութիւնը։ Ամէն օր վերոյիշեալ կարգով դուրս էին գալիս թիֆլիսեցիք և զինավարժութիւն անում Դիղուբայի, Կուկիայի և Մախաթի դաշտերի վերայ ու երեկոյին վերադառնում։

Նրանցից մի մասը՝ համքարը գիշերներն էլ հանգիստ չէր մնում, նոքա հսկում էին քաղաքի ներս ու դուրսը։

ՃԶ.

—Մեր վարժապե՛տը, մեր վարժապե՛տը, մինչև կէսը լուսամտից կախ ընկած՝ մատով ցոյց են տալիս իրարու Ներսիսեան դպրոցի աշակերտները ծիծաղելով։

—Մի՛ ծիծաղէք, որդի՛քս, պատմութիւնից դուք գիտէք, որ ամէն ժամանակ հայրենիքի նեղ օրերումն ինքը ժողովուրդն է օգնել, պատասխանեց ներքևից հրացանն ուսին գնալով ծերունի վարժապետն իւր աշակերտներին և անցկացաւ։

—Ո՞վ էր այդ խօսողը, վարժապե՛տ, հարցրեց նրան իւր հետ մի կարգում հրացանն ուսին գնացող բժիշկ Մկրտիչը։

—Դա իմ յառաջադէմ աշակերտներից մէկն է, Աշտարակցի է։ Նա քեզ հետ խօսողն էր, ընթերցո՛ղ։

ՃԶԱ.

Լեզգին փախել է, ձայն տարածուեց Թիֆլիսում և խաղաղութիւնը տիրեց, բայց համքարն է՛լի անքուն էր մանաւանդ նրանց ստորին դասը՝ անհոգ ու զուարթ կինտոները, որոնք հրացանն էլ մի կողմը դրած՝ սպառնում էին ոչ միայն լեզգուն՝ օսմանցուին է՛լ մուշտակռուով յետ փախցնելու։

Նրանք գիշերը մինչև լոյս ման էին գալիս և ուխտել էին ոչինչ անկարգութիւն չանելու, միայն թէ ոստիկաններն իրանց չնեղացնեն և պատահած ժամանակը կաշառ չուզեն,

Նրանք կատարեցին իւրեանց խոստումը։

Լեզգին էլ նրանցից վախեցաւ ու յետ դարձաւ։

ՃԶԲ.

Ոչ զինուորական կառավարութիւնը և ոչ ինքեանք իշխան Ճաւճաւաձէները մտքներումն անց էին կացրել, թէ Շամիլը կարող է օգուտ քաղել խառը ժամանակից և յարձակուել անել Կախէթեայի վրայ, ապա թէ ոչ, այդ կողմերի զօրքերից չէին պակասացնիլ և վրացի իշխաններըն էլ՝ ըստ իւրեանց սովորութեան՝ Թիֆլիսումը կ'անցկացնէին։

Ես մոռացայ ասել, որ վրաց իշխաններից

մեծ մասը ձմեռը Թիֆլիսումն էր ուրախ կեանք վայելում, իսկ ամառն իւրեանց կալուածքներումը։

Շամիլը, երևի, դրդուած եւրոպական դաշնակցութիւնից՝ շատ յանդգնեց և ուղղակի Ալազան գետն այս կողմն անցաւ ու յարձակուեց Ծինանդալի վերայ ու գերի արեց Ճաւճաւաձէների ընտանիքին։

—Մեր միտքը չէ նոցա վերայ երկար խօսելը, ջանասէրներից մէկը և լրագիրները մանրամասնօրէն պատմեցին իշխանուհիների կրած նեղութիւններն և դարձը, բայց ոչ ոք յիշատակութեան արժան չը տեսաւ մի մօր և իւր մինուճարի հետ պատահած անցքը, որ այսօր կը թողնեմ և վաղը կը պատմեմ։

Այս խօսքերով բժիշկս, ըստ իւր սովորութեան՝ կանգնեց, բայց սակայն այս անգամ նըրան չը յաջողուեց խոյս տալը, ստիպուեց զիջանելու իմ խնդրանացը, և այն ոչ առանց բորբոքուելու։

ՃԶԳ.

—Երեխ՜աս, աղաղակում էր անբախտ մայրը, շարունակեց բժիշկս, իմ քաղցր Աբրահամը, իմ մի՜կս, իմ մինուճար զաւա՜կս, տուէ՛ք ինձ իմ աչքիս լոյսին, կապեցէ՛ք երկուսիս մի պարանով, մի՛ հեռացնէ՛ք ինձանից, փարում էր այս ու այն

լեզգու ոտքերն և աշխատում էր իրեն ձգելու որդու մօտ։

—Մայրի՛կ, աղէկտուր արտասւում էր փոքրիկը։

Անգութ գաղաններից մինը սրի բութ կողմով մի հարուած իջեցրեց մօր ուսին և տեղական թուրքերէն բարբառով հատատապէս ըսպառնացաւ մորթելու նորա որդուն, եթէ ինքը ձանձրութիւն տալը շարունակելու լինի։

Կ'երևի, երախային կապող լեզգին իւր ընկերի խօսքի վերայ դաշոյնը մանուկի սրտին դէմ արեց։

—Բաւական է, Աբրահամի՛կս, էլ մի՛ լար, թող քեզ վերցնեն, մենք յետոյ իրար կը տեսնենք, ձայն տուեց մայրն և հեզութեամբ հեծաւ լեզգու գաւակը, լռիկ մրմնջելով և աչքը միշտ զաւակի վերայ ունենալով։

Երեխան մօր խօսքից մի փոքր հանդարտուեց և միւս լեզգու գաւակը հեծաւ, բայց շարունակ մայրիկ էր ձայնում։

Շամիլը բաւականացաւ Ճավճավաձէների գիւղն աւար տալով, նա իւր կողոպուտն ու գերիներն առած՝ Ալազանն անցկացաւ։

ԺԶԴ.

Դառն, շատ դառն էր ճակատագրի հարուածը, որ հասաւ բժիշկ Մկրտչին և իւր կին

Սօնեային, այն օրը նրանք զրկուեցին յաւիտեանս վերեանց ուրախութիւնից, այն օրից իւրեանց քաղցր կոչումը—Մկրտիչ և Սօնեա բառերը յաւիտեանս մեռան, վերջացան նոցա բերանից, Ալազան գետն այն օրից երկու դժբաղդների աչքին մարդակեր գազան է դարձել։

—Բժիշկ Մկրտչի կինն ու որդի՞ն էին ուրեմն քո ասածները, հարցրի ես իմ բժշկիցը։

—Նոյն իսկ Սօնեան ու Աբրահամիկը, որ դեռ նոր ոտքը դրել էր ութ տարու մէջ, գերի գնացին նրանք՝ Ճավճավաձէենց ընտանիքի մէջ ճանապարհին միայն խառնուելով։

Իշխան Օ. և բժիշկը ուղղակի չը տարան նոցա Ծինանդալ, Օ. իշխանի քոյրը գտնւում էր այդ միջոցը Թելաւում և նոյնպէս մի քանի օրից գալու էր Ճավճավաձէենց մօտ։ Իւրեանց հետ վերցնելով բժշկի կնոջն ու որդուն, բերին Թելաւ և թողին իշխանի քրոջ մօտ։

Այն տեղից Ծինանդալ վերադառնալու՝ լեզգիները բռնեցին բժշկի կնոջն ու երեխային և խառնեցին Ճավճավաձէներենց հետ ու Ալազանն անցկացան։

—Ճավճավաձէների հետ չը վերադա՞րձան հապա բոլոր գերի տարուածները։

—Անիծուէ՛ր այն օրն ու ժամը, երբ Մըկրտիչը համաձայնեց թողնելու իւր ընտանիքը, զուր նա իրեն էլ չը ձգեց Ալազանն ու չը խեղդուեցաւ, ջուրը իրեն սառը տապան չը շինեց

Ալազանի խորքերը ու այնպէս չը միացաւ իւր որդու հետ, քան թէ լոյս արև է տեսնում նա, կացուկամ ընդհատում՝ էր բժիշկս։

—Շարունակի՛ր, խնդրեմ, ասացի, սուգ անելու տեղը չի և ոչ վայել, իմ համբերութիւնս հատաւ։

—Թիֆլիսումը խաղաղութիւնը սակաւ ինչ տիրելուն պէս՝ Մկրտիչը դուրս ընկաւ քաղաքից և շտապեց դէպի Թելաւ, Ծինանդալ և վերջը ձեռը ծնօտին ստիպուեց մնալ իւր գնտի մէջ։

Լեզգին գերի չի պահիլ, նրա յարձակմունքների նպատակն է հարուստներին գերել և մեծ փրկանքով վերադարձնել։

Բժիշկ Մկրտիչն է՛լ կարող էր իւր գլուխը գրաւ դնել, իւր ամուսնոյ և սիրելի զաւակի ազատութիւնը գնել, բայց անողորմ ճակատագիրը նորա հետ մի գազանական խաղ էր խաղացել։

Ի՞նչ։

—Աբրահամիկը չուզելով լեզգու զաւակին մնալ, Ալազանիցն անցնելուս իրեն ջուրն էր ձգել։

Անբաղդ մայրն իւր աչքովը տեսել էր, թէ ի՛նչպէս իւր սիրելի զաւակը գետի մէջ տակ ու երես էր անում ձեռքերն ածելով և մի քանի քայլում խպառ անհետանում էր Ալազանի կոհակների մէջ։ Շատ աշխատել էր ողորմելի կինը իրեն էլ որդու հետ ջրի յորձանքներին զոհ տալու, բայց պարանով կապուած էր եղել իւր բռնաւորի հետ։ Թուի թէ, երեխայի մասին բոլո-

րովին ապահով են եղել լեզգիքը, որ չեն կապել, միւսները բոլորը կապուած են եղած։

Գերիների թւում գտնուեց և բժշկի կինը. բայց այն օրից խպառ ցամաքել է երկու ամուսինների աչքերի աղբիւրակները. թախիծը և կսկիծը մեծ ու լայն կնճիռների ակօսներ են բացել նրանց երեսին, տեսնողն էլ չի ճանաչում Տաճէնին ու Սուսամբարին, որոնց հետ քեզ ման եմ ածում Կուբանի եզերքից մինչև Ալազանի ափերը՝ Մկրտիչ ու Սօնեա անունների տակ։

—Վա՜հ... բաց մնաց բերանս և չռուեցին աչքերս։

—Ի՞նչ, Տաճէնն ու Սուսամբա՞րը, հարցնում ես դու ընթերցո՛ղ։

—Այո՛, պատասխանում է իրեն զսպելով բժիշկս, Մկրտիչն և Սօնեան, կամ Տաճէնն ու Սուսամբարը նոյն և մի երկու անձինքն են։

—Բայց ամուսնացա՞ն միթէ նոքա, ե՞րբ և ի՞նչպէս, քեռին կամ մօրեղբայրն առաւ իւր հարազատ քրոջ աղջկա՞նը։

Այո՛, հանդարտօրէն խօսեց բժիշկս։ Այդ բանն իմանալու համար՝ մենք մի փոքր յետ գնանք, յիշենք այն օրը, երբ Տաճէնը բնակւում էր Վանքի թաղումը Թիֆլիսի մէջ և բժշկութիւն էր անում, յիշենք վանքօբան, աւելացրեց նա։

ՃԶԵ.

—Աղջի՛կ, Սուսամբար, մինչև ե՞րբ պիտի դու սևերի մէջ պատատուիս, մինչ դեռ դու վճռել ես կուսանոց չգնալ. քո հայրդ ուրախութեամբ չի խնայում փող ու բաժինքը, մինչ մարդն էլ (մօցիքուլը) այսօր ասում էր, որ մի լաւ տղայ վանքումը քեզ այս երեկոյ տընտղել հաւանել է լուսամտից և ուզում է։ Վեր կա՛ց, սիրելի՛ս, լսիր ինձ, հագիր քո լաւ շորերը և գնանք Վանքը։

—Զեմ զարմանում քեզ վերայ, մայրի՛կ, մի՛թէ մի անգամ ընդ միշտ չիմացա՞ր իմ հաստատ վճիռս։

—Ուրեմն մինչև ե՞րբ պիտի այդ դրութիւնով մնաս, գոնէ առաջին խորհուրդդ կատարէիր, կուսանոց մտնէիր, մենք էլ մի կոյս ունենայինք, միշտ մայրապետները հօ իշխանների և ազնուականների ցեղից չե՞ն լինելու, փառք Աստուծոյ, դու բոլորիցն էլ լաւ ուսում ունիս, շուտով ամէնքի գլուխն կ'անցկենաս։ Այնպէս չէ՞, ուղիղ չեմ ասո՞ւմ, ապա թէ ոչ ո՞ւր ուսում առար, ի՞նչ կը վայելէր աղջկանը։

—Ա՛խ, երանի՜ չէր, որ կուսանոցն իւր կոչմանը հաւատարիմ մնար և ես այսօր պարզ սրտով այն տեղ լինէի, բայց մայրի՛կ, մի քանի օր է կուսանոց մտնելու կամ ամուսնանալու առաջարկութիւններդ շուտ շուտ եմ լսում, եթէ

քեզ, կամ հօրս ծանրութիւն եմ, խնդրեմ ինձ պարզ յայտնեցէք, մի բան կը վճռեմ ես շատ լաւ գիտեմ, որ իբրև շնորհք եմ ապրում այստեղ. սակայն չյուսամ, թէ բարի հայրս, կամ դու դժուարանայիք ինձ մի կտոր հաց տալու։

—Ամօթ չէ՞ քեզ համար, Սուսամբա՛ր, այդպիսի մտածմունքները քո հօր վերաբերութեամբ, նա քեզ իւր որդիների բոլորից շատ է սիրում, իսկ ես աւելի ուրախ եմ քո ներկայութիւնովը. թէպէտ դու ինձանից ծնած չես, բայց երկու աչքերիս լոյսն ես. ոչ թէ որդու՝ այլ քրոջ համ ես տալիս ինձ և ես միայն քո բարին ցանկանալով՝ ուզում եմ բարեբաղդութիւնդ, կուսանոց մտնելդ էլ մի ժամանակ երջանկութեան հասնել էր նշանակում քեզ համար։

—Այո՛, բայց ես բարեբաղդ եմ միայն ձեր հետ ապրելով, քեզ ճանաչած օրից մոռացել եմ վշտերիս կէսը։

—Գոնէ հագնուիր, գնանք Վանքը, հանդէս տեսնենք, չը գիտե՞ս, որ այսօր մեր թաղի ուխտըն է և մեր բարեկամներն եկած՝ սպասում են այնտեղ մեր հրաւէրքին։

—Հիմա նրանցից շատերն ուղղակի տուն կը գան, դու գնա Վանքը, ես այստեղ մնամ։

Այսպէս խօսեցին Սուսամբարն և իւր երկրորդ մայրը, որ մինչև այսօր չգիտէր, թէ Սուսամբարն իւր ամուսնու զաւակը չէ։

Սահրատը ոչ ինքն էր յիշում և ոչ Սու-

սամբարին էր թոյլ տուել ձայն ու ծպտուն հանելու գաղտնիքի մասին։

ՃԶԶ.

Նոր չէր Սուսամբարի մտքումը ծնել կուսանոց մտնելը, Թիֆլիս եկած օրից՝ նա սիրահարուեց քարափի գլխին շինած այդ իդական մենաստանի վերայ։

Այս իսկ նպատակով էր, որ նա հնարք էր որոնում իւր անձը այդ նուիրական տան համար պատրաստելու և դէպքը նրան յաջողեց եթէ ոչ մտնելը, գոնէ պատրաստուելը, գրել կարդալ սովորելը։

Ահա թէ ինչպէս։

Բաղդի բերմունքով Սահրատի որդիներից մէկն ուսանում էր Ներսիսեան դպրոցում։

Սկզբումն, ինչպէս մանկական խաղ, բայց վերջումն այդ երեխան չհնայեց ուսումնարանումը սովորածը հաղորդելու իւր մեծ քրոջը, որը, ինչպէս ամէն օր կրկնում էր, միտք ունէր կուսանոց մտնելու։

Աղջկանց ուսումնարաններ այն ժամանակն երազել անգամ չէր կարելի Թիֆլիսի մէջ՝ հայ ժողովրդի համար, աղջկանց ուսում առնելը շատ խորթ և ականջի համար ծանրալուր էր, մինչև անգամ ամօթ էր. շատ, շատ՝ այն ժամանակուան աղջիկներն ասղարարութիւն սովորցնող

իւրեանց վարպետից մի քանի վրացերէն ազռաւի մազիլներ գծել դաս կ'առնէին և կը մօռանային։

Սուսամբարն ուզում էր կուսանոց մտնել և յետաձգելու օրինաւոր պատճառ ունէր:

Կուսանոցի կանոններին համաձայն՝ ամէն աղջիկ, որ իւր անձը նուիրում է կուսակրօնութեան, պարտաւոր է հետը տուն բերելու իւր օժիտն և ամբողջ կեանքի սնունդը, ապա թէ ոչ նա չի ընդունուիլ. մենաստանն ուրիշ եկամուտ աղբիւրներ չունի։

Բացառութիւնը կանոն չէ. պատահել են, որ հազար խնդիրքներով ու արտօնութիւններով աղքատ դասակարգի աղջկանցից ներս են սպրդել, բայց իսկապէս այդ մենաստանը շինած է հարուստ տների արտաւոր ու պառաւած, տանը մնացած օրիորդների համար և կամ շատ աղջիկներ ունեցող դժբաղդ ծնողների աղջիկներից ամենադժբաղդին պատսպարան լինելու համար։

Եւ որպէս զի այս արատիքը սրբուի, զործին ձև է տուած, նորաձևութեան նման մի բան է համարուած մեծամեծ տների համար մի կոյս ունենալն իւրեանց ազգի անունով։ Եւ այդպէս, անմարմին հրեշտակների այդ մարմնաւոր հարմնացուքը Թիֆլիսի մէջ իւրեանց ազգերի անուններովն են յայտնի։ Ա.ենց կոյսը, Բ.ենց կոյսը, Գ.ենցը և այլն։

Սուսամբարն իմանալով կուսանոցի խիստ պայմանները, սկզբումն իրաւունք էլ չունէր Սահրատից փող ու բաժինք խնդրելու, մարդը հաշիւ իւր արհեստով ընտանիքն էր կառավարում. բայց երբ Սահրատը զանազան կապալների և աճրդախօսութիւնների մէջ մտաւ և յառաջացաւ, այն ժամանակն է՛լ չէր վստահանում՝ աղջիկը նրան ձանձրութիւն տալ։

Կուսանոց չը մտնելու գլխաւոր արգելքներից մինն էլ այն էր, որ Սուսամբարն ի բնէ մեծ ընդունակութիւն ունենալով, չը նմանեց իւր ընկերակից կուսութեան պատրաստուող թշուառներին։ Նա ուսումնարան չը տեսնելով՝ կանոնաւոր ուսում էր առնում, եղբօր հետ միասին անցնում էր նորա դասերը, նորա հետ միասին դաս էր պատրաստում և նորան զուգընթաց յառաջ էր գնում կրթութեան ճանապարհով։

Բնական էր ուրեմն, որ առողջ դատողութեան տէր Սուսամբարը չէր հաւանիլ կուսանոցի տգէտ սևազգեստներին։

Քանի քանի անգամ Սահրատն իւր հայրական պարտքը ճանաչելով՝ կարողութեան տէր եղած ժամանակն առաջարկեց Սուսամբարին լաւ փեսացու, կամ կուսանոցը բաւականացնելու չափ օժիտ, բայց աղջիկն երկուսն էլ մերժեց։

—Ամուսնութիւն Շահէնից յետոյ ուրիշի հե՞տ, հայրի՛կ, մտքիցդ հանի՛ր, իսկ կուսու-

թիւն՝ մեր տանն էլ անում եմ, ո՞ր կոյսն ինձանից շատ կարդում և պարապում է։

—Կա՛մքդ է, Սուսամբա՛ր, դու գիտես, որ իմ որդիներից նախապատիւ ես, ի մանկութենէ քեզ իմ հարազատն եմ համարել, ամուսնանաս՝ կոյս դառնաս՛ թէ տանը մնաս՝ քո բաժինքդ ու փողդ իմ որդւոց հաւասար յետ է դրած, այն քո սեպհականութիւնն է, այսօր և միշտ՝ ըստ ցանկութեանդ կարող ես գործադրել։

Ես քո և քոյայնոց առողջութիւնն եմ ցանկանում և ոչինչ, ասում էր միշտ Սուսամբարը։

ՃՂԷ.

Վանքի թաղումն այս երեկոյ ամէն տան մեծ հանդէս է, բոլոր մերձաւոր և հեռաւոր բարեկամներն ու ծանօթները քաղաքի մի գլխից մինչև միւսը թէյ պիտի վայելեն իւրեանց Վանքի թաղումը բնակուող բարեկամուհու մօտ։

—Այսօր մեր օրէն (ուխտն) է, ասում են տանտիկիններն և իւրեանց քաղցրաւենիների կապերը բաց անում։

Ամենաչքաւոր ընտանիքն ևս այսօր իւրեանց կարողութեան և աստիճանին համեմատ ծախք ունին անելու։

Սահրատը բնիկ Թիֆլիսեցի էր դարձել, նա Թիֆլիսի աղջիկ էր առել, մի քանի որդիք ունէր, նորա վերայ յարմարել էր պարսից առածը.

«որտեղից է քո կինը, այնտեղից ես և դու», կարծիք չկար, ուրեմն, որ Սահրատի տանն էլ պատրաստութիւն կար և շատ պճնուած տիկիններ ու պաճուճազարդ օրիորդներ բազմոտած էին։

ՃՁԸ.

Մուշտակռւին արդեւք չէր կարող լինիլ Վանքի Թաղեցւոցն հիւրերի զուարճութեանը, եթէ քարէկռիւը չը խառնուէր։

Ահահար՝ դողահար ներս փախան ամէնքը կտրներից ու պատշգամբներից և միայն պատուհանների ապակիների ետևիցն էին իւրեանց հետաքրքրութիւնը լցնում։

Եթէ մի քանի ապակիներ փշուր փշուր չը լինէին, ոչինչ բան չէր յետ փախցնիլ Սահրատի հիւրերին պատուհաններից, նորա աղջիկն էլ յառաջ չէր գալ լուսամուտը ծածկելու։

Դեռ նոր պատուհանի փեղկերը փակել վերադառնում էր Սուսամբարը, որ մուշտակռուի քարը նրան յատակի վերայ գլորեց։

Ա՜խ, վա՜յ, աւա՜ղ, ո՜հ և այլ ցաւակցական հառաչանքներն ամէն կողմից բարձրացան սարսափած բազմութեան միջից. ոչ ունայն կսկիծներն և ոչ սովորական ջուրն ու քացախը կարող եղան ուշքի բերելու անշնչացած օրիորդին։

Գլխաբաց դուրս ընկաւ Սահրատն և ամե-

նայն ուժով բաղխում էր բժիշկ Շահէնի դուռը։

ՃՁԹ.

—Բժի՛շկը, բժի՛շկը, միմեանց ականջում փսփսացին Սահրատի հիւրերն ու յետ քաշուեցին հիւանդի մօտից։

Տունը լուսաւորուած էր շատ ճրագներով, ամէն պատուհանի մէջ երկու մոմ էր վառւում, այդ հիւրեր ունենալու նշանն է. սեղանների վերայ էլ մի քանի աշտանակներ էին դրած, բայց ճարպի մոմի աղօտ լուսաւորութիւնը Սուսամբարի երեսի գալուկն աւելի սաստկացրել էր։

Բժիշկն ուշադրութիւնն ուղղակի հիւանդի վերայ լարած՝ մօտ եկաւ.... Նա յանկարծ կանգառաւ...։ Նա մի րոպէաչափ շփոթուեց, կարծես, աչքերը մթնեցին ու ոչինչ չէր տեսնում։

Նա ձեռքով իւր ճակատը շփեց և իւր չորս կողմը նայեց։ Նա նոր միտք տուեց իրեն հրաւիրող պարոնի երեսին... Նա ճանաչեց։

Սահրատը ոչինչ չհասկացաւ։

Զգուշութեամբ մօտեցաւ բժիշկը հիւանդին և բազկերակը շօշափեց։

—Խնդրեմ, յարգելի տիկիննե՛ր, գնաք այս սենեկից, օդը խիստ ծանր է և հիւանդի շընչառութեանը վնաս, մի ընդհանուր բժշկական հրաման արձակեց նա։

—Իսկ այս տիկի՞նն ու երեխա՞յքը, դարձաւ

բժիշկը դէպի Սահրատը՝ չը վստահանալով ար-
գելել մնացողներին։

—Դրանք իմ կինս ու երեխաներս են։

—Բացի քեզանից՝ ոչոքի ներկայութիւն
հարկաւոր չէ։

—Այժմ ասա ինձ, Սահրա՛տ, այս ինչ կը
նշանակի։

—Ա՛հ, զարմացական բացագանչութիւնով
յետ յետ գնաց Սահրատը. նա բերանաբաց՝ չը-
ռած աչքերով՝ խրտնած եզան նման նայում էր
Շահէնի երեսին։

—Զարմանալու ժամանակ չէ, այդ ամէնը
յետոյ, այսքան միայն ասա, ընչո՞ւ է սա սևերի
մէջ, այրիացե՞լ է։

—Սահրատը ոչինչ չէր պատասխանում, նա
միայն սառած մտիկ էր տալիս բժշկին։

—Այո՛, այո՛, ես եմ, մի՛ վախիլ, Շահէնն
եմ և բժիշկ. ասա շուտով, այրի՞ է Սուսամբա-
րը։

—Սուսամբարի նշանածը Շահէնն էր, որ
մեռաւ... այն օրից ահա սևերի մէջ է...

—Ուրեմն չի՞ ամուսնացած։

—Ո՛չ։

Շահէնը մի քանի վայրկեան մտածութեան
մէջ մտաւ, նա վախում էր հիւանդի յանկար-
ծական այլայլմունքից, կարող էր նորա ուղեղը
վնասուել, մի րոպէում խելագարուել։

—Միամիտ եղիր, դու քո բժշկական հըմ-

տութիւնդ գործ դիր, Սուսամբարն այն աղջիկը
չէ, հաւատացրեց նորան Սահրատը։

ԾԴ.

Բժշկական օգնութիւնն իւր զօրութիւնն
ունեցաւ, բժշկի վերցրած սրուակներն իւրեանց
ույժը ցոյց տուին և Սուսամբարը շարժուեցաւ։
առաջին անգամ աչքերը

—Ո՞ւր եմ ես...
բացեց Սուսամբարը։

—Քո քեռուդ՝ բժիշկ Շահէնի հոգատարու-
թեան ներքոյ, ծանր դէմք առած ասաց Շահէնն և
շարունակեց չփելու աղջկայ քունքերը։

—Հայրի՜կ... Թոյլ աչքերը Սահրատի երեսը
ձգեց Սուսամբարը, ո՞ւր եմ ես.... սա ո՞վ է...

—Վնաս չունի, հոգի՛ս, մուշտակռուի քա-
րը քեզ դիպաւ, բժիշկն օգնութիւն է անում,
սա բժիշկ Շահէնն է։

—Շահէ՜նը... Շահէ՜նը... երկար ծոր տու-
եց օրիորդը, և կարծես աշխատում էր յիշողու-
թեան մէջ մի անցք զարթնեցնել։

—Այո՛, այո՛, ես եմ, Սուսամբա՛ր, մի՞թէ
մոռացել ես Շահէնին, քո մօրեղբայր Շահէնին,
որ հիմի բժիշկ է դարձել և եկել է իւր քրոջ
աղջկանն այցելութիւն։

—Արդարև՛, հիմա յիշում եմ։

—Մի՛ չփոթուիր, սիրելի՛ս, քաջալերեց Սահ-

րատը, ուրախացիր, որ Շահէնն ինքն է քեզ բժշկողը։

—Դու մեր փողոցի միւս ծայրումն ես կենում, այնպէս չէ՞, դարձաւ հիւանդը դէպի Շահէնը։

—Այո՛։

—Ուրեմն իմ աչքերս ինձ չեն խաբել, ուրեմն իմ սիրտս զուր չի բաբախել, ուրեմն քե՛զ եմ երկու ամիս շարունակ տեսնում և իմ կարծիքս մէջս սպանում։

—Այո՛, ես եմ, ինչպէս տեսնում ես։

—Իսկ քո կի՞նդ, երախանե՞րդ... շատ ցած ձայնով և վախվախելով հարցրեց աղջիկը՝ մի կաթոգին ակնարկ ձգելով Շահէնի աչքերի մէջ։

Վերջին խօսքերից էին կախուած, կարծես, հիւանդի բոլոր ապագան, նորա առողջութիւնը, կեանքը կամ մահը։ Սորանից այն կողմը մի կարճ խօսք էր հարկաւոր, որ դէպի կեանք, կամ գերեզման առաջնորդէր օրիորդին։

—Դու մոռացե՞լ ես, որ Շահէնն իւր քրոջ աղջկանը խօսք է տուել չամուսնանալու, նա պահել է իւր ուխտը։

Աղջիկն անխօս աչքերը երկինք բարձրացրեց և իրեն քաշեց Շահէնի ձեռքը։ Սուսամբարըն այդ դրութեան մէջ մի երկու վայրկեան մտքով վերացաւ դէպի նախախնամութիւնը, նա մրմնջում էր իւր մէջ, նա գոհացողական մաղթանք էր անում, նորա աչքից երկու կաթիլ

քաղցր արտասուք գլորուեցին, ուրախութեան էր այդ։

—Թոյլ տո՛ւր ուրեմն, իմ Շահէ՛ն, համբուրելու քո ձեռքը, թոյլ տուր ինձ հաստատ յոյս ունենալու... բայց ի՞նչ եմ ասում, մի աղէտ գիւղացի պառաւած աղջիկ արժան չէ մի բժշկի քաղցր ակնարկութեանն և սիրոյն։

Յոյս խօսքի հետ՝ քարշեց Սուսամբարը Շահէնի ձեռքը դէպի իւր շրթունքները, բայց վերջի բառերը խլեցին նորա ոյժը, նա չը համարձակուեց մօտեցնել իւր բերանին։

Նա բաց թողեց ձեռքը, նա նոր զգաց, որ մի օրիորդի անվայել էր օտար երիտասարդի մօտ կրծաբաց նստելու, նա ծածկեց իւր մերկութիւնը և աչքերը խոնարհեցրեց։

—Համբուրի՛ր, թշուառակա՛ն, քո քեռու ձեռքը, չկարողանալով իրան զսպել՝ յոգուց հանեց Շահէնը և աչքերից վէր ածեց, ա՜խ անագորոյն ճակատագիր, դու միշտ պիտի ինձ հալածե՞ս... ընչի՞ պիտի դու իմ արենակիցը լինէիր։

—Ո՛չ, ո՛չ, սխալւում ես, Շահէ՛ն, եթէ միայն այդ է արգելառիթը, էլ այդ սխալը չի՛ կարող խլել քեզ իմ ձեռքից, մեր մէջ ոչինչ ազգակցութիւն չը կայ, մենք բոլորովին օտարներ ենք իրարու վիճակուած, բայց նախախնամութեան տնօրէնութեամբ մի քանի ժամանակ միմեանից հեռացրած։

—Ինչ ես զռանցում, Սուսամբար, դու իմ քրոջ աղջիկն ես։

—Մոռացիր այդ ամէնը, ես Շահէնի հարսնացուն եմ։

—Ի՞նչ անենք, Սահրա՛տ, սա ցնորւում է, կամաց դարձաւ Շահէնը դէպի տանուտէրը։

—Սխալ ես, բժի՛շկ, Սուսամբարի խօսքերը բոլորովին ճշմարտութիւն են։

—Պատմի՛ր, իմ հոգևոր ծնո՛ղ, Սահրա՛տ, հասկանալով բժշկի ենթադրութիւնը, մէջ մտաւ Սուսամբարը, ասա Շահէնիս, որ ես չեմ խելագարուել, ասա իրան, որ ես քո հարազատ դուստրը չեմ, ասա, որ քրոջ աղջիկն երկուշաբաթական մեռել է և ես բոլորովին օտար տանից ու մօրից նորան փոխարինել եմ, ասա՛, որ քո սխալդ ուղղելու, կամ յանցանքդ քաւելու համար՝ տարիներով Ռուսաստան խաչագողների հետ շրջել ես սորան որոնելով, պատմի՛ր իսկութիւնը մի քանի խօսքով և թող բժիշկս իւր մի խօսքովը վճռի ինձ կեանք կամ մահ։

—Ապրե՛նք, իմ Սուսամբա՛ր, ապրենք և մեռնենք միասին, քո անկեղծութիւնդ ապացոյց է խօսքերիդ ճշմարտութեանը, երկար պատմութիւններ պէտք չեն, ես ամենաբաղդաւոր մարդըն եմ աշխարհիս մէջ։

Ոչ մի հայր, ոչ մի հարազատ ծնող չէր կարող Սահրատի չափ ուրախ զգալ իրեն. Նա միանգամայն զմայլուել էր երկու սիրեկանների

գրկախառնութիւնով, երկար ժամանակ նրանց շրթունքները չէին պոկւում իրարից, սէրն իւր թևերով քօղարկել էր այս տեսարանը։ Աստուած և Սահրատ էին վկայ Շահէնի և Սուսամբարի երջանկութեանը։

ՃՂԱ.

Հասան Շահէնն ու Սուսամբարն իւրեանց բաղձանքին, խոր հառաչելով ասաց բժիշկս, բայց ի՞նչ օգուտ, որ այսօր նրանք անիծում են իւրեանց հանդիպմունքը... Աբրահամիկի կորուստը մեծ էր, ոչինչ բան աշխարհումս չի փոխարինիլ նրան... ա՜խ Ալագան, Ալագա՜ն, վայրագ ու մարդակուլ գազա՜ն, թշուառ որդեկիս սառը գերեզմա՜ն...։

—Դու երկու տարաբաղդներից մէկին ամէն օր տեսնում ես, դարձաւ բժիշկս արտասուելով դէպի ինձ, իսկ իմ վշտերի մէջ մաշուած պառաւին էլ վաղը ցոյց կը տամ, էգուց քեզ հիւանդանոցից դուրս կը թողամ և գիշերը մեզ մօտ կանցկացնես... բայց քո դէ՜մքդ... քո պատկե՜րդ... քո աչքե՜րդ... է՛հ, ի՞նչ եմ կորցրել, ի՞նչ եմ պտռտում, ասաց բժիշկս ու չտապով դուրս գնաց հիւանդանոցից։

ՃՂԲ.

Ժամանակ էր վերջապէս և ինձ մտածելու, հասել էր րոպէն, երբ ես էլ իմ կողմից ձգտէի բժշկիս սրտի գաղտնիքն իմանալու, «քո դէ՞մքդ, քո պատկե՞րդ, քո աչքե՞րդ....» այս կաց ու կամ խօսքերումն, ի հարկէ մի խորհուրդ պիտի լինէին, ես սպասում էի, թէ ինքը՝ բժիշկ Շահէնը մի ներքին կապ կը գտնի մեր մէջ, բայց նա ոչինչ չասաց և գնաց շփոթուած. նա ինձ էլ մեծ տարակուսանքի մէջ ձգեց, ամբողջ գիշերը քունս փախցրեց։

Աբրահամիկի ջրիցն ազատուելու նման մի իրողութիւն, չգիտեմ ո՞ւր էի լսել, ուզում էի մի համանման գործողութիւն միտքս բերեմ, բայց յիշողութիւնս իսպառ խանգարուել էր։

Երբեք չէի մոռացել մօրս պատմած դևերի, եօթնագլխեան վիշապների, անմահական ջրերի առակները, բայց երեխայի ջրից ազատուիլը նրանց մէջ չը կար։

—Հա՞... ա՞... ա՞..., ճակատիս խփեցի ես ու սարսռեցայ. հա՞... հա՞... հա՞... շատ կարելի է։

Կէս գիշեր հազիւ էր, բայց ես վեր կացայ. զարթացրի Մովսէսիս և ստիպեցի ինձ հետ գընալու բժշկիս մօտ։ Խեղճը կարծեց թէ, կրկին իմ տկարութիւնը սաստկացել է. ուզում էր հիւանդանոցից ծառայ վերցնել. բայց երբ իմա-

ցաւ, թէ միայն քնատութեան պատճառով զրոյց տալու եմ գնում, ստիպեց ինձ յետ թողնելու նպատակս մինչև լոյս, նա ինքը նստեց մօտս, լուսանկարչութեան վրայ սկսաւ խելքի կտրածի չափ դատողութիւն տալ։

ՃՂԳ.

Միւս օրը բժիշկս եկաւ, ինձ հիւանդանոցից հանեց, իւրեանց տունը տարաւ, բայց ես մինչև երեկոյ ներսս կրծող կարծիքի մասին և ոչ մի խօսք չասացի։

ՃՂԴ.

Տիկին Սուսամբարի քաղցր ընդունելութիւնը, նորա խելացի խօսակցութիւնները, նորա խորշոմակալած՝ բայց բարութիւն և հանճար արտայայտող աչքերը, նորա վշտերի ձեռքից մաշուած ու տխուր դէմքը սիրտս գրաւեցին, նա պառաւ էր, այո՛, բայց այդքան ցաւերի և տարիների մէջ էլ սրատես, հետաքննին աչքերը կարող էին գուշակել նորա նախկին գեղեցկութիւնը։

Բաւականին աշխատում էին Շահէնն ու Սուսամբարը, կամ այսպէս ասենք՝ բժիշկս ու իւր կինը՝ իբրև հիւրասէր տանուտէրներ ինձ

զբաղեցնելու, բայց չէր կպչում, կարկատանի պէս բան էր դուրս գալիս, մի ընդհանուր տրտմութիւն տիրել էր երեքիս մէջ։

ԾՂԵ·

—Խնդրեմ ասացէք, ընդհատեցի ես լռութիւնը, Լազօղեխը մի ձորակում չէ՞ շինած։

—Այո՛։

—Ձեր կայարանը մի խաչմէրուկ փողոցի վերայ չէ՞ր։

—Ճիշդ այդպէս։

—Դրան մուտքի մօտ երկու բարձր ծառեր չը կա՞ն։

—Այդ է որ կայ։

—Երկու լուսամուտ դէպի փողոցն և երեքը բակի վերայ ե՞ն։

—Կարծես, նոր ես դուրս եկել այն տեղից։

—Մի կոտրած հայելի՞ էր փողոցի կողմի սենեակի միակ զարդարանքը։

—Քեզ ո՞վ նկարագրեց Լազօղեխի մեր բնակարանը։

—Այսօր սղնախեցի այցելուներս պատմեցին, ասացի ու մի քանի րոպէ մտածմունքի մէջ ընկայ։

Բժիշկս ու իւր կինն էլ վրդովեցան, բայց և նրանք լռեցին։

—Ներելի՞ է, տիկի՛ն, մի կարճ պատմութիւն անել ձեզ, ի վերջոյ հարցրի ես։ Երբ այր ու կին իւրեանց պատրաստակամութիւնը ցոյց տուին, ես սկսեցի։

ԾՂԶ·

—Քանի մի տարի սրանից առաջ, Ախալցխայի, թէ Ալէքսանդրապօլի գաւառումը մի գիւղացի ձին հեծած՝ գնում էր միայնակ. Նա Երևանու նահանգի Աշտարակ գիւղէցն էր, նա տրաղ ծախելուց էր դառնում, դատարկ տիկերը ձիու համետի մէջ իւր տակին էին։

Չգիտեմ ճանապարհորդն ուշադրութիւն դարձրե՞լ էր իւր առաջից ճանապարհով վազող չորս հինգ տարեկան երեխային, թէ ոչ. բայց նա յանկարծ ձիու սանձը քարշեց և շտապով իջաւ։

Ամէն մարդ աշտարակցու տեղը նոյնն անելու էր, ամայի դաշտումը՝ հեռի մարդաբնակութիւնից՝ նա իրաւունք չունէր երեխային չը կարեկցելու. փոքրիկ մանկան ոտքը սահեց ու վայր ընկաւ։

—Մի՛ վախիր, որդի՛ս, վնաս չունի, մի փոքրը քերծուել է, իսկոյն արիւնը կը կանգնեցնեմ, ասաց գիւղացին և կիսամեռ երեխային մօտ տարաւ սարից վազող կարկաչուն առուակի մօտ, լուաց վէրքն ու թաշկինակով կապեց։

Սուր քարը ծակել էր երեխայի ճակատը, արիւնը վազում էր։

Շատ հարց ու փորձ արեց մարդը, բայց այսքան միայն իմացաւ, որ փոքրիկը վախում է մաղ ու խախալ ծախող գնչուներից (բօշայ)։ Երեխան յաճախ յետ յետ էր նայում ու իբրև իւր փրկողի կպչում անծանօթին՝ գնչուների անունը տալով։

—Անունդ ի՞նչ է։

—Գնչուներն ասում էին, որ այսուհետև քո անունը Յովէ Թող լինի։

—Ո՞ւմ տղան ես։

—Գնչուներն ասում էին, որ ես իւրեանց մեծ իշի որդին եմ ու միւս իշանն էլ իմ եղբայրներն ու քոյրերն էին. այդ պատճառով էլ երբ որ ես էշերն արածացնելուցս դառնալուս հեծնում էի, նրանք ինձ վերայ միշտ ծիծաղում էին։ Ես գնչուներից վախում եմ, սարսափելով աւելացնում էր մանուկը, որին մենք այսուհետև Յովէ, կամ Յովհաննէս կոչենք։

—Այս էլ Աստուծոյ կամքն էր, մտածեց աշտարակցին, կինս շատ կ'ուրախանայ, Աստուած մեզ զաւակ չի տուել, եթէ տէրը չի դուրս գալ՝ սա կը լինի մեր հոգեզաւակը։

Երեք տարի Յովհաննէսը մնաց իւր հոգևոր ծնողների մօտ, ոչ մի որդի չէր կարող նորանից բարեբաղդ համարուիլ, մարդ ու կին ուրախութիւնից թռչկոտում էին։

Յովհաննէսը մոռացաւ գնչուներին էլ, իւր որբութիւնն էլ։

Աշտարակումն այդ ժամանակ ուսուցիչ էր մի վարժապետ՝ տիրացու Շապուհ Շահնազարեանց անունով։

Յովհաննէսը նորա մօտ սովորում էր և շուտով ամենից ընդունակն ու առաջին աշակերտն եղաւ։

ՃՂԷ.

Թէ Տաճկաստանի ո՞ր կողմերից և ե՞րբ, ինձ յայտնի չէ, բայց այդ միջոցումն Աշտարակ գիւղի մօտ գտնուած Մողնու վանքումը լոյս ընկաւ մի Մարտիրոս վարդապետ։

Տիրացու Շապուհը հեռացաւ Աշտարակից և վարդապետը բացեց իւր ուսումնարանը Մողնու վանքումը։

Յովհաննէսը փոխուեց Մողնի։

Երեսուն աշակերտ ունէր վարդապետը. Նա շատ ջանասէր, ուսումնասէր և բարեպաշտ անձն էր, նա իւր հոգու նման սիրում էր իւր աշակերտներին, ուսումնարանական պիտոյքն ինքըն էր մատակարարում և խիստ ուրախանում էր տգէտ գիւղացի մանուկների յառաջադիմութիւնը տեսնելով. հեզահամբոյր և հայրենասէր էր երիտասարդ աբեղան, նա ոչ միայն վարժապետ էր իւր սանիկներին, այլ և քաղցր ու գո-

րովոտ հայր, Նրան իւր աշակերտները չեն կարող մոռանալ։ Երանի՜ թէ այնպէս վարդապետներ շատ ունենայինք։

Շուտով Յովհաննէսը դարձաւ առաջին աշակերտ և վարդապետի ամենասիրելին։ Այդպէս էլ պիտի լինէր. մանուկի չափազանց ընդունակութեան և խոհեմութեան համար ո՞վ կարող էր նրան չսիրել։ Տասն մէկ տարեկան էր նա և հայոց գրաբար լեզուն քաջ գիտէր, երկու անգամ կարդացածը բերան էր։ Ի՞նչ լաւ կը լինէր, եթէ նորա յիշողութեան քառորդը մնար իւր երիտասարդութեան ժամանակը։

ՃՂԸ.

—Հայր սո՛ւրբ, խնդրեց մի անգամ վարդապետին իւր մօտ Յովհաննիսի հոգևոր հայրը մահուան անկողնումը, այս երեխան անտէր է, սորա հոգսը քո վերայ առ։ Նա պատմեց մանկան անցեալը։

Մարդը մեռաւ և Յովհաննէսն ըստ առաջնոյն շարունակում էր Մուղնի գնալ գալը։ Վարդապետի բոլոր աշակերտներն երթևեկ էին. նրանք շրջակայ հայ գիւղերից էին։

Քանի՜ քանի անգամ վարդապետը կամեցաւ Յովհաննէսին բոլորովին իւր մօտ առնել, բայց նորա մայրացուն ցնդում էր, եթէ երեխային մի գիշեր իւր ծոցին չէր ունենում։

ՃՂԹ.

—Լեղապատառ տուն ընկաւ մի օր Յովհաննէսը վարդապետի մօտ։ Նա սփրթնած էր ինչպէս կտաւ, նորա լեզուն կապուել էր։

Մինչ վարդապետն աշխատում էր ոգևորել մանկանը, ներս ընկաւ մի գնչու։

Երեխան ճչաց ու փաթաթուեց վարդապետին։

—Դա իմ Յովէն է, երեք տարի է որոնում եմ, ասաց գնչուն և ուզում էր մօտենալ, բայց երեխան կրկին ճիչ արձակեց և ուշագնաց եղաւ։

Եւ ինքը մանուկը չիմացաւ իւր սթափուելը, նա այսքանը տեսաւ, որ գնչուն չը կար։

Այնուհետև Յովհաննէսը գնչու տեսնելուս դողում էր, գիշերներն էլ երազում նոցա վերայ էր խօսում և միշտ վեր թռչում։

Մ.

Մի անգամ վարդապետը կանչեց Յովհաննիսի մօրը Մուղնու և Աշտարակի մէջ եղած Կառահանքի կոչուած ձորակը։ Նա ասաց. մայրի՛կ, հոգևոր իշխանութիւնն սկսել է ինձ վերայ կասկածանքով նայել, ես միտք ունիմ փախչելու, կ'ուզեմ Յովհաննիսին հետս տանել, քեզ յայտ-

նի է, որ երեխայի պարտականութիւնն ես եմ յանձն առել։

—Եւ ո՞ւր, հայր սո՛ւրբ, ոչ առանց սարսափի հարցրեց պառաւը։

—Կ. Պօլիս։ Այնտեղ Տատեան Պօղոս բէյն իմ բարեկամս է. նա իմ խնդրանօք չի խնայիլ սորա կրթութեան հոգսն իւր վերայ առնելու, նորա ծախքով մի քանի հայ երեխայք շարունակ ուսանում են Եւրոպայումը, անշուշտ սա էլ նոցանից մինը կը լինի։

—Թէև ինձ ծանր է հեռանալու երեխայիցս, բայց կը տամ, եթէ բաց աշխարայ կ'երթաս, իսկ ծածուկ՝ ես երեխայ չունիմ քեզ յանձնելու, եթէ մի օր իմ Յովհաննիսիս տեղը չիմանամ՝ կը մեռնիմ, արտասուեց աղնիւ հօգևոր ծնողը։

Շատ լաց եղաւ Յովհաննէսը, գրկեց իւր մօրը, խնդրեց թոյլ տալ գնալու վարդապետի հետ, բայց պառաւն իւր կտրական խօսքի վերայ պինդ կանգնեց։

—Դու չես թողնիլ, ես ծածուկ կը փախչեմ, լացակրկնած ասաց մանուկը։

—Այսօ՛ր իսկ ես Էջմիածնումն իմաց կը տամ հայր սուրբի դիտաւորութիւնը, հաստատապէս մատը թափ տուեց պառաւը։

—Ո՛չ, ասաց վարդապետը, ես առանց մօրդկամքի քեզ տանելու չեմ. եթէ կամենայի ծածուկ փախցնել, մօրդ կամքը հարցնելու կարիք չկար։

Երեխան շատ մղկտաց, բայց վարդապետը մերժեց նորա աղաչանքը։

Պառաւը միամտուեց։

ՄԱ.

—Վարդապետը փախա՛ւ, վարդապետը փախա՛ւ, շշունջն ընկաւ մի առաւօտ Մողնին և շըրջակայ գիւղերը։

Վանքական մերատեսուչն շտապեց իմաց տալու Ներսէս Կաթուղիկոսին։

Շատ որոնեցին փախստականին, բայց չըգտան։

—Ի զուր ծածուկ էր գնում. նա իբրև Տաճկաստանի վարդապետ՝ իրաւունք ունէր ազատ յետ դառնալու, դադարեցրեց Ներսէսը որոնել տալը, երբ իմացաւ, թէ ոչ մի կոպէկի իրեղէն պակաս չէ վանքիցը։

ՄԲ.

—Ես Ղօշավանքումը՝ Տաճկի սահմանումը, Անիի մօտ քեզ սպասում եմ, վեր կաց արի գըռաբերներիս հետ, որոնց մինը քո դասընկերն է. մի կարճ նամակ ստացաւ Յովհաննէսը մի երեկոյ և իսկոյն ճանապարհ ընկաւ Սաղմոսավանքցի քահանայի որդի Սարգսի հետ։

Տուտով նրանք երեքացան. Աշտարակից վեր՝

Պատաշարի քամակին, նրանց սպասում էր բուն ուղեկիցը,—Արթիկցի տիրացու Ղևոնդը։

Լուսինը պայծառ էր, գիշերը ցերեկի նման էր, ոչինչ չէր արգելում նրանց։

Փախստականներն անխօս շտապում էին դէպի Սաղմոսավանք, մի քանի օր նոքա այնտեղ պահուելու էին։ Նրանք հետևակ էին, նրանք գնում էին ճանապարհից շատ դուրս։

ՄԳ.

—Տօ՛ ի՞նչ ենք քարէ քար, ձորէ ձոր ընկել, նրան կամ սատանէքը տարան, կամ ձկան թարփերը գնալիս՝ գետումը խեղդուեց, ծռուինք մի փոքր էլ Փարբու և Օշականի կողմերը, պտուտենք, եթէ չգտնուեց՝ մենք մեղաւոր չենք։

Այս առողն էր աշտարակցի Շեխոնց Բէգլարը. մի քանի ձիաւորով նա որոնում էր Յովհաննէսին։ Գիւղը շփոթ էր ընկել, պառաւի աղաչանքն անուշադիր չը մնաց, գիւղացիք պարտականութիւն էին համարում օգնելու իւրեանց համաքնակչին. ամէնքը գիտէին, որ պառաւն իւր հարազատի նման էր սիրում երեխային և մի օր առանց նրան չի ապրիլ։

Միմեանց օգնելը հայաստանցու ազնիւ յատկութիւնն է։

—Պառկենք այս փոսումն, շտապեցրեց Յովհաննէսն իւր ընկերներին։ Եթէ մի րոպէ դան-

դաղ շարժուելու լինէին, բռնուելու էին։ Բէգլարի ձին փոքր մնաց տրորում էր Յովհաննիսի ոտքը։ Նոքա պառկեցին, ձիաւորները նրանց կողքովն անցան ու չը տեսան։

Մեր ճանապարհորդները խնդացին իւրեանց որոնողների վերայ և նրանց հեռանալուց յետոյ անվնաս հասան Սաղմոսավանք, մտան Տէր-Մանուէլի սենեակը, կամ օդէն։

Լոյսը դեռ չը բացուած՝ նրանք իջան Սաղմոսավանքի անդնդախոր ձորն ու թաք կացան վանքի տակի քարայրումը։

ՄԴ.

Տէր Մանուէլի գիտութեամբն էր այս փախուստը, տէրտէրն ինքն էր փախցրել վարդապետին, այն պայմանաւ, որ իւր որդուն էլ հետը տանի ուսումի տայ։ Խեղճ աբեղան ստիպուած էր մէկի փոխարէն երկուսի ցաւը քաշելու. ի՞նչ անէր, եթէ չը համաձայնէր, իրեն տանող չկար։

Ոչինչ, որդիք, ասաց տէր Մանուէլը, Յովհաննէսին ու իր որդուն, մի քանի օր էլ դուք ճգնեցէք այս այրի մէջ, գիշերները տուն կը գաք, մինչև ոտքը կը խաղաղուի, որոնողների յոյսը կը կտրուի, այնուհետև ապահով կ'երթանք, վարդապետին է՛լ ութ օր պահեցի այստեղ։

ՄԵ.

—Տէրտէ՛ր, յարձակուեց միւս օրն Աշտաբակումը Յովհաննիսի հոգևոր մօր եղբայր Խուբէնը տէր Մանուէլի վերայ, մեր երեխային փախցնողը դու ես։

—Աստուած օրհնեսցէ՛, որդի, ուզում էր արդարանալ քահանան, ես եկել եմ իմ տղային որոնելու, մի՞թէ ձեր երեխան էլ կորել է։

—Ի՞նչ ես ասում, տէրտէ՛ր, ես ձեռքիս հաստատ ապացոյց ունիմ, որ վարդապետին էլ դու ես փախցրել։

Քահանայի դրութիւնն աննախանձելի էր. նա նշանացի խնդրեց Խուբէնին լռել ու պատմեց առանձին, որ արդարև երեխան իւր մօտ է, երբ կամենայ, կարող է յետ բերել, բայց զգուշութեամբ՝ որ հոգևոր իշխանութիւնը չիմանայ և իրան պատժի։

Խուբէնը համաձայնեց և տէր Մանուէլի հետ ձի նստաւ, իբր թէ մինը իւր որդուն և միւսը իւր քրոջ հոգեզաւակին պտռտելու։

Շատ էլ կամեցաւ արդարանալ տէր Մանուէլը փախստականների մօտ, բայց նրանցից և ոչ մինը չհաւատաց՝ թէ Խուբէնը գրբացների շնորհիւ է գտել իւրեանց տեղը։

Միւս օրը Խուբէնը Յովհաննէսին գաւակն առած՝ վերադարձաւ Աշտարակ։ Քահանային պատասխանատուութիւնից ազատ կացուցանելու

համար, ձայն հանեցին, իբր թէ երկուքը միասին Ախուրեան գետի ափին խլել են երեխաներին քրդերի ձեռքից հրացանների զօրութեամբ։

Խլեց, այո, Խուբէնը , բայց տիրացու Ղեւոնդի ձեռքիցը, խեղճին մտրակի տակ կիսամեռ անելով։ Եթէ տիրացու Ղևոնդը կենդանի է, անշուշտ այսօր էլ մտրակի տեղերը նորա վերայ նկատելի են, կարծեմ մինչև մահը նա չէր մոռանալ Խուբէնի մտրակները։

ՄԶ.

—Ընչո՞ւ էիր գնում վարդապետի հետ, հարցրեց Ներսէս կաթուղիկոսը փոքրիկ Յովհաննիսին։

—Անտէր էի, ուսանել էի ցանկանում և ճանապարհ չունէի, վարդապետն ինձ խոստացաւ բաղձանքիս հասցնել։

—Եթէ այդ աստիճան ուսումնասէր ես, կը գա՞ս ինձ հետ Թիֆլիս իմ ուսումնարանը. քեզ համար ուտելիք, հագուստ և ուսում պատրաստ է այնտեղ։

—Ոտքդ էլ կը համբուրեմ։

—Պատրաստեցէ՛ք այս երեխային մեզ հետ տանելու, աչքաբաց է երևում, հրամայեց Ներսէսն իւր քարտուղար Մանդինեանց տէր Ստեփանին։

Մի քանի օրից յետոյ՝ Ներսիսի կառքումը

նորա հետ նստած էին երկու երեխաներ. նոցանից մինը Յովհաննէսն էր և միւսը կաթուղիկոսի ազգական Մկրտիչը: Նոքա Թիֆլիս էին գնում:

ՄԷ:

Աւարտեց Յովհաննէսն իւր ուսումը Ներսիսեան դպրոցումը. մի երկու տարի էլ արքունական գիմնազիայի բարձր դասատներումը շարունակեց, բայց միշտ տխուր էր:

Երկու գլխաւոր պատճառ ունէր նա տրտմելու. իւր երկրորդ ծնող պառաւը մեռել էր և նա որոնում էր իւր իսկական ծնողներին:

Որոնում էր Յովհաննէսն և գտաւ:

—Ո՞ւր և ի՞նչպէս, չտապաւ հարցրին Շահէնն և իւր կինը,

—Ի հարկէ Յովհաննէսը չէր յիշում իւր որբութիւնը, նա միայն մի աղօտ յիշողութիւն էր պահել իւր մէջ գնչուների վերայ և սաստիկ ատում էր նրանց:

ՄԸ.

—Չը գիտե՞ս, Յովհաննէ՛ս, ո՞վ էր այն գնչուն, որ ինձ մօտ եկաւ, հարցրեց նրան մի օր Մարտիրոս վարդապետը:

—Չեմ էլ ուզում իմանալ, դողալով պատասխանեց մանուկը:

—Գնչուն ասում էր, որ դու իւր որդին ես:

Երեխան վեր թռաւ և լաց եղաւ:

—Սուտ է ասում, հայր սո՛ւրբ, ես գնչուի որդի չեմ, ես աշտարակցի եմ:

—Նա ասում էր, որ ինքը գնել է քեզ Կախեթիայումը վրացի խողապաններից, երբ իրենք այնտեղ մաղ ու խալխալ են ծախելիս եղել, ասում էր, գնչուն պատմում էր որ խողապանները քեզ գտել են մի գետի ափում թրջուած, թէ գետի անունն՞ էլ Ալազան է, թէ դու թոթոված ես եղել խողապաններին, իբր թէ լեզգու գաւակից ջուրն ես ընկել և ծառը բռնելով ազատուել:

Ա՜խ, Աբրահամիկ՜ս, ո՞ւր է մեր Աբրահամիկը, սաս՛, սաս՛, աղաչո՛ւմ ենք, դու նորա տեղը գիտես, փարում էին բժիշկս և իւր կինը իմ ոտքերս:

—Հանդարտուեցէ՛ք, ասացի ես, ատամներս սեղմելով, եթէ չէք թոյլ տալ շարունակելու, ես կը լռեմ և դուք ձեր որդուն երբէք չէք գտնիլ:

Ես անխղճմտանք էի, ես կամակորուեցի և թշուառ ծնողներին լռեցրի, ստիպեցի ինձ լսելու:

ՄԹ.

Ներսիսեան դպրոցի աւարտած աշակերտներից մինը սովորեց լուսանկարչութիւն, շարունակեցի ես, ծերունիների ուշադրութիւնը լաբելուց յետոյ, նա սկսաւ իւր արհեստով ճանապարհորդելու Կախեթիայի զանազան կողմերը. Նա հիւանդացաւ Ցարսկի—Կոլոդցումը.... բժիշկ Շահէնը նրան բժշկեց... նա յիշեց Լագոդեխի իւրեանց բնակարանի նշանները, նա իւր ծնողաց գրգռումն է....

Ես կանգ եմ առնում, ընթերցո՛ղ, այս աղէխարշ տեսարանը դիտելու և իմ փղձկանքիս տեղիք տալու. դու էլ կ'ուզե՞ս ինձ ընկերանալու:

ՄԺ.

Միւս օրը Սղնախից եկաւ տէր Սարգիսը, նա թաղման կարգ էր կատարում, բազմաթիւ յուղարկաւորողներ շրջապատել էին դագաղը: Տրտում ու տխուր հետը գնում էին մի ծերունի և մի պատանի: Նրանք էին բժիշկ Շահէնն և իւր որդի Աբրահամը:

—Սուսամբա՛ր... հեծում էր Շահէնը, մայրիկ... ողբում էր որդին:

Տիկին Սուսամբարը չըկարողացաւ տանել

յանկարծական ուրախութիւնը, նա մեռաւ անխոհեմ որդու գրկին:

Մի շաբթից է՛լի եկաւ տէր Սարգիսը: Նա կատարեց Սուսամբարի եօթը և բժիշկ Շահէնի թաղումը:

Մի ամսից է՛լի եկաւ տէր Սարգիսը, այս անգամ նա ո՛չ գար. ոտքը կոտրուէ՞ր:

Նա հիւանդանոցից դուրս տարաւ մի երրորդ դագաղ և թաղեց Շահէնի ու Սուսամբարի մէջ տեղը:

Խղճալի Աբրահամի կրծքի բորբոքումը վերանորոգուեց իւր ծնողաց մահից յետոյ. մի ամսից նա գնաց նրանց մօտ հանգստանալու:

ՄԺԱ.

Ափսո՛ս, իմ ազնիւ ընկեր Աբրահա՛մս. մի շաբաթ ես Ցարսկի—Կոլոդցումը նրա մօտ էի, նրա նամակն ինձ կանչեց Թիֆլիսից: Շահէնի բոլոր պատմութիւնը նա ինքը կրկնեց ինձ և իմ կռանը հոգին աւանդեց:

ՎԵՐՋ

ԾԱ.ՆՕԹ. Սխալմամբ 241—272 երեսները տպագրուել են 243—274, սակայն այդ սխալմունքն ուղղւում է 273 երեսից, որը փոխանակ սխալ շարունակելու պակասացրուած է երկուսով 275 փոխարէն՝ 273:

Ս. Յարութիւնեանի գրավ. հրատարակութիւնները

1. Տոլստոյի, Կին թէ Վագր . — 15 կ.
2. Պռօշեանի, Սօս և Վարդիթեր : 1 ր. 20 կ.
3. » Հացի Խնդիր . . 1 ր. 50 կ.
4. Տ. Եժի, Լուսադիմին . . . 1 ր. —
5. Պռօշեանի, Շահէն վէպ . . 1 ր. —

ԳԻՆՆ Է 1 Ր.

Ցանկացողները դիմում են հետևեալ հասցէով.
Баку Книжный магазинъ С. Д. Арутюнова.

ՀՀ Ազգային գրադարան
NL0360241